

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

Նրանց Ավանդության

ԹՈՐՋԱՐԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՆՏ ՄԻՔԱՅԵԼԻ ԱՎԱՆԵՄՅԱՆ

**ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2021

ՀՏԴ 159.9.07(07)

ԳՄԴ 88գ7

Ա 774

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության
ֆակուլտետի զիրխորհուրդը:*

Ավանեսյան Հ. Մ.

Ա 774 Փորձարարական հոգեբանություն. Ուսումնական ձեռնարկ/Հ. Մ. Ավանեսյան.- 2-րդ վերամշակված հրատարակություն, Եր., ԵՊՀ հրատ., 2021, 370 էջ:

Ձեռնարկում փորձարարական հոգեբանությունը դիտարկվում է որպես ինքնուրույն գիտակարգ, որը մշակում է հոգեբանական հետազոտության տեսությունը, մեթոդներն ու պրակտիկան: Մանրամասն վերլուծված են հոգեբանական հետազոտության մեթոդաբանական հիմունքները, նկարագրված են էմպիրիկ մեթոդների դասակարգումն ու բնութագրերը: Կազմվել է փորձարարի բառարան (հայերեն): Նկարագրված են հոգեբանական գիտափորձի ընթացակարգն ու կազմակերպման առանձնահատկությունները:

Հոգեբանական հետազոտությունը ներկայացված է որպես գիտական ճանաչողության յուրահատուկ գործընթաց՝ իրեն բնորոշ տրամաբանությամբ ու փուլերով:

Ձեռնարկը հասցեագրված է հոգեբանության ֆակուլտետի ուսանողներին, ասպիրանտներին և դասախոսներին, ինչպես նաև հոգեբանական հետազոտությամբ հետաքրքրվող անձանց:

Առաջին հրատարակություն՝ Փորձարարական հոգեբանություն. Ուսումնական ձեռնարկ/ Հ. Մ. Ավանեսյան. - Եր.: «Էդիթ Պրինտ», 2010, 288 էջ: (ISBN 9789939522470)

ՀՏԴ 159.9.07(07)

ԳՄԴ 88գ7

ISBN 978-5-8084-2522-6

© ԵՊՀ հրատ., 2021

© Ավանեսյան Հ. Մ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	7
«Փորձարարական հոգեբանություն» առարկայի հիմնական թեմաները.....	11
Հիմնական դասագրքերի ցանկ	24
Գլուխ 1. Էմպիրիկ մեթոդները հոգեբանության մեջ.....	28
1.1 Էմպիրիկական մեթոդը գիտական ճանաչողության մեջ	28
1.2. Հոգեբանության մեթոդաբանությունը.....	31
Գլուխ 2. Փորձարարական մեթոդի կայացման նախապայմանները հոգեբանական հետազոտություններում.....	42
2.1. Հետազոտությունների փորձարարական չափանիշների կայացումը	47
2.2. Հոգեչափման քանակական բնույթը	50
2.3. Չափողական սանդղակներ	53
Գրականություն (Գլուխ 1 և 2).....	57
Գլուխ 3. Հոգեբանական հետազոտության մեթոդների համակազմը	59
3.1. Դիտման մեթոդը և դրա տեսակները	70
3.2. Գիտափորձի մեթոդը և դրա տեսակները	80
Գլուխ 4. Հոգեբանության ոչ փորձարարական մեթոդների դասակարգում	99
4.1. Պրոյեկտիվ մեթոդների կիրառման տեսական նախադրյալները փորձարարական հետազոտություններում.....	117
4.2. Փորձարարական ծրագրեր	126
Գրականություն (Գլուխ 3 և 4).....	129
Գլուխ 5. Փորձարարական հետազոտության հիմնական առանձնահատկությունները.....	132
5.1. Անկախ և կախյալ փոփոխականները գիտափորձում.....	132
5.2. Վերահսկողություն արտաքին փոփոխականների նկատմամբ	136
5.3. Քվազիէքսպերիմենտը հոգեբանական հետազոտությունում	140

5.4. Գործոնային գիտափորձ	143
5.4.1. Բազմաչափ, գործոնային գիտափորձ	148
5.5. Մոդելավորող գիտափորձը՝ որպես հետազոտության առանձին մեթոդ	154
5.6. Հետազոտության հոգեֆիզիոլոգիական մեթոդներ	160
5.7. Փորձագիտական գնահատականների մեթոդների կիրառումը	167
Գլուխ 6. Փորձարարական տվյալների տիպերը	177
Գրականություն (Գլուխ 5 և 6).....	182
Գլուխ 7. Հոգեբանական հետազոտությունում օբյեկտիվության չափանիշները.....	183
7.1. Տվյալների տիպերը և վերարտադրման չափանիշները	183
7.2. Հետազոտական տվյալների և մեթոդների օբյեկտիվությունը	185
Գլուխ 8. Հոգեբանական մեթոդների և էմպիրիկ տվյալների դասակարգումն ու մեկնաբանությունը	188
8.1. Պատմականորեն ձևավորված համակարգը	188
8.2. Հետազոտության կազմակերպման ժամանակակից համակարգը	191
8.3. Հոգեբանական հետազոտության մեկնաբանության մոտեցումները	193
8.3.1. Այլընտրանքային մեկնաբանությունները գիտափորձում	196
Գրականություն (Գլուխ 7 և 8).....	197
Գլուխ 9. Հոգեբանական գիտափորձի կազմակերպումն ու անցկացումը	199
9.1. Հասկացություն հետազոտության հիմնահարցի, առարկայի և օբյեկտի մասին	203
9.2. Գիտական վարկածը փորձարարական հետազոտություններում	208
9.3. Գիտական վարկածի հիմնական բնութագրերը	212
Գլուխ 10. Հետազոտական մտածողության տեսակները և ոճերը ..	215
10.1. Հոգեբանական մտածողության ոճերը	219

10.2. Գիտական մտավայրությունների տեսակները.....	222
Գրականություն (Գլուխ 9 և 10).....	227
Գլուխ 11. Մեթոդների ընտրությունը և համալրումը.....	228
11.1 Փորձարարական հետազոտության փուլերը.....	231
Գլուխ 12. Գիտափորձի արդյունքների ներկայացման ձևերը.....	237
Գրականություն (Գլուխ 11 և 12).....	245
Գլուխ 13. Փորձարարական ընտրանք.....	246
Գլուխ 14. Հոգեբանի հետազոտական և պրակտիկ գործունեությանը ներկայացվող բարոյագիտական պահանջները.....	260
14.1. Բարոյագիտական (էթիկական) վերահսկողությունը հոգեբանական գիտափորձում.....	278
Գրականություն (Գլուխ 13 և 14).....	284
Գլուխ 15. Հոգեբանական հետազոտությունների արդյունքների վիճակագրական մշակման մեթոդներ.....	285
15.1. Հիմնական բանաձևեր և գնահատման սանդղակներ.....	296
Գլուխ 16. Գիտահետազոտական աշխատանքի ձևավորման և կառուցվածքի հիմնական պահանջները.....	313
16.1. Գիտական աշխատանքի գնահատման հիմնական չափանիշները.....	324
Գրականություն (Գլուխ 15 և 16).....	327
Հոգեբան-հետազոտողի բառարան.....	328
Գրականության ցանկ.....	357

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փորձարարական հոգեբանությունն առանձնանում է հոգեբանության այլ բնագավառներից նրանով, որ համակարգում է գրեթե բոլոր հոգեբանական ուղղությունների հետազոտական հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները: Այն նաև հոգեբանական հետազոտությունների մեթոդներն ուսումնասիրող հիմնարար գիտակարգ է: Ինչպես յուրաքանչյուր գիտություն, այնպես էլ հոգեբանությունը, ունի իր հետազոտության առարկան, մեթոդաբանությունը և հիմնարար սկզբունքները, որոնք կրում են համագիտական բնույթ: Դրանց հիման վրա են իրականացվում մեթոդների դասակարգումը, ընտրությունը և կիրառումը:

Ժամանակակից փորձարարական հոգեբանությունը գիտականության աստիճանը ճշգրտելու համար ներթափանցում է կիրառական հոգեբանության ուղղությունները: Ուստի անհրաժեշտություն է առաջանում համակողմանի ուսումնասիրելու հոգեբանական տարբեր ուղղությունների մեթոդաբանությունը և դրանց հայեցակարգային առանձնահատկությունները: Հոգեբանության մեթոդաբանության հիմնահարցերի, հետազոտությունների խնդիրների իրականացման և մեթոդների տեղայնացման գործընթացների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանում հոգեբանական դպրոցի զարգացումն այդ ամենը դարձնում է առավել արդիական: Մեր երկրում փոփոխվող սոցիալ-տնտեսական պայմանները, նոր շուկայական փոխհարաբերություններն ու փորձարարական գիտության կայացման ներկա ժամանակահատվածը հոգեբանության բոլոր և հատկապես կիրառական բնագավառների առջև դնում են նոր պատվերներ ու մարտահրավերներ, ինչն առավել ընդգծում է հիմնախնդրի գործնական նշանակությունը:

Ճիշտ է՝ տվյալ գիտակարգը հասել է զարգացվածության բարձր աստիճանի, սակայն առ այսօր չեն դադարում հոգեբանա-

կան գիտական հետազոտություններում գիտափորձի կիրառման հնարավորությունների և դրա արդյունավետության վերաբերյալ վիճահարույց քննարկումները, այսինքն՝ նրա ձևավորման գործընթացը դեռևս հեռու է կատարելությունից: Գիտական հետազոտությունների գիտականությունը պահպանելու համար մշտապես պահանջվում է հետազոտական հայեցակարգերի ճշգրտում, նոր մեթոդների հետազոտում ու համալրում:

Փորձարարական հոգեբանությունը, հիմքում ունենալով փիլիսոփայության հիմնադրույթները, հարստանում է հարակից գիտությունների (մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, սոցիոլոգիա և այլն) գիտելիքներով:

Չգտելով գիտության ավանդական կանոնակարգին՝ փորձարարական հոգեբանությունը հիմնվում է հոգեչափման խիստ պահանջների վրա, որոնք բխում են մետրոլոգիայից, կենսաչափությունից և կենսամեխանիկայից: Ավանդականության հետ մեկտեղ այն ներկայումս ձեռք է բերում զարգացման նոր միտումներ և որոշակի վերապահումներով դիմում հետազոտական, այսպես կոչված, «ազատական» միջոցներին: Սա նշանակում է, որ հաճախ առանձին հետազոտության առարկայի յուրահատկությունները պարտադրում են դիմել ոչ փորձարարական մեթոդների: Ներկայումս փորձարարական հոգեբանության փոխակերպումն ու զարգացումն անխուսափելիորեն կապված են գիտատեխնիկական զարգացման, համակարգչային տեխնոլոգիաների լայն կիրառության, տեղեկատվության դաշտի ընդլայնման և արագության հետ: Այսինքն՝ փորձարարական հոգեբանության բնագավառի ուսումնասիրությունը պահանջում է հիմնարար գիտելիքներ, որոնց ձեռքբերմանը հաճախ խոչընդոտում է հենց առկա գրականության բազմազանությունը, որում հաճախ անորոշ են ներկայացվում մեթոդաբանական հիմունքները, մեթոդների դասակարգումը և հարացույցային (պարադիգմալ) սկզբունքները: Կարելի է արձանագրել նաև, որ այսօր սակավ են հայերեն համա-

պատասխան մենագրությունները, ուսումնական ձեռնարկներն ու դասագրքերը:

Կարևոր է նշել նաև այն փաստը, որ հոգեբանական գիտության մեջ փորձարարական հոգեբանությունը տեսության, հետազոտության, կլինիկական և գործնական բնագավառների միմյանց հարստացնելու գործընթացն ու նրանց փոխադարձ կապն ապահովող գիտակարգ է:

Ներկայումս փորձարարական հոգեբանության և էմպիրիկ հոգեբանության սահմանը դառնում է թափանցիկ և դադարում է հիմնվել միայն բնագիտական սկզբունքների վրա: Այդ սահմանը կրում է նաև հերմենևտիկայի և փիլիսոփայության ազդեցությունը:

«Փորձարարական հետազոտություն» հասկացության կիրառումը պահանջում է ճշգրտություն, քանի որ ոչ բոլոր էմպիրիկ հետազոտություններն են փորձարարական: Առաջին հերթին նրանք տարբերվում են ըստ գիտական մոտեցումների և ուսումնասիրման գործընթացի կազմակերպման: Այդ պատճառով անհրաժեշտ է հիշել, որ ի տարբերություն փորձարարականի՝ էմպիրիկ հետազոտությունն իր եզրակացություններում չի պարունակում փոփոխականների միջև պատճառահետևանքային կապերի մասին պնդումներ, այլ միայն ամրագրում է փոփոխականների փոխկապվածությունը և հավաստիության աստիճանը: Իսկ փորձարարական հետազոտությունում հատուկ ուշադրություն է դարձվում փոփոխականների վերահսկման գործընթացի և նրա ձևի, ինչպես նաև այն փոփոխականների վրա, որոնք կարող են ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդել արդյունքի վրա:

Սույն ձեռնարկի նպատակն է հետազոտության հոգեբանական մեթոդների համակարգերի տրամաբանության և կիրառման ռազմավարությունների յուրահատկությունների իմացության միջոցով ձևավորել հոգեբանի հետազոտական հմտությունները և ներկայացնել նրա մասնագիտական կարգավիճակի նկարագիրը:

Չեռնարկում ներկայացված են հոգեբանական հետազոտության մեթոդների համակազմի, ոչ փորձարարական մեթոդների դասակարգման, էմպիրիկ և փորձարարական մեթոդների, հոգեբանական հետազոտությունում օբյեկտիվության չափանիշների, հոգեբանական գիտափորձի կազմակերպման և անցկացման, մեթոդի և մեթոդիկայի ընտրության, փորձագիտական գնահատականների մեթոդների կիրառման, հետազոտողներին ներկայացվող բարոյական պահանջների, հոգեբանական հետազոտությունների արդյունքների վիճակագրական մշակման մեթոդների նկարագրությունը և տվյալ բնագավառին վերաբերող գրականության ցանկը: Չեռնարկի տարբեր գլուխներում ներկայացված են նախորդող բազմամյա գիտահետազոտական աշխատանքի փորձը և փորձարարական հետազոտություններում ստուգված ու տեղայնացված մեթոդիկաները:

Ուսումնական ձեռնարկի առաջին հրատարակության վերանայումը պայմանավորված է նրանով, որ տասը տարիների ընթացքում ժամանակակից տեխնոլոգիական առաջընթաց է նկատվել և գիտական գործընթացի համընդհանուր համակարգչային փոխակերպումները պահանջում են որոշակի ճշգրտումներ, ինչպես նաև տերմինաբանական պարզաբանումներ հայերենում: Փորձարարական հոգեբանության հիմնական սկզբունքները, մեթոդներն ու կանոնները հաստատուն են, սակայն փորձը հուշում է լրացումների և նոր խմբագրումների անհրաժեշտության մասին:

Ուսումնական ձեռնարկի փոփոխման գործընթացը կատարվել է ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի մեր գործընկերների, ասպիրանտների և ուսանողների շնորհիվ, որոնք դա արել են իրենց արժեքավոր մեկնաբանություններով ու խորհուրդներով: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում ասպիրանտներ Նարե Կարապետյանին, Սեդա Պապոյանին և Մարիամ Մանուկյանին բարձր մասնագիտական գիտելիքների և թիմային աշխատանքի համար:

«ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ

Փորձարարական հոգեբանության առարկայի ուսումնական ծրագրի լիարժեք յուրացումը պահանջում է ինքնուրույն փորձարարություն, ինչպես նաև ստորև բերված թեմաների վերաբերյալ հատուկ գրականության ուսումնասիրություն:

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հոգեբանության մեջ փորձարարական հետազոտությունների րեսուրսյուններին, մեթոդաբանության հիմքերին, ինչպես նաև կողմնորոշել հոգեբանական հետազոտությունների մեթոդների համակարգում ու շնավորել գիտելիքներ՝ հոգեբանական գիտափորձերը ծրագրելու և իրականացնելու համար:

Դասընթացի խնդիրներն են

- ծանոթացնել հոգեբանական փորձերի կազմակերպման ձևերին և հետազոտությունների հիմնական ձևաչափերին, որոնք ուղղված են հոգեբանական վարկածների էմպիրիկ ստուգմանը,
- ծանոթացնել մեթոդների հիմնական դասակարգումներին և գիտափորձերի պլանավորման խնդիրներին,
- մշակել գիտահետազոտական փորձի և հոգեբանի պրակտիկ գործունեության շրջանակներում պլանավորվող և իրականում անցկացվող հետազոտությունների գնահատման չափանիշներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- կիմանա հոգեբանական գիտափորձի կազմակերպման ձևերն ու հետազոտությունների հիմնական ծրագրերը,
- կհասկանա հոգեբանական հետազոտության կազմակերպման տրամաբանությունը և իրականացման ռազմավարությունը,

- կկարողանա ինքնուրույն օգտագործել գիտելիքները գիտավորձերի և էմպիրիկ այլ հետազոտությունների իրականացման համար,
- կկարողանա ինքնուրույն ամփոփել, մշակել և մեկնաբանել հետազոտության արդյունքները:

Դասընթացի տեղը մասնագիտական պատրաստման համակարգում

Տեսական դասընթացը զբաղեցնում է երեք հիմնական դիրք մասնագետի պատրաստման գործընթացում.

1. փորձարարական հոգեբանության դասընթացը հիմնական է և բնագիտական այլ առարկաների հետ միասին կարևորվում է հոգեբան- մասնագետի պատրաստման գործընթացում,
2. «փորձարարական հոգեբանություն» առարկայի ուսումնասիրումը նպաստում է ուսանողի ինքնուրույն հետազոտական աշխատանքի իրականացմանը,
3. «Հոգեդիագնոստիկա» և «Հոգեբանական պրակտիկում» դասընթացների հետ միասին հիմք է դառնում ընդհանուր պրակտիկումների կազմակերպման համար, որոնց շրջանակներում ուսանողները հետազոտական աշխատանքի հմտություններ են ձեռք բերում,
4. որպես հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանական դասընթաց՝ այն նախորդում է հետագայում անցկացվող «Հոգեբանության մեթոդաբանական հիմքեր» դասընթացին:

Դասընթացի բովանդակության յուրացմանը ներկայացվող պահանջները

- Ուսանողները պետք է կարողանան.
- ակտիվորեն կիրառել գիտելիքները գիտավորձերի պլանավորման և այլ էմպիրիկ հետազոտությունների համար,

- գնահատել գիտական հետազոտության փորձարարական վերահսկման ձևերը և վերահսկման համապատասխանությունը եզրակացությանը,
- կատարել մասնագիտական գրականության քննադատական վերլուծություն,
- պատրաստ լինել ինքնուրույն ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրելուն, հետազոտություն անցկացնելուն:

Թեմա 1. Հոգեբանական հեղափոխության զարգացման և կայացման պատմություն, կազմակերպման մեթոդաբանական հիմնահարցեր:

Համառոտագիր. Գիտափորձը՝ որպես հոգեբանական օրինաչափությունների կայացման և տեսաբանելու «սահմանափակման» միջոց, որպես դատողությունների նորմատիվ տրամաբանություն և հոգեբանական վարկածների ստուգման վարպետություն: «Գիտական պարադիգմա» հասկացությունը: «Հետազոտության փորձարարական պարադիգմա» հասկացությունը: Սուբյեկտի ակտիվության խնդիրը: Սուբյեկտ-սուբյեկտ հարաբերությունները յուրաքանչյուր հոգեբանական փորձում: Հետազոտման յուրահատկությունը պատմամշակութային հայեցակարգի սահմաններում. ստիմուլ-միջոցների օգտագործումը և բազիսային գործընթացների մեկնաբանումը: Երկակի ստիմուլյացիայի մեթոդիկաները: Մեթոդի օբյեկտիվությունը և գիտականության չափանիշները հոգեբանության մեջ: Տվյալների վերարտադրումը և միջսուբյեկտիվությունը: Հոգեբանական իրականության յուրահատկությունը: Հոգեբանական դպրոցների և տվյալների հավաքագրման մեթոդաբանության կապը: Հոգեբանական հետազոտությունների մեթոդների օբյեկտիվության չափանիշները: Մեթոդական միջոցների համապատասխանությունը հետազոտության նպատակին: Հոգեբանական վարկածների «ճշմարտացիության»

զնահատումը և ապացույցը «հակառակ կողմից» փորձարարական հետազոտության մեջ: Գիտական իմացության զարգացումը: Գիտական պարադոքսները: Քննադատական վերլուծությունը վարկածների փորձարարական ստուգման ժամանակ և հետազոտողի ստեղծագործ դիրքորոշումը:

Թեմա 2. Փորձարարական մեթոդը՝ որպես հոգեբանական վարկածների ստուգման համակարգ և հեղազոտողի սրակրիկ գործունեության չև:

Համառոտագիր. Հոգեբանական հետազոտության խնդիրները՝ տեսական-փորձարարական, կիրառական, գործնական: Հոգեբանական հետազոտության կազմակերպում: Հետազոտության և հետախուզման նպատակները: Հոգեբանության մեջ փորձարարական մեթոդի նախադրյալները և կայացումը: Մեթոդի տեսության և գիտական իմացության մեթոդաբանության կապը: Փորձարարական հոգեբանության զարգացումը, «մեթոդ» և «հետազոտության մեթոդիկա» հասկացությունների տարբերակումը: Մեթոդը՝ որպես տվյալների հավաքագրման միջոց: Հոգեբանական մեթոդիկաներ և հոգեբանական փոփոխականների առանձնացման խնդիրը: Էմպիրիկ տվյալների տեսակները հոգեբանության մեջ: Վերիֆիկացիա և ֆալսիֆիկացիա: Էմպիրիկ մեթոդները հոգեբանության մեջ: «Գիտական վարկածների էմպիրիկ ստուգում» հասկացությունը: Տեսություններ, վարկածներ և փաստեր հոգեբանական գիտելիքների կառուցվածքում: «Հոգեբանական իրականություն», տեսությունների աշխարհ և փորձարարական մոդելներ:

Գիտափորձ՝ լայն և նեղ իմաստներով: «Առանձին դեպքի վերլուծություն» մեթոդական միջոցի յուրահատկությունը: Խմբերի հետազոտումը (աշխատանք ընտրանքների հետ), փորձերի խմբային անցկացումը և գիտափորձերի միջխմբային սխեմաները: Գիտափորձի՝ որպես հետազոտման ակտիվ մեթոդի մասին

պատկերացումները (հակառակ «պասիվդիտողականի»): Փորձարարական ազդեցության և փոփոխականների տեսակների մասին պատկերացումները: Անկախ փոփոխականի գործառական վերահսկումը՝ որպես հոգեբանական հետազոտության պլանավորման և անցկացման պայման: «Ակտիվ» մեթոդներ՝ այլ իմաստով (հոգեբանական ազդեցությունների կազմակերպում, քննարկումներ, թրեյնինգ, աշխատանքային խաղեր):

Թեմա 3. Գիտափորձը հոգեբանական հետազոտությունների այլ մեթոդների համակարգում: Պասիվ դիտողական հետազոտությունները և ակտիվ փորձառումները հոգեբանության մեջ:

Համառոտագիր. Հոգեբանական հետազոտությունների մեթոդների դասակարգում (դասական և ժամանակակից): Դիտման մեթոդը և անմիջականության կանխադրույթը: Հոգեբանական դիտման տեսակները: Դիտողների հաշվետվություններում սուբյեկտիվ գործոնների վերահսկում: Դիտման մեթոդիկաները փորձարարական սխեմաներում: Դիտումը և փոփոխականների չափումը՝ որպես գիտափորձի պլանավորման պայման: Հոգեբանական սանդղակներ, փոփոխականների չափում և քանակական տվյալների մեկնաբանում: Մեթոդական միջոցների «առարկայական» ուղղվածությունը (ուշադրության, հիշողության, մտածողության առանձնահատկությունների և հուզադրդապատճառային, անձնային հատկությունների բացահայտման մեթոդիկաները կամ «տեխնիկաները»): Հոգեբանական սանդղակավորում և հոգեախտորոշիչ մեթոդիկաները փորձարարական մեթոդի իրականացման դեպքում:

Թեմա 4. Հոգեբանական վարկածներ և տեսական վերակառուցումներ փորձարարական մեթոդի շրջանակներում:

Համառոտագիր. Հոգեբանական վարկածների տեսակները ստուգված գիտափորձում: «Փոփոխականների լեզվով» հոգեբա-

նական օրինաչափությունների նկարագրություն և պատճառահետևանքային կամ կաուզալ մեկնաբանությունների խստությունը՝ որպես հետազոտության փորձարարական մեթոդի յուրահատկություն: Փոփոխականների օպերացիոնալիզացիա: Փորձարարական սվյալների վերլուծության դեպքում էմպիրիկ ամփոփումների և տեսական մեկնաբանությունների համադրման խնդիրը: Հայեցակարգային ռեպլիկացիաներ և փորձարարական վարկածների ստուգման հնարավորությունները տարբեր մեթոդական միջոցներով: Պատճառահետևանքային վարկածների ձևակերպմանը ներկայացվող պահանջները. դրանց դետերմինացված բնույթը և մերժման հնարավորությունները: Պոպուլյացիոն վարկածներ: Վարկածների մակարդակները՝ տեսական, փորձարարական (ներառելով հակավարկածը) և ստատիկ: Կապերի, կառուցվածքային-գործառական կախվածությունների մասին վարկածներ, ախտորոշիչ և այլ տեսակի հոգեբանական վարկածներ: Ամփոփումների մակարդակի և ընդլայնվածության կախվածությունը վարկածների տեսակից և դրանց վերահսկման միջոցներից: Կաուզալ կախվածության մասին եզրակացության իրականացման երեք հիմնական պայմանները: «Հոգեբանական պատճառականության» հանգեցման անհնարին լինելը: Հոգեբանական վարկածների յուրահատկությունը չդիտվող հենքային գործընթացների և չափվող փոփոխականների մասին պատկերացումների տեսանկյունից:

Հոգեբանական իրականության վերակառուցումը գիտափորձերի արդյունքների հիման վրա: Էմպիրիկ փաստ. պատկերացումների հարաբերական լինելն այն մասին, թե ինչն է համարվում էմպիրիկ փաստ տարբեր տեսական մոտեցումների շրջանակներում:

Թեմա 5. Փորձարարական փաստերի և ամփոփումների՝ որպես եզրակացության վերահսկման գործընթացի տրամաբանությունը:

Համառոտագիր. Յուցադրական փորձի տարբերությունը «ճշմարիտ» և «ստուգիչ» գիտափորձերից: Փորձարարական փաստի՝ որպես որոշման ընդունման արդյունքի մասին պատկերացումը: Վարկածին ներկայացվող պահանջները էքսպերիմենտալ հետազոտման հնարավորությունների տեսանկյունից: Կ. Խոլցկամայի առաջարկած բանաձևը, որը համադրում է վարկածների տեսակներն ըստ իրենց էմպիրիկ բեռնվածության և փորձարարական մեթոդի պիտանելիությունը դրանց ստուգման համար: Փորձառումը՝ լայն և նեղ իմաստներով: Գիտափորձը՝ որպես կաուզալ վարկածների ստուգման դեպքում հետազոտողի դատողությունների նորմատիվ միջոց և հոգեբանական վարկածների ստուգման միջոց, որը ենթադրում է տվյալների հավաքագրման որոշակի սխեմաներ (զծանկարներ): Եզրակացության ինդուկտիվ մեթոդները փորձարարական արդյունքի կամ անկախ փոփոխականի ազդեցության արդյունքի մասին որոշման դեպքում: Դեդուկտիվ եզրակացությունը՝ ըստ «modus tollens» սիլոգիզմի և եզրակացությունների ասիմետրիան արտահայտությունների կամ տեսական ամփոփումների ճշտությունը ստուգելու դեպքում: Փորձարարական վարկածի դերը դեդուկտիվ եզրակացության մեջ: Պահանջներ, որոնք պետք է պահպանվեն ճշմարիտ կամ վալիդ եզրակացությունների իրականացման համար՝ արտեֆակտային եզրակացությունները գնահատող հետևություններին անցնելու և «փաստի» կամ «հեղինակությանը» դիմելու արդյունքում: Հետազոտական վարկածների՝ որպես ճշմարիտ բացատրությունների ստուգումը: Մրցակցող տեսություններ և մրցակցող վարկածներ: Հետագա ստուգումների համար փորձարարական վարկածի բաց լինելու հասկացությունը:

Թեմա 6. Հոգեբանական գիտափորձի նախագծման հիմքերը և փորձարարական ծրագրերի դասակարգումը:

Համառոտագիր. Մտային գիտափորձի և էմպիրիկ մեթոդների միջոցով ստուգվող կախվածության դուրսբերում: Մտային փորձառման և մտային պատկերների օգտագործման մասին պատկերացումների տարբերակում (անցկացվող գիտափորձերի վավերականության գնահատման համար): Հարաբերություն անկախ և կախյալ փոփոխականների միջև և հիպոթետիկ կառուցվածքները՝ որպես հոգեբանական վարկածների բաղադրիչներ: Փորձարարական մոդելների և փոփոխականների ներկայացուցչականությունը: Փոփոխականների պլանավորում և օպերացիոնալիզացիա: Փորձարարական արդյունքների նախագծում և կայացում: Բովանդակային և ֆորմալ նախագծում: Պլանի ընտրության կապը խնդրի տեսական հասկացման հետ (պլանների օրինակներ դրդապատճառվածության ուսումնասիրման վերաբերյալ՝ ըստ Հեկհաուզենի): Փորձարարական արդյունքի մասին պատկերացում միջխմբային և անհատական սխեմաներով: Փորձարարական վարկածների առաջադրման վարպետություն և «խնդիրների լուծման» վարպետություն: Փորձարարական տվյալների հիման վրա ընդհանրացումներ, փորձարարական վերահսկման և եզրակացության վերահսկման միջև կապը: Փորձարարական վերահսկման ձևեր: Մինչփորձարարական և փորձարարական պլաններ, դրանց բաղադրամասերը, հնարավոր դասակարգումները:

Առանձին դեպքի վերլուծությունը՝ որպես հատուկ մեթոդական միջոց մինչփորձարարական հոգեբանական ուսումնասիրությունների մեջ: Փոփոխականների և դրանց շեղումների տեսակները գիտափորձում: Կողմնակի, լրացուցիչ և «խառնվող» փոփոխականներ: «Առաջնային» վերահսկում: Հետազոտողի և հետազոտվողի կանխակալ կարծիքների էֆեկտներ: Անկախ փոփոխականի կամ փորձարարական գործոնի կառավարման խնդիրը: Ոչ

սխտեմատիկ փոփոխականության համակարգված խառնուրդները և դրանց վերահսկման ձևերը: Մեկուսացված պայմանների սկզբունքը գիտափորձի ձևական պլանավորման դեպքում: «Ներքին պայմանների» փոփոխականների նկատմամբ նրա կիրառելու հնարավորությունը: Մեկական և համալիր փոփոխականներ:

Հոգեբանական ցուցանիշների և մեթոդիկաների բաղադրիչների ներկայացուցչականությունը: Միջխմբային սխեմաներ: Հետազոտվողի ներկայացուցչականությունը, հետազոտվողների ընտրանքի ներկայացուցչականությունը: Հետազոտվողների խմբերի ընտրության և հավաքագրման մարտավարությունները և պոպուլյացիաների վրա կատարված ընդհանրացումները: Ներանհատական սխեմաներ և խնդիրների, գործոնների, ժամանակի ու հաջորդականության վերահսկում: Ընդհանրացում ներանհատական գիտափորձերի վրա: Ջուզընթաց խառնուրդների վերահսկման սխեմաներ: Պլացեբոյի էֆեկտը: Գործոնային պլաններ: Գործոնային գիտափորձերի անցկացման նպատակներ: Գործոնային գիտափորձերում ստուգվող վարկածների յուրահատկությունը: Փոխգործունեության տեսակները: Փորձարարական արդյունքների գրաֆիկական և վերլուծական ներկայացումը գործոնային պլանների նկատմամբ: Գիտափորձի ծրագիր և տվյալների մշակման գործընթաց:

Թեմա 7. Գիտափորձերի վալիդականությունը՝ որպես փորձարարական վերահսկման նպատակ:

Համառոտագիր. Գիտափորձի պլանավորումը՝ որպես վալիդականության բարձրացման միջոց: «Հուսալիություն», «ներկայացուցչականություն» և «վալիդականություն» հասկացությունները: Վալիդականություն և գիտափորձերի մտավոր պատկերների օգտագործում: Արդյունքների հավաստիությունը և որոշումների ընդունումը փորձարարական կամ հակավարկածի օգտին: Գիտափորձի անցկացման պայմանները՝ որպես մրցակցող վար-

կածների աղբյուր: Վալիդականության տեսակները հոգեբանական գիտափորձի գնահատման դեպքում: Գիտափորձի ներքին վալիդությունը և փորձարարական արդյունքի մասին որոշման ընդունում: Համանմանության խնդրի որոշումը և արտաքին վալիդականություն: Ներքին և արտաքին վալիդականության փոխկապակցվածության տարբերակում ներանհատական և միջխմբային գիտափորձերի համար: Կառուցողական վալիդականություն և հայեցակարգային ռեպլիկացիաներ: Վարկածային կառույցներ և փոփոխականների օպերացիոնալիզացիա: Օպերացիոնալ վալիդականություն: Գիտափորձի վալիդականություն և եզրակացությունների վալիդականություն: Բովանդակային, ձևական պլանավորման խնդիրների և հաջորդող ամփոփումների կապը: Իրական կյանքը «կրկնօրինակող» գիտափորձի արդյունքների հիման վրա ամփոփումների սահմանափակումը: Լաբորատոր գիտափորձում և «դաշտային» հետազոտությունում գիտական մոդելների ստուգման հիման վրա կատարած ամփոփումներ: Գիտափորձի վատ վալիդականության, սխալ վիճակագրական որոշումների, փորձարարական գործոնի ազդեցության մասին սխալ եզրահանգման արդյունքում ստացված արտեֆակտային եզրակացություններ: Եզրահանգումների սխալներ և «ճեղքումներ» ամփոփումներում: Արտեֆակտային եզրակացությունների հիմնական տեսակները:

Թեմա 8. Հոգեբանական գիտափորձերի տեսակների դասակարգում:

Համառոտագիր. Գիտափորձերի տեսակները հոգեբանության մեջ: Դասակարգումների տարբեր մոտեցումները: Լաբորատոր գիտափորձի յուրահատկությունը մաքուր պայմանների ապահովման, առանձին փոփոխականի առանձնացման և հետագա եզրակացությունների հնարավորությունների տեսանկյունից: Գիտափորձում «արհեստական»՝ որպես իրական աշխարհի «բարելավման» առանձնահատկությունները: Ընդհանրացումներ-

րի կախվածությունն անցկացվող գիտափորձի տեսակից: Բնական գիտափորձեր և դաշտային հետազոտություններ հոգեբանության մեջ: Գիտափորձեր ազդեցությունների կազմակերպման ձևերով, որոնք չեն մեկնաբանվում որպես անկախ փոփոխականներ: Չևավորող գիտափորձ, «փորձարարական» մեթոդներ կլինիկական հոգեբանության մեջ: «Բնական» հոգեբանական գիտափորձ և «սոցիալական» գիտափորձեր: Հոգեբանամանկավարժական հետազոտությունները դիտարկվում են որպես մինչփորձարարական և քվազիէքսպերիմենտալ:

Թեմա 9. Կորելյացիոն մոտեցումը հոգեբանական հետազոտություններում:

Համառոտագիր. Փորձարարական մեթոդին հետևելու խստության և սահմանների պայմանականության կապը երեք հետազոտական մոտեցումների միջև՝ փորձարարական (մեղ իմաստով), քվազիէքսպերիմենտալ և կորելյացիոն: Կորելյացիոն մոտեցումը՝ որպես «պասիվդիտողական» հետազոտության մեթոդ: Կորելյացիոն հետազոտությունը՝ որպես գիտափորձ: Կովարիացիաները՝ որպես եզրակացության պայման անկախ փոփոխականի ազդեցության վերաբերյալ: Վիճակագրական որոշումների տարբերությունները կապվածության և տարբերակման չափորոշիչների օգտագործման դեպքում: Կովարիացիաների և կորելյացիաների գործակիցները: Կորելյացիա, դետերմինացիա և ազդեցության էֆեկտ: Վերահսկման ձևերը կորելյացիոն հետազոտություններում: Կորելյացիոն հետազոտությունների հիմնական պլանները: Պատճառահետևանքային հարաբերությունները, մոդելավորումը փոփոխականների միջև: Սխեմաներ, որոնք մշակվում են «կորելյացիոն հետազոտություններից կաուզալ եզրակացություններին» մոտեցման նպատակով:

Թեմա 10. Քվազիգիրափորչ և փորչարարական մեթոդին չգտող հեղազոտություններ:

Համառոտագիր. Հետազոտությունների քվազիէքսպերիմենտալ սխեմաները հոգեբանության մեջ. տարբերություններ ստուգվող վարկածների, վերահսկման ձևերի և եզրակացությունների տրամաբանության մեջ: Քվազիէքսպերիմենտալ մեթոդը փորձարարական վերահսկման ձևերում սահմանափակումների տեսանկյունից: Միջխմբային գիտափորձերի տարբերություններ և քվազիէքսպերիմենտներ՝ ըստ խմբերի ընտրության սկզբունքի և փորձարարական ու վերահսկող պայմանների առաջադրանքների միջոցի: Բազիսային կողմնակի փոփոխականներ և «post factum» վերահսկում: Հոգեգենետիկական հետազոտությունները՝ որպես քվազիէքսպերիմենտներ: Քվազիէքսպերիմենտը հոգեախտորոշիչ մեթոդիկաների մշակման դեպքում: Լոնգիտյուդ հետազոտության իրականացման սխեմաները: Միջմշակութային հետազոտություններ:

Թեմա 11. Հոգեբանական հեղազոտության արդյունքների մշակման, ամփոփման, վերլուծության և ներկայացման պահանջներ:

Համառոտագիր. Հոգեբանական հետազոտության փորձարարական պահանջների յուրահատկությունները և նրա վերլուծության պարադիգմալ պահանջները: Յուրաքանչյուր հոգեբանական հետազոտման արձանագրման միջոցները և վիճակագրական վերլուծության մեթոդները: Հետազոտության արդյունքների վերլուծության բանաձևեր և դրանց համակարգչային տարբերակներ: Գիտահետազոտական աշխատանքի կառուցվածքը: Աղյուսակներ, գծանկարներ, սանդղակներ և այլն: Գիտահետազոտական աշխատանքի ներկայացման և ձևավորման հիմնական պահանջները: Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն և ներկայացում:

Թեմա 12. Հոգեբանի հեղափոխական և պրակտիկ գործունեությանը ներկայացվող բարոյագիտական պահանջները:

Համառոտագիր. Հոգեբան հետազոտողը պարտավոր է պահպանել աշխատանքի բարոյագիտական կարևոր սկզբունքները՝ լինել իրազեկված և կոմպետենտ, ինչը ենթադրում է լավ տեսական նախապատրաստվածություն, հոգեդիագնոստիկ մեթոդիկաների և դրանց գործածման կանոնների խորը իմացություն, համապատասխան մեթոդիկաների պրակտիկ օգտագործման բավականաչափ փորձի առկայություն:

Հոգեբանի բարոյական վարքականոնի պարտադիր բովանդակությունն են կազմում համընդհանուր բնույթ ունեցող մի շարք կարևոր պահանջներ և սկզբունքներ, որոնց պահպանումը պրակտիկ հոգեբանի արդյունավետ գործունեության հիմքն է: Հոգեբանը կարող է իրականացնել միայն այն ծառայությունները և կիրառել միայն այն մեթոդները, որոնց վրա տարածվում է համապատասխան մասնագիտական որակավորումը՝ հաստատված կրթության մասին փաստաթղթերով, հոգեբանության կոնկրետ կիրառական ճյուղերում անցած թրեյնինգների մասին վկայականներով: Այնտեղ, որտեղ ընդունված մասնագիտական չափանիշները դեռ մշակված չեն, հոգեբանը պետք է գործի շատ զգուշորեն՝ կիրառելով բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի պաշտպանի նրանց բարեկեցությունը, ում հետ նա աշխատում է:

Փորձարարական հոգեբանության ուսումնական ծրագրի լիարժեք յուրացումը պահանջում է նաև ինքնուրույն գրականության ուսումնասիրություն:



ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՑԱՆԿ

1. **Արզումանյան Ս. Ջ., Մկրտչյան Ս. Շ., Սարգսյան Վ. Ժ.,** Կիրառական հոգեբանության պրակտիկում. Եր., «Ջանգալ-97», 2002, 258 էջ:
2. **Ավանեսյան Հ. Մ.,** Հոգեբանական գիտափորձերի պրակտիկում. Ուսումնամեթոդական ուղեցույց, Եր., ԵՊՀ հրատ., 2015, 50 էջ:
3. **Ավանեսյան Հ. Մ.,** Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 256 էջ:
4. **Գալստյան Ա. Ս.,** Ուսումնական ձեռնարկ, կազմ.՝ Ռ. Ստեփանյան, Ա. Գալստյան, Եր., ԵՊՀ հրատ., 2012, 210 էջ:
5. Հոգեբանական հետազոտությունների արդի մարտահրավերները, խմբ.՝ Ս. Ս. Ամիրյան, Է. Վ. Ասրիյան, Լ. Ա. Գարգրյան, Ս. Ա. Շահվերդյան, Եր., ԵՊՀ հրատ, 2010, 156 էջ:
6. **Հովհաննիսյան Ս. Վ.,** Մասնագիտական կողմնորոշման հիմունքներ (գործնական հոգեբանություն), Ուս. ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2014 թ., 332 էջ:

7. **Պապրյան Վ., Գալստյան Ա., Սարգսյան Գ., Կարապետյան Մ., Մասնագետի պատրաստման հոգեբանական գնահատում.** Թեստեր և վարժանքներ, Եր., ԵՊՀ հրատ., 2020, 198 էջ:
8. **Ананьев Б. Г.,** О проблемах современного человекознания / АН СССР, Ин-т психол., М.: «Наука», 1977, 379 с.
9. **Боднар А. М. ,** Экспериментальная психология: курс лекций: Учеб. пособие. Екатеринбург: Изд-во Урал. ун-та, 2011, 238 с.
10. **Волков Б. С., Волкова Н. В., Губанов А. В.,** Методология и методы психологического исследования: Учебное пособие для вузов, М.: Академический проект; Фонд «Мир», 2005, 352 с.
11. **Гиппенрейтер Ю. Б.,** Введение в общую психологию. Курс лекций. М., 1996, 336 с.
12. **Готтсданкер Р.,** Основы психологического эксперимента: Учеб. пособие. Пер. с англ., М.: Изд-во Моск. ун-та, 1982, 464 с.
13. **Гудвин Дж.,** Исследование в психологии: методы и планирование. СПб.: «Питер», 2004. - 558 с.
14. **Дорфман Л. Я.,** Методологические основы эмпирической психологии: от понимания к технологии, М.: «Смысл», 2005, 288 с.
15. **Дружинин В. Н.,** Экспериментальная психология: учебник / В. Н. Дружинин. – Санкт-Петербург: «Питер», 2008, 320 с.
16. **Ермолаев О. Ю.,** Математическая статистика для психологов: Учебник /О. Ю. Ермолаев, 3-е изд., испр., М.: Московский психолого-социальный институт: «Флинта», 2004, 336 с.
17. **Кемпбелл Д.,** Модели экспериментов в социальной психологии и прикладных исследованиях / Д. Кэмпбелл. СПб.: Соц-психол центр, 1996, 392 с.
18. **Коновалова М. Д.,** Экспериментальная психология: конспект лекций, Изд-во: «Высшее образование», 2009, 180 с.

19. **Константинов В. В.**, Экспериментальная психология. Курс для практического психолога. СПб.: «Питер», 2006, 272 с.
20. **Корнилова Т. В.**, Экспериментальная психология. Теория и методы: учебник/ Т. В. Корнилова, М.: «Аспект Пресс», 2006, 320 с.
21. **Корнилова Т. В.**, Методологические основы психологии: учебник / Т. В. Корнилова, С. Д. Смирнов, 2-е изд., М.: Изд-во «Юрайт», 2011, 483 с.
22. **Кутейников А. Н.**, Математические методы в психологии: Учебно-методическое пособие, СПб.: Издательство «Речь», 2008, 172 с.
23. **Маклаков А. Г.**, Общая психология, СПб.: «Питер», 2006, 583 с.
24. **Мартин Д.**, Психологические эксперименты. Секреты психики, СПб.: «Прайм-Еврознак», 2004, 480 с.
25. **Никандров В. В.**, Экспериментальная психология. Учебное пособие, СПб.: Издательство «Речь», 2003, 480 с.
26. Практикум по общей, экспериментальной и прикладной психологии./ Под ред. **Крылова А. А., Маничева С. А.**, СПб.: «Питер», 2003, 560 с.
27. **Солсо Р. Л., Джонсон Х. Х., Бил М. К.**, Экспериментальная психология: практический курс, СПб.: «Еврознак», 2001, 528 с.
28. **Сидоренко Е. В.**, Методы математической обработки в психологии, СПб.: «Речь», 2003, 349 с.
29. **Худяков А. И.**, Экспериментальная психология в схемах и комментариях: учебное пособие, СПб.: «Питер», 2008, 320 с.
30. **Burns R. В., Dobson С. В.**, Experimental Psychology, Research Methods and Statistics, 1981.
31. Experimental Psychology, **Barry H. Kantowitz, Henry L. Roediger III, David G. Elmes**, 9th Edition Publisher: Michele Sordi, Wadsworth, 2009.

32. Experimental Psychology. **By John Wiley & Sons, Inc.**, 2003//handbook-of-psychology-vol-04-experimental-psychology.
33. Handbook of Research Methods in Experimental Psychology. Editor: **Stephen F. Davis**, Blackwell Publishing Ltd, 2003.
34. **Cooper H.**, APA Handbook of Research Methods in Psychology// APA Handbooks in Psychology Series, USA, 2012, 2074 p.
35. **Irving B. Weiner**, Handbook of Psychology, Research Methods in Psychology, Volume 2 (John A. Schinka Wayne F. Velicer), Canada, 2003.

ԳԼՈՒԽ 1

ԷՄՊԻՐԻԿ ՄԵԹՈԳՆԵՐԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1. Էմպիրիկական մեթոդը գիտական ճանաչողության մեջ

Գիտարկենք «Էմպիրիկ» հասկացությունը, որն ի հայտ է եկել 16-րդ դարում: Այն փիլիսոփայական ուղղություն է: Հենց այդ ժամանակաշրջանում գիտական մտածողությունը սկսեց դուրս մղել աշխարհի մասին կրոնական հայացքները:

Էմպիրիկմի հիմնադիրը անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնն է: Նրա կարծիքով գիտությունը պետք է ունենա կիրառման բացառապես պրակտիկ ուղղություն, իսկ նրա գլխավոր նպատակն է մարդու կողմից բնության կառավարումը:

Ջ. Գուդվինն առաջարկում է դիտարկել «Էմպիրիկ հարցեր» հասկացությունը, և թե ինչպես է այն անդրադառնում գիտական ճանաչողության վրա: Ընդունված է համարել, որ էմպիրիկական միջոցը ճանաչողության միջոց է ոչ միջնորդավորված դիտման կամ անձնական փորձի օգնությամբ:

Էմպիրիկի հարցերը ենթադրում են համակարգային դիտման կամ գիտական մեթոդաբանության առանձնահատկություններին բնորոշ փորձի հիման վրա հիմնված պատասխաններ: Այդպիսի հարցերը պետք է ձևակերպված լինեն բավականաչափ խստորեն, որպեսզի դրանց պատասխանների հիման վրա հնարավոր լինի անել որոշ ենթադրություններ: Գիտական հարցերի ձևակերպումը ենթադրում է ցանկացած հետազոտության առաջնային փուլ, որտեղ կարելի է նաև իմանալ, թե ինչպես ձևակերպել լավ էմպիրիկ հարց: «Էմպիրիկ հարց» հասկացության ձևակերպումը սկսվում է այն հարցերի հետ նրա համեմատությամբ, որոնց չի կարելի պա-

տասխանել՝ էմպիրիկայի վրա հիմնվելով [Гудвин Дж., 2004]¹: Պիրսը առանց փորձ մեթոդի իլյուստրացիայի համար ներկայացրել է օրինակ, որում դիտարկված են հոգու և մարմնի միջև հարաբերությունները:

Փիլիսոփաները երկար տարիներ բանավիճել են այդ առիթով, և Պիրսի կարծիքով քիչ է հավանականությունը, որ այդ հարցը երբևէ լուծում կստանա: Այն հարցը, թե արդյոք մարմինը և հոգին առանձին են կամ ամբողջություն, չի համարվում էմպիրիկ: Այդ հարցի վերաբերյալ կարելի է տալ շատ էմպիրիկ հարցեր:

Պարզելու համար մտավոր ակտիվության ազդեցությունը (հոգեկան) ֆիզիկական առողջության վրա (մարմին) կարելի է հարցնել՝ ինչպե՞ս է ազդում հոգեբանական սթրեսը իմունային համակարգի վրա, իսկ պարզելու համար մարմնի ազդեցությունը հոգեկան վիճակի վրա, առաջ կքաշենք հետևյալ հարցը՝ ինչպե՞ս է ֆիզիկական հոգնածությունն ազդում խնդիրների լուծման վրա:

Չնայած նրան, որ հոգեբան հետազոտողները կարծում են, որ գիտական մոտեցումը իդեալական է՝ նշված հարցերի պատասխանները ստանալու համար, մեր կյանքում կան հարցեր, որոնց գիտնականները չեն կարող պատասխանել, օրինակ՝ արդյո՞ք գոյություն ունի Աստված, կամ ի՞նչն է ընկած մարդու բնության հիմքում՝ չա՞րը, թե՞ բարին:

Սրանք կարևոր հարցեր են, բայց դրանց գիտականորեն պատասխանելն անհնար է: Իհարկե, հնարավոր է էմպիրիկ հետազոտել փաստեր, որոնք կնպաստեն Աստծո հավատքին կամ այլ լավ և վատ արարքներին: Կարելի է ձևակերպել հետևյալ հարցադրումները՝

- ուժեղանու՞մ է արդյոք Աստծո նկատմամբ հավատքը տարիքին զուգահեռ (այսինքն՝ մահվանը մոտենալիս),

¹ Исследование в психологии: методы и планирование / Дж. Гудвин, 3-е изд., СПб.: «Питер», 2004, 558 с.

- արդյո՞ք քիչ են օգնում շրջապատին, եթե օգնության ծախսը գերազանցում է անձնական շահը:

Ամփոփելով վերոնշյալը՝ հեղինակը հոգեբան-հետազոտողներին անվանում է «սկեպտիկ լավատեսներ»: Նրանք բաց են նոր գաղափարների նկատմամբ և լավատեսական են տրամադրված գիտական մեթոդների նկատմամբ: Հետազոտողները մշտապես մտածում են գիտական նոր գաղափարների ստուգման մասին, նրանք վստահ են, որ ճշմարտությունը ի հայտ կգա, եթե տրվեն ճիշտ էմպիրիկ հարցեր:

Հետևաբար գիտական ճանաչողության էմպիրիկ մակարդակը իրական գոյություն ունեցող օբյեկտների և երևույթների զգայական ուսումնասիրությունն է: Էմպիրիկ մակարդակում գիտնականների գլխավոր խնդիրներն են գիտական փաստերի ամրագրումն ու խմբավորումը:

Հետագայում սկսվում է ճանաչողության տեսական մակարդակը, և կատարվում է էմպիրիկ ճանապարհով ստացված տեղեկատվության մտային մշակում:

Նիկանդրովը, լրացնելով Բ. Գ. Անանևի դասակարգումը, դիտարկում է էմպիրիկ մեթոդների 3 խումբ [Никандров В., 2003]²

1. ուսումնասիրող (դիտում)՝
 - ա) օբյեկտիվ դիտում,
 - բ) ինքնադիտում (ինտրոսպեկցիա),
2. խոսքային (վերբալ)-հաղորդակցական մեթոդներ՝
 - ա) զրույց,
 - բ) հարցում (անկետավորված հարցազրույց),
3. փորձարարական մեթոդներ՝
 - ա) լաբորատոր գիտափորձ,
 - բ) բնական գիտափորձ,
 - գ) ձևավորող գիտափորձ:

² **Никандров В. В.**, Экспериментальная психология. Учебное пособие, СПб.: Изд-во «Речь», 2003, 480 с.

Հոգեդիագնոստիկ մեթոդներ

ա) հոգեդիագնոստիկ թեստեր,

բ) հոգեսենամանտիկ մեթոդներ,

գ) հոգեշարժողական մեթոդներ,

դ) անձի սոցիալ-հոգեբանական ախտորոշման մեթոդներ:

Հոգեբանության ոչ էմպիրիկ մեթոդները հոգեբանական աշխատանքի գիտահետազոտական օրինակներ են՝ հետազոտողի և հետազոտվող օբյեկտի շփման շրջանակներից դուրս:

Վերոնշյալ մեթոդները նախ նպաստում են հոգեբանական տեղեկատվության ստացման կազմակերպմանը, երկրորդ՝ տալիս են տեղեկատվությունը հուսալի գիտական գիտելիքի վերածելու հնարավորություն: Հիմնվելով այս դասակարգման վրա՝ առանձնացնում են ոչ էմպիրիկ երեք խումբ՝ կազմակերպչական, տվյալների մշակման և ոչ մեկնաբանական [Никандров В., 2003]³:

1.2. Հոգեբանության մեթոդաբանությունը

«Մեթոդաբանություն» կամ «մեթոդոլոգիա» եզրույթը ծագում է հունարեն «**methodos**» – «ճանաչության ուղի» և «**logos**» – «գիտություն, ակունքների կամ արմատների իմացություն» բառերից: «Մեթոդաբանություն» նշանակում է տեսական և կիրառական գործունեություն կառուցող ու կազմակերպող հասկացությունների, եղանակների համակարգ, ինչպես նաև հանդես է գալիս որպես այդ համակարգի մասին ուսմունք:

Մեթոդաբանությունն իրականանում է ոչ միայն գիտական գործունեությունում, այլև մարդկային գործունեության բոլոր բնագավառներում՝ տեխնիկական, մանկավարժական, քաղաքական, կառավարման և այլն: Ի սկզբանե մեթոդաբանությունն անուղղակիորեն հանդես էր գալիս աշխարհի հետ մարդու հարաբերման

³ **Никандров В. В.**, Экспериментальная психология. Учебное пособие., СПб.: Изд-во «Речь», 2003, 480 с.

գործընթացում: Հետագայում ռացիոնալ իմացության դաշտում, երբ սկսվեց մտածողության օպերացիաների, դրանց հերթականության ուսումնասիրումը, մեթոդաբանությունն առանձնացվեց որպես հատուկ ոլորտ:

Արտադրության, տեխնիկայի, մշակույթի զարգացմանը զուգընթաց մեթոդաբանությունը դարձավ փիլիսոփայական ռեֆլեքսիայի առարկա և դիտվում էր որպես սոցիալապես հետազոտված իմացության (գիտելիքների), գործողությունների, սկզբունքների, կանոնների համակարգ, որոնք հարաբերվում են օբյեկտիվ իրականության հատկությունների ու կանոնների հետ: Մեթոդաբանության ձևավորված սկզբունքները վերածվեցին նշանակալից արդյունքներ ունենալու, տրամաբանորեն ճիշտ և ապացուցելի եղանակների:

Մեթոդաբանության առաջընթացը պայմանավորված էր նյութական արտադրության, գիտական և հոգևոր ոլորտների ձեռքբերումներով ու հաջողություններով: Օրինակ՝ 17-րդ դարի գիտական հեղափոխությունը (հանգեցրեց արտադրական գործունեության բնույթի փոփոխմանը) նպաստեց նոր մեթոդաբանության ձևավորմանը, ինչն էլ իր հերթին կարևոր դեր խաղաց մարդու հոգեկան գործընթացները ուսումնասիրելու արդյունավետ մոտեցումներ ձևավորելիս: Նշված մեթոդաբանության շնորհիվ առաջացան հոգեբանության ռեֆլեքսների և զուգորդումների մասին ուսմունքները:

Հետագայում հոգեբանության մեթոդաբանությունն էապես հարստացվեց սոցիալական պրակտիկայի ու գիտության ընդհանուր զարգացման շնորհիվ և փիլիսոփայական ընդհանրացում ստացավ դիալեկտիկական մեթոդաբանության շրջանակներում: Դիալեկտիկական մատերիալիստական մեթոդաբանությունն նույնականորեն արտացոլում է տեսության և պրակտիկայի, պրակտիկայի և իմացության հարաբերությունները: Եվ եթե տեսությունն իմացության գործընթացի արդյունք է, ապա մեթոդա-

բանությունը որոշում է այդ իմացությանը հասնելու և այն կառուցելու եղանակները: Գիալեկտիկական մեթոդաբանությունն ունի համընդհանուր բնույթ, բայց այն կոնկրետ բնագավառների համար մասնավորեցվում է տեսական և կիրառական գործունեության: Օրինակ՝ հոգեկանի ուսումնասիրման բնագավառը պահանջում է համապատասխան մեթոդների մշակում:

Մովորաբար փորձարարական հոգեբանության կամ հոգեբանության հետազոտության մեթոդների վերաբերյալ անգլերեն դասագրքերը քննարկում են այն հիմնական մոտեցումները, որոնց պետք է հավատարիմ մնա գիտական աշխատանքը (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և այլ երկրներ) [Irving W., 2003]⁴: Մեթոդաբանության այսպիսի դիտարկումը կարելի է բնութագրել որպես պրագմատիկ, ինչը հոգեբանական հետազոտությունների կազմակերպումը դարձնում է մատչելի և ավելի ճկուն: Հոգեբանության ուսումնասիրության հիմնական մոտեցումները հետևյալն են.

- նոմոթետիկ կամ քանակական մոտեցում (Nomothetic),
- իդիոգրաֆիկ կամ որակական մոտեցում (Idiographic),
- հոգեբանության հետազոտական նախագծում կամ հետազոտական ծրագրեր, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ նկարագրական կամ որակական, հարաբերակցային և փորձարարական (Research Designs),
- նկարագրական ուսումնասիրություններ (Descriptive Studies),
- հարաբերակցության ուսումնասիրություն (Correlational Study),
- գիտափորձեր (Experiments),

⁴ **Irving B. W.**, Handbook of Psychology, Research Methods in Psychology, Volume 2 (John A. Schinka Wayne F. Velicer), Canada, 2003; Introduction to Psychology, http://en.wikibooks.org/wiki/Introduction_to_Psychology.

- նատուրալիստական կամ բնական դիտում (Naturalistic Observation),
- ինքնահաշվետվություն (Self-Report),
- եզակի դեպքի ուսումնասիրություն (Case Studies),
- տեղեկատվության ձևավորում, այսինքն՝ վիճակագրական մշակում և արդյունքների ներկայացում (Information Display):

Արդի պայմաններում անհրաժեշտաբար տեղի է ունենում տարբեր գիտական ճյուղերի և մասնագիտությունների փոխադարձ ներթափանցման գործընթաց: Այստեղ այժմեական են դառնում, այսպես կոչված, համագիտական մեթոդները, որոնք ապահովում են տարբեր գիտակարգերի, կատեգորիաների և գիտելիքների սերտացումը:

Մեթոդաբանությունն ուղղակիորեն կապված է աշխարհայացքի հետ, քանի որ դրա սկզբունքների, ցուցումների ու կարգավորիչների ողջ համակարգը ենթադրում է հետազոտության հիմքերի և արդյունքների աշխարհայացքային մեկնաբանություն:

Հոգեբանական տարբեր ուղղությունների մեթոդաբանությունը շաղկապված է դրանց աշխարհայացքային ուղղվածություններին: Օրինակ՝ բիհևիորիզմի մեթոդաբանությունը սերտորեն կապված է վարքի մասին մեխանիստական պատկերացումներին, ֆրոյդիզմում անձի ուսումնասիրումը պայմանավորված է այնպիսի աշխարհայացքային կողմնորոշիչներով, ինչպիսիք են իռացիոնալիզմը, մարդու կենսագործունեության անձնային իմաստի հակադրումը զարգացման սոցիալական պայմաններին, սեքսուալ գործոնների ազդեցության գերաճը (հիպերտրոֆիան) և այլն:

Մեթոդաբանությունը ներառում է հետազոտության կոնկրետ գիտական հնարքների լայն շրջանակ՝ դիտում, գիտափորձ, մոդելավորում և այլն:

Մեթոդաբանության տարբեր մակարդակները (փիլիսոփայական, ընդհանուր գիտական, կոնկրետ գիտական) գտնվում են մի-

մյանցից կախման մեջ և պետք է դիտարկվեն համակարգայնորեն: Առաջադրված հիմնախնդրի գնահատման մեթոդների համապատասխանությունը հոգեբանական հետազոտությունները մոտեցրեց յուրահատուկ դիտարկման հիմքերին: Մեթոդաբանությունը՝ որպես մեթոդների մասին ուսմունք, կարող է հավակնել հոգեբանությունում հարաբերականորեն անկախ գիտակարգի կարգավիճակի: Այսօր փորձարարական մեթոդի մասին պատկերացումներն անմիջականորեն չեն առնչվում հետազոտողի կողմից այս կամ այն տեսական դիրքորոշմանը՝ բացառությամբ «պլացեբո էֆեկտի» դրսևորման իրավիճակների, թեև հոգեբանական վարկածների ձևակերպումն ու փորձարարական ճանապարհով ստացված արդյունքների մեկնաբանությունը տեսությունից անկախ լինել չեն կարող: Այս տեսանկյունից էլ, տեսական կառույցով պայմանավորված, ծագում է հոգեբանական գիտելիքների շրջանում փորձի ծրագրավորման հարցը:

Դ. Լուբովսկին [Лубовский Д., 2007], վերլուծելով վերջին տարիների ռուսական ուսումնասիրությունները, առաջարկում է մեթոդաբանական գիտելիքների հստակ մոդել, որում առանձնանում են չորս մակարդակ՝

1. փիլիսոփայական մեթոդաբանության մակարդակ,
2. ընդհանուր գիտական մեթոդաբանության մակարդակ,
3. հատուկ գիտական մեթոդաբանության մակարդակ,
4. ընթացակարգի և հետազոտության տեխնիկայի մակարդակ⁵:

Այս դասակարգման 4-րդ մակարդակը համապատասխանում է հետազոտության նախագծմանը կամ հետազոտական ծրագրերի դիզայնին (Research Designs):

Հոգեբանական վերլուծության բազմատեսակ ձևերն ինքնին հոգեբանական խնդիր են: Նման բազմազանության խնդրայնու-

⁵ Лубовский Д. В., Введение в методологические основы психологии, М.: «Воронеж»: Моск. психолого-социал. ин-т., 2005, 224 с.

թյունը բացահայտ է դառնում, երբ համեմատության մեջ են դրվում Պ. Ֆրեսի և Ժ. Պիաժեի հայեցակարգերը: Միևնույն ժամանակ հնարավոր են որոշակի լուծումներ, եթե առաջնորդվենք տարբեր մեթոդաբանական հիմքերով:

Ամերիկյան փորձարարական հոգեբանության առաջին հիմնադիրը Ս. Հոլմ է, որը երեք տարի Լայպցիգում ուսանել է Վ. Վունդտի մոտ: Նա հետագայում դարձել է Ամերիկյան հոգեբանների միության (American Psychological Association) առաջին նախագահը: Մարդու և կենդանիների զարգացման փուլայնության ուսումնասիրան մեջ Հոլը դուրս է գալիս լաբորատոր գիտափորձի սահմաններից: Նրա հիմնական աշխատանքը վերաբերում է տարիքային հոգեբանությանը, մասնավորապես պատանեկության տարիքին:

Մյուս ոչ պակաս հայտնի հետազոտողներից է Դ. Կետելը, որն ամերիկյան տարբեր համալսարաններում ստեղծել է երկու լաբորատորիա: Նրա փորձարարական հետազոտությունները (զուգորդումների, հակազդման ժամանակի, ընթերցման, հոգեֆիզիկայի ոլորտում) հիմնականում վերաբերում են անձի անհատական տարբերություններին: Նա առաջինն էր, որը ներմուծեց «մտավոր թեստ» (mental test) հասկացությունը: Նրա հետևորդներից են ուսուցման հետազոտություններում փորձի և սխալի մեթոդի հեղինակ Է. Լ. Տորնդայքը և «Փորձարարական հոգեբանություն» առաջին դասագրքի հեղինակ Ռ. Ս. Վուդվորդը: Վերջինս ԱՄՆ-ում ֆունկցիոնալ հոգեբանության առաջնորդներից է, որն ուսումնասիրել է անհատի կողմից հոգեկան գործառույթների միջոցով փոփոխական միջավայրին հարմարվելու, ինչպես նաև հարմարման լավագույն ուղիները գտնելու յուրահատկությունները:

Այսպիսով, փորձարարական առաջին աշխատանքներում մեթոդաբանական հեռանկարը հնարավորություն էր տալիս բացահայտելու փորձարարարական մեթոդի ընդհանուր հիմքերը:

Ֆրանսիայում գիտական հոգեբանության զարգացումը կապում են Տ. Ռիբոյի անվան հետ: Վերջինս բավարար էր համարում հետազոտման դիագնոստիկ մեթոդի կիրառումը: Սակայն հենց Տ. Ռիբոն ձևավորեց փորձարարական հոգեբանության առարկայի մասին այնպիսի պատկերացումներ, որոնց համաձայն՝ վերջինս պետք է զբաղվի ոչ թե մետաֆիզիկայով կամ ոգու էության մասին քննարկումներով, այլ հոգեկան երևույթների օրենքների և առաջնային պատճառների բացահայտմամբ: Նա հիվանդությունը դիտարկում էր որպես բնության կողմից առաջադրված գիտափորձ և այդ տեսանկյունից ուսումնասիրում անձի՝ ուշադրության, հիշողության, կամքի և այլ հիվանդություններ:

Հետագայում Ա. Բինեն և Ժ. Պիաժեն զարգացրին մարդու ուսումնասիրման ամբողջական մոտեցման գաղափարը, որը, ըստ Տ. Ռիբոյի, չէր հանգում ո՛չ գերմանական ատոմիզմին, ո՛չ անգլիական ասոցիանիզմին: Հետազոտման առաջին ջատագովներից են եղել նաև Պ. Ժանեն, Ա. Բինեն, Ջ. Ֆրոյդը, որոնք իրենց վրա զգացել են ֆրանսիացի հոգեբույժ Ժ. Շարկոյի ազդեցությունը: Նշված հեղինակները դիտման, ժառանգական, ախտաբանական հոգեբանության մեթոդները լրացնում էին հոգեբանական հետազոտման միջոցներով:

Վարքի դրդապատճառների և նպատակային կառավարման վերաբերյալ Կ. Լևինի փորձարարական հետազոտությունները փոխարինվեցին ամերիկյան սոցիալական հոգեբանությունով: Նրա տեսանկյունն այն մասին, որ վարքը շրջապատի և անձի գործառույթն է, պահպանվեց ու հետագայում լրամշակվեց Հ. Հենկհաուզենի կողմից: Լևինի աշակերտ Բ. Վ. Ջեյգարնիկը շարունակեց անհատական հետազոտման մեթոդի զարգացումը:

Հետազոտման չափանիշների իմաստավորման առաջին փորձը կապվում է Ա. Ֆ. Լազուրսկու անվան հետ (1910 թ.): Նրան է պատկանում «կույր փորձի» հնարը, երբ հետազոտվողը տեղյակ չէ, որ ենթարկվում է հոգեբանական հետազոտման: Լա-

գուրսկու պատկերացմամբ բնական գիտափորձը պետք է ներառի դիտում ու գիտափորձ: Այսինքն՝ ենթադրվում էր ոչ թե նպատակային ներգործման վերահսկում, այլ այս կամ այն դիտարկվող օրինաչափությամբ նախաձեռնողական իրավիճակի ստեղծում: Եթե դիտարկելու լինենք փորձի արտաքին վալիդության ժամանակակից չափանիշները ներառող իրական պայմաններին հետազոտվող գործոնների համապատասխանության խնդիրը, ապա կարելի է ասել, որ Լազուրսկին կանխատեսել է փորձի դասակարգումն ըստ փոփոխականի տիպի՝ «իրական աշխարհը» կրկնօրինակող փորձ, «արհեստական» փորձ և լաբորատոր փորձ:

Հետագայում ստեղծվեցին նոր մոտեցումներ՝ պայմանականորեն մոտ փորձարարականին, որոնք տարբերվում էին վերահսկման ձևերով: Օրինակ՝ «կրկնակի խթանման» մեթոդների համակարգը (Լ. Ս. Վիգոտսկի) և «մտավոր գործողությունների ու հասկացությունների փուլ առ փուլ զարգացման» մեթոդը (Պ. Յա. Գալպերին): Երկուսն էլ տարբերվում են հոգեբանական վարկածի կառուցվածքի մեկնաբանության տեսանկյունից: Նրանք առաջադրում են վարկածի ուսումնասիրման կառուցվածքային-գործառական կողմնորոշիչներ, որոնք ներառում են ախտորոշման բաղադրամաս (բազիսային գործընթացների ներքին կառուցվածքը) և ինքնավերահսկման մեծ տիրույթ (դիապագոն) «Փորձարարական գործունեությունում» սովորական փորձարարական ընթացքի համեմատությամբ:

Պոզիտիվիզմի հիմնադիր Օ. Կոնտը 19-րդ դարի կեսերին առաջարկել է մարդկային գիտելիքների զարգացման հայեցակարգ: Նա քննարկել է գիտելիքների հաջորդաբար, մեկը մյուսին փոխարինող **երեք** ձև՝

1. **կրոնական**, որը հիմնված է ավանդույթի և անհատական հավատի վրա,
2. **փիլիսոփայական**, որը հիմնված է այս կամ այն հեղինակի ներըմբռնողության կամ այլ տեսության վրա,

3. **պոզիտիվ**, որը գիտական գիտելիք է՝ հիմնված նպատակաուղղված դիտարկման կամ հետազոտման ընթացքում փաստերի արձանագրման վրա:

Մարդկային գիտելիքների հին՝ կրոնական և փիլիսոփայական ձևերը պետք է անխուսափելիորեն ոչնչանան և դառնան մշակույթի պատմության ուսումնասիրման առարկա: Սակայն չնայած պոզիտիվ (գիտական) գիտելիքի հաղթանակին՝ 20-րդ դարը չի ժխտել ո՛չ փիլիսոփայական, ո՛չ կրոնական գիտելիքները: Հետևաբար խոսք կարող է լինել ոչ թե մի գիտելիքը մյուսով փոխարինելու, այլ քաղաքակրթության զարգացման ընթացքում գիտելիքի այս կամ այն ձևի գերակայության մասին:

«Հոգեբանությունը» եզրույթ է, որը կարող է կիրառվել մարդկային պրակտիկայի և գիտելիքի տարբեր տեսակների համար: Հոգեբանությունը նախևառաջ գոյություն ունի որպես մարդկանց միացյալ գիտելիքների համակարգ՝ այլ մարդկանց «հոգեկանի», վարքի, սեփական և այլոց հոգևոր կյանքի զարգացման առանձնահատկությունների ու օրինաչափությունների մասին: Այդ «անօրենական» հոգեբանությունն այսօր դարձել է գիտական հոգեբանության ուսումնասիրության առարկան, նրա ճյուղերից մեկը: Երկրորդ, գոյություն ունի նաև «փիլիսոփայական հոգեբանություն»: Իդեալականի և նյութականի փոխհարաբերության մասին փիլիսոփայության տեսական մոտեցումը, թե ինչն է առաջնային, ինչը՝ երկրորդային, չի կարող մույնիսկ ձևակերպվել առանց քիչ թե շատ հստակ, գոյություն ունեցող իդեալական (սուբյեկտիվ, հոգևոր, հոգեբանական) մտքի: Ուստի փիլիսոփաների մեծամասնությունը հորինել է հոգեկանի մասին տեսությունը, ստեղծել է պատկերացումներ անհատի, նրա զարգացման առանձնահատկությունների, օբյեկտիվ և սուբյեկտիվ փոխհարաբերությունների մասին:

«Փիլիսոփայական հոգեբանության» շրջանակներում մինչ օրս ստեղծվում են հոգեկանի կամ նրա առանձին ենթահամա-

կարգերի մոդելներ, որոնք գիտական հոգեբանության համար վարկածի աղբյուր են ծառայում և բացի դրանից՝ հնարավորություն են տալիս մեկնաբանելու էմպիրիկ և տեսական հոգեբանական գիտելիքի տարբեր տարրերը:

Եվ 19-րդ դարում ձևավորված հոգեբանությունը, որն ուներ բնագիտական հիմքեր, մարդկային վարքագծի արտացոլման ու կարգավորման տեսակետ է և կարող է հետազոտվել օբյեկտիվ մեթոդներով: Մատերիալիզմի, օբյեկտիվության և դետերմինիզմի սկզբունքներն ընկած են հոգեկանի ուսումնասիրման բնագիտական մոտեցման հիմքում: Հոգեբանությունը՝ որպես բնագիտության մեթոդաբանությունն ընդունած գիտություն, կազմավորվել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարասկզբին:

Գերմանացի փիլիսոփա Վ. Դիլթայն առանձին-առանձին քննարկել է «Հոգու մասին գիտությունները» և արտաքին աշխարհի մասին գիտությունները: Առաջինի շարքին նա դասում է փիլիսոփայությունը, բարոյագիտությունը, գեղագիտությունը, լեզվաբանությունը, իրավագիտությունը և մի շարք այլ գիտություններ, իսկ երկրորդին՝ ֆիզիկան, քիմիան, երկրաբանությունը, կենսաբանությունը և բնական այլ գիտություններ: Նա հոգեբանությունը սահմանում է որպես հիմնարար գիտություն, որից սկիզբ են առնում հոգու մասին բոլոր գիտությունները: Այս գիտությունից սերվում է «Հոգու մասին գիտությունների» հիմնական ըմբռնողության մեթոդը:


Դիլթայնի կարծիքով հոգեբանությունը էմպիրիկ գիտություն է, սակայն հոգեբանության մեջ էմպիրիկ գիտելիքի էությունն այլ է, քան բնական գիտություններում: Հումանիտար հոգեբանական գիտելիքը մոտ է առօրյա փորձին, նրա բովանդակությունը հայտնի և ամրագրված է մշակույթում, այդ պատճառով էլ այն չի պարունակում բնագիտական իմաստով նորություններ: Իմացության չափանիշ է ոչ թե իսկության (ճշտության) անճշտության (կեղծու-

թյան) հաստատումը, այլ «իսկականությունը» (վավերականությունը):

Ճանաչողությունը՝ որպես ուսումնասիրման մեթոդ, առկա է ցանկացած հոգեբանական հետազոտության գործընթացում: Բացի դրանից՝ մի շարք ուսումնասիրություններ առանձնացնում են հումանիտար հոգեբանությունը որպես հոգեբանական ճանաչողության հատուկ ոլորտ, որտեղ գլխավոր մեթոդը հայեցողությունն է: Բնագիտական մոտեցումը հոգեբաններին կողմնորոշում է դեպի մարդու և կենդանիների արտաքուստ դիտարկվող ակտիվության հետազոտմանը: Հոգեբանությունը դասվում է գիտությունների շարքին, իսկ դիտարկումը, չափումը և հետազոտումը հոգեբանության մեջ անվանում են վարքագծի ուսումնասիրության մեթոդներ:

Մարդու վարքագիծը բաժանվում է բանավորի և ոչ բանավորի (առարկայական գործողություն, ոչ խոսքային հաղորդակցություն): Հետազոտման եղանակները բանավոր և ոչ բանավոր վարքագիծը գրանցող մեթոդիկաներն են:

Փորձարարական հոգեբանությունը հաճախ արժանանում է տարբեր բնույթի քննադատության (նկար 2), ինչն էլ իր հերթին գիտնականների ստեղծարարությունը խթանող գործոն է և նպաստում է բնագավառի հետագա զարգացմանն ու կայացմանը:



Նկար 1. Փորձարարական հոգեբանությունը տարբեր քննադատությունների փիրախ էր:

ԳԼՈՒԽ 2
ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԱՅԱՑՄԱՆ
ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոգեբանության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 18-րդ դարից սկսած՝ քննարկվում էր հոգեբանական գիտելիքների կայացման հիմնահարցը, որին զուգահեռ կուտակվում էին ռացիոնալ և էմպիրիկ հոգեբանության մասին պատկերացումները: 19-րդ դարում ի հայտ եկան տարբեր հոգեբանական լաբորատորիաներ, և իրականացվեցին առաջին էմպիրիկ հետազոտությունները, որոնք կոչվեցին փորձարարական, թեև, ըստ էության, այդպիսին չէին: Առաջին լաբորատորիայում, որը հիմնադրել է Վ. Վուները, կիրառվել է փորձարարական ինտրոսպեկցիայի մեթոդը: Միևնույն ժամանակ Լ. Ֆեխները մշակել է հոգեֆիզիկական փորձի կառուցման հիմքերը, որոնք դիտարկվում էին իբրև հետազոտվողի զգայությունների վերաբերյալ տվյալների հավաքագրման միջոց՝ կապված առաջադրվող ազդակների ֆիզիկական բնութագրիչների փոփոխման հետ:

Վերոհիշյալ նախագծերը հենց փորձարարական չէին, քանզի հետազոտական նպատակները՝ չափումը կամ սուբյեկտիվ սանդղակի կազմումը, պատճառահետևանքային վարկածի ստուգումը, չէին միահյուսվում մեկ ընդհանուր հետազոտական նպատակի մեջ: Այս առիթով տեղին է հիշատակել Գ. Էբինհաուզին, որը, ուսումնասիրելով մտապահման և մոռացման օրինաչափությունները, հանգել է ժամանակակից հոգեբանությունում ընդունված փորձարարական չափանիշներին: Էմպիրիկ հոգեբանությունում գիտակցության հետազոտման պատմությունը ցույց է տալիս, որ հոգեբանական տվյալների ստացման մի շարք հասուկ եղանակների բացահայտմանը նախորդել են փորձարարական ներգործությունների նախագծերի մշակումը:

Փորձարարական հոգեբանության լիարժեք ուսումնասիրությունը ենթադրում է նաև Վ. Վունդտի, Գ. Էբինհաուզի և Լ. Ֆելսների մասնագիտական կայացման կենսագրական ուղու իմացություն:

Առաջին հոգեբանական փորձարարական լաբորատորիայի հիմնադիր հոգեբան և ֆիզիոլոգ Վ. Վունդտը ծնվել է 1832 թ. օգոստոսի 16-ին Գերմանիայում: 19-րդ դարի հիսունականների սկզբներին Հայդելբերգի, Թյուբինգենի և Բեռլինի համալսարաններում ուսումնասիրել է բժշկագիտություն (բժշկություն): 1855 թ. ստացել է դոկտորի աստիճան: Միառժամանակ դասախոսել է Հայդելբերգի համալսարանում, որպես լաբորանտ աշխատել Հերման ֆոն Հելմհոլցի մոտ: Այդ շրջանում արդեն իսկ սկսել է հետաքրքրվել հոգեֆիզիոլոգիական և հոգեբանական խնդիրներով: 1858-1862 թթ. հրատարակել է զգայությունների մասին հոդվածների շարք, որտեղ նշում է, որ հոգեբանությունը գիտություն է բնության մասին, հետևաբար այն պետք է կիրառի բնագիտական մեթոդներ: Այս հոդվածներում նա առաջին անգամ կիրառել է «փորձարարական հոգեբանություն» հասկացությունը: 1863 թ. լույս է տեսել Վունդտի «Դասախոսություններ մարդու և կենդանիների հոգու մասին», 1873-1874 թթ.՝ «Ֆիզիոլոգիական հոգեբանության հիմունքներ» գիրքը: 1875 թ. Վունդտը դարձել է լայպցիգյան համալսարանի փիլիսոփայության պրոֆեսոր: 1879 թ. Լայպցիգում հիմնել է առաջին հոգեբանական լաբորատորիան, որտեղ փորձարարական մեթոդներով հետազոտվում էին զգայությունները, հակազդման օրինաչափությունները, ուշադրությունը, գուգորդումները (ասոցիացիաները), մարդու պարզագույն զգացմունքները: 1881 թ. Վունդտը հիմնադրել է «Փիլիսոփայական ուսմունքներ» պարբերականը, որը 1906 թ. վերանվանել է «Հոգեբանական ուսմունքներ»: Նա գտնում էր, որ փորձարարական հետազոտության կարելի է ենթարկել միայն պարզագույն հոգեկան գործընթացները՝ զգայությունը, ընկալումը, սակայն առավել

բարդ հոգեկան երևույթներ, ինչպիսիք են հիշողությունը, մտածողությունը, որոնք կապված են բազմաթիվ հասարակական մշակութային գործոնների հետ, անհրաժեշտաբար պետք է դիտարկվեն պատմամշակութային համատեքստում:

1900-1920 թթ. հրատարակվել է մշակութապատմական հոգեբանությանը վերաբերող «Ժողովուրդների հոգեբանություն» տասհատորյակը, որտեղ նա անդրադարձել է մշակույթի պատմական զարգացման և մարդու հոգեկանի փոխհարաբերությունների բազմաթիվ խնդիրների:

Գերմանացի հոգեբան, փիլիսոփա, հոգեֆիզիկայի հիմնադիր Լ. Ֆեխները ծնվել է 1801 թ. Գերմանիայում: 1817 թ. ընդունվել է Լայպցիգի համալսարանի բժշկական ֆակուլտետ, որտեղ դասախոսություն էր կարդում Վեբերը, որի ազդեցությունն ակնհայտորեն նկատելի է Ֆեխների հետագա գիտական գործունեության մեջ: Ֆեխներն ուներ գիտական հետաքրքրությունների մեծ շրջանակ: Նա հետաքրքրվում էր փիլիսոփայական խնդիրներով, ուսումնասիրում և դասավանդում ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա: 1930-ականների վերջերին նրան սկսել են հետաքրքրել զգայությունների առնչվող խնդիրները: 1835 թ. Ֆեխները դարձել է Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր: 1844 թ. առողջական վիճակի պատճառով Ֆեխներն ազատվել է աշխատանքից: Այդուհանդերձ, հետագայում նրա առողջությունը լավացել է և մնացել հարաբերականորեն կայուն մինչև նրա կյանքի վերջը:

Գերմանացի հոգեբան Գ. Էբինհաուզն առաջինն էր, որը հրաժարվեց ինտրոսպեկցիայից՝ առաջադրելով հոգեբանական հետազոտություններում կիրառել օբյեկտիվ մեթոդը: Նա նաև բացահայտեց հմտությունների ուսումնասիրման փորձարարական ուղին, որը շարունակում է բիհևիորիստների կողմից առաջ քաշված օբյեկտիվության հասկացումն այլ հիմքերի վրա:

Բիհևիորիստական (վարքաբանական) հետազոտություններն առաջնային ուշադրություն էին դարձնում խթանիչ գործոն-

ներին, սակայն անտեսում էին անբացատրելի և արտաքին դիտարկման համար անհասանելի հիմնարար գործընթացների հոգեբանական դիտարկումը: Անհրաժեշտություն է առաջանում տարբերակելու հոգեբանական և ֆիզիկական (ենթադրվում է նյութական գործողության) պատճառականությունները, որպեսզի անարդարացիորեն չնույնականացվեն բիոհիորիստական և հոգեբանական գիտափորձերը, որոնցում գործող պատճառային և խթանիչ գործոնները մեկնաբանվում են տարբեր ձևերով: Նման տարբերակումը բազմաթիվ վեճերի առիթ է ստեղծել հոգեբանական հետազոտման ոլորտում, ինչը հանգեցրել է փորձարարական և ոչ փորձարարական հոգեբանությունների հակադրմանը: Նույնիսկ ժամանակակից հոգեբանությունում այլ երանգավորում ստանալով՝ այդ բանավեճը շարունակվում է: Իբրև նման վեճի դրական ելք կարելի է դիտարկել.

- հոգեբանությունում գիտականության չափանիշների և փորձարարական կապերի կայացումը,
- ռեֆլեքսիայի բովանդակային ամբողջականացման անհրաժեշտությունը տարբեր մեթոդների միջոցով հոգեբանական իրականության մտովի վերակառուցման արդյունքում, շատ երկրներում, այդ թվում՝ և Հայաստանում հոգեբանության դպրոցի այժմյան վերակառուցումը և նոր մտտեցումների (հումանիտար) ներմուծումը:

Լայացիզը հատուկ տեղ է գրավում փորձարարական մեթոդի կայացման պատմությունում: Այդ ժամանակաշրջանում հայտնի են նաև Լ. Ֆելսների աշխատանքները: Վերջինս հոգեբանությունում ներմուծել է զգայությունների չափման երեք դասական մեթոդներ: Նա նաև ձևակերպել է հոգեֆիզիկական օրենքի սահմանումը. զգայության ուժի լոգարիթմական աճը կապված է ազդակի ուժի հետ: Ֆելսներիան մեթոդիկաները հետագայում անվանվել են շեմային չափումների դասական մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր դարձավ զգայության սուբյեկտիվ սանդղակի կառուցումը:

Վ. Վունդտը, որը փորձը համարում է ցածրագույն գործընթացների ուսումնասիրման մեթոդ, բարձրագույն գործընթացների ուսումնասիրման համար առաջադրում է այլ առարկա՝ «Ազգերի հոգեբանություն» (Die Volkerpsychologie): Փորձարարական մեթոդի համար նա կիրառում է երկու չափանիշներ, որոնք լրացնում են ինտրոսպեկցիայի մեթոդը.

1. պայմանների չափագրում, որը տարբեր հետազոտությունների տվյալների համեմատման հնարավորություն կտա,
2. ցուցանիշների վերլուծական համեմատում, ինչը հնարավորություն է տալիս սուբյեկտիվ իրականության ամբողջական նկարագրությունից անցնելու փոփոխականների առանձնացմանը:

Այսպիսով, վերահսկվող պայմաններում գործընթացների վերլուծական համեմատումը և արդյունքների վերարտադրողությունը ծառայեցին որպես բացատրական հոգեբանության անցման չափանիշ: Հոգեբանությունում գիտականության չափանիշն էականորեն փոխվեց: Այնուամենայնիվ, ինչքան էլ ուսումնասիրման առարկայի վերաբերյալ տարածայնություններ կային վյուրցբյուրգյան դպրոցում կամ գեշտալտ հոգեբանությունում, ֆունկցիոնալիզմի կամ բիհևիորիզմի սահմաններում, հետազոտման մեջ այս ուղղություններն ունեին նույն սկիզբը: Այս ընդհանրությունը տանում է տեսական հիմնավորումներից դեպի փորձարարական բեռնվածություն, հիմքում ընկած գործընթացների մասին պատկերացումներից դեպի փորձարարական վերահսկման միջոցների կիրառում, պատճառահետևանքային հարաբերակցման ընդհանրացում ու մեկնաբանում:

2.1. Հետազոտությունների փորձարարական չափանիշների կայացումը

Հոգեբանական գիտության կոնկրետ ոլորտներում փորձարարական չափանիշների ձևավորումը՝ իբրև փորձարարական վերահսկում, տարբերվում է էմպիրիկ հետազոտության մյուս տիպերից: Այդ ընթացքում հոգեբանության յուրաքանչյուր ոլորտում ձևավորվում և հաստատվում են հետազոտման լավագույն ձևեր: Այսպիսով, սոցիալական հոգեբանության մեջ ստեղծվել են փորձարարական և վերահսկիչ խմբերի կիրառման նախագծերը, մանկավարժական հոգեբանությունում այդ նախագծերը լրացնում են ուսուցման նոր մեթոդների ազդեցությունը վերահսկող հատուկ հնարներով, տարիքայինում դրվել է հատույթի (срез) և լոնգիտուդային մեթոդների համադրումը:

Ընդհանուր հոգեբանության մեջ փոխվում են հոգեֆիզիկական հոգեբանության կառուցման սկզբունքները: Ազդարարային բնութագրիչների դեկավարումը վերջեմային շրջանում դարձավ հոգեբանական սանդղակավորման հիմքը: Վերամշակվել են փոփոխականների գործառական վերահսկման հնարներ, որոնք չեն հանգեցվում ազդարարային բնութագրիչներին, ներառյալ այնպիսիներին, ինչպիսին կարող են ենթադրվել վերահսկման ոչ ուղղակի ձևերը (խոսքը ստեղծագործական և ինտելեկտուալ վերահսկման մեթոդի, ինտելեկտի մակարդակների և անձնային բնութագրիչների փոփոխման մասին է):

Հոգեբանական փորձի կառուցման տիպերից են ցուցադրական փորձը և «օրենքների դինամիկ» ներգործման փորձարարական ազդեցությունները Լևինի դպրոցում, բարձրագույն հոգեկան գործառույթների կայացման մոդելավորման օրենքները Լ. Ս. Վլոգոտսկու դպրոցում և ժամանակակից փորձարարական-գենետիկական հետազոտությունները, մարզասարքերի օգտագործումը (օրինակ՝ ինքնաթիռի վայրէջքի վրա ազդող գործոնների ուսում-

նասիրման ժամանակ) կամ հոգեբանական թրեյնինգների (մասնավորապես հաղորդակցական) կոմպետենտության փոփոխումը՝ անձին աջակցելու նպատակով:

Հոգեբանական իրականության և հոգեբանական օրենքների որոշման գործում հետազոտական միջոցների հիմնական ընդհանրությունը դատողությունների վերահսկման միջոցներն են, որոնց դեպքում հաշվի են առնվում վերահսկման իրականացված ձևերն էմպիրիկ հետազոտության կազմակերպման ժամանակ: Հոգեբանական փորձարարական հետազոտությանը համընթաց իրականացվում է էմպիրիկ և գիտական մեթոդի մասին պատկերացումների տարբերակում: Այդ փոփոխությունները վերաբերում էին հետազոտման էության էմպիրիկ իրականության փոփոխմանը, որի վերակառուցումը սերտորեն առնչվում է հոգեբանության առարկայի հասկացմանը (օրինակ՝ գիտակցականության հոգեբանությունը կամ վարքի հոգեբանությունը): Հոգեբանական դպրոցների հետազոտությանը հանգեցրեց մեթոդական գործընթացների և հոգեբանական օրենքների համակարգայնացման անհրաժեշտությանը հոգեբանական հետազոտության մեջ:

Հետազոտում պարզվեց, որ գիտափորձի մեթոդի չափորոշիչները կարող են կիրառվել տարբեր բացատրական սկզբունքներով հոգեբանական վարկածի ստուգման համար, որոնք ելնում են պատճառային եզրակացությունների հասկացման տրամաբանության ընդհանուր սկզբունքներից: Արդյունքում փորձ անվանեցին էմպիրիկ տվյալների հավաքագրման այն տիպերը, որոնց կազմակերպումը համապատասխանում է ընդհանրացված հոգեբանական վարկածի հիպոտետիկ-դեդուկտիվ ստուգման չափորոշիչներին պատճառահետևանքային կապի էմպիրիկ հաստատման տեսանկյունից:


Էմպիրիկ տվյալների հավաքագրումը վերահսկվող պայմաններում և համեմատման հնարավորությունը փորձարարական

գործոնների փոփոխման մակարդակի նախագծի հիման վրա դիտարկվեցին իբրև փորձարարական գործոններ: Նման պայմաններում այս ամենն իրագործվում է նրա համար, որպեսզի ստուգվի վարկածի հավաստիությունը:

Այսպիսով, հոգեբանությունը ճանապարհ է անցել ցուցադրական փորձից դեպի փորձարարական նախագիծ և գործոններ:

Հումանիտար գիտելիքի համար ուշագրավ էին հաստատված փորձարարական օրինաչափությունների հարաբերականությունը, հետազոտողը՝ իբրև մեթոդի իրականացման և ստեղծման սուբյեկտ, որոնք դարձան տարբեր հետազոտողների խորհրդածության առարկա:

Պատմականորեն հոգեբանական գիտափորձն անցել է և պիտի անցնի բարդ ու երկար ճանապարհ:



2.2. Հոգեչափման քանակական բնույթը

Հոգեչափումը (psychometrics, психометрия) գիտակարգ է, որն ուսումնասիրում է հոգեբանական չափումների տեսությունը և մեթոդիկան, ներառյալ գիտելիքների, ընդունակությունների, անձնային որակների և հայացքների չափումը:

Հոգեբանական դիագնոստիկայում ընդունված է «ընդհանուր հոգեչափում» և «դիֆերենցիալ հոգեչափում» հասկացությունները տարբերելու նպատակահարմարությունը: Ընդհանուր հոգեչափումը ներառում է ընդհանուր հոգեբանական (բոլոր մարդկանց բնորոշ) բնույթի չափումներ, այսինքն՝ խթանիչի հատկությունների և սուբյեկտիվ ռեակցիաների միջև ֆունկցիոնալ կապեր: Իսկ դիֆերենցիալ հոգեչափումը ներառում է չափումներ՝ կապված մարդկանց ընդունակությունների, ճանաչողական գործընթացների (ուշադրություն, հիշողություն, մտածողություն և այլն), դրդապատճառների, հուզական բնութագրերի և այլնի միջև անհատական տարբերությունների հետ⁶ :

Հոգեչափումը կիրառական վիճակագրության բաժին է: Հոգեչափման ոլորտը կապված է թեստային տվյալների վերլուծության քանակական մոտեցման հետ: Հոգեչափողական տեսությունը հետազոտողներին և հոգեբաններին ապահովում է մաթեմատիկական մոդելներով, որոնք կիրառվում են թեստերի առանձին կետերի կամ առաջադրանքների պատասխանների, ամբողջ թեստի կամ թեստերի հավաքածուի վերլուծության դեպքում: Կիրառական հոգեչափումը զբաղվում է այդ մոդելների կիրառությամբ և կոնկրետ թեստային տվյալների վերլուծական ընթացակարգերով: Հոգեչափողական վերլուծության չորս ոլորտներն են նորմավորումը, հավասարեցումը, հուսալիության, վալիդության գնահատումը

⁶ Курс лекций по психодиагностике: Материалы для самостоятельного изучения / Сост. Голев С.В., Голева О.С., Херсон, ХФ ОМУРЧ «Украина», 2008, 155 с.

և առաջադրանքների վերլուծությունը: Այդ ոլորտներից յուրաքանչյուրը պարունակում է թեստի աշխատանքի որակի գնահատման դեպքում կիրառվող որոշակի տեսական դրույթների և կոնկրետ արարողակարգերի հավաքածու ամեն դեպքի համար: Չափումը կարող է լինել հետազոտման ինքնուրույն մեթոդ, սակայն կարող է նաև հանդես գալ որպես գիտավորձի առանձին բաղադրամաս: Որպես ինքնուրույն մեթոդ՝ չափումը ծառայում է մարդկանց վարքում անհատական տարբերությունների բացահայտմանը: Հոգեբանական չափման շնորհիվ հնարավոր է պարզել, թե ինչպես են մարդիկ արտացոլում շրջապատող աշխարհը, ինչպես նաև հետազոտել արտացոլման աղեկվատությունը և անհատական փորձի կառուցվածքը:

Գիտավորձի ընթացքում չափումը դիտարկվում է որպես հետազոտվող օբյեկտի վիճակի և այդ վիճակի փոփոխման արձանագրման մեթոդ:

Չափման տեսության հիման վրա կառուցվում են հոգեբանական թեստերը:

Հոգեբանության մեջ տարբերում են հոգեբանական չափման **երկր** հիմնական ընթացակարգ, որոնց տարբերակման հիմքում ընկած է չափման օբյեկտը.

1. մարդկանց վարքի առանձնահատկությունների չափումը, մարդկանց միջև տարբերությունների որոշումն այս կամ այն հատկության արտահայտվածության տեսանկյունից, այս կամ այն հոգեկան վիճակի առկայությունը կամ հոգեկան վիճակի դասումը որոշակի տիպին: Հոգեբանական չափումը հետազոտվողների չափման մեջ է,
2. չափումը՝ որպես հետազոտվողի խնդիր, որի լուծման ընթացքում վերջինս չափում է (դասակարգում է, գնահատում է և այլն) արտաքին օբյեկտները՝ այլ մարդկանց, ազդակները կամ արտաքին աշխարհի առարկաները, սեփական վիճակները,

3. ազդակների և հետազոտվողների համատեղ չափումը: Հետազոտվողի վարքը դիտարկվում է որպես անձի և իրադրության փոխազդեցության դրսևորում:

Հետազոտության մասնակիցների հոգեբանական չափման ընթացակարգը արտաքուստ ոչնչով չի տարբերվում հոգեբանական գիտափորձի ընթացակարգից, սակայն հոգեբանական գիտափորձի անցկացման ժամանակ հետազոտողին հետաքրքրում են փոփոխականների միջև գոյություն ունեցող պատճառական կապերը, իսկ հոգեբանական չափման արդյունքը հետազոտվողի կամ նրա կողմից գնահատվող նյութի վերագրումն է այս կամ այն դասին, սանդղակի կետին կամ հատկանիշների տարածությանը:

Ազդակների հոգեբանական չափումը հետազոտվողի խնդիրն է, որը նա լուծում է գիտափորձի ընթացքում: Այս դեպքում չափումն օգտագործվում է միայն որպես հոգեբանական հնար այլ հոգեբանական հետազոտության մեթոդների հետ միասին, իսկ հետազոտվողը չափող սարքի «դերն է կատարում»:

Ըստ էության, հետազոտվողների և ազդակների հոգեբանական չափումները որակապես տարբեր ընթացակարգեր են, սակայն երկու դեպքում էլ հոգեբանության մեջ ընդունված է գործածել «հոգեբանական չափում» հասկացությունը: Հոգեբանական չափման ընթացակարգի փուլերը համանման են փորձարարական հետազոտության փուլերին: Հոգեբանական չափումների հիմքն է չափումների մաթեմատիկական տեսությունը՝ մաթեմատիկական հոգեբանության բաժինը:

Մաթեմատիկական տեսանկյունից չափում է կոչվում օբյեկտների բազմության և թվերի միջև փոխադարձ համապատասխանության հաստատման օպերացիան:

Օրենքները, որոնց հիման վրա թվերը վերագրվում են օբյեկտներին, որոշում են չափման սանդղակը: Սանդղակը չափման գործիք է: «Չափողական սանդղակ» հասկացությունը հոգե-

բանության մեջ ներմուծվել է ամերիկացի գիտնական Ս. Սթիվենսոնի կողմից:

Օպերացիաները, օբյեկտների չափման ձևերը որոշում են սանդղակի տիպը: Սանդղակն իր հերթին բնութագրվում է փոխակերպումների տեսքով, որոնք կարող են օգտագործվել չափումների ժամանակ: Այս օրենքը չպահպանելու դեպքում սանդղակի կառուցվածքը կխախտվի, իսկ չափման տվյալներին հնարավոր չի լինի իմաստավորված մեկնաբանություն տալ: Հոգեչափման հիմնական առանձնահատկությունները պայմանավորված են դրույթներով և գիտական սկզբունքներով, որոնք ձևակերպված են չափագիտության և կենսաչափության մեջ⁷:

2.3. Չափողական սանդղակներ

Հոգեբանական չափումների կիրառական նշանակությունը պարզաբանելու համար անհրաժեշտ է դիտարկել չափողական սանդղակների տեսակները:

Ս. Սթիվենսոնն առաջարկել է չափման սանդղակները դասակարգել չորս տիպերի.

1. անվանական (նոմինալ, անվանումների սանդղակ),
2. հերթականության (օրդինալ),
3. ինտերվալային (հավասար միջակայքերի սանդղակ),
4. հավասար հարաբերությունների սանդղակ:

Անվանական սանդղակը դասակարգում է՝ ըստ անվանումների: Անվանումը քանակապես չի չափվում, այլ միայն թույլ է տալիս տարբերել մի օբյեկտն այլ օբյեկտից կամ մի սուբյեկտն այլ սուբյեկտից: Անվանական սանդղակի միջոցով մենք կարող ենք օբյեկտները կամ սուբյեկտները դասակարգել ըստ դասերի:

⁷ **Ավանեսյան Հ. Մ.**, Հոգեբանական գիտափորձերի պրակտիկում: Ուսումնամեթոդական ուղեցույց / Կազմ.՝ Հ. Մ. Ավանեսյան, Եր., 2015, 50 էջ:

Անվանական սանդղակի պարզագույն օրինակներից է երկ-
ճյուղավորման (դիխոտոմիական) սանդղակը: Այս սանդղակի
վրա հատկությունը կարող է ունենալ երկու արժեք (օրինակ՝ աջ-
իկ/ձախիկ): Անվանական սանդղակի ավելի բարդ տարբերակ-
ներից է դասակարգումն ըստ երեք և ավելի անվանումների (օրի-
նակ՝ խոլերիկ, սանգվինիկ, ֆլեգմատիկ, մելանխոլիկ):

Բոլոր օբյեկտներին, հակագրումներին կամ բոլոր հետազոտ-
վողներին ըստ դասերի բաշխելուց հետո անվանումներից կարելի
է անցնել թվերին. անհրաժեշտ է յուրաքանչյուր դասում հաշվել
դիտարկումների թվաքանակը:

Հերթականության սանդղակը դասակարգում է ըստ «ավելի
շատ և ավելի քիչ» սկզբունքի: Եթե անվանական սանդղակում
էական չէ, թե դասերն ինչպիսի հերթականությամբ են տեղա-
դրված, ապա հերթականության սանդղակում դրանք կազմում են
հաջորդականություն ամենավոք արժեքից մինչև ամենամեծը և
հակառակը:

Հերթականության սանդղակը պետք է ունենա նվազագույնը
երեք դաս: Այս սանդղակում հայտնի չէ դասերի միջև ընկած իրա-
կան հեռավորությունը, սակայն հայտնի է, որ դրանք հաջորդա-
կանություն են կազմում:

Դասերից հեշտությամբ կարելի է անցնել թվերի, եթե համա-
րենք, որ ցածրագույն դասին համապատասխանում է առաջին
կարգը, միջին դասին՝ երկրորդը, բարձրագույն դասին՝ երրորդը և
հակառակը: Որքան դասերը շատ են, այնքան մեծ են ստացված
տվյալների մաթեմատիկական վերլուծության հնարավորություն-
ները:

Բոլոր հոգեբանական մեթոդներում, որոնցում կիրառվում է
հաջորդականության սկզբունքը, օգտագործվում են հերթականու-
թյան սանդղակներ: Օրինակ՝ հետազոտվողին կարող են առա-
ջարկել դասակարգել 15 պահանջմունք՝ ըստ կարևորության: Այս
դեպքում կստացվեն արժեքների շարքեր, որոնք չափվել են հեր-

թականության սանդղակի օգնությամբ: Սակայն տարբեր խմբերում ստացված տվյալները կարող են անհամադրելի լինել, քանի որ խմբերը կարող են տարբերվել ըստ հետազոտվող հատկության զարգացվածության մակարդակի, ինչի հետևանքով մեկը, որն իր խմբում զբաղեցրել է բարձրագույն կարգը, այլ խմբում կարող է զբաղեցնել միջին կարգը և այլն:

Ինտերվալային սանդղակը դասակարգում է՝ ըստ «որոշակի քանակությամբ ավել և որոշակի քանակությամբ պակաս միավորների»: Այստեղ չափվող հատկության յուրաքանչյուր արժեք հաջորդող արժեքից հավասար հեռավորության վրա է գտնվում:

Ինտերվալային սանդղակի կառուցումը հոգեկան երևույթների չափման համար չափազանց բարդ գործ է: Նույնիսկ եթե տվյալները ստանում ենք ֆիզիկական միավորներով (վայրկյաններ, սանտիմետրեր), հոգեբանական չափման արդյունքները չեն համարվում չափված ինտերվալային սանդղակով: Հետազոտվողների կողմից միավորներով ստացված տվյալները ցանկացած ոչ միօրինականացված մեթոդիկայով կարող են չափվել միայն հերթականության սանդղակով:

Ինտերվալային սանդղակների կառուցման սկզբունքը հիմնված է «երեք սիգմաների» օրենքի վրա: Նորմալ բաշխման պարագայում հատկության բոլոր արժեքների մոտավորապես 97.7-97.8 %-ը տեղակայվում է M+3 σ և M3 σ (սիգմա) միջակայքերի միջև:

Ամերիկացի հոգեբան Ռ. Քեթթելն առաջարկեց Ստենների՝ «ստանդարտ տասնյակի» սանդղակը: Այս սանդղակի կառուցումը սկսվում է «հում» միավորների միջին արժեքի հաշվարկից: Ստենների սանդղակը կարելի է կառուցել ցանկացած տվյալների հիման վրա, որոնք չափված են հերթականության սանդղակով հետազոտվողների քանակի $n > 200$ -ի և հատկության նորմալ բաշխման պարագայում:

Հավասար հարաբերությունների սանդղակը օբյեկտներին և սուբյեկտներին դասում է համեմատական չափվող հատկության արտահայտվածության աստիճանին:

Հարաբերության սանդղակներում դասերը նշանակվում են թվերով, որոնք համեմատական են միմյանց: Այսպես երկուսը հարաբերվում է չորսին, ինչպես չորսը՝ ութին: Սա ենթադրում է բացարձակ զրոյական կետի առկայությունը: Սակայն մարդու հոգեկանի հնարավորություններն այնքան մեծ են, որ դժվար է պատկերացնել հոգեկանի որևէ հատկության չափման մեջ բացարձակ զրոյի առկայություն:

Բացարձակ զրո կարող է լինել օբյեկտների կամ սուբյեկտների քանակության հաշվարկի ժամանակ: Այս սանդղակում չափման միավորը մեկ դիտումն է, մեկ ընտրությունը, մեկ հակազդումը:

Թեստավորումը և չափումների տեսությունը: Հոգեբանական թեստավորումն օբյեկտի հատկությունների չափման ընթացակարգի տարատեսակներից է: Թեստավորումը կազմված է երկու հիմնական մասից՝ հետազոտվողի թեստավորումից և ստացված տվյալների վերլուծությունից: Գոյություն ունեն թեստավորման տարբեր մոդելներ: Եթե հատկությունը որոշված չէ, ապա ուսումնասիրվում են մարդկանց միջև եղած տարբերությունները, և արդյունքում առաջանում է օբյեկտների նոր դաս: Եթե հատկությունը որակապես որոշված է, ապա դա հնարավորություն է տալիս առանձնացնելու այն մարդկանց, որոնք ունեն այդ հատկությունը, և այն մարդկանց, որոնք չունեն այդ հատկությունը: Այս դեպքում թեստը հնարավորություն է տալիս կատարելու դիֆստոմիական դասակարգում:

Եթե հատկությունը գծային է կամ բազմաչափ, ապա հնարավոր է բացահայտել յուրաքանչյուր մարդուն բնորոշ հատկության մեծությունը: Թեստը հնարավորություն է տալիս քանակապես չափելու հատկությունը:

Թեստի *կոմուլյարիվ-ադիարիվային* մոդելն առաջարկվել է գերմանացի հոգեբան Կ. Լևինի կողմից, որը մարդու վարքը դիտարկում էր որպես անձի և իրադրության գործառույթ: Թեստում խնդիր է դրվում վերականգնելու անձի հատկությունը՝ վերլուծելով վարքը կոնկրետ իրադրության մեջ: Իրադրությունը թեստի կետն է, իսկ վարքը՝ հետազոտվողի պատասխանը: Այսպիսով, օբյեկտի հատկությունը վարքի և իրադրության փոխազդեցությունն է:

Թեստի հավանական մոդելը: Թեստի կոմուլյատիվ, ադիտիվային մոդելին քննադատական գնահատական է տվել շվեյցարացի հոգեբան Ռ. Մեյլին: Նա ենթադրում էր, որ թեստը հետազոտվողի մոտ չափում է հոգեբանական այս կամ այն հատկության առկայության հավանականությունը, այլ ոչ թե ուժգնությունը: Ըստ Մեյլիի՝ թեստին ներկայացվող հիմնական պահանջը չափման և արդյունքների վերլուծության ընթացակարգերի նույնականությունն է:

Գրականություն (Գլուխ 1 և 2)

1. **Ավանեսյան Հ. Մ.**, Աշխատակազմի ընտրության և համալրման արդի հոգեբանական հիմնախնդիրները, «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան, 2005, N 2, էջ 90-98:
2. **Ավանեսյան Հ. Մ.**, Ժամանակակից հոգեախտորոշման գիտագործնական հիմնահարցերը, «Հոգեբանություն և կյանք» հանդես, N 4, 2005, Եր., էջ 119-128:
3. **Ավանեսյան Հ. Մ.**, Հոգեբանական գիտափորձերի պրակտիկում: Ուսումնամեթոդական ուղեցույց, կազմ.՝ Հ. Մ. Ավանեսյան, Եր., 2015, 50 էջ:
4. **Ананьев Б. Г.**, Человек как предмет познания, СПб.: «Питер», 2001, 288 с.
5. **Гудвин Дж.**, Исследование в психологии: методы и планирование.- 3-е изд., СПб.: «Питер», 2004, 558 с.

6. Курс лекций по психодиагностике: Материалы для самостоятельного изучения / Сост. **Голев С. В., Голева О. С.**, Херсон, ХФ ОМУРЧ «Украина», 2008, 155 с.
7. **Лубовский Д. В.**, Введение в методологические основы психологии, М., Воронеж: Моск. психолого-социал. ин-т, 2005, 224 с.
8. **Никандров В. В.**, Экспериментальная психология. Учебное пособие, СПб.: Издательство «Речь», 2003. 480 с.
9. **Irving B. W.**, Handbook of Psychology, Research Methods in Psychology, Volume 2 (John A. Schinka Wayne F. Velicer), Canada, 2003; Introduction to Psychology http://en.wikibooks.org/wiki/Introduction_to_Psychology.

ԳԼՈՒԽ 3

ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՄԱԿԱԶՄԸ

Ինչպես նշվեց, մեթոդաբանությունը մեթոդների և հնարների մասին համակարգված ուսմունքն է: Առավել լայն իմաստով մեթոդաբանությունը գիտական ճանաչողության կառուցման սկզբունքների, ձևերի և մեթոդների ուսմունքն է: Մեթոդաբանությունը ոչ այնքան գիտելիքների համակարգ է, որքան վերջիններիս կուտակման գործունեության ոլորտը կամ ուղին:


Մեթոդ ասելով (հուն․՝ «**μεθόδος**») – հետազոտման ուղի, ուսմունք, տեսություն՝ հասկանում ենք իրականության տեսական կամ փորձարարական յուրացման օրենքների, ուղիների, միջոցների և հնարների համակազմ:

Առարկայի որոշումը և դրան համապատասխանող մեթոդի ընտրությունը պայմանավորված են հետազոտողի հայեցակարգային դիրքորոշմամբ: Դա նշանակում է, որ մեթոդը կարելի է դիտարկել որպես հայեցակարգային այնպիսի սկզբունքների գործնական իրացում, որոնց ամբողջությունը կազմում է հետազոտության մեթոդաբանական հիմքը: Մեթոդներում մասնավորեցվում է մեթոդաբանությունը, որը սովորաբար հասկանում են որպես «գիտական հետազոտության սկզբունքների համակարգ»: Սակայն մեթոդները իրենց հերթին կոնկրետանում են ընթացակարգերի և գործընթացների տարբերակների, առարկայի ու օբյեկտի մասին տվյալների հավաքման և վերլուծության կանոնների մեջ [Ивандров В., 2003]:

Բ. Գ. Անանևի [Ананьев Б., 2001] տեսանկյունից հոգեբանական հետազոտության մեթոդները հոգեբանական օբյեկտների հետ գործառնման համակարգեր են և միևնույն ժամանակ ինքնին հոգեբանական գիտության ճանաչողական օբյեկտներ: Դիտարկելով հոգեբանության մեջ փորձարարական մեթոդների կիրառ-

ման հիմնախնդիրը՝ Վ. Ն. Դրուժինինն առաջարկում է սկսել՝ որոշելով դրանց տեղը հոգեբանական մեթոդների համակարգում և սկզբի համար ընդունելով դասակարգման սխեմա:

Հետազոտության ռազմավարության առավել հստակ բնութագրման և էմպիրիկ ձևաչափի տարբերակման նպատակով նկարագրվում է երեք՝ «Մ₁Մ₂Մ₃»-ների համադրությունը, որտեղ Մ₁-ը մեթոդաբանական մոտեցումն է, Մ₂-ը՝ մեթոդի ենթախումբն է (մեթոդներ ասելով՝ հասկանում ենք գիտական հետազոտություն իրականացնելիս հոգեբանի կողմից կիրառվող սկզբունքների, միջոցների և եղանակների ամբողջությունը, ինչպես նաև կազմակերպման ձևը), Մ₃-ը՝ հետազոտության մեթոդիկաները (հետազոտության գործընթացում կիրառվող առանձին վերցված միջոցը կամ այլ կերպ ասած՝ գիտական «գործիքը»): Այդ սկզբունքի կոնկրետ մարմնավորումը հոգեբանական աշխատանքի որոշակի միջոցին վերաբերող ընթացակարգային նորմերն են, որոնք իրագործվում են որոշակի մեթոդական նյութի հիման վրա: Այս սխեմայի ամբողջական բնութագրման համար նպատակահարմար է նկարագրել Մ₄ լրացուցիչ նշանը, որը ենթադրում է հետազոտության ոչ փորձարարական մեթոդներ: Այսպիսով, ձևավորվում է հոգեբանական հետազոտության տեսրոլի (հուն. *τετρα* չորս) կառուցվածք (նկար 4), որն ունի «ճկունություն» և որոշակի «հանդուրժողականություն» դրա ռազմավարության և իրականացման գործընթացում [Ավանեսյան Հ., 2010]:



Նկար 2. Հետազոտության տեսորիդ (հուն. τετρα γորս) համակարգի կառուցվածքը

Այս մոտեցումը համապատասխանում է էմպիրիկ հետազոտության կազմակերպման մեթոդների գոյություն ունեցող դասակարգումներին, այսպես կոչված՝ էքսպերիմենտալ և քվազիէքսպերիմենտալ ծրագրեր [Дружинин В., 2003], համեմատական և զենետիկական մեթոդներ (մեթոդաբանական մոտեցում): Չնայած դրանք վերաբերում են հետազոտական գործունեության միջոցներին, սակայն հետազոտական միջոցների հիերարխիայի այն օղակն են, ուր կարելի է առնվազն առանձնացնել հինգ մակարդակներ.


1. մեթոդիկայի,
2. մեթոդական հնարի,
3. մեթոդի,
4. հետազոտության կազմակերպման,
5. մեթոդաբանական մոտեցման:

Փորձարարական հոգեբանության դասագրքերում և հետազոտական աշխատանքներում «մեթոդ» եզրույթն կիրառվում է բոլոր մակարդակների համար: Օրինակ՝ հոգեֆիզիկայում գոյու-

թյուն ունեն միջին սխալի, սահմանների մեթոդներ, սոցիալական հոգեբանությունում՝ կոնտենտ վերլուծության, փորձագիտական գնահատման մեթոդներ, հոգեդիագնոստիկայում՝ պրոյեկտիվ, իսկ զարգացման հոգեբանությունում՝ հոգեգեներտիկական մեթոդը և որպես նրա տարատեսակ՝ երկվորյակների մեթոդը: Եթե քննարկենք մեթոդների դասակարգման բուն հոգեբանական յուրահատկությունը, ապա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել թեստավորման մեթոդի վրա, որի առանձնացումը դիտարկվում է վերջին 10-15 տարիների հետազոտություններում:

Վերոնշյալ օրինակներում չենք կարող գիտական տրամաբանության խախտում փաստել, սակայն երբեմն հատկապես երիտասարդ գիտնականների և ուսանողների շրջանում նկատվում են նյութի ընկալման սեմանտիկ դժվարություններ:

Տվյալ դեպքում կքննարկենք մեթոդը՝ որպես հետազոտողի և իր ավանդական հասկացմամբ օբյեկտի փոխհարաբերման միջոց, և մենք մասնակիորեն կանդրադառնանք մեթոդական մոտեցումներին (U_1 և U_2 մակարդակներում): Այս մակարդակներում գործում է փորձարարական մեթոդների կարգային դասակարգման դասական սխեման՝ դիտում, գիտափորձ, չափում և նրա անձանցյալները [Ադուգումցյան Ռ., 2009]: Այսպիսով, շարադրանքից դուրս են մնում կոնկրետ հոգեբանական փորձարարական մեթոդիկաները, տեխնիկաները, գիտափորձի պլանավորման մեթոդները և այլն: Հոգեբանական հետազոտությունում կիրառվող վերոհիշյալ մակարդակային դասակարգումն իր կառուցվածքով մոտ է նրան, ինչ առաջարկել են Վ. Ն. Դրուժինինը և ուրիշներ [Дружинин В., 2003]:



Նկար 3. Հոգեբանության մեթոդների դասակարգումը՝ ըստ Բ. Անանևի

Դիտարկենք Բ. Գ. Անանևի և բուլղարացի հոգեբան Գ.Դ. Պիրյովի կողմից առաջարկված հոգեբանական հետազոտության մեթոդների ամփոփ դասակարգումը: Ընդ որում, որպես ինքնուրույն մեթոդներ առանձնացվում են դիտումը (օբյեկտիվ անմիջական և միջնորդավորված, սուբյեկտիվ անմիջական և միջնորդավորված), զիտափորձը (լաբորատոր, բնական և հոգեբանամանկավարժական), մոդելավորումը, հոգեբանական բնութա-

գրումը, օգնող մեթոդները (մաթեմատիկական, գրաֆիկական, բիոքիմիական և այլն), յուրահատուկ մեթոդական մոտեցումները (գենետիկական, համեմատական և այլն):

Այս մեթոդներից յուրաքանչյուրը բաժանվում է մի շարք այլ մեթոդների: Այսպես, օրինակ, դիտումը (միջնորդավորված) բաժանվում է հարցաքերքերի, հարցարանների, գործունեության արդյունքների վերլուծության և այլն: Ավելի ուշ Բ. Գ. Անանևն առաջարկել է այլ դասակարգում.

1. կազմակերպչական,
2. փորձարարական,
3. արդյունքների վերլուծության,
4. մեկնաբանման մեթոդներ:

Կազմակերպչական մեթոդների շարքին նա դասել է *համեմատական, լոնգիտյուդալին, համակարգային* մեթոդները: Մեթոդների երկրորդ խմբում են հայտնվել դիտարկման մեթոդները (դիտում, ինքնադիտում), գիտափորձը (լաբորատոր, դաշտային, բնական և այլն), հոգեդիագնոստիկ, գործունեության գործընթացի և արդյունքների վերլուծությունը (պրաքստմետրիկ մեթոդներ), մոդելավորումը և կենսագրական մեթոդը:

Առանձին խումբ են կազմում տվյալների մաթեմատիկական և վիճակագրական վերլուծության և որակական բնութագրման մեթոդները, մեկնաբանողական մեթոդները, ինչպես նաև գենետիկական (ֆիլո և օնթոգենետիկական) և կառուցվածքային (դասակարգում, տեսակավորում և այլն) մեթոդները: Այս դասակարգման մեջ բացակայում է հոգեբանական հետազոտության տեսական մեթոդների առանձնացումը (հոգեբանական գիտելիքի կարևոր բաժին), սակայն միևնույն ժամանակ առանձնացված է «միջանկյալ» մեթոդների դաս փորձարարականների և տեսականների միջև, այն է՝ փորձարարական հետազոտության արդյունքների ներկայացման, մշակման, մեկնաբանման մեթոդները:

Մ. Ս. Ռոգովիևի և Գ. Վ. Չալսևսկու աշխատանքներում քննարկվում է հոգեբանական հետազոտության մեթոդների դասակարգման հեղինակային մոտեցում: Հեղինակների կարծիքով մեթոդը ճանաչողության գործընթացում օբյեկտի և սուբյեկտի փոխհարաբերությունների որոշ հատկությունների արտահայտումն է [Роговин М., Залевский Г., 1988]: Նրանք հիմնական մեթոդների թիվը հասցնում են վեցի.

1. հերմենևտիկական մեթոդ, որը համապատասխանում է գիտության չտարանջատված վիճակին (սուբյեկտն ու օբյեկտը չեն հակադրվում, մտային գործողությունը և գիտության մեթոդը նույնական են),
2. կենսագրական մեթոդ՝ հոգեկանի մասին գիտության մեջ ճանաչողության ամբողջական օբյեկտի առանձնացում,
3. դիտում՝ ճանաչողության օբյեկտի և սուբյեկտի տարբերակում,
4. ինքնադիտում՝ սուբյեկտի վերածումն օբյեկտի նախորդող տարբերակման հիման վրա,
5. կլինիկական, երբ առաջին պլան է մղվում արտաքին դիտվող երևույթներից ներքին մեխանիզմների անցման խնդիրը,
6. գիտափորձը՝ որպես ճանաչողության սուբյեկտի ակտիվ հակադրում օբյեկտին, որի ընթացքում հաշվի է առնվում սուբյեկտի դերը ճանաչողության գործընթացում:

Այս մոտեցումը հոգեբանորեն հիմնավորված է և փորձարարական մեթոդների դասակարգման համար օժտված է մի շարք առավելություններով: Սակայն որոշ դեպքերում այն ընդունելի չէ կիրառական հոգեբանության այնպիսի մեթոդների համար, ինչպիսին մոդելավորումն է կամ արագ հոգեդիագնոստիկ մեթոդները:

Գոյություն ունեն հոգեբանական հետազոտման մեթոդների բնութագրման և դասակարգման նաև այլ մոտեցումներ, սակայն գործնականում նույնացվում են հոգեբանական հետազոտության

փորձարարական մեթոդները և հոգեբանական մեթոդներն ընդհանրապես, որը դժվարացնում է այս կամ այն մոտեցման յուրահատկության որոշարկումը: Այլ գիտությունների նմանությամբ հոգեբանությունում նույնպես առանձնացվում են մեթոդների երեք դասեր.

1. փորձարարական, որոնցում իրականացվում է հետազոտության սուբյեկտի և օբյեկտի արտաքին իրական փոխհարաբերություն,
2. տեսական, երբ սուբյեկտը փոխհարաբերվում է օբյեկտի մտային մոդելի հետ (ավելի ճիշտ՝ հետազոտության առարկայի հետ),
3. մեկնաբանում և բնութագրում, որոնցում սուբյեկտը «արտաքննապես» փոխհարաբերվում է օբյեկտի նշանասիւմվոլային պատկերացմանը (գրաֆիկներ, աղյուսակներ, գծապատկերներ):

Ըստ Վ. Ն. Դրուժինինի՝ հոգեբանական հետազոտության տեսական մեթոդներին պետք է դասել.

1. *դեդուկտիվ մեթոդը* (աքսիոմատիկ և հիպոթետիկ-դեդուկտիվ), այլ կերպ ասած՝ ընդհանուրից մասնավորին, վերացականից կոնկրետի անցման մեթոդը, որի արդյունքն են տեսությունը, օրենքը և այլն,
2. *ինդուկտիվ մեթոդը*, այսինքն՝ մասնավորից ընդհանուր գնացող փաստերի ընդհանրացումը, որի արդյունքն են ինդուկտիվ հիպոթեզը, օրինաչափությունը, դասակարգումը, համակարգումը,
3. *մոդելավորման մեթոդը*, որը համանմանությունների (անալոգիաների) մեթոդի կոնկրետացումն է մասնավորից մասնավոր մտահանգման ճանապարհով, երբ առավել բարդ օբյեկտի նմանակի դերում վերցվում է առավել հեշտը և հետազոտողի համար հասանելին: Այս մեթոդի կի-

րառման արդյունք է օբյեկտի, գործընթացի, վիճակի մոդելը [Дружинин В., 2003]:

Հոգեբանության տեսական մեթոդներից պետք է տարբերել ներհայեցողական հոգեբանության մեթոդները, որոնք սկիզբ են առնում, այսպես կոչված, փիլիսոփայական հոգեբանությունում: Մտահայեցողությունը հենվում է ոչ թե գիտական փաստերի և փորձարարական օրինաչափությունների վրա, այլ հիմնավորվում է հայեցակարգի հեղինակի միայն անձնային գիտելիքում (սուբյեկտիվ իրականություն, ինտուիցիա):

Հայեցող հոգեբանը, ինչպես փիլիսոփան, ծնում է հոգեբանական իրողության կամ նրա առանձին բաղադրիչների անձնային տեսանկյունից ընդունելի մոդելներ (անձի, շփման, մտածողության, ստեղծագործության, ընկալման և այլ տեսություններ): Այսինքն՝ որոշակի ամբողջական մտային արդյունք, որը միավորում է ռացիոնալ և իռացիոնալ գիտելիքի գծեր՝ հավակնելով որոշակի իրողության ամբողջական և եզակի բացատրության և չենթադրելով փորձարարական հետազոտման միջոցով իր հերքումը (ֆալսիֆիկացիան):

Մենք հատուկ առանձնացրինք տեսական մեթոդի առանձնահատկությունները, քանի որ որոշ հեղինակներ իրենց հետազոտություններում չափազանց շատ են տարվում միակողմանի, մակերեսային փիլիսոփայական մտորումներով՝ և մոռանալով խնդրի հոգեբանական էության մասին: Հոգեբանական գիտությունը պահանջում է փորձարարական դիտարկումներ և հետազոտում մտային կառույցների ստուգման համար, որոնք հաճախակի վերածվում են գիտական տեսությունների և ընկալվում որպես այդպիսին [Ավանեսյան Հ., Խաչատրյան Ն., 2008]:

Տվյալ դեպքում խոսքը ոչ այնքան ռացիոնալության գաղափարի «վարկաբեկման», որքան ցանկացած գիտական հետազոտությունում «անհատական և զանգվածային գիտակցության» առաջնայնության մասին է, իսկ գիտակցությունը չի կարող հանդես


գալ որպես ռացիոնալության իրական չափանիշ, քանի որ նրան յուրահատուկ են երևույթների և իրադարձությունների մեկնաբանման իռացիոնալ ձևեր:

Մեր կարծիքով [Аванесян Г., 2004] հետազոտական ռազմավարության, արդյունքների մեկնաբանման կամ ներկայացման ձևերի ընտրության ժամանակ պետք է հետևել «ապացուցողական» սկզբունքին, որը նույնիսկ ժամանակակից անարխիկ տեսության ներկայացուցիչ Պ. Ֆեյերաբենթի [Feyerabend P., 1975] տեսանկյունից «լիովին ընդունելի է, քանի որ նա, ով հավատում է տրամաբանական ապացուցմանը, չի կասկածում, որ բանականության հայտնագործությունները առավել մեծ արդյունքներ են տալիս, քան մեր կրքերի անսանձ խաղը»:


Այն հեղինակները, որոնք զբաղվում են մեթոդների հիմնախնդրով, իրենց ուշադրությունը կենտրոնացնում են այս կամ այն մեթոդների և մեթոդիկաների առանձնահատկությունների մանրամասն նկարագրմանը, որը, անկասկած, մեծ նշանակություն ունի: Հաճախ մեծ ուշադրություն է դարձվում մեթոդների համագիտական տեսական բնութագրմանը՝ առանց հաշվի առնելու հոգեբանության մեջ դրանց իրականացման յուրահատկությունը:

Վերջին խնդրի վրա առավելապես կենտրոնացած է մեր մոտեցումը, հատկապես հետազոտության հոգեբանական մեթոդների հիմնավորման, դրանց համակարգերի, տրամաբանության և կիրառման ռազմավարությունների յուրահատկությունների վրա՝ ի տարբերություն դրանց համանմանությունների այլ գիտություններում: Հոգեբանական հետազոտության մեթոդների դասակարգման տարբերակները ներկայացված են նկար 6-ում:

Տարբերակ I



Տարբերակ II



Նկար. 4. Հոգեբանական հետազոտության մեթոդների դասակարգման (I և II) տարբերակների գծապատկեր

3.1. Գիտման մեթոդը և դրա տեսակները

Նախքան դիտման մեթոդի նկարագրումը, անդրադառնանք գիտահետազոտական մեթոդների դասակարգման մեջ նրա զբաղեցրած տեղին: Ժամանակակից գիտության բոլոր մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ տեսական և էմպիրիկ:

Ընդհանուր գիտական մեթոդներին վերաբերում են.

1. դիտումը,
2. գիտափորձը,
3. չափումը,
4. գրույցը:

Այդ էմպիրիկ մեթոդները կիրառման տեսանկյունից ներկայացվում են աղյուսակի տեսքով.

	ակտիվ	պասիվ
Միջնորդավորված	գիտափորձ	չափում
Անմիջական	գրույց	դիտում

Աղյուսակից երևում է, որ դիտումը անմիջական, «պասիվ» մեթոդ է: Չափումը պասիվ է, բայց միջնորդավորված: Գիտափորձը «ակտիվ» և միջնորդավորված իրականության ուսումնասիրման մեթոդ է: Ձրույցը անմիջական և «ակտիվ» մեթոդ է, որի դեպքում հետազոտողն առանց ազդող և արձանագրող գործիքների փոխներգործում է օբյեկտի հետ՝ ակտիվորեն փոխելով նրա վիճակը:

Դիպումը ինքնադիտման հետ միասին հնագույն հոգեբանական մեթոդ է: Դիտումը օբյեկտի վարքի նպատակաուղղված, կազմակերպված ընկալումն է և արձանագրումը: Այս մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ անհրաժեշտ է արձանագրել մարդու բնական վարքը, որտեղ հետազոտողի միջամտությունը խանգարում է մարդու բնական փոխազդեցությանը միջավայրի հետ: Դիտման մեթոդը հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում երեխաների հոգեբանական առանձնահատկություններն ուսումնասիրելիս, քանի որ երեխան՝ որպես հետազոտության օբյեկտ, մեծ դժվարություն է ներկայացնում փորձարարական հետազոտության համար, քան մեծահասակ մարդը: Քանի որ այս մեթոդում որպես «չափիչ գործիք» հանդես է գալիս հենց դիտողը, շատ կարևոր է, որ նա բարձր մակարդակով և ամբողջությամբ տիրապետի դիտման տեխնիկային:

Գիտակցված նպատակի առկայությունը ստեղծում է դիտման օբյեկտի և առարկայի համապատասխան դիրքորոշում: Դիտողն արդեն գիտի, թե ինչ պետք է նկատի այս կամ այն իրավիճակում: Հենց այդ փաստերի և երևույթների վրա է նա կենտրոնացնում իր ուշադրությունը՝ նկատելով դրանք նույնիսկ այն դեպքերում, երբ դրանք քողարկված են և ակնհայտ չեն: Դիտման նպատակաուղղվածությունը պայմանավորում է դրա ընտրողական բնույթը՝ ընդգծելով ստեղծված իրավիճակում հետազոտողի համար կարևորը ու էականը: Առաջին հայացքից դիտման ընտրողականությունը կարծես հակասում է ամբողջականության պա-

հանջին, որը երբեմն հասկացվում է որպես դիտվող իրավիճակը ամրագրող տվյալների բացարձակ համապատասխանություն: Հիշենք ընտրողականության՝ որպես ընկալման հիմնական հատկություններից մեկի մասին: Հետևաբար անխուսափելի է մարդու վրա ազդող խթանների բազմազանությունից (նույնիսկ քառսից) ակտուալ-նշանակալի ազդակների ընտրությունը: Սակայն հենց նպատակի առկայությունն է այդ ընտրությունը ինքնաբերաբար գործընթացից վերածում գիտակցված գործընթացի: Ինքնաբերաբար լինելը, մի կողմից, կարող է բերել ուսումնասիրվող երևույթի հետ կապ չունեցող փաստերի ստացման, իսկ մյուս կողմից՝ տվյալ երևույթի հետ կապ ունեցող տեղեկատվության բաց թողման [Никандров В., 2003]:

Մեթոդի տեսակները որոշվում են ուսումնասիրության նպատակների, օբյեկտների, իրավիճակների հիման վրա: Սովորաբար տարբերակում են դիտման հետևյալ տեսակները՝

1. օբյեկտիվ-ինքնադիտում,
2. դաշտային-լաբորատոր,
3. անհատական-խմբային,
4. պատահական-կանխամտածված,
5. համակարգային-ոչ համակարգային,
6. ամբողջական-ոչ ամբողջական,
7. համատարած-ընտրողական,
8. հաստատող-գնահատող,
9. ստանդարտացված-ոչ ստանդարտացված,
10. բաց-գաղտնի,
11. ներառված-չներառված,
12. ուղղակի-անուղղակի
13. հրահրող-չհրահրող:

Օբյեկտիվ – դիտում կողքից, այսինքն՝ դիտողի կողմից արտաքին համարվող օբյեկտների դիտումը: Որպես հետազոտության ինքնուրույն միջոց կիրառվում է հոգեբանության բոլոր բա-

Ժիններում, հատկապես սոցիալական, զարգացման, մանկավարժական հոգեբանության մեջ, հոգեբանության հարակից ոլորտներում (բժշկական, սպորտային, քաղաքական) և այլն: Օբյեկտիվ դիտումը՝ որպես անբաժանելի տարր, ընդգրկված է հոգեբանության գրեթե բոլոր էմպիրիկ մեթոդներում: Հոմանիշ՝ արտաքին դիտում:

Ինքնադիտում (ներհայեցողություն) – Սուբյեկտի կողմից ինքն իր գիտակցության և վարքային դրսևորումների դիտումն է: Որպես առաջատար մեթոդ՝ այն կիրառվել է հոգեբանության զարգացման վաղ փուլերում հիմնականում ընդհանուր հոգեբանության հիմնախնդիրներն ուսումնասիրելիս, առաջին հերթին՝ հոգեկան գործընթացների ուսումնասիրման համար: Ներկայումս որպես ինքնուրույն մեթոդ հաճախ չի օգտագործվում:

Գաշտային (բնական) – օբյեկտների դիտումն իրենց առօրյա կյանքի և գործունեության բնական պայմաններում: Այն կարող է լիովին իրականացվել օբյեկտիվ դիտման տեսքով: Բնական դիտումը տվյալների հավաքագրման ինքնուրույն միջոց է: Նրա համադրությունը այլ փորձարարական մեթոդների հետ հնարավոր է, եթե դիտումը հանդես է գալիս որպես առաջատար, հիմնական հնար, իսկ մյուս մեթոդները՝ օժանդակ, ուղեկցող և դրա հետ ժամանակի մեջ բաշխված: Միաժամանակ դրանց կիրառումը անխուսափելիորեն ազդում է ուսումնասիրվող օբյեկտների կյանքի գործունեության վրա, և այդ ժամանակ արդեն ստիպված չենք լինում խոսել դիտման այդ տեսակի մասին:

Լաբորատոր (փորձարարական) – դիտում ստեղծված արհեստական պայմաններում: Արհեստականության աստիճանը կարող է տարբեր լինել, ոչ պարտադրված, հասարակ պայմաններից մինչև հատուկ հաստատություններ, տեխնիկական միջոցներ և պարտադրված հրահանգներ: Ի հակադրություն դաշտայինի՝ դիտման այս տեսակը գրեթե մշտապես կապված է այլ փորձա-

րարական մեթոդների կիրառման հետ կա՛մ որպես դրանք ուղեկող, կա՛մ որպես դրանց անբաժանելի բաղադրիչ:

Ցավոք, պետք է արձանագրել, որ այս դեպքում դիտման առանձնահատկությունը չի կարող համարվել հաջողված: Ամեն դեպքում «լաբորատոր» և «փորձարարական դիտում» անվանումները չեն արտացոլում իրենց հասկացության նշանակության ողջ շրջանակը: Ակնհայտ է, որ այս տեսակի դիտումը կիրառելի է ոչ միայն լաբորատոր պայմաններում, այլ նաև ցանկացած արհեստական ստեղծված իրավիճակներում: Դա նշանակում է, որ նման իրավիճակ կարող է դիտվել լաբորատոր պատերից դուրս, այսինքն՝ հատուկ գիտական հետազոտությունների կամ արտադրական փորձերի համար կահավորված սենյակում:

Ոչ լիարժեք դիտում – հետազոտողի ուշադրությունը բաշխված է իրավիճակի և հետազոտվողի վարքի օպտիմալ քանակի չափանիշների վրա: Գրանցվող տեղեկատվության շրջանակը որոշվում է նախապես՝ ելնելով դիտման խնդրից և պայմաններից: Որպես կանոն, դիտման գործընթացի նման կարգավորումը խստորեն չի սահմանափակում դիտորդի գործողությունները. միայն կանխում է փնտրվող տեղեկատվության անցանկալի բացերը: Այսինքն՝ այն չի արգելում դիտողին անհրաժեշտության դեպքում դուրս գալ սահմանված խնդիրների շրջանակից, այլ միայն կողմնորոշում է դիտողին դիտման իրավիճակների անսահման բազմազանության մեջ:

Այսպիսով, նման սահմանափակումը ոչ միայն «չի կապում դիտորդի ձեռքերը», այլ ընդհակառակը, ազատում է նրան ընտրության՝ «ի՞նչ դիտել և ի՞նչը ֆիքսել» ընթացիկ խնդիրներից: Եվ դա թույլ է տալիս ուշադիր և մանրամասն հետևել հիմնական չափանիշներին (ըստ հետազոտության վարկածի) և ավելացնում է լրացուցիչ կարևորության փաստերի (ըստ դիտորդի) հայտնաբերման հավանականությունը: Արդյունքում մեծացնում է դիտման տվյալների հուսալիությունը և ճշգրտությունը: Հասկանալի է, որ

ոչ լիարժեք դիտումները շատ ավելի տնտեսող են և, որպես կանոն, ավելի արդյունավետ, քան ամբողջական դիտումները: Դիտման այս տեսակը բնորոշ է հիմնական և ստուգիչ հետազոտություններին: Այն սովորաբար կիրառվում է կարճաժամկետ ուսումնասիրության համար կամ անհրաժեշտության դեպքում՝ ուսումնասիրվող երևույթների դինամիկայի մասին առավել ամբողջական տեղեկություն ստանալու համար:

Ներգրավված դիտում – կարող է իրականացվել ինչպես բաց, այնպես էլ թաքնված ձևով: Առաջին դեպքում հետազոտության հաջողության կարևորագույն պայման է դիտողի կարողությունը՝ «հավասարեցնել» սեփական հատուկ վիճակը խմբում, չգրավել ավելորդ ուշադրություն և չիրահրել հատուկ վերաբերմունք սեփական անձին դիտվող օբյեկտների կողմից: Երկրորդ դեպքում կարևորը իրեն չբացահայտելն է: Դրա համար հոգեբանը պետք է կոմպետենտ լինի այն գործունեության մեջ, որով զբաղվում են դիտվողները, լինի գուսպ և նույնիսկ ունենա դերասանական ընդունակություններ: Ամեն մեկին չէ, որ տրված է բնական կերպով անձանոթ խմբեր «ներխուժելու արվեստը»:

Ոչ ներգրավված դիտում – կողքից դիտում, առանց դիտողի և ուսումնասիրվող օբյեկտի փոխազդեցության: Դիտման այս ձևը, ըստ էության, օբյեկտիվ (արտաքին) դիտում է: Դիտման որոշ իրավիճակներ թույլ են տալիս խոսել ներգրավված և ոչ ներգրավված դիտումների միջև միջանկյալ ձևերի մասին, օրինակ՝ մանկավարժի կողմից աշակերտների և դաստիարակների դիտումը: Այս միջանկյալ տարբերակը բնորոշ է այլ փորձարարական մեթոդներում դիտման տարրերի ներգրավման դեպքերին: Դրանք են հոգեբանական խորհրդատվության, հոգեթերապևտիկ ազդեցությունները, ձևավորող գիտափորձը, հոգեբանական զրույցը, հարցազրույցները և այլն:

Անուղղակի դիտման տեսակներից կարելի է համարել ուսումնասիրվող իրավիճակի մասին տեղեկատվություն պարունակող

վաստաթղթերի ուսումնասիրությունը (հաշվետվություններ, նամակագրություն), հարցումը, կենսագրական տվյալների ուսումնասիրությունները: Միջնորդումը կարող է իրականանալ ոչ միայն այլ մարդկանց կողմից, այլև տեխնիկական միջոցներով, օրինակ՝ առանց դիտողի ներկայության ինքնաբերաբար աշխատող տեսաձայնագրիչի կամ ձայնագրող սարքի միջոցով:

Հրահրվածն այն դիտումն է, որի ընթացքում հետազոտողը հրահրում է դիտվողին որևէ գործողությունների կամ արարքների: Այս միջոցը սովորաբար օգտագործվում է ուսումնասիրվող երևույթի շեշտադրման կամ դրա և դիտման գործընթացի ժամանակային համընկնման համար: Բացի այդ՝ որոշ գործողություններ և արարքներ, որոնք նախընտրելի է ուսումնասիրել սովորական իրավիճակներում, գիտակցաբար քողարկվում են, ինչը բարդացնում է դրանց դիտումը, օրինակ՝ առևտրի ժամանակ խաբելը:

Չհրահրված դիտում – այն ընթացակարգն է, որի չի նախատեսում հատուկ հրահրող ազդեցություն դիտվող իրադարձությունների ընթացքի վրա:

Դիտումը կարող է կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ այլ մեթոդների հետ համատեղ: Վերջին դեպքում դիտման արդյունքները կարևոր տեղեկատվություն են հետազոտողի համար: Դիտումը կարող է անցկացվել անմիջականորեն կամ օգտագործելով որոշակի գործիքներ և արդյունքներն արձանագրող միջոցներ (աուդիո, ֆոտո, տեսասարքավորումներ):

Դիտման մեթոդով հետազոտումը կազմված է հետևյալ փուլերից.

1. որոշվում են դիտման առարկան, օբյեկտը, իրավիճակը,
2. ընտրվում են դիտման արդյունքներն արձանագրող միջոցներ,
3. կառուցվում է դիտման պլանը,
4. ընտրվում է արդյունքների մշակման մեթոդ,

5. կատարվում են մշակում և ստացված տեղեկատվության մեկնաբանում:

Ստուգվող վարկածի բովանդակությունը թելադրում է դիտման նպատակի առանձնացումը, այսինքն՝ ի՞նչ դիտել և ինչպե՞ս: Ընդհանրապես դիտման արդյունքների արձանագրումը կարող է կատարվել դիտման ընթացքում կամ դիտելուց հետո: Վերջին դեպքում մեծ նշանակություն են ձեռք բերում հետազոտողի հիշողության առանձնահատկությունները, նվազում է արդյունքների ճշգրտության մակարդակը:

Դիտումը կարող է անցկացվել անմիջականորեն կամ օգտագործելով օժանդակ միջոցներ:



Դիտման տեսակները: Առանձնացնում են դիտման տարբեր տեսակներ:

Ըստ կազմակերպման՝ դիտումը լինում է դաշտային, լաբորատոր և հրահրված՝ բնական պայմաններում: Դաշտային դիտումը կատարվում է դիտվող «օբյեկտի» կյանքի համար բնական պայմաններում: Աղճատումն այս իրավիճակի դեպքում լինում է նվազագույն, բայց այն շատ աշխատատար է, սպասողական բնույթ է կրում: Լաբորատոր դիտումը թույլ է տալիս ուսումնասիրել մարդու

վարքը հետազոտողի համար ավելի հարմար և վերահսկվող պայմաններում, բայց արհեստական պայմանները կարող են աղճատել արդյունքները: Իսկ հրահրվածի դեպքում հետազոտողը հրահրում է օբյեկտի մոտ հոգեբանական որոշակի դրսևորումներ բնական պայմաններում:

Ըստ տևողության՝ դիտումը լինում է լոնգիտյուդ, պարբերական և մեկանգամյա: Լոնգիտյուդ դիտումը կատարվում է երկար ժամանակահատվածում, սովորաբար մի քանի տարի: Այսպիսի հետազոտությունների արդյունքները գրանցվում են ծրագրերում: Պարբերական դիտումն անցկացվում է որոշակի, սովորաբար ճշգրիտ տրված ժամանակահատվածում: Մեկանգամյա դիտումը սովորաբար ներկայացվում է առանձին դեպքի ձևով: Առանձնացնում են ընդհանուր և ընտրողական դիտում: Առաջին դեպքում հետազոտողը ամրագրում է վարքի բոլոր առանձնահատկությունները, որոնք հասանելի են մանրակրկիտ դիտման: Երկրորդ դեպքում նա ուշադրություն է դարձնում միայն վարքի որոշակի բնութագրիչների վրա, օրինակ՝ գրանցում է միայն ագրեսիայի դրսևորման հաճախությունը:

Դիտումը կարող է լինել բաց և փակ (օրինակ՝ Գեզելի ապակու միջոցով), ներգրավված և չներգրավված: Ներգրավվածի դեպքում հետազոտողը խմբի անդամ է: Երբ դիտումը բաց է, այսինքն՝ հետազոտվողները տեղյակ են, որ իրենց դիտում են, այդ հանգամանքը կարող է փոխվել նրանց վարքը: Դա մեծապես պայմանավորված է հետազոտողի անձով: Որոշ ժամանակ անց հետազոտության մասնակիցները կարող են մոռանալ հոգեբանին և իրենց բնական պահել: Երբ հետազոտողը թաքնվում է, իսկ դիտման նպատակները՝ թաքցվում, կարող են առաջանալ էթիկական լուրջ խնդիրներ: Ներգրավված դիտման մեթոդի ձևափոխում է «աշխատանքային մեթոդը», որը ներառում է նաև ինքնադիտում: Տվյալ դեպքում մեթոդը կիրառողը միաժամանակ և՛ դիտող է, և՛ մասնակից:

Թվարկված դասակարգումները չեն հակասում իրար, և իրական հետազոտությունում կարող են առաջադրվել դրանց տարբեր տեսակները:

Այսպիսով՝ դիտման մեթոդում կարելի է առանձնացնել առավելություններ և թերություններ [Клециной И., 2016]⁸:

Դիտման մեթոդի առավելություններն են.

1. հավաքում է բնական վարքի վերաբերյալ փաստեր (կոնկրետ պայմաններում տարբեր օրինաչափությունների ուսումնասիրություն),
2. արտացոլվում է կյանքի ենթատեքստը (հնարավոր է վերլուծել խմբի վարքը),
3. մարդն ընկալվում է որպես մի ամբողջականություն,
4. դիտման ժամանակ հնարավոր է նաև ուսումնասիրել այլ հատկություններ՝ բացի նրանցից, որոնք մեզ հետաքրքրում են,
5. գիտակցված դիտման ժամանակ անմիջական կապ է ստեղծվում դիտողի և դիտվողի միջև:

Թերություններն են.

1. դիտվող փաստը և ուղեկցվող երևույթները միախառնված են հանդես գալիս,
2. առկա է կրկնակի դիտման հնարավորության բացակայություն,
3. արդյունքներն արձանագրվում են նկարագրական ձևով (բացատրությունները և կարծիքները իրականում կարող են սխալ լինել),
4. սուբյեկտիվության մակարդակը բարձր է:

⁸ Социальная психология: учебник и практикум для академического бакалавриата / Под ред. И.С. Клециной, М.: Изд-во «Юрайт», 2016.

Գիտման մեթոդի կիրառումը ենթադրում է մշտական կանոնա- կարգված գրանցումներ:



3.2. Գիտափորձի մեթոդը և դրա տեսակները

Ներկայումս գիտական հոգեբանության բնագավառում ամենալայն տարածում ստանում է գիտափորձը, որը դառնում է հոգեբանական փաստերի առձանագրման հիմնական մեթոդներից մեկը: Ի տարբերություն դիտման զանազան տեսակների՝ գիտափորձը նպատակ ունի ստեղծելու որոշակի պայմաններ՝ ուսումնասիրության ենթակա երևույթներն ակտիվորեն առաջ բերելու և կրկին ու կրկին հետազոտելու համար: Գիտման համեմատ գիտափորձի առավելությունն այն է, որ գիտնականը ստիպված չէ երկար սպասել, մինչև որ իրեն հետաքրքրող երևույթն առաջ կգա: Գիտափորձի օգտագործումը թույլ է տալիս առաջ բերել այդ երևույթը և փոփոխությունների ենթարկել վերահսկվող պայմաններում: Ընդունված է տարբերել հոգեբանական գիտափորձի 2 հիմնական տեսակ՝ լաբորատոր և բնական [Янчук В., 2011]⁹:

⁹ **Янчук В. А.**, Методология и методы психологического исследования в психологии и социальных науках. Мн.: АПО, 2011, 376 с., <http://psyznaiyka.net/view->

1. Լաբորատոր գիտափորձը անցկացվում է հատուկ պայմաններում:

Հետազոտողը սահուն և նպատակաուղղված ազդում է ուսումնասիրվող օբյեկտի վրա, որպեսզի փոխի նրա վիճակը: Լաբորատոր գիտափորձի առավելությունը պայմանների խիստ վերահսկումն է և չափման հատուկ սարքավորումների կիրառումը: Թերությունն այն է, որ կա դժվարություն գիտափորձում ստացված արդյունքները իրական պայմաններ տեղափոխելու համար: Լաբորատոր գիտափորձի հետազոտվող միշտ տեղեկացված է, որ մասնակցում է գիտափորձի, ինչը կարող է մոտիվացիոն աղճատումների պատճառ դառնալ [Коновалова М., 2006]¹⁰:

Կատարվում է այդ նպատակով ստեղծված հատուկ աշխատանքային սենյակներում, ընդ որում, ժամանակակից հոգեբանական գիտափորձերի ընթացքում շատ հաճախ օգտագործվում են զանազան սարքավորումներ: Հետազոտվողները գիտակցում են, որ իրենց ուսումնասիրում են, թեև օբյեկտիվ տվյալներ ստանալու նպատակով գիտափորձի իրական նպատակները նրանց սովորաբար չեն հայտնում: Այս պայմանի դեպքում նրանք չեն կարողանում գիտակցորեն ազդել գիտափորձի արդյունքների վրա:

Գիտափորձ կատարելու համար նախապես անհրաժեշտ է ունենալ վարկած (հիպոթեզ), այսինքն՝ մի խումբ ենթադրություններ այն մասին, որ մարդու վրա Ա գործոնով ազդելիս պետք է սպասել որոշակի Բ գործողությունների դրսևորման, և եթե Ա-ն փոխենք, ապա փոփոխություններ կկրի նաև Բ-ն: Գիտափորձի նպատակն է ստուգել այդ վարկածի ճշտությունը, իսկ դրա համար Ա-ն և Բ-ն պետք է այնպես ձևակերպվեն, որ մատչելի լինեն

metody.html?id=eksperiment// Методы психологического исследования > Эксперимент.

¹⁰ Экспериментальная психология: конспект лекций. Сост. М. Коновалова //https://www.e-reading.club/book.php?book=97792.

չափման համար: Ա-ն անվանում են անկախ փոփոխական, Բ-ն՝ կախյալ:

Մարդու վրա միաժամանակ կարող են ազդել մի շարք փոփոխականներ, որոնց նա կարող է պատասխանել վարքային տարբեր դրսևորումներով և գործողություններով: Անկախ փոփոխականներից պետք է տալ, այսպես կոչված, օպերացիոնալ սահմանում, այսինքն՝ այնպիսին, որ թույլ է տալիս չափել նրա մեծությունը: Տվյալ դեպքում այդ սահմանումը կարող է լինել այսպիսին. «Յուրաքանչյուր հետազոտվողի տրվում է 100 միկրոգրամ վիտամին C պարունակող հաբ, իսկ վերահսկիչ խմբի անդամներից յուրաքանչյուրին այնպիսի հաբ, որը վիտամին C չի պարունակում»:

Կախյալ փոփոխականը կարող է չափվել հետևյալ կերպ. «Անհրաժեշտ է որոշել համեմատվող 2 հետազոտվողների գրած բանաստեղծությունների մակարդակը: Դ-ա կարող է լինել այն բաների քանակը, որ հետազոտվողը գրում է 1 ժամի ընթացքում: Այդ մակարդակի մյուս չափումը կարող է լինել գործի որակը, որի գնահատման համար 5 փորձագետ «դատավորներ» կարդում են հետազոտության երկու մասնակիցների գրածը և գնահատում են 0-100 միավորի սահմաններում: Փորձագետները չպետք է իմանան, թե որ (փորձարարակա՞ն, թե՞ վերահսկիչ) խմբին են պատկանում մասնակիցներից յուրաքանչյուրը»:

Գիտափորձն իրականացնելու նպատակով պետք է ընտրել մասնակիցների և կազմել խմբեր՝ ձգտելով, որ մինչև գիտափորձը նրանց դրսևորած բանաստեղծական ընդունակությունների մակարդակը, ըստ վերոհիշյալ 2 չափումների, նույնը լինի: Այդ նպատակով կարելի է մինչև գիտափորձին անցնելը հոգեբանական թեստեր օգտագործել և նույնանման արդյունքներ տվողներից զույգեր կազմել: Յուրաքանչյուր զույգի պարագայում ներառում են մեկ հետազոտվողի և մեկ վերահսկիչ անհատի: Գիտափորձից հետո նրանցից յուրաքանչյուրին կրկին թեստային ստուգման են ենթարկում՝ ըստ կախյալ փոփոխականի մակարդակի:

Մինչև գիտափորձը պետք է նաև հավասարեցնել «արտաքին փոփոխականները» (օրինակ՝ հետազոտվողը և վերահսկիչ անհատը պետք է միանման առողջական վիճակ ունենան): Այս խնդիրը լուծելու համար կարելի է դիմել, այսպես կոչված, «ռանդոմիզացիայի» մեթոդին, որի օգնությամբ ներկայումս հաճախ են ստեղծվում փորձարարական ու վերահսկիչ խմբեր, պատահականորեն ընտրում են մարդկանց մեծ խումբ (օրինակ՝ 200 հոգուց կազմված) և այն դարձյալ պատահականորեն բաժանում են 2 ենթախմբի: Այս դեպքում ըստ բոլոր փոփոխականների միջին արժեքների (ըստ միջին քաշի, հասակի, առողջության վիճակի, մտավոր զարգացման աստիճանի և այլն) դրանք շատ մոտ կլինեն իրար: Լաբորատոր գիտափորձն ունի մի շարք թերություններ: Այդ թերություններին երբեմն վերաբերում է «բնական վալիդության» ցածր աստիճանը, այսինքն՝ կյանքի իրական իրավիճակներին համապատասխանությունը: Մեկ այլ թերություն է հետազոտվողի համար ակնհայտ հետազոտական միջավայրը, որի հետևանքով գործնականում անխուսափելի են նրա կաշկանդվածությունը, գիտակցական կամ անգիտակից տագնապը, գնահատման վախը և այլն: Առավելություններն են փոփոխականների համեմատաբար ամբողջական հսկողության հնարավորությունը, հետազոտվող բնութագրի և դրա արտահայտման պայմանների վերարտադրողության ապահովումը: Ստացվող տվյալների մաքրության պահանջը կապված է նաև մի շարք սահմանափակումների հետ. արհեստական լաբորատոր պայմաններում գործնականում հնարավոր է մոդելավորել կյանքի իրական պայմանների միայն առանձին հատվածները:

2. Բնական գիտափորձը անցկացվում է իրական պայմաններում:

Դրա առավելությունը այն է, որ օբյեկտի ուսումնասիրումն անցկացվում է առօրյա կյանքի համատեքստում, այդ իսկ պատճառով ստացված արդյունքները հեշտությամբ տեղափոխվում են

իրականության դաշտ: Հետազոտվողները ոչ միշտ են տեղյակ, որ մասնակցում են հետազոտության, հետևաբար չեն ցուցաբերում մոտիվացիոն աղճատումներ: Թերություններից են բոլոր պայմանների վերահսկելիության անհնարինությունը, չնախատեսված միջամտությունները և աղճատումները [Коновалова М., 2006]¹¹:

Հոգեբանական գիտափորձի մյուս հիմնական տեսակը բնական գիտափորձն է, որը հոգեբանության բնագավառում առաջինը կիրառել է Ա. Ֆ. Լազուրսկին 1910 թ.: Այս տարբերակի ստեղծման նպատակն է՝ ապահովել առօրյա կենսագործունեությանը մոտ պայմաններ (կենցաղում, ուսուցման, խաղի, աշխատանքի և այլ պայմաններում): Ենթադրվում է, որ այս պայմաններում կվերանան այն լարվածությունն ու կաշկանդվածությունը, որոնք առաջանում են հետազոտության մասնակցի մոտ, երբ նա տեղեկացվում է, որ մասնակցում է հետազոտության: Նկարագրենք մի փորձ, որի պայմանները շատ նման են առօրյա կյանքի պայմաններին, և ուրեմն այն կարելի է դիտել որպես բնական գիտափորձի օրինակ: Օրինակ՝ հոգեբանն իր առջև խնդիր է դնում պարզելու այլ մարդկանց օգնելու պատրաստակամության և հոգեվիճակի կապը: Առաջ է քաշվում հետևյալ վարկածը. եթե մարդը գտնվում է հաճելի կամ երջանիկ հոգեվիճակում, ապա ուրիշներին օգնության հասնելու նրա պատրաստակամությունը մեծանում է:

Գիտափորձի ընթացքը հետևյալն է. առանձնացնում է հետազոտական 2 խումբ: Խմբերից մեկին հանձնարարում են լուծել որևէ խնդիր, որից հետո նրա անդամներին գովում են: Նրանք հայտնվում են հաճելի հոգեվիճակում: Մյուս խմբի համար ստեղծում են չեզոք պայմաններ (բացակայում են գովասանքը և հաճելի ապրումներ ունենալու այլ պատճառներ): Այնուհետև 2 խմբի անդամներին կանգնեցնում են ուրիշներին օգնելու խնդրի առջև: Օրինակ՝ պահանջում են դրամական օգնություն ցույց տալ որևէ

¹¹ Экспериментальная психология: конспект лекций. Сост. М. Коновалова // <https://www.e-reading.club/book.php?book=97792>:

կազմակերպության, որն ինչ-որ օգտակար նպատակներ է հետապնդում:

Գիտափորձը հաստատում է առաջադրված վարկածը. հաջողության, բավարարվածության հաճելի հոգեվիճակ ապրող անձինք ավելի պատրաստակամ են ուրիշներին օգնելու գործում: Այս հանգամանքը պարզ է նաև առօրյա դիտումներից, բայց գիտափորձը թույլ է ապացուցել այն, հիմք է ստեղծում՝ նոր և ավելի խոր խնդիրներ առաջ քաշելու համար:

Նկարագրված գիտափորձը հետաքրքրական է նաև այն տեսանկյունից, որ նրանում կարելի է տեսնել մեկից ավելի անկախ փոփոխականների փոխներգործությունը: Պարզվում է, օրինակ, որ օգնության հասնելու պատրաստակամությունը (y) կախված է ոչ միայն մարդու տրամադրությունից (x_1), այլև նրա տրամադրության տակ եղած դրամի քանակից (x_2): y -ի վրա x_1 -ի դրական ազդեցությունը դիտվում է նաև այն դեպքում, երբ x_2 -ի մակարդակը բարձր է (այսինքն՝ երբ հետազոտվողները բավականաչափ լրացուցիչ գումար ունեն՝ բացի այն գումարից, որն անհրաժեշտ է՝ իրենց կարիքները բավարարելու համար: Իսկ երբ մասնակիցները գտնվում են ֆինանսական սուղ վիճակում, ապա հաճելի տրամադրությունը շատ քիչ ազդեցություն է գործում օգնության հասնելու պատրաստակամության և նրանից բխող վարքի վրա:


Մարդու իրական վարքը, հույզերը, մտքերը, հոգեկան ակտիվությունը պայմանավորված են մեծաքանակ գործոններով (անկախ փոփոխականներով), բայց գիտափորձի ընթացքում անհրաժեշտ է փոխել դրանցից մեկը կամ երկուսը, իսկ մյուսները պահել հաստատուն՝ որպես գիտափորձի պայմաններ, այլապես ճշգրիտ տվյալներ ստանալ հնարավոր չի լինի: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ մարդու վարքային դրսևորումների մասին ընդհանրացումներ կատարելիս պետք է զգույշ լինել: Գիտափորձի տվյալների վստահության արժանացման համար հարկավոր է, որ տարբեր խմբերի հետ դրա կրկնության դեպքում միևնույն պա-

տասխանները ստացվեն: Ենթադրվում է, որ հավաստի կարելի է համարել այն արդյունքները, որոնք տարբեր խմբերի հետ կատարված գիտափորձերի դեպքում տարբերվում են միայն իրենց մեծության 1/20-ից ոչ ավելի չափով:

Բնական գիտափորձը միջանկյալ է համարվում դիտման և լաբորատոր գիտափորձի միջև, որի դեպքում հոգեբանը կարող է ակտիվորեն ազդել իրավիճակի վրա, բայց այնպիսի ձևերով, որոնք չեն խախտում դրա բնականությունը հետազոտության մասնակիցների համար: Հիմնական մեթոդներն են դիտումը և գրույցները հետազոտվողի հետ, որոնց արդյունքները որակապես մշակվում են: Բնական գիտափորձի օրինակ է հոգեբանամանկավարժական գիտափորձը կամ փորձարարական ուսուցումը, որում դպրոցականի՝ ձևավորման ենթակա հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումն իրականացվում է ուսուցման և դաստիարակության ընթացքում: Այն կիրառվում է տարբեր տարիքի աշակերտների իմացական հնարավորությունների ու անձի զարգացման յուրահատկությունների ուսումնասիրման համար և իրականացվում է ուսուցման գործունեության ընթացքում: Գիտափորձի այս տեսակի առավելություններից մեկն այն է, որ նրա իրականացման ընթացքում անձի մեջ ակտիվորեն ձևավորվում են ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող հոգեկան գործընթացներն ու հատկությունները: Այդ պատճառով էլ նման գիտափորձերն անվանում են նաև ձևավորող: Բայց ինչպես լաբորատոր, այնպես էլ բնական գիտափորձերը կարող են լինել լոկ հավաստող, այսինքն՝ «ուսումնասիրության» պահին մարդու մեջ առկա և նախորդ զարգացման արդյունք հանդիսացող հատկությունները բացահայտող: Իրականում գիտափորձերը շատ հաճախ կազմակերպվում են այնպես, որ լինեն միաժամանակ և՛ հավաստող, և՛ ձևավորող, և՛ զարգացնող: Այս դեպքում անձի առկա վիճակը և զարգացման հեռանկարների վերաբերյալ ստացվող

տվյալները լինում են ավելի հարուստ: Գիտափորձի հիմնական տեսակների դասակարգումը ներկայացված է նկար 5-ում:

Գիտափորձը հետազոտական ռազմավարություն է, որում իրականացվում է որոշակի գործընթացի նպատակաուղղված դիտարկում դրա ընթանալու պայմանների առանձին բնութագրիչների սահմանված փոփոխությունների դեպքում: Ընդ որում, տեղի է ունենում վարկածի ստուգում:



Նկար 5. Գիտափորձի հիմնական տեսակների գծանկարը

Հոգեբանության մեջ գիտական ճանաչողական մեթոդների շարքում այն հիմնականներից մեկն է՝ դիտմանը զուգընթաց: Առաջին հերթին տարբերվում է դիտումից նրանով, որ ենթադրում է հետազոտման իրավիճակի հատուկ կազմակերպում, ակտիվ ներխուժում իրավիճակի մեջ հետազոտողի կողմից, որը պլանաչափորեն խաղարկում է մեկ կամ մի քանի փոփոխականներ (գործոններ) և գրանցում է հետազոտվող օբյեկտի վարքի համապատասխան փոփոխությունները:

Գիտափորձ կատարել, հետազոտել նշանակում է ուսումնասիրել անկախ փոփոխականի ազդեցությունը մեկ կամ մի քանի կախյալ փոփոխականների վրա վերահսկվող փոփոխականների խիստ վերահսկողության դեպքում: Դա հնարավորություն է տալիս իրականացնելու փոփոխականների համեմատաբար լիարժեք հսկողություն: Եթե դիտման ժամանակ հաճախ անհնար է կանխատեսել փոփոխությունները, ապա գիտափորձում կարելի է այդ փոփոխությունները պլանավորել և կանխել անակնկալների առաջացումը: Փոփոխականների մանիպուլյացիայի հնարավորությունը փորձարարի հիմնական առավելությունն է դիտողի նկատմամբ:

Գիտափորձի հիմնական առավելությունն այն է, որ կարելի է հատուկ առաջացնել որևէ հոգեկան գործընթաց, դիտարկել հոգեբանական երևույթի կախվածությունը փոփոխվող արտաքին պայմաններից: Այդ առավելությամբ է բացատրվում գիտափորձի լայն կիրառումը հոգեբանությունում: Էմպիրիկ փաստերի հիմնական զանգվածը ստացված է փորձնական եղանակով: Բայց գիտափորձը կիրառվում է ոչ բոլոր հետազոտական խնդիրների դեպքում: Այսպես, բնավորության և բարդ ունակությունների փորձարարական հետազոտությունը դժվարացված է: Գիտափորձի թերությունները դրա առավելությունների հակադարձ կողմն են: Օրինակ՝ բավականին դժվար է կազմակերպել գիտափորձն այնպես, որ հետազոտվողը տեղյակ չլինի, որ նա հետազոտվող է: Եթե դա չի հաջողվում, ապա ավելի քան հավանական են հետազոտվողի կաշկանդվածությունը, գիտակից կամ անգիտակից տագնաալը, գնահատման վախը և այլն: Գիտափորձի արդյունքները կարող են խեղաթյուրվել տարբեր գործոններով: Ամենահաճախակի հանդիպող արտեֆակտերը պայմանավորված են Պիգմալիոնի էֆեկտով: Հետազոտվողների շրջանում նաև կարող է առաջանալ Հոտորնի էֆեկտը: Այս էֆեկտներից խուսափելու նպաստում է կույր մեթոդի կիրառումը: Առանձնաճանաչում են գիտա-

փորձի այնպիսի տարբերակներ, ինչպիսիք են լաբորատոր, բնական և դաշտային գիտափորձերը [Дружинин В., 2003]:

Այլ հիմքով տարբերում են փաստարկող գիտափորձը և ձևավորող գիտափորձը: Վերջիններիս տարբերակումը հատկապես կարևորվում է տարիքային և մանկավարժական հոգեբանության համար. հոգեկանի զարգացմանը պետք է մոտենալ կամ որպես այնպիսի երևույթի, որը համեմատաբար անկախ է կրթությունից ու դաստիարակությունից (այդ դեպքում խնդիրը զարգացման ընթացքում ձևավորված կապերի կոնստատացիան է) կամ որպես երևույթի, որն առաջնորդվում է կրթությամբ և դաստիարակությամբ (այդ դեպքում չի կարելի անտեսել ուսուցման բուն գործընթացը):

Որպես գիտափորձի բաղադրամաս դրա մեջ կարող են ներգրավված լինել դիտումն ու հոգեդիագնոստիկան: Բնականաբար, գիտափորձի ընթացքում հետազոտվողին դիտում են, և անհրաժեշտության դեպքում նրա վիճակն արձանագրվում է հոգեդիագնոստիկայի միջոցով: Սակայն այստեղ դիտումն ու հոգեդիագնոստիկան հանդես են գալիս ոչ որպես հետազոտության մեթոդ: Ճիշտ դրված գիտափորձը թույլ է տալիս ստուգել պատճառահետևանքային կապերի վերաբերյալ վարկածներ՝ չսահմանափակվելով փոփոխականների միջև կորելյացիայի արձանագրությամբ: Գիտափորձի անցկացման պլանները բաժանվում են.

1) ավանդականների, երբ փոփոխվում է ընդամենը մեկ անկախ փոփոխական,

2) գործոնայինների, երբ փոփոխվում են մի քանի անկախ փոփոխականներ:

Դրա առավելությունը գործոնների փոխազդեցության գնահատման հնարավորությունն է, մի փոփոխականի ազդեցության բնույթի փոփոխությունը՝ մյուսի արժեքից կախված, ընդ որում, գիտափորձի արդյունքների վիճակագրական մշակման համար օգտագործվում է դիսպերսիոն վերլուծությունը: Եթե ուսումնասիր-

վող բնագավառը համեմատաբար անհայտ է, և վարկածների համակարգը բացակայում է, ապա խոսում են պիլոտաժային գիտափորձի մասին (հետազոտությունը պիլոտաժային է), որի արդյունքները կարող են օգնել՝ ճշտելու հետազա վերլուծության ուղղությունը: Երբ առկա են երկու մրցակցող վարկած, և գիտափորձը թույլ է տալիս ընտրել դրանցից որևէ մեկը, ապա խոսում են որոշիչ գիտափորձի մասին (լատ. – **experimentum crucis**): Ստուգիչ գիտափորձն իրականացվում է որոշակի կախվածությունների ստուգման նպատակով: Գիտափորձի կիրառումը բախվում է սկզբունքային սահմանափակումների, որոնք կապված են որոշ դեպքերում փոփոխականների կամայական փոփոխման անհնարիմության հետ: Այսպես, դիֆերենցիալ և անձի հոգեբանության մեջ էմպիրիկ կախվածությունները մեծ մասամբ կորելյացիաների կարգավիճակ ունեն և հաճախ թույլ չեն տալիս պատճառահետևանքային կապերի մասին եզրակացություններ անել: Գիտափորձի իրականացման դժվարություններից մեկն այն է, որ հետազոտողը սովորաբար ընդգրկված է հետազոտվող անձի հետ շփման իրավիճակում և կարող է ակամա ազդել նրա վարքի վրա: Հոգեբանական հետազոտման մեթոդների և ազդեցության յուրահատուկ տարատեսակ են կազմում ձևավորող կամ ուսուցողական գիտափորձերը: Դրանք թույլ են տալիս ուղղորդված ձևավորել այնպիսի հոգեկան գործընթացների առանձնահատկություններ, ինչպիսիք են՝ ընկալումը, ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը և այլն:

Ասոցիատիվ գիտափորձը մեթոդ է, նախագծային թեստ՝ մշակված Կ. Գ. Յունգի, Մ. Վերտհայմերի ու Դ. Կլայնի կողմից, և նախատեսված է անձի մոտիվացիայի հետազոտման համար, կողմնորոշված է դեպի թաքնված աֆեկտիվ բարդույթների և հոգեկան այլ երևույթների ախտորոշումն ու հոգեթերապիան: Այն հիմնված է այցելուների արձագանքման բովանդակության, ձևի և արագության ուսումնասիրման վրա, որը, հետազոտողի բառերին

ի պատասխան, ներկայացնում է միտքն եկած առաջին իսկ բառը (ասոցիատիվ եղանակ): Ի սկզբանե այն մշակվում էր հոգեբուժության խնդիրների համար, ավելի ուշ սկսեց կիրառվել հետազոտական և հոգեդիագնոստիկ նպատակների համար (հոգեդիագնոստիկա):

Թեստը պահանջում է հետազոտվողից հնարավորինս արագ արձագանք՝ պատասխան ներկայացված բառին առաջին մտաբերած բառով: Այդ դեպքում առաջացող գուգորդումները (ասոցիացիաները) գրանցվում են ըստ միանման տիպի, հաճախակա-նության, «ազդակ» բառի ու հետազոտվողի պատասխանի միջև ժամանակի:

Գրանցվում են նաև վարքագծային և ֆիզիոլոգիական հա-կազդումները: Այդ հակազդման արգելակումը, գրգռիչ բառը չհասկանալը, դրա մեխանիկական կրկնումը, հետազոտվողի ընդ-հանուր վարքը (չպատճառաբանված ծիծաղը, բողբոքները, կարմրությունը և այլն) դիտարկվում են որպես լրացուցիչ տեղե-կատվություն: Բուն բարդության բնույթը կարող է որոշվել պատաս-խանների բովանդակության մեկնաբանության ժամանակ: Այդ նպատակին են ծառայում, օրինակ, առավել սիմպտոմատիկ հա-կազդեցությունների նախնական խմբավորումը և դրանց բովան-դակության ընդլայնումը «ազատ ասոցիացիաների» օգնությամբ:

Ասոցիատիվ գիտավորձը հաճախ օգտագործվում է որպես խմբային թեստ: Դրա անցկացման համար անհրաժեշտ է պարզել սովորական, հատկապես ցուցակի յուրաքանչյուր բառին տրվող հաճախակի պատասխանների բնույթը, փորձն անցկացնել տվյալ լեզվով խոսող հետազոտվողների բավականին մեծաքանակ ընտ-րանքի հետ: Առանձին բառերից բացի՝ որպես «գրգռիչներ» կարե-լի է օգտագործել թվեր, անիմաստ վանկեր, անձանոթ բառեր, նկարներ, գունավոր բծեր, ձայներ և այլն: Մեթոդիկական հետազո-տարգացում է ստացել Ա. Ռ. Լուրիայի հետազոտություններում: Վերջինս առաջարկել է, այսպես կոչված, հարակից շարժողական

ռեակցիաների մեթոդիկան, որի կիրառման դեպքում հետազոտվողը բառային պատասխանի հետ միաժամանակ պետք է երկու ձեռքով որոշակի շարժումներ կատարի (օրինակ՝ սեղմի երկու ցուցամատերով հեռագրասարքի երկու կոճակները): Այս դեպքում շարժական կոորդինացիայի վերլուծությունը թույլ է տալիս զգալիորեն ընդլայնել աֆեկտիվ հակազդեցությունների ախտորոշման հնարավորությունները:

Արձանագրող գիտափորձ: Հոգեկանի զարգացմանը պետք է մոտենալ որպես մի երևույթի, որը համեմատաբար անկախ է կրթությունից և դաստիարակությունից. այդ դեպքում խնդիրը զարգացման ընթացքում դրսևորվող կապերի արձանագրումն է:

Գաշտային գիտափորձը ենթադրում է սարքավորումների նվազագույն կիրառում բնականին մոտ իրավիճակներում:

Պրոյեկտիվ գիտափորձի կառուցման ձևական սկզբունքներն են՝ «խուլ» հրահանգ, փորձարարի գնահատականի բացակայություն, գործունեության շարժառիթային տեսանկյան շեշտադրում: Շատ կարևոր է հանգիստ, ընկերասիրական մթնոլորտը: Պրոյեկտիվ հետազոտությունում ընդհանրացված սխեմատիկ ձևով մոդելավորվում են կյանքի ամենատարածված իրավիճակները: Քանի որ հետազոտվողի համար այդ իրավիճակներն իրական չեն, նա ստանում է ավելի մեծ ազատություն իր վարքային դրսևորումներում: Այդ պարագայում արտահայտվում են ոչ միայն նրա կարծրատիպերը, կարիքներն ու դրդապատճառները, այլ նաև չիրականացված ցանկությունները: Կյանքում դրանց իրականացումը դժվարեցնում են մի շարք խոչընդոտող հանգամանքներ: Եվ կարելի է ենթադրել, որ գործունեության մեջ հենց խոչընդոտն է դրդում մարդուն իմաստավորման, խանգարող հանգամանքների և այդ հանգամանքներում գործողությունների կենսական նշանակության գնահատման: Այդ գործընթացը վերարտադրվում է հետազոտության մեջ՝ պրոյեկտիվ գիտափորձում:

Արտադրական գիտափորձը բնական գիտափորձ է, որն անցկացվում է հետազոտվողի համար սովորական աշխատանքային պայմաններում: Ընդ որում, ինքը՝ աշխատողը, կարող է չիմանալ գիտափորձի անցկացման մասին: Այլ մոտեցման դեպքում նա դառնում է հետազոտության ակտիվ մասնակից, որը կարևոր է, օրինակ, աշխատանքային գործունեության կառուցվածքի փոփոխության դեպքում:

Ճևափորոզ գիտափորձը (հոգեբանամանկավարժական, ուսուցանող, դաստիարակող, ձևավոխող, զարգացնող գիտափորձ) հետազոտողի կողմից հետազոտվողի վրա ակտիվ ազդեցության ընթացքում երեխայի հոգեբանական փոփոխությունների հսկման մեթոդ է, որը կիրառվում է տարիքային և մանկավարժական հոգեբանության մեջ: Հոմանիշներն են՝ փոխակերպող գիտափորձ, կերտող, դաստիարակող, ուսուցանող, գենետիկ մոդելավորող, ակտիվ հոգեկանի ձևավորման մեթոդ: Բնական գիտափորձի ձև է և առանձնահատուկ է նրանով, որ որոշակի հոգեկան գործընթացների ուսումնասիրումը տեղի է ունենում դրանց նպատակաուղղված ձևավորման ժամանակ: Ենթադրում է հոգեկանի ձևավորման ընթացքում զարգացման օրինաչափությունների հայտնաբերումը հետազոտվողի վրա հետազոտողի ակտիվ, նպատակաուղղված ազդեցության ընթացքում: Հիմնված է հոգեկանի՝ որպես երևույթի զարգացման մոտեցման վրա, որն առաջնորդվում է ուսուցմամբ և դաստիարակությամբ, ինչից հետևում է, որ չի կարելի անտեսել հենց ուսուցման գործընթացը, որը որոշում է այդ զարգացումը: Այս դեպքում սույն մեթոդի օգնությամբ հայտնաբերվում են ոչ այդքան առկա գիտելիքների, կարողությունների և հմտությունների վիճակը, որքան դրանց կայացման առանձնահատկությունները: Դրա շրջանակներում հետազոտվողին սկզբում առաջարկվում է ինքնուրույն յուրացնել նոր գործողություն կամ նոր գիտելիք (օրինակ՝ ձևավորել օրինաչափություն), այնուհետև, եթե դա չհաջողվեց, նրան ցուցաբերվում է խիստ

սահմանափակված և անհատականացված օգնություն: Ամբողջ այդ գործընթացն ընթանում է արձանագրող գիտափորձով, որի շնորհիվ հաջողվում է որոշել սկզբնական, առկա մակարդակի տարբերությունը վերջնականից, որը համապատասխանում է մերձավոր զարգացման գոտուն: Չևավորող գիտափորձը կիրառվում է ոչ միայն տեսական հոգեբանության մեջ, այլև գիտակցականի զարգացման ախտորոշման, մասնավորապես պատոհոգեբանության մեջ: Այն թույլ է տալիս չսահմանափակվել հայտնաբերվող փաստերի արձանագրմամբ, այլ հատուկ իրավիճակների ստեղծման միջոցով բացահայտել գիտակցականի զագացման և անձի կայացման օրինաչափությունները, մեխանիզմները, դինամիկան, միտումները՝ որոշելով այդ գործընթացի օպտիմիզացիայի հնարավորությունները: Հենց այդ պատճառով այն լայնորեն կիրառվում է հայրենական հոգեբանության մեջ (1930-ական թթ. վերջերից) երեխայի անձի ձևավորման պայմանների, սկզբունքների, ուղիների ուսումնասիրման դեպքում՝ ապահովելով հոգեբանական հետազոտությունների միավորումը մանկավարժական որոնումներին և նախագծելով ուսումնադաստիարակչական գործընթացի առավելի արդյունավետ ձևեր:

Հոգեբանական գիտափորձի տեսակները

Գաշտային գիտափորձն անցկացվում է բնական գիտափորձի սխեմայով: Ընդ որում, հնարավորություն է տրվում օգտագործելու շարժական սարքավորումներ, որոնք հնարավորություն են տալիս ավելի հստակ գրանցելու ստացված տվյալները: Հետազոտվողները տեղեկացված են, որ մասնակցում են գիտափորձի, սակայն սովորական միջավայրը նվազեցնում է մոտիվացիոն աղճատումների հավանականությունը: Հետազոտության նպատակից կախված՝ առանձնացնում են որոնողական, պիլոտաժային և հաստատող գիտափորձեր [Коновалова М., 2006]¹²:

¹² Экспериментальная психология: конспект лекций. Сост. М. Коновалова // <https://www.e-reading.club/book.php?book=97792>.

Որոնողական հեղափոխությունն ուղղված է պատճառա-
հետևանքային կապերի բացահայտմանը: Այն իրականացվում է
հետազոտության սկզբնական փուլում և հնարավորություն է տա-
լիս հստակ ձևակերպելու վարկածը, դուրս հանելու կախյալ, ան-
կախ և կողմնակի փոփոխականները և դրանց վերահսկման ձևե-
րը:

Պիլոտաժային հեղափոխությունը փորձնական գիտափորձ
է, որն անցկացնում են առաջին փուլում: Այն անցկացվում է ոչ
մեծ ընտրանքի հետ, փոփոխականների ոչ խիստ վերահսկողու-
թյամբ: Պիլոտաժային հետազոտությունը հնարավորություն է
տալիս խուսափելու վարկածի ձևակերպման կոպիտ սխալներից,
հստակեցնելու նպատակը և հետազոտության անցկացման մեթո-
դը:

Հաստատող հետազոտությունը ուղղված է ֆունկցիոնալ կա-
պերի հաստատմանը և փոփոխականների միջև քանակական
կապերի ճշգրտմանը: Անցկացվում է հետազոտության վերջնա-
կան փուլում: Հետազոտվողի վրա ազդեցության ձևից ելնելով՝ ա-
ռանձնացնում են հաստատուն, ձևավորող և ստուգիչ գիտափոր-
ձերը:

Հասարակող գիտափորձը ներառում է օբյեկտի (հետազոտ-
վող կամ խումբ) վիճակի չափումը, մինչ նրա վրա կիրականացվի
ակտիվ ներգործություն, սկզբնական վիճակի դիագնոստիկան և
երևույթների միջև պատճառահետևանքային կապերի դուրսբերու-
մը:

Ստուգիչ գիտափորձը օբյեկտի (հետազոտվողի կամ խմբի)
վիճակի կրկնակի չափումն է և դրա համեմատումը ձևավորող գի-
տափորձից առաջ եղած վիճակի հետ, ինչպես նաև փորձարարա-
կան ներազդման չենթարկված ստուգիչ խմբի արդյունքների հետ:
Կախյալ փոփոխականի վրա հետազոտողի ազդեցության հավա-
նականության տեսանկյունից առանձնացնում են հրահրված գի-
տափորձ և այն գիտափորձը, որի վրա հենվում են:

Հրահրված գիտափորձի ժամանակ հետազոտողը ինքն է փոփոխում անկախ փոփոխականը: Ընդ որում, հետազոտվողի կողմից դիտարկված արդյունքները (հետազոտվողի ռեակցիայի ձևերը) համարվում են հրահրված: Պ. Ֆրեսսը գիտափորձի այս ձևը կոչում է «դասական»: Հոգեբանական գիտափորձի այս ձևից օգտվում են այն դեպքում, երբ անկախ փոփոխականները ազդում են հետազոտվողի վրա էականորեն երկար ժամանակ: Չի կարելի անցկացնել հետազոտություն, որի ընթացքում հետազոտության մասնակիցները կրում են ֆիզիոլոգիական և հոգեբանական բացասական հետևանքներ: Սակայն լինում են դեպքեր (օրինակ՝ գլխադեղի տրավմա), երբ հետազոտվողն ունենում է իրական խնդիրներ հետազոտությունից առաջ: Հետևապես նման դեպքերը կարող են ընդհանրացվել և ուսումնասիրվել:

Հոգեբանական գիտափորձի կառուցվածքը

Յուրաքանչյուր գիտափորձի գլխավոր բաղադրիչներն են .

1. հետազոտվողը (ուսումնասիրման սուբյեկտը կամ խումբը),
2. հետազոտողը,
3. ստիմուլային մյուսը (հետազոտողի կողմից ընտրված ազդեցության ձևը հետազոտվողի վրա),
4. հետազոտվողի պատասխանը ազդակներին (նրա հոգեկան ռեակցիան),
5. փորձի պայմանները (բուն ազդակին լրացնող ազդեցությունները, որոնք կարող են ազդել հետազոտվողի ռեակցիայի վրա):

Հետազոտվողի պատասխանը համարվում է արտաքին ռեակցիա, որով կարելի է դատել նրա ներքին, սուբյեկտիվ գործընթացների մասին: Այդ գործընթացները իրենց հերթին ազդակների ազդեցության արդյունք են և փորձի պայման: Եթե հետազոտվողի պատասխանը (ռեակցիան) նշանակենք R նշանով, իսկ նրա վրա փորձարարական իրավիճակի ազդեցությունը (հետա-


գոտության պայմանների և ստիմուլային ազդակների ամբողջությունը՝ S նշանով, ապա նրանց հարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով՝ $R=f(S)$:

Պ. Ֆրեսսը և Ժ. Պիաժեն, հետազոտության խնդիրներից ելնելով, հետազոտության այս երեք բաղադրիչների միջև դուրս են բերում հետևյալ հարաբերությունները՝

1. ֆունկցիոնալ կապ, 2. բովանդակային կապ 3. դիֆերենցիալ հարաբերություններ:


Ֆունկցիոնալ կապը բնութագրվում է հետազոտվողների (P) պատասխանների (R) վարիտիվությամբ իրավիճակների քանակական և որակական փոփոխությունների դեպքում (S):

Այդ փոխազդեցությունը կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով՝




Հետազոտության ժամանակ ֆունկցիոնալ հարաբերությունների դուրսբերման օրինակ կարող են լինել զգայությունների փոփոխությունը (R)՝ կախված զգայության օրգանների վրա ազդելու հաճախականությունից (S), մտապահման ծավալը (R)՝ կախված կրկնության քանակից (S), ադապտացիոն գործընթացների զարգացումը (R)՝ կախված ժամանակից (S) և այլն:

Բովանդակային հարաբերությունները բացահայտվում են տարբեր իրավիճակներին (S_1, S_2, S_n) պատասխանների համակարգով (R_1, R_2, R_n): Առանձին պատասխանների հարաբերությունը կառուցվածքով կառուցվում է համակարգով, որը արտացոլում է անձի կառուցվածքը (P): Գծապատկերով այն ունի հետևյալ տեսքը՝



Բովանդակային հարաբերակցման օրինակներ կարող է լինել հուզական ռեակցիաների համակարգը (R_1, R_2, R_n)՝ կախված սրբեստրների ազդեցությունից (S_1, S_2, S_3) և այլն:

Դիֆերենցիալ հարաբերակցումները դուրս են հանվում նույն իրավիճակում (S) տարբեր հետազոտվողների (P_1, P_2, P_3) ռեակցիան (R_1, R_2, R_3) վերլուծելիս: Այս հարաբերակցման սխեման հետևյալն է.



Դիֆերենցիալ փոխհարաբերությունների օրինակներ են տարբեր մարդկանց մոտ ռեակցիաների արագության տարբերությունը, հույզերի՝ էքսպրեսիվ արտահայտման ազգային տարբերությունները և այլն:

ԳԼՈՒԽ 4

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՉ ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Հոգեբանության մեջ ոչ փորձարարական մեթոդները, որոնք անվանվում են նկարագրական մեթոդներ, հաճախակի օգտագործվում են որպես նախնական կողմնորոշման, հիմնական հետազոտության սկզբնական փուլում կիրառվող միջոցներ: Նշված մեթոդները նպաստում են մեծ ծավալով նյութի հիման վրա նախնական ցուցանիշների հավաքագրմանը, ինչպես նաև հոգեկան երևույթների և գործընթացների դրսևորման երկարաժամկետ ուսումնասիրությանը: Ոչ փորձարարական մեթոդներին դասվում են անկետավորումը, հարցարանային մեթոդը, գործունեության արդյունքների վերլուծությունը, դիտումը, գրույցը, կենսագրական մեթոդը, կոնտենտ վերլուծությունը, սանդղակավորումը և թեստավորումը: Վերջին երկուսը միաժամանակ համարվում են ախտորոշիչ մեթոդներ [Зимбардо Ф., Герриг Р., 2004, Гоффа Ж., 1996, Пирьев Г., 1968]:

Անկետավորումը (questioning) հոգեբանական տեղեկատվությունների հավաքագրման հնարք է՝ հատուկ կանոններին համապատասխանեցված հարցերի օգնությամբ: Հոգեբանն անկետավորման միջոցով ստանում է դատողությունների, կարծիքների, անձնային հատկությունների վերաբերյալ նյութ: Անկետայի հարցերը լինում են բաց և փակ: Բաց հարցերը ենթադրում են ինքնադատողությունների հիման վրա առաջացած ազատ պատասխաններ: Իսկ փակ հարցերի դեպքում տրվում են պատրաստի պատասխաններ՝ անձի համաձայնությունը կամ անհամաձայնությունը արտահայտելու համար: Անկետան պարտադիր համապատասխանում է հետազոտական չափանիշների և բարոյագիտության պահանջներին: Անկետայի առավելություններն են՝

- գանգվածային ուսումնասիրությունները,

- տեղեկատվության հավաքագրման ծավալը և կարճ ժամկետը,
- արդյունքների դյուրին մշակումը,
- վիճակագրական մեթոդների կիրառման հնարավորությունը:

Նշված մեթոդի թերի կողմերն են.

- պատասխանողների կողմից հաշվի չի առնվում հարցերի ընկալման տարբերությունը,
- շատ դեպքերում բացակայում են պատասխանների օբյեկտիվությունը, անկեղծությունը,
- փակ հարցերի դեպքում սահմանափակվում է հարցվողների մտահորիզոնը, պատասխանները հաճախ չեն համապատասխանում իրականությանը:


Դիտումը (observation) հոգեբանության մեջ կիրառվող հիմնական մեթոդներից մեկն է:

Այն հոգեկան առանձնահատկությունների երկարատև և նպատակաուղղված նկարագրման մեթոդ է և ենթադրում է ստացված արդյունքների պարտադիր համակարգում ու հնարավոր եզրակացությունների ձևակերպում:

Դիտման կիրառվող տարատեսակներն են՝

1. օբյեկտիվ – ինքնադիտում,
2. դաշտային – լաբորատոր,
3. անհատական – խմբային,
4. պատահական – նախատեսված,
5. համակարգված – ոչ համակարգված,
6. լիարժեք – անլիարժեք,
7. ամբողջական – ընտրովի,
8. հաստատող – գնահատող,
9. ստանդարտացված – ոչ ստանդարտացված,
10. բաց – փակ,
11. ներգրավված – կողմնակի,

12. ուղղակի – անուղղակի,
 13. հրահրված – սպոնտան:



A – գնահատման երկու տարբերակ՝ բաժակը կիսով չափ լիքն է (լավատես), բաժակը կիսով չափ դատարկ է (վատատես): B – նախորդող փորձը վկայում է լցվելու մասին: C – նախորդող փորձը վկայում է դատարկվելու մասին:

Նկար 6. Դիտման արդյունքի սխալի օրինակ

Դիտման գիտականությունը պահպանելու համար այն պետք է համապատասխանեցվի հետևյալ պահանջներին.

- նպատակաուղղվածություն,
- պլանավորում,
- ինքնուրույնություն,
- բնական պայմաններին համապատասխանեցում,
- համակարգվածություն,
- օբյեկտիվություն,
- անբազրվածություն:

Դիտման մեթոդն աշխատատար է, գործնականում հնարավոր չէ բացառել պատահական գործոնների ազդեցությունը, ինչպես նաև անհնար է գրանցել բոլոր հատկանիշները և տարանջա-

տել էականն անէականից: Դիտման միջոցով դժվար է բացահայտել թաքնված իրավիճակները: Ոչ բոլոր դեպքերում է, որ դիտման արդյունքները քանակական վերլուծության են ենթարկվում: Դիտման արդյունքների օբյեկտիվությունը պայմանավորված է նախորդող կենսափորձով, որը միաժամանակ կարող է հանդիսանալ «սխալի» պատճառ (նկար 6.):

Գործունեության արդյունքների վերլուծություն (analyzes of activities): Հոգեբանը, հիմնվելով բնական պայմաններում գործունեության տարբեր տարրերի վերլուծության վրա, այս մեթոդի միջոցով հնարավորություն ունի տեղեկություն ստանալու անձի և խմբի առանձնահատկությունների վերաբերյալ: Այս մեթոդն ավելի հաճախ կիրառվում է ռետրոհետազոտություններում, մանկավարժական և արվեստի հոգեբանության բնագավառներում: Կարելի է դիտարկել որպես նամակագրության և շարադրությունների վերլուծություն, գեղարվեստական գրականության և գեղանկարչության ուսումնասիրություն՝ դրանց հեղինակների հոգեբանական դիմանկարը կազմելու նպատակով:

Չրույցի մեթոդը (conversation method) հաղորդակցման գործընթացում նախապատրաստված հարցերի օգնությամբ անձի առանձնահատկությունների, խմբի կամ նրա անդամների վերաբերյալ նախնական տեղեկությունների ստացման միջոց է: Խմբային զրույցի ժամանակ հոգեբանին հետաքրքրում է միևնույն հարցի վերաբերյալ բոլոր անդամների կարծիքը: Սովորաբար անհատական կամ խմբային զրույցի մեթոդը կիրառվում է հետազոտվող խնդրին իրազեկ լինելու, նախնական տեղեկության հավաքագրման, ինչպես նաև սոցիալական գործընթացների վերաբերյալ հատուկ նյութի գրանցման համար: Տարբերում են զրույցի մի քանի տարատեսակներ, որոնք կարող են լինեն խիստ չափազորված կամ շատ ազատ ու անկաշկանդ:

Գոյություն ունի նաև հոգեդիագնոստիկ զրույցի մեթոդ, որն ունի իր առանձնահատկությունները և կիրառման հատուկ կա-

նոնները, այն կարող է լինել ստանդարտ կամ ազատ բնույթի: Առանձին դեպքում գրույցն ընթանում է խիստ կանոնակարգված ծրագրով, հստակ ձևակերպված հարցերի հերթականությամբ, ինչը հնարավորություն է տալիս հստակորեն ամրագրելու և համեմատաբար հեշտ մշակելու պատասխանները:



Ձրույցի հեղազուգահեռան արդյունավետությունը պայմանավորված է վստահության և անկեղծության մթնոլորտով:

Երկրորդ դեպքում հարցի բովանդակությունը նախապես չի պլանավորվում, շփումն ընթանում է ավելի ազատ, ինչն իր հերթին բարդացնում է գրույցի կազմակերպումը, ընթացքը և պատասխանների մշակման գործընթացը: Ձրույցի այս ձևն ավելի խիստ պահանջներ է առաջադրում հոգեբանին:

Ձրույցի անվիճելի առավելություններն են գրուցակցի հետ շփման առկայությունը, նրա պատասխան հակազդումները, վարքային դրսևորումները, նրա վերաբերմունքը գրույցի բովանդակության հանդեպ, գնահատելու, լրացուցիչ հարցեր տալու հնարավորությունները:


Կենսագրական մեթոդ: Կենսագրական մեթոդները հետազոտական մեթոդների, ախտորոշման, շտկման և անձի կյանքի ուղու ծրագրման հավաքական անվանումներն են: Չնայած առանձին մեթոդիկաներում եղած երբեմն էական տարբերություններին՝ հաճախ այդ մեթոդների ամբողջ կամ էլ դրանց առանձին համալիրները միավորվում են մեկ ընդհանուր անվան տակ՝ «կենսագրական մեթոդ»: Դիտարկենք դրանցից մի քանիսը, որոնք լայնորեն կիրառվում են էմպիրիկ հետազոտություններում: Ստանդարտացված կենսագրական հարցարանը «կենսագրական հարցարաններ» անվան տակ միավորված մեթոդների մեծ խմբի ճշգրտողն է: Այս հարցարանների միջոցով սովորաբար բացահայտվում են մարդու կյանքի ուղու օբյեկտիվ տվյալները (տարիք, կրթություն, սեռ, աշխատանքային փորձ, բնակության վայր և այլն): Երբեմն դրանց ավելացնում են նաև սուբյեկտիվ բնույթի հարցեր:

Հարցարաններում արտացոլվում են կենսագրական տվյալների հետևյալ հիմնական խմբերը.

1. կյանքի ուղու տվյալները,
2. սոցիալականացման աստիճանը,
3. զարգացման միջավայրը (բնակության վայր, ուսումնական հաստատություններ, արտադրական կազմակերպություններ),
4. հետաքրքրությունները և սիրելի զբաղմունքները կյանքի տարբեր փուլերում,
5. առողջական վիճակը և կրած հիվանդությունները:

Կենսագրական մեթոդը ներառում է կյանքի փաստերի և ուղու սուբյեկտիվ նկարագրություն:

Հարցարանի լրացմանը նախորդում է հետազոտվողի հրանգավորումը, որում խորհուրդ է տրվում տալու կոնկրետ և անկեղծ պատասխաններ: Այդ հարցարանի տվյալների հիման վրա հնարավոր է կազմել անձնային զարգացման ժամանակագրական աղյուսակ, որում ժամանակագրական հերթականությամբ ցույց են տրված մարդու կյանքի իրադարձությունները և դրանց հետ կապված նրա ապրումները: Արդյունքների մեկնաբանումը (և՛ հարցարանի, և՛ աղյուսակների) ենթադրում է անձի զարգացման սոցիալական իրավիճակների, կյանքի ուղու տարբեր փուլերի հուզական ֆոնի և անձի ուղղվածության, հիմնական կոնֆլիկտների և անձի զարգացման շարժիչ ուժերի վերլուծությունը:



Կաուզոմետրիան (լատ.՝ *causalis* – պատճառային և *metreo* – չափում) անձի հոգեբանական տարիքի և կյանքի սուբյեկտիվ պատկերի ուսումնասիրման մեթոդ է:

Այս մեթոդի կիրառման հիմքը դրվել է ուկրաինացի գիտնականներ՝ Ե. Ի. Գոլովախայի և Ա. Ա. Կրոնիկի կողմից 1982 թ. [Головаха Е., Кроник А., 1984]¹³: Պատկանում է կենսագրական մեթոդների դասին և ուղղված է ոչ միայն անցյալ, այլև ենթադրյալ ապագա կյանքի ուղու ուսումնասիրմանը: Կաուզոմետրիան անցկացվում է հարցազրույցի տեսքով և բաղկացած է վեց հիմնական ընթացակարգերից՝ 1. կենսագրական փուլ, 2. նշանակալի

¹³ Головаха Е. И., Кроник А. А., Психологическое время личности, Киев: «Наукова думка», 1984.

իրադարձությունների ցուցակի կազմում, 3. այդ իրադարձությունների ժամանակագրում, 4. իրադարձությունների պատճառահետևանքային կապի վերլուծություն, 5. լիարժեք վերլուծություն, 6. իրադարձությունների (ըստ ոլորտների) տարաբաժանում:

Որպես լրացում կիրառում են իրադարձությունների հուզական գրավչության գնահատականը, դրանց տեղը անցյալում և ապագայում, կարևորությունը «քեզ» և «այլ մարդկանց համար», անձնային ժամանակային կենտրոնի տեղայնացումը:

Հարցազրույցի արդյունքները ներկայացվում են կաուզոգրամայի՝ իրադարձությունների և դրանց միջև եղած կապի գծապատկերի տեսքով: Դա պատկերացում է տալիս իրադարձության դրդապատճառային կարգավիճակի, դրանց օրացուցային և հոգեբանական ժամանակում տեղայնացման, հետազոտվողի կյանքում ունեցած դերի, իրադարձությունների միջև եղած կապի կառուցվածքի մասին: Այս ամենի հիման վրա հնարավոր է եզրակացություններ անել կյանքի ուղու հնարավոր աղավաղումների, հարցվողի մտադրությունների գիտակցվածության և իրացվածության մասին: Այս տվյալների համաձայն՝ կարելի է դատել կյանքի ոճի յուրահատկությունների, անցյալով, ներկայով և ապագայով բավարարվածության մասին:

Հոգեբանական ինքնակենսագրությունը կենսագրական տվյալների հավաքագրման միջոցն է, որը հնարավորություն է տալիս կենսագրական տեղեկատվություն ստանալու հենց ուսումնասիրվող մարդուց: Այդ մեթոդները հնարավորություն են տալիս ստանալու հոգեբանական անամնեզի, կարևոր իրադարձությունների և անձի կյանքի ուղու փուլերի մասին տվյալներ, ինչպես նաև օգնում են պարզել նրա վերաբերմունքը ապրվածին և անտիցիպացիայի յուրահատկությունները:

Ընդհանուր բնույթի տեղեկություններ (սեռ, տարիք, ընտանեկան դրություն, կրթություն, առողջական վիճակ) կարելի է ստանալ գրույցի, հարցաթերթիկի, կենսագրական հարցարանի միջո-

ցով: Յուրահատուկ տեղեկություններ (անցյալ և ապագա իրադարձությունների գնահատականը, վերաբերմունքը ինքն իր և ուրիշների նկատմամբ, սեփական կյանքի ուղու սուբյեկտիվ գնահատումը և այլն) ստանում են տարբեր միջոցներով:

Համեմատաբար հեշտ և տարածված տարբերակ է սեփական կյանքի բանավոր կամ գրավոր ներկայացումը, միևնույն ժամանակ համապատասխան ժամանակաշրջանում հոգեկան վիճակի նկարագրի արտացոլմամբ:

Պատմելու գործընթացը կարող է հեշտացվել հետազոտվողին նյութը ներկայացնելու սխեմա առաջարկելու միջոցով: Մխեման պարունակում է առանձին հեռակետեր, որոնք վերաբերում են մարդու կյանքի տարբեր տարիքային փուլերին և նրա գործունեությանը տարբեր ոլորտներում: Այդպիսի հետազոտություններում բավականին կիրառական է ինքնադիմանկարի հնարքը: Հետազոտվողին առաջարկվում է գծել ուղիղ հորիզոնական հատված, որի ծայրերի կետերը խորհրդանշում են ծնունդն ու մահը: Այդ հատվածի վրա հետազոտվողը ընտրում է մի կետ, որը համապատասխանում է նրա կյանքի տվյալ պահին: Դրա միջոցով նա հարաբերակցում է իր անցյալը և ապագան, գնահատում է իր ժամանակային հնարավորությունները: Այդ երկու կետերում նշվում են ամենակարևոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել անցյալում և կարող են տեղի ունենալ ապագայում, ցանկալի է, որ այդ ամենն ուղեկցվի նաև հուզական գնահատականներով:

Եվս մեկ հնարք է կառավարվող երևակայությունը, որը կարող է իրականացվել տարբեր եղանակներով, օրինակ՝ ծերության երևակայական կերպարի մեջ մտնելը կյանքի արդյունքների ամփոփմանը զուգահեռ, «ժամանակի արագացումը»՝ մի քանի անգամ ինքդ քեզ հաջորդաբար ավելի ու ավելի մեծացած պատկերացնելը:

Դիագնոստիկ (սխառորոշիչ) մեթոդներ (diagnostic methods): Ախտորոշման մեթոդները հնարավորություն են տալիս ոչ միայն

նկարագրելու անձի կամ խմբի այս կամ այն հոգեկան առանձնահատկությունները, այլև չափելու դրանք: Ընդ որում, փորձարարական հոգեբանության մեջ լայնորեն կիրառվում են հոգեֆիզիոլոգիական ախտորոշման մեթոդները: Հոգեդիագնոստիկան՝ որպես գիտություն, սահմանվում է որպես անձի անհատական, հոգեբանական առանձնահատկությունների ի հայտ բերման և չափման մեթոդներ մշակող հոգեբանության բնագավառ:

Որպես տեսական բնագավառ՝ հոգեդիագնոստիկան գործ ունի մարդու ներաշխարհը բնութագրող հաստատուն և փոփոխական մեծությունների հետ: Հոգեախտորոշումը, մի կողմից, տեսական կառուցվածքների ստուգման միջոց է, իսկ մյուսից՝ տեսական կառուցվածքների կոնկրետ մարմնավորում վերացական տեսությունից, ընդհանրացումից կոնկրետ փաստին շարժման միջոց [Бурлачук Л., 2006]¹⁴:

Ժամանակակից գրականությունում ախտորոշումը, ի տարբերություն մի կողմից գիտական ճանաչման, մյուս կողմից՝ իմացության, հասկացվում է որպես ճանաչողական գործընթացի հատուկ ձև, ճանաչման յուրահատուկ գործունեություն: Գործնականորեն բոլոր հետազոտողների կարծիքները համընկնում են նրանում, որ միավոր օբյեկտի վիճակի ճանաչումն իրականանում է ընդհանուրի մասին գիտելիքների հիման վրա: Այս իմաստով ախտորոշումը եզակի, կոնկրետ երևույթի ճանաչման և ընդհանուր էության գիտական իմացության միջև կանգնած ճանաչման հատուկ միջանկյալ օղակ է: Այսինքն, երբ գիտենալով առարկաների համապատասխան դասի մասին ընդհանուրը՝ մենք մինևույն ժամանակ չգիտենք տվյալ հետազոտության առարկան:

Լայն իմաստով ախտորոշումը նորմային համապատասխանելու տեսանկյունից առանձին օբյեկտի վիճակի ճանաչման գիտագործնական գործունեությունն է: Այն իրականանում է գիտու-

¹⁴ **Бурлачук Л. Ф.,** Психодиагностика: учебник для вузов. /Л. Ф. Бурлачук. СПб.: «Питер», 2006, 351 с.

թյանը հայտնի դասակարգերի նմանությամբ տվյալ օբյեկտի ամփոփման հիման վրա, որի նպատակներն են նորմալ աշխատանքային (ֆունկցիոնալ) վիճակում համակարգի կանխատեսումը, վերադարձը կամ ապահովումը [Арендчук И., 2014]¹⁵:

Սանդղակավորումն (method of scales) չափման մեթոդ է, որի միջոցով իրական որակական հոգեբանական երևույթները ստանում են թվային արտահայտություն՝ քանակական գնահատականների տեսքով: Առանձնացնում են սանդղակների երեք տեսակ՝ գնահատման, սոցիոմետրիկ և դասակարգման:

Գնահատման սանդղակները տարբերվում են կիրառման հեշտությամբ, մշակման մաթեմատիկական մեթոդների և հետազոտության արդյունքների վերլուծության հնարավորությամբ: Այս մեթոդի էությունն այն է, որ իրական որակական հոգեբանական երևույթներն (որակներ), ըստ նախապես պայմանավորված գնահատականների, մոդելավորվում են թվային համակարգերի միջոցով:

Դասակարգման սանդղակները կազմվում են առանձին ցուցանիշների համեմատման միջոցով: Գնահատված ցուցանիշները դասավորվում են ըստ արտահայտվածության (կարևորության) աստիճանի: Օրինակ՝ խմբի անդամների որևէ որակի դասակարգման հիման վրա հնարավոր է հաշվարկել կորելյացիոն համեմատություն՝ երկու երևույթների փոխկախվածության բացահայտում: Դրա համար կազմվում է դասակարգային աղյուսակ՝ ըստ որոշակի ցուցանիշի, որից հետո կարելի է հաշվարկել Սպիրմենի դասակարգային կորելյացիայի գործակիցը:

Դասակարգման սանդղակի տարատեսակ է նաև զույգերի համեմատությունը, որի էությունը մասնակիցների համեմատությունն է՝ ըստ որևիցե հատկանիշի: Չնայած համեմատության գործընթացի տևականությանը և հետազոտվողների մեծ թվի հաշ-

¹⁵ **Арендчук И. В.**, Психодиагностика: теоретические основы науки, Часть 1, НИУ СГУ, Саратов, 2014.

վարկման ծավալուն գործընթացին՝ գույգերի համեմատության մեթոդն ունի մի շարք առավելություններ.

- գնահատականի օբյեկտիվություն,
- մեթոդի պարզություն,
- ժամանակի խնայողություն,
- արդյունքների ոչ այնքան բարդ մաթեմատիկական մշակում:

Սոցիոմեթրիկ սանդղակներն ավելի են կարևորվում սոցիալ-հոգեբանական հետազոտություններում, քանի որ նրանց միջոցով ուսումնասիրվում են փոխհարաբերությունները խմբի ներսում և խմբային շարժընթացը: Հարցման հիման վրա կառուցվում է հատուկ մատրիցա, որում շրջանակով նշվում է խմբի անդամների միջև յուրաքանչյուր փոխադարձ ընտրություն: Այնուհետև կազմվում է սոցիոգրամայի գծապատկերը, որը բաղկացած է չորս շրջանագծերից, որոնք դասավորված են մեծից փոքր հերթականությամբ [Карелина А., 1999]¹⁶:

Հետազոտվող խմբի անդամներից յուրաքանչյուրի համարը տեղաբաշխվում է համապատասխան շրջանագծի վրա: Առաջին կենտրոնական օղակում ընդգրկվում են սոցիոմետրիկ «աստղերը», որոնք ունեն միջինից բարձր ընտրությունների քանակ: Երկրորդում տեղաբաշխվում են «նախընտրելիները», որոնք ունեն ընտրությունների միջին քանակ, երրորդում՝ անտեսվածները, որոնց ընտրությունները միջինից ցածր են: Իսկ չորրորդ օղակում ընդգրկվում են «մեկուսացվածները», որոնք ոչ մի ընտրություն չեն ստացել: Սոցիոմետրիկ գծապատկերում ընտրությունները նշվում են պարզով, որը մատնանշում է, թե ով ում է ընտրել:

Թեստավորումը (testing) միօրինականացված կամ չափագրված մեթոդ է, որը կիրառվում է անձի տարբեր բնութագրումների չափման համար: Այս մեթոդը շատ հաճախ օբյեկտիվ ցուցա-

¹⁶ Психологические тесты (в 2 кн.), под ред. А. А. Карелина, М.: «Владос», 1999, 312 с.

նիշների կամ սուբյեկտիվ դիրքորոշումների մասին տեղեկություններ ստանալու համար ամենացածր աշխատատարություն պահանջող միջոցներից է: Թեստը, լինելով գիտական գործիք, փորձագետ հոգեբանների մանրակրկիտ և մանրամասն աշխատանքի արդյունք է: Տարբերում են թեստերի հետևյալ տեսակները՝

- նվաճումների,
- անձնային հոգեչափման (փսիխոմետրիկ),
- անձնային կառուցվածքային,
- հետաքրքրությունների և դիրքորոշումների,
- կլինիկական թեստեր և այլն:

Գոյություն ունի նաև թեստերի երկու խմբի դասակարգում՝ ազատ պատասխաններով (թեստավորվողը ինքն է ձևակերպում պատասխանը) և պատասխանի ընտրության տարբերակով (թեստավորվողը ընտրում է իրեն առաջարկվող տարբերակներից ճիշտ պատասխանը):

Հոգեչափման (փսիխոմետրիկ) թեստերի խմբում տարբերվում են նաև լայն տարածում գտած պրոյեկտիվ թեստերը: Թեստերի այս խումբը հիմնված է այս կամ այն ենթադրելի իրավիճակում մարդու ընկալման, պատկերացումների և երևակայության դրսևորման վրա:

Պրոյեկտիվ մեթոդիկաները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- ✓ կառուցվածքավորման մեթոդիկաներ (Գ. Ռորշարխի թանաքաբծերի մեթոդիկա),
- ✓ մեկնաբանող մեթոդիկաներ (ԹԱԹ, Ս. Ռոզենցվեյզի ֆրոստրացիայի թեստ),
- ✓ լրացման մեթոդիկաներ (Կ. Յունգի ասոցիատիվ թեստ, անավարտ նախադասություններ, անավարտ պատմվածքներ),
- ✓ կառուցվածքավորման մեթոդիկաներ,

- ✓ հուզական լիցքաթափման (հոգեդրամա, պրոյեկտիվ խաղեր),
- ✓ էքսպրեսիայի ուսումնասիրման (ձեռագրի վերլուծություն, խոսքային շփման առանձնահատկությունների վերլուծություն և այլն),
- ✓ ստեղծագործական արդյունքների ուսումնասիրություն (մարդու նկար, ընտանիքի նկար, տուն-մարդ-ծառ, զոյություն չունեցող կենդանի) [Бусыгина Н., 2018]¹⁷:

Պրոյեկտիվ թեստերն ունեն մի շարք առավելություններ, որանք են՝ բնական իրավիճակը, անձի քանակական վերլուծության չենթարկվող առանձնահատկությունների ուսումնասիրությունը, թաքնված ցանկությունների և մղումների բացահայտումը: Այդ պատճառով պրոյեկտիվ թեստերը կարող են կիրառվել միայն հատուկ որակավորում ունեցող բարձրակարգ հոգեբանների կողմից:

Թեստերին՝ որպես ճշգրիտ հոգեդիագնոստիկ մեթոդների, ներկայացվում են մի շարք յուրահատուկ պահանջներ: Դրանք են.

- **թեստի սոցիալ-մշակութային տեղայնացումը**՝ թեստային առաջադրանքների և գնահատականների համապատասխանությունը հասարակությունում ձևավորված մշակույթին, որտեղ տվյալ թեստը կիրառվում է՝ փոխառված լինելով այլ երկրից,
- **թեստային առաջադրանքների միարժեքությունը և ձևակերպումների պարզությունը**, ըստ որի՝ թեստային հրահանգներում չպետք է լինեն այնպիսի ձևակերպումներ, որոնք կարող են տարբեր կերպով ընդունվել և ընկալվել մարդկանց կողմից,

¹⁷ Бусыгина Н. П., Качественные и количественные методы исследований в психологии https://studme.org/222757/psihologiya/klassifikatsiya_opisanie_osnovnyh_proektivnyh_metodik.

- **թեստային առաջադրանքների կատարման սահմանափակ ժամանակը**, ըստ որի՝ հոգեդիագնոստիկ թեստի առաջադրանքների կատարման ամբողջ ժամանակը չպետք է գերազանցի 1,5-2 ժամը, քանի որ այդ ժամանակից ավել մարդուն դժվար է պահպանել իր աշխատունակությունը բավականաչափ բարձր մակարդակի վրա,
- **տվյալ թեստի համար թեստային չափանիշների (նորմերի) առկայությունը**՝ տվյալ թեստի ներկայացուցչական միջին ցուցանիշները, այսինքն՝ մեծ թվով մարդկանց ամբողջությամբ ներկայացնող ցուցանիշները, որոնց հետ կարելի է համեմատել տվյալ անհատի ցուցանիշները՝ գնահատելով նրա հոգեբանական զարգացվածության մակարդակը: Թեստի չափագրված նիշերը/նորմերը, ըստ որոնց՝ տվյալ հետազոտվողին մի շարք սոցիալ-ժողովրդական բնութագրումներով նման մարդկանց մեծ ամբողջության զարգացվածության միջին մակարդակն է:

Հոգեդիագնոստիկ հետազոտությունների արդյունքների հավաստիության վրա վստահ լինելու համար անհրաժեշտ է, որ կիրառվող հոգեախտորոշիչ մեթոդները լինեն գիտականորեն հիմնավորված, այսինքն՝ համապատասխանեն մի շարք պահանջների:

Այդպիսի պահանջներ են վալիդությունը, հուսալիությունը, միարժեքությունը, ճշգրտությունը և սոցիալ-մշակութային տեղայնացումը:

1. «**Վալիդությունը**» չափակագրական լայն հասկացություն է և նշանակում է «լիարժեքություն», «պիտանելիություն» կամ «համապատասխանություն»: Տարբերակում են վալիդության մի քանի տարատեսակներ:

Տեսական վալիդությունը ստուգում են միևնույն տեսությունից բխող կամ միևնույն տեսությանը հենվող տարբեր մեթոդիկաների

օգնությամբ ստացվող միևնույն հատկության ցուցանիշների կո-
րելյացիայով:

Էմպիրիկ վալիդությունը ստուգվում է հետազոտվողի նկատե-
լի գործողություններին և հակազդումներին, իրական վարքին ախ-
տորոշիչ ցուցանիշների համապատասխանությամբ: Էմպիրիկ
վալիդության չափանիշով մեթոդիկան ստուգում են մարդկանց
կյանքի իրական վարքի հետ նրա ցուցանիշների համեմատու-
թյան ճանապարհով:

Ներքին վալիդություն նշանակում է մեթոդիկայի մտահղաց-
ման և ընդհանուր նպատակի համապատասխանություն մեթոդի-
կայում պարունակվող առաջադրանքներին, ենթաթեստերին, դա-
տողություններին: Մեթոդիկան ներքնապես ոչ վալիդ է, երբ առա-
ջադրանքների կամ ենթաթեստերի, հարցերի մի կամ ամբողջ մա-
սը չափում է ոչ այն, ինչը պահանջվում է տվյալ մեթոդիկայից:

Արտաքին վալիդությունը գրեթե նույնն է, ինչ էմպիրիկ վալի-
դությունը, սակայն այստեղ խոսքը հետազոտվողի վարքին վերա-
բերող առավել կարևոր արտաքին հատկանիշների և մեթոդիկայի
ցուցանիշների միջև կապի մասին է:

2. **Հուսալիությունը** բնութագրում է տվյալ մեթոդիկայի օգնու-
թյամբ կայուն ցուցանիշների ստացման հնարավորությունը:

Հոգեդիագնոստիկ մեթոդիկայի հուսալիությունը կարելի է ո-
րոշել երկու ձևով՝ այս մեթոդիկայով ստացվող տարբեր մարդ-
կանց, տարբեր պայմաններում միևնույն մեթոդիկայով ստացվող
արդյունքների համեմատության ճանապարհով:

3. **Մեթոդիկայի միարժեքությունը** բնութագրվում է նրանով,
թե նրա օգնությամբ ստացվող տվյալներն ինչքանով են արտացո-
լում հենց այն հատկության փոփոխությունները, որի գնահատ-
ման համար կիրառվում է տվյալ մեթոդիկան:

4. **Ճշգրտությունն** արտացոլում է մեթոդիկայի ունակությունը՝
նրբանկատորեն արձագանքելու հոգեդիագնոստիկ գիտափորձի
ընթացքում տեղի ունեցող գնահատվող հատկության չնչին փոփո-

խություններին: Որքան ճշգրիտ է հոգեդիագնոստիկ մեթոդիկան, այնքան նրբանկատ կարելի է նրա օգնությամբ գնահատել չափվող որակի աստիճանավորումը և ի հայտ բերել երանգները, չնայած պրակտիկ հոգեախտորոշման մեջ ոչ միշտ է պահանջվում գնահատականների ճշտության շատ բարձր աստիճան:

5. **Սոցիալ-մշակութային** տեղայնացումը նշանակում է, որ թեստերը սոցիալ-մշակութային առումով պետք է ադապտացված, տեղայնացված լինեն: Դա ենթադրում է թեստային առաջադրանքների և գնահատականների համապատասխանությունն այն մշակութային առանձնահատկություններին, որոնք ընդունված են այն հասարակության մեջ, որտեղ այդ՝ այլ երկրում մշակված թեստը կիրառվում է: Ստացված արդյունքների որևէ արժեք ունենալու համար կիրառվող մեթոդիկաներում պետք է հաշվի առնել մշակութային, էթնիկական, ռասայական պատկանելիությունը և դրանց ազդեցությունն անձի վրա: Շատ հետազոտողներ, խոսելով հոգեդիագնոստիկ գործունեության մեթոդների մասին, եկել են այն եզրակացության, որ հոգեախտորոշման գործունեության մեջ ճիշտ է այդ մեթոդների կիրառման համալիր մոտեցումը, որը հնարավորություն է տալիս ոչ միայն վերստուգելու առաջ եկած հոգեբանական փոփոխությունները, այլև խուսափելու ոչ ճիշտ հոգեբանական ախտորոշումից:

Հետազոտող ախտորոշողի որակավորման հիմնական նշանակությունն ի հայտ է գալիս արդյունքների նկարագրման, մեկնաբանման ու եզրակացությունների կազմման փուլում: Համապատասխանաբար այս փուլում կարևոր է ինչպես հոգեբանական իրավասությունը, այնպես էլ արդյունքների տեսական վերլուծության խորությունը, ինչը, ըստ սահմանման, կտարբերվի տարբեր մասնագետների մոտ: Հոգեախտորոշման բնագավառում աշխատանքի մեր բազմամյա փորձը ասպացուցել է արհեստավարժ ներընթացողության, ցուցանիշների տրամաբանական մեկնաբանման անհրաժեշտության, հոգեբանության տարբեր ճյուղերում (և

ոչ միայն) հիմնարար գիտելիքների և լայն աշխարհայացքի նշանակությունը:

Կոնտենտ վերլուծության (Content analysis) կամ փաստագրական նյութի ուսումնասիրության (**archival analysis**) մեթոդն ուղղված է փաստաթղթերի բովանդակության որակական և քանակական վերլուծությանը, որն իրականացվում է այդ փաստաթղթերում արտահայտված տարբեր գործոնների ու միտումների բացահայտման և չափման նպատակով: Այն լայն տարածում է գտել ինչպես սոցիոլոգիական, այնպես էլ հոգեբանական հետազոտություններում: Այս մեթոդի առանձնահատկությունն այն է, որ վերջինս ուսումնասիրում է փաստաթղթերը սոցիալ-հոգեբանական համատեքստում և հոգելեզվաբանական ուսումնասիրություններում: Կոնտենտ (բովանդակային) վերլուծության մեթոդը տարածում է գտել արխիվային հետազոտական ծրագրերում: Այն բանից հետո, երբ դասակարգերը ձևավորված են, անհրաժեշտ է ընտրել վերլուծության համապատասխան միավոր՝ խոսքի լեզվաբանական միավոր կամ բովանդակության տարր (չափվող միավոր՝ ժամանակ, տարածություն, ծավալ և այլն), որը տեքստում կամ հետազոտական այլ օբյեկտում հանդես կգա որպես ուսումնասիրողին հետաքրքրող երևույթի արտահայտչամիջոց (ինդիկատոր):

Հաճախ կոնտենտ վերլուծական հետազոտությունների պրակտիկայում առավել կիրառվող վերլուծության միավորներ են բառը, պարզ նախադասությունը, դատողությունները, թեման, հեղինակը, հերոսը, սոցիալական իրավիճակը, հաղորդագրությունը և այլն: Կոնտենտ վերլուծության բարդ տեսակների ժամանակ սովորաբար օգտագործվում են ոչ թե մեկ, այլ վերլուծության մի քանի միավորներ: Վերլուծության միավորները, առանձին վերցված, միշտ չէ, որ կարող են ճիշտ մեկնաբանվել, այդ իսկ պատճառով դրանք դիտվում են լեզվաբանական կամ բովանդակային կառուցվածքի ավելի լայն ենթատեքստի կամ պատկերի վրա, տեքստի

մասնատման բնորոշման հիման վրա, որի սահմաններում նույնացվում է վերլուծության իմաստային միավորների առկայությունը կամ բացակայությունը: Կարևորվել է կոնտենտ վերլուծության ենթարկվող, անհրաժեշտ աղբյուրների ընտրությունը: Ընտրության կատարման խնդիրը ներառում է աղբյուրի, հաղորդագրությունների քանակի և նրանց ամսաթվի, ինչպես նաև ուսումնասիրվող բովանդակության ընտրությունը: Ընտրության այս բոլոր չափանիշները որոշվում են ուսումնասիրության ծավալին և խնդիրներին համաձայն: Կոնտենտ վերլուծության մեջ գոյություն ունեն նաև հաշվարկման առանձնահատուկ ընթացակարգեր, օրինակ՝ Յանիսի գործակիցը որոշող բանաձևը, որը նախատեսված է դրական և բացասական գնահատականների, դատողությունների և փաստարկների հարաբերակցության հաշվարկման համար:

4.1. Պրոյեկտիվ մեթոդների կիրառման տեսական նախադրյալները փորձարարական հետազոտություններում

Մինչ օրս որոշ հարցեր են առաջանում պրոյեկտիվ հոգեբանության տեսական և մեթոդաբանական հիմքերի և դրանց հայեցակարգային սկզբունքների վերաբերյալ [Ավանեսյան Հ., 2017]¹⁸:

Վիճահարույց են մնում այն խնդիրները, որոնք կապված են պրոյեկտիվ հոգեախտորոշիչ մեթոդների զարգացման միտումների, փորձարարական հոգեբանության պահանջներին համապատասխանելու, ավանդական ստանդարտացված հոգեախտորոշիչ մեթոդների հետ համատեղ օգտագործման հնարավորության, ինչպես նաև պրոյեկտիվ մեթոդների հետազոտական և ախտորոշիչ հնարավորությունների հետ: Հոգեբանական գիտության զարգացումը ուղեկցվել է զարմանալի գաղափարներով և բացահայ-

¹⁸ Ավանեսյան Հ. Մ., Պրոյեկտիվ մեթոդների կիրառման տեսական նախադրյալները փորձարարական հետազոտություններում, Եր., ԵՊՀ հրատ., 2017:

տումներով, որոնք կարելի է բնորոշել որպես հեղաշրջում և հաղթանակ: Եվ եթե հեղաշրջումը ասոցացվում է Ջ. Ֆրոյդի, ապա հաղթանակը՝ Գ. Ռորշախի (Роршах Г., 1921) հետ, որը մշակել է «Թանաքաբժերի» մեկնաբանության պրոյեկտիվ թեստը¹⁹:

Պրոյեկտիվ հոգեբանության հիմքերի վերաբերյալ առավել մանրամասն վերլուծություն ներկայացված է Լ. Էբտայի, Լ. Բելլակի և Բ. Մուրստեյնի (Abt L., Bellak L., Murstein B., 1965)²⁰ աշխատություններում, որոնց թարգմանված տարբերակները հրատարակվել են ռուսերեն: Ցավոք, պրոյեկտիվ հոգեբանության և դրա մեթոդների վերաբերյալ հիմնարար և մանրամասն վերլուծված հայերեն ուսումնասիրությունները, աշխատությունները սակավաթիվ են: Դա դժվարեցնում է մասն մեթոդների կիրառումը հայ հոգեբանների ինչպես հետազոտական, այնպես էլ գործնական աշխատանքներում: Դժվարությունները առաջին հերթին պայմանավորված են պրոյեկտիվ մեթոդների ոչ բավարար տեսական հիմնավորմամբ, ինչպես նաև պրոյեկտիվ թեստավորման մեկնաբանության տեխնիկաների թերություններով: Պրոյեկտիվ մեթոդիկաների կիրառումը պահանջում է բարձր պրոֆեսիոնալիզմ՝ գիտակցական և անգիտակցական գործընթացների բացահայտման հմտություններ:

Հոգեախտորոշմամբ զբաղվող հոգեբանը պետք է տիրապետի այնպիսի ներընթացման/ինտուիցիայի, որով կկարողանա գնահատել հոգեկան վիճակների «քողարկված» ազդակները, ինչպես նաև վախերը, ցանկությունները, մղումները, ներքին կոնֆլիկտները, սիմվոլային համակարգը և անձի ճանաչողական

¹⁹ **Герман Роршах** (1884-1922) – швейцарский психиатр и психолог, автор теста исследования личности «Пятна Роршаха» (Psychodiagnostik. In W. Morgenthaler (ed.). Arbeiten zur angewandten Psychiatrie, Vol. 2, Birscher. 1921). Ввёл в оборот термин «психодиагностика». Классикой стали книга Г. Роршаха. "Психодиагностика" и его доклад "Об интерпретации эксперимента по истолкованию форм", <http://psychojournal.ru/psychologists/381-germanrorshah.html#t20c>.

²⁰ **Abt L., Bellak L.**, Projective Psychology, N. Y., 1950, Handbook of Projective Techniques, Ed. B. Murstein. Published by Basic Books, 1965.

ոճերի առանձնահատկությունները: Բացի այդ՝ թեստավորման արդյունքների մեկնաբանման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել թեստավորվողների ազգային մտածելակերպը, ինքնագիտակցումը, էթնիկ կարծրատիպերը, լեզվական միավորի բնույթը և այլն: Այս ամենը հնարավոր է՝ մատնանշում է պրոյեկտիվ մեթոդների տեղանացման հարցը, թեև ոչ այնքան խիստ ձևով, որքան հոգեբանական ախտորոշման ավելի ավանդական մեթոդների օգտագործման ժամանակ (հարցաթերթեր, թեստեր և այլն): Շատ դեպքերում պրոյեկտիվ թեստավորման առավելություն կարելի է համարել այն, որ վերջինս թույլ է տալիս շրջանցել եզրույթներ թարգմանելու խնդիրը: Պրոյեկտիվ դիագնոստիկ տեխնիկաների կայացման մեթոդաբանական խնդիրների շարքում են հոգեդիագնոստիկ հեռանկարի առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են շոշափվող հարցերի լայն շրջանակով կապված հարցերի տեսակներով, նորմավորմամբ և լեզվով: Ընդհանուր առմամբ, ամեն ինչ հանգում է հետազոտության որակական մեթոդաբանությանը, որը թույլ է տալիս բացահայտել ինչպես ճանաչողական գործունեության, այնպես էլ վարքագծի սուբյեկտիվ պատճառները [Molish H., 1972]²¹: Պրոյեկտիվ հոգեբանության մեթոդաբանական ասպեկտների այլ մեկնաբանություններում այն հակադրվում է բիհևիորալ հայեցակարգերին և դիտարկվում է որպես տեսական հոգեբանության հիմնական մեթոդներին հակառակ մեթոդ:

Հարկ է նշել, որ պրոյեկցիան ունի նաև ազդող գործառույթ՝ գիտակցության, այսպես կոչված, սիմվոլիկ վերափոխում, իմաստային և զգացմունքային ազդեցություն, որի տեխնիկաները հատուկ նշանակություն ունեն կիրառական հոգեբանության մեջ և լայնորեն կիրառվում են քաղաքական բանավեճերի, գովազդի,

²¹ Տե՛ս **Molish H. B.** Projective Methodologies//Annual Review of Psychology, 1972, Vol. 23, pp. 577-614:

PR-ի, աշխատակազմի ընտրության և իմիջի հոգեբանության մեջ, սակայն դա առանձին ուսումնասիրության առարկա է:

Մենք այստեղ դիտարկում ենք մի քանի հարց . ո՞ր սկզբունքների վրա է հիմնված պրոյեկտիվ մեթոդների դասակարգումը, որո՞նք են դրանց առավելությունները և թերությունները, ինչպես նաև նրանց մեկնաբանման ժամանակակից սկզբունքները և համադրումը այլ մեթոդների հետ:

Հիմնական ենթադրությունը վերաբերում է այն հանգամանքին, որ փորձարարական հետազոտությունների ժամանակ նպատակահարմար չէ կիրառել պրոյեկտիվ մեթոդները ստանդարտացված հոգեբանական մեթոդներից անկախ, իսկ դրանց առկայության պահանջարկը պայմանավորված է հոգեախտորոշիչ արժեքներով, այսինքն՝ անձի ավելի ամբողջական նկարագրության և անգիտակցականի պատերճների հայտնաբերման հնարավորություններով:

Լ. Կ. Ֆրանկը, ընդգծելով պրոյեկտիվ մեթոդների առավելությունները, նշում է, որ անձի ուսումնասիրության շատ ընթացակարգեր հենվում են անհատի ինքնաախտորոշման և սեփական ներքին աշխարհի բացահայտման վրա, որի վրա էլ կարող է ազդել սոցիալական իրավիճակը՝ ստիպելով նրան թաքցնել կամ վերահսկել այն: Երբ անհատին հարցնում են, թե ինչ է մտածում կամ զգում, կամ խնդրում են նշել իր որևէ խմբի պատկանելիությունը, հնարավոր է նա տա սոցիալապես ցանկալի պատասխան՝ խուսափելու համար ավելորդ ճնշումներից: Հեղինակը նաև չի բացառում դիտման կարևորությունը կամ փորձարարական իրավիճակների ստեղծման կարևորությունը, որոնք թույլ են տալիս հնարավոր մեկնաբանությունների բազմազանություն:

Գիագնոստիկ վալիդությունը մեծապես որոշվում է նույն հոգեկան հատկությունների գնահատման համար տարբեր մեթոդիկաների համադրության կիրառմամբ, որի արդյունքում հետազոտության օբյեկտը դիտարկվում է տարբեր հարթություններում և

բոլոր կողմերից: Մենք հավատարիմ ենք այն մոտեցմանը, ըստ որի՝ ախտորոշման պրոյեկտիվ մեթոդները նպատակահարմար է օգտագործել այլ մեթոդների հետ միասին, ինչը թույլ է տալիս ստանալ անձի ամբողջական պատկեր և համեմատել տարբեր տեսակի տվյալներ: Կարելի է դիտարկել Գ. Օլպորտի կողմից առաջադրված հոգեդիագնոստիկ միտումը, որի համաձայն՝ «նորմալ, ադեկվատորեն հարմարված սուբյեկտը, որն ունի հստակ ուղղվածություն, պրոյեկտիվ մեթոդներին կարող է արձագանքել երկու ձևով՝ կամ՝ տալ նյութ, որը նույնական է գիտակցված հաշվետվությանը, կամ՝ էլ ընդհանրապես չարտահայտել իր գերակայող դրոպապատճառները: Պրոյեկտիվ թեստավորումը հատուկ նշանակություն է ունենում այն ժամանակ, երբ պրոյեկտիվ հակադրումներում դրսևորվում է հուզականորեն հարուստ նյութ, որը հակադրվում է գիտակցված հաշվետվություններին» [Allport, 1950]: Տվյալ դեպքում պետք է եզրակացնել, որ պրոյեկտիվ մեթոդները չպետք է դիտարկել միայն հոգեդինամիկ մոտեցման տեսանկյունից և հետազոտություններում սահմանափակվել միայն դրանցով: Սրանով կարելի է խուսափել գիտահետազոտական աշխատանքներում միակողմանի փաստերի և արտեֆակտերի առաջացումից: Նշվում է նաև, որ որոշ հետազոտված և մանրակրկիտ մշակված պրոյեկտիվ մեթոդներ հատկապես հուսալի են և նշանակալի մակարդակի հավաստի:

Պրոյեկտիվ մեթոդների բազմամյա կիրառման մետավերլուծության հիման վրա եզրակացվել է, որ կա սխալ, անհիմն կարծիք այն մասին, որ լայն իմաստով բոլոր պրոյեկտիվ տեխնիկաները հուսալի չեն և անարդյունավետ են կլինիկական ու հետազոտական փորձաքննությունների համար [Lilienfeld S. O., Wood J. M., Garb H. N., 2000]²²: Անձի ստանդարտացված թեստերի համեմատ պրոյեկտիվ թեստերը դժվար է վերլուծել քանակական ցուցանիշ-

²² Տե՛ս Lilienfeld S. O., Wood J. M., Garb H. N., The Scientific Status of Projective Techniques// Psychological science in the public interest. Vol. 1, N 2, 2000, p. 53:

ներով և կատարել հաշվարկներ, այդ իսկ պատճառով հաճախ դրանց հուսալիության և վալիդության հետ կապված հարցեր են առաջանում: Սակայն մյուս կողմից, պրոյեկտիվ մեթոդները թույլ են տալիս խուսափել այն բարդություններից, որոնք առաջանում են թեստային տեխնիկաները օգտագործելիս, քանի որ նրանց մեծ մասը չունեն կրթական, մշակութային, սեռական և կարգավիճակային այլ սահմանափակումներ:

Պրոյեկտիվ մեթոդների նորմատիվային սանդղակների բացակայությունը կոմպենսացվում է հետազոտվողի լրացուցիչ ինքնահաշվետվության միջոցով: Այդպիսի չափանիշներով են համալրված Վարտեգի, Ռոզենցվեյգի և Տորենսի մեթոդները, որոնք ունեն մի շարք առավելություններ (օպերատիվություն, լայն տարիքային շրջանակ, սոցիալապես ցանկալի պատասխանների բացահայտում): Այս խմբի մեթոդիկաների օգնությամբ թեստային արդյունքները ենթարկվում են վիճակագրական վերլուծության, քանի որ ավելի համակարգված են և ունեն որոշակի օբյեկտիվություն վերը նշված չափանիշների հաշվին: Հետևաբար կասկած է առաջանում այն եզրահանգման մասին, որ ներկայումս պրոյեկտիվ մեթոդները մնում են ոչ մինչև վերջ հիմնավորված: Հարցն այն է, թե որքանով են այդ մեթոդները թույլ տալիս ներթափանցել անձի ներաշխարհ: Ներկայումս պրոյեկտիվ մեթոդների հուսալիության և վալիդության խնդիրը հստակ լուծում չունի [Евсеева О., 2011]²³: Այսպիսով, հոգեբանական թեստավորման դասական աշխատություններում արդարացիորեն նշվում է, որ մեթոդիկան կարող է գործնականում էմպիրիկ կամ արժեքավոր լինել այլ պատճառներով, քան այն պատճառներն են, որոնք ի սկզբանե մեջբերվել են դրանց ներդրումը հիմնավորելու համար [Анастаси

²³ Ст'я **Евсеева О. Е.**, Проблема применения проективных методик в современной психодиагностике // «Актуальные проблемы психологии личности». Новосибирск, 2011, <https://sibac.info/conf/psych/vi/36226>:

А., Урбина С., 2007]²⁴: Ինչպես «օբյեկտիվ» մեթոդիկաների դեպքում, այնպես էլ պրոյեկտիվ հոգեդիագնոստիկայում կարող են առաջանալ այնպիսի բարդություններ, ինչպիսիք են «կույր» սխալները, սթրեսածին լինելը, «Պլացեբոյի էֆեկտը» և այլն:

Լ. Ֆ. Բուրլաչուկը նշում է, որ դասական և ատրիբուտային պրոյեկցիան, տարբեր հեղինակների կարծիքով, կարելի է տարբերակել ըստ պրոյեկցիայի համար ընտրված «թիրախների»: Ենթադրվում է, որ «դասական պրոյեկցիան ուղղված է այն անձանց, որոնց հանդեպ մարդը բացասաբար է տրամադրված, իսկ երբ անհատն իր մեջ բացասական գծեր է հայտնաբերում, դրանք վերագրում է անձանց, որոնց նկատմամբ ունի դրական վերաբերմունք»: Այս դեպքում պրոյեկցիան ընկալվում է որպես վերագրում: Հետևաբար պատահական չէ, որ որոշ հոգեբաններ հիմնվում են դրա՝ որպես միակ ողջամիտ տարբերակի վրա [Бурлачук Л.]²⁵:

Հարկ է նշել պրոյեկտիվ թեստերի զարգացման մեկ այլ միտում. շատ մեթոդներ ի սկզբանե նախատեսված են եղել երեխաների և դեռահասների համար, այնուհետև մոդիֆիկացվել են մեծահասակների համար:

Նշված առավելությունների կողքին պրոյեկտիվ մեթոդների համեմատական վերլուծությունը բացահայտեց նաև թերություններ՝ հուսալիության և վալիդության վերաբերյալ: Պրոյեկտիվ մեթոդները չեն կարող կարող համարվել հոգեբանական դիագնոստիկայի միակ և սպառիչ գործիք, քանի որ դրանք պահանջում են այլ մեթոդների կիրառում ևս համակարգային արդյունքի համատեքստում: Հոգեբանական ախտորոշման օբյեկտիվության չափանիշները կրարձրանան, եթե զուգակցվեն այլ թեստերի (այդ

²⁴ Տե՛ս Анастаси А., Урбина С., Психологическое тестирование, СПб., 2007, с. 451:

²⁵ Տե՛ս Бурлачук Л. Ф., Психодиагностика: Учебник для вузов. СПб., 2006, с. 288:

թվում՝ նաև պրոյեկտիվ), կենսագրական մեթոդի և հետազոտողի անձնական դիտարկումների հետ:

Գոյություն ունեն մի շարք պրոյեկտիվ թեստեր, որոնցից առանձնանում են նրանք, որոնք ավելի արդյունավետ են, ունեն լավ մեթոդաբանական հիմքեր, հստակ մեկնաբանման պարամետրեր և վալիդ են: Այս առումով կարելի է անդրադառնալ Ս. Տարբերի [Tuber S., 2013] աշխատություններին, որոնցում անձի զարգացումը դիտարկվում է հոգեդինամիկ տեսանկյունից, և հավաստիության բացահայտման նպատակով Ս. Տարբերը կիրառել է որոշ պրոյեկտիվ թեստեր՝ Ռորշախի «Թանաքաթերը», «Անավարտ նախադասությունների», «Նախընտրելի կենդանի», «Թեմատիկ ապերցեպտիվ» թեստերը: Հեղինակի կարծիքով այս 4 թեստերը ամենալավ փաթեթն են կազմում և ֆենոմենոլոգիապես նպատակահարմար են անհատի առողջ և ոչ աղեկվատ ասպեկտների մեկնաբանման համար²⁶:

Լայնածավալ հետազոտություններից մեկում հարցեր են դրվել հոգեբանական թեստավորման այն մեթոդների վերաբերյալ, որոնք առավել հաճախ են կիրառվում կլինիկական հոգեբանների կողմից երեխաների, դեռահասների և մեծահասակների հետ աշխատելիս: Հարցերն այն մասին են, թե ինչպես են մասնագետները գնահատում թեստերի արդյունավետությունը մասնավոր պրակտիկայում, ամբուլատոր և ստացիոնար պայմաններում, ինչպես նաև ԱՄՆ դպրոցներում: Հարցման մասնակիցների ավելի քան 40 %-ը հայտնել է հոգեբանական թեստավորման էական սահմանափակումների առկայության, այդ թվում՝ նաև պրոյեկտիվ թեստերի մասին:

Հետազոտությունները ցույց են տվել, որ պրոյեկտիվ թեստերից ամենաարդյունավետն են «Տուն-ծառ-մարդ», «Ընտանիքի

²⁶ Sten Understanding personality through projective testing, by Steven Tuber. Reviewed by Anthony D. Bram// Psychoanalytic Psychology, 2013, Vol. 30, No. 3, pp. 497-502:

կինետիկ նկար» և «Վարտեզի թեստը», «Գոյություն չունեցող կենդանի» նկարային պրոյեկտիվ թեստերը:

Անհրաժեշտ է նշել նաև, որ «Անավարտ նախադասություններ» պրոյեկտիվ թեստը անձի գնահատման ամենատարածված գործիքներից մեկն է: Չնայած դրա հայտնիությանը՝ դեռևս վիճելի են մնում այն հարցերը, որոնք կապված են այն բանի հետ, թե որքանով են պրակտիկ հոգեբանները հաշվի առնում այս կամ այն տեսությունները կամ հայեցակարգերը, ինչպիսի սանդղակներ են կիրառում մեկնաբանելիս և թե ինչպես են դրանք համադրում այլ մեթոդիկաների հետ: Նման տեղեկատվությունը կարևոր է ակադեմիական դասընթացների համար, որտեղ սպազա հոգեբաններին սովորեցնում են պատշաճորեն ընտրել պրոյեկտիվ թեստեր և վերլուծել ստացված տեղեկատվությունը:

Անավարտ նախադասությունների համապատասխան թեստի ընտրության չափանիշներին ծանոթանալու համար մի խումբ հոգեբաններ իրականացրել են բազմաթիվ հետազոտությունների ուսումնասիրություն, որոնք դուրս են բերել հետևյալ բնութագրերը՝ թեստի անվանում, հեղինակ, տեսական հիմք, նպատակ, քանակակազմ, որի համար այն մշակվել է, տարրերի քանակ, ենթասանդղակների քանակ, հուսալիություն, վալիդություն և այլն [Cashel M., 2002]²⁷: Վերլուծությունները ցույց են տվել, որ անավարտ նախադասությունների ամենահայտնի թեստը Ռոտերի թեստն է, որը մշակվել է 1992 թ. իր և համահեղինակների կողմից բոլոր տարիքային խմբերի համար: Հետագուոված 15 թեստերից 5-ի հեղինակային իրավունքները պաշտպանված են և հասանելի միայն թեստի ներկայացուցիչների միջոցով (Directory of Test Publishers and Test Distributors):

²⁷ Տե՛ս **Cashel M. L.**, Child and adolescent psychological assessment: current clinical practices and the impact of managed care/ Professional Psychology: Research and Practice. APA, 2002, Vol. 33, No. 5, pp. 446-453:

4.2. Փորձարարական ծրագրեր

Փորձարարական ծրագիրը (պլան) փորձարարական հետազոտության մարտավարական (տակտիկական) կառուցվածքն է, որը նախատեսում է գիտափորձում ներառված գործողությունների հստակ համակարգ:

Փորձարարական ծրագրերի դասակարգման հիմնական չափանիշներն են՝

- մասնակիցների քանակը (անհատ, խումբ),
- անկախ փոփոխականների քանակը և դրանց մակարդակները,
- անկախ փոփոխականների ներկայացման սանդղակի տեսակը,
- փորձարարական տվյալների հավաքագրման վայրը,
- գիտափորձի անցկացման վայրը և պայմանները,
- փորձարարական ներազդման կազմակերպման առանձնահատկություններն ու վերահսկման ձևերը:

Ստորև բերված աղյուսակ 1-ում ներկայացված են հետազոտական ծրագրերի հիմնական տեսակները, իսկ աղյուսակ 2-ում՝ այդ տարբեր տեսակներից յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները:

Աղյուսակ 1.

Հետազոտական ծրագրերի հիմնական տեսակները

Ծրագրեր գիտափորձից առաջ	Իրական գիտափորձերի ծրագրեր	Քվազիգիտափորձի ծրագրեր
Հետազոտվող խմբերի էկվիվալենտության բացակայություն կամ ստուգիչ խմբի բացակայություն	Էկվիվալենտ փորձարարական խմբեր ձևավորելու ռազմավարության առկայություն (ռանդոմիզացիա)	Հսկողության դժվարության դեպքում իրական պայմաններում գիտափորձի անցկացում
Վալիդության սպառնալիքներ	Երկու կամ ավելի փորձարարական խմբերի առկայություն	Ստուգիչ խմբի կամ փորձարարական ներգործության էֆեկտի չափման սե-

		րիաների առկայություն
Վերահսկելու սահմանափակ հնարավորություններ կամ դրանց բացակայություն	Միանշանակ պատճառական կապի մասին եզրակացության հնարավորություն	Փորձարարական խմբերի արդյունքների կամ գիտափորձի ներգործությունից առաջ և հետո մի խմբի արդյունքների համեմատության հնարավորություն
Ներքին վալիդության սպառնալիքների նշանակալի քանակության առկայություն և արտաքին վերահսկողության հնարավորությունների բացակայություն	Փոփոխականների վերահսկման լայն հնարավորություններ	Փոփոխականները կառավարելու սահմանափակ հնարավորություններ
Միանշանակ պատճառական կապի մասին եզրակացության անհնարինություն	Գիտափորձի ավարտ՝ տարբեր խմբերում արդյունքները չափելու և համեմատելու միջոցով	

Աղյուսակ 2.

Տարբեր հետազոտական ծրագրերի հիմնական առավելությունները և թերությունները

Հետազոտական ծրագիր	Առավելություններ	Թերություններ
Փորձարարական մոթոլ	Հնարավոր է ճշգրիտ վերահսկել: Հնարավոր է պատճառների մասին եզրահանգումը: Հնարավոր են ճշգրիտ չափումները: Հնարավոր է տեսության ստուգումը:	Անբնական պայմաններ: Առկա են ներթափանցող գործոններ: Դժվար է գնահատել բարդ վարքը: Դժվար է իրականացնել փորձնական չնախատեսված հետազոտում:
Կորելյացիոն հետազոտություն	Փոփոխականների միջև կապերի բացահայտում: Հնարավոր են ճշգրիտ չափումներ: Սակավ են	Պատճառների մասին եզրակացությունները: Իրականացումը բարդ է: Պահանջվում է մասնա-

	ներթափանցող գործոնները:	կիցների մեծ քանակ:
Հարցարաններ, թեստավորում	Ցուցանիշների արդյունավետ հավաքագրում: Հնարավոր է գնահատել կարծիքները և դիրքորոշումները:	Հնարավոր չէ եզրակացնել պատճառների մասին: Դժվար է վերստուգել ինքնագնահատականները: Հնարավոր չէ ընտրանքի անկողմնապահ կազմավորումը:
Արխիվային հետազոտություն	Չի պահանջում լրացուցիչ տվյալների հավաքագրում: Հնարավոր է բացահայտել վարքի յուրահատուկ մոտիվներ: Հնարավոր է առանց ուղղակի ներկայություն/դիտման ուսումնասիրել իրադարձությունները:	Հաճախ են անհասանելիության փաստերը: Տվյալները գրանցում են անհայտ մասնագետները:
Ազգագրական (էթնոգրաֆիկ) հետազոտություն	Հնարավոր է նկարագրել անձանոթ իրավիճակներ: Հնարավոր է նկարագրել վարքի բարդ դրսևորումներ: Ներազդող գործոնները սակավ են:	Փոփոխականները անվերահսկելի են: Ճշգրիտ չափումներն անհնար են: Դժվար է եզրակացնել պատճառների մասին:
Դիտումներ բնական պայմաններում	Ցուցանիշների գրանցման և ընդհանրացման իրական միջավայր: Ներազդող գործոնները սակավ են:	Փոփոխականները անվերահսկելի են: Տվյալների անարդյունավետ հավաքագրում: Դժվար է եզրակացնել պատճառների մասին:
Առանձին դեպքի պատմություն	Հնարավոր է հետազոտել բացառիկ դեպքեր: Բարդ վարքի նպատակային ուսումնասիրում:	Փոփոխականները անվերահսկելի են: Տվյալների անարդյունավետ հավաքագրում: Դժվար է եզրակացնել պատճառների մասին:

Հոգեբանական հետազոտությունների արդիականացումը ենթադրում է տարբեր համակարգչային ծրագրերի լայն կիրառում ինչպես բուն հետազոտական գործընթացում, այնպես էլ արդյունքների մշակման և վերլուծության ընթացքում: Այդուսակ 3-ում ներկայացված են մեթոդիկաների ավտոմատիզացման, գիտափորձի նոր տարատեսակների և տեղեկատվական միջոցների առանձնահատկությունները:

Աղյուսակ 3.

Հեղազոտության համակարգչային տարբերակ

Մեթոդիկաների ավտոմատիզացում	Գիտափորձի նոր տարատեսակներ	Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ
<ul style="list-style-type: none"> - հրահանգավորում, - արձանագրության կազմում, - ազդակների ներկայացում, - ցուցիչների գրանցում, - հաշվարկ ու արդյունքների ամփոփում: 	<ul style="list-style-type: none"> - չափումների հարմարեցում, - գիտափորձի ժամանակային գործոն, - վիրտուալ իրականություն, - խաղային մոտիվացիա, - հետադարձ արագ կապ: 	<ul style="list-style-type: none"> - տվյալների բազա, - տվյալների վերլուծություն, - ինտելեկտուալ համակարգեր, - մուլտիմեդիա և մոդելավորող համակարգեր:

Գրականություն (Գլուխ 3 և 4)

1. **Ավանեսյան Հ. Մ.**, Հոգեբանության զարգացման արդի մեթոդաբանության հիմնախնդիրները// «Հոգեբանություն և կյանք», N 4, Եր., 2005, էջ 191-193:
2. **Ավանեսյան Հ. Մ.**, Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը, Եր., ԵՊՀ հրատ., 2017:
3. **Аванесян Г. М.**, Анализ кризисных проявлений становления психологической науки в Армении.// Сб. матер. межд. конф. ”Психологические проблемы образования”, Ереван, 2008, с. 213-217.

4. **Ананьев Б. Г.**, О проблемах современного человекознания, М., «Наука», 1977.
5. **Анастаси А., Урбина С.**, Психологическое тестирование, СПб., 2007, с. 451.
6. **Бурлачук Л. Ф.**, Психодиагностика: Учебник для вузов, СПб., 2006, с. 288.
7. **Герриг Р., Зимбардо Ф.**, Психология и жизнь, СПб.: «Питер», 2004, 955 с.
8. **Годфруа Ж.**, Что такое психология? В. 2х томах, М.: «Мир», 1996.
9. **Дружинин В. Н.**, Структура и логика психологического исследования, М., Институт психологии РАН, 1994.
10. **Евсеева О. Е.**, Проблема применения проективных методик в современной психодиагностике // «Актуальные проблемы психологии личности». Новосибирск, 2011, <https://sibac.info/-conf/psych/vi/36226>.
11. **Корнилова Т. В.**, К 67 Экспериментальная психология: Теория и методы: Учебник для вузов, М.: «Аспект Пресс», 2002, 381 с.
12. **Кэмпбелл Д.**, Модели экспериментов в социальной психологии и прикладных исследованиях: М., «Прогресс» 1980, 260 с.
13. **Мазилов В. А.**, Стены и мосты: Методология психологической науки. Ярославль: МАПН. 2004.
14. **Пирьев Г. Д.**, Экспериментальная психология, София, 1968.
15. **Полани Л.**, Личностное знание, М. «Наука», 1985.
16. Психологическое время личности / **Е. И. Головаха, А. А. Кроник**, Киев: «Наукова думка», 1984, 207 с.; М.: «Смысл», 2008, 267 с.
17. **Роговин М. С., Залевский Г. В.**, Теоретические основы психологического и патопсихологического исследования, Томск, ТГУ, 1988.
18. **Фейерабенд П.**, Против метода. Очерки анархической теории познания, М.: АСТ, 2007.

19. Экспериментальная психология: учебник / **В. Н. Дружинин**, Санкт-Петербург: «Питер», 2008, 320 с.
20. **Abt L., Bellak L.**, Projective Psychology, N. Y., 1950; Handbook of Projective Techniques, Ed. B. Murstein. Published by Basic Books, 1965.
21. **Cashel M. L.**, Child and adolescent psychological assessment: current clinical practices and the impact of managed care// Professional Psychology: Research and Practice. APA, 2002, Vol. 33, No. 5, 446-453.
22. **Molish H. B.**, Projective Methodologies//Annual Review of Psychology, 1972, Vol. 23, 577-614
23. **Lilienfeld S. O., Wood J. M., Garb H. N.**, The Scientific Status of Projective Techniques/ Psychological science in the public interest, Vol. 1, N 2, 2000, p. 53.
24. Psychodiagnostik.In **W. Morgenthaler** (ed.). Arbeiten zur angewandten Psychiatrie, Vol. 2, Bircher, 1921.
25. Understanding personality through projective testing, by **Steven Tuber**. Reviewed by Anthony D. Bram// Psychoanalytic Psychology, 2013, Vol. 30, No. 3, pp. 497-502.

ԳԼՈՒԽ 5

ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Անկախ և կախյալ փոփոխականները գիտափորձում

Ցանկացած գիտափորձ կարելի է բնութագրել որպես մի հետազոտություն, որում ուսումնասիրվում է x-ի ազդեցությունը y-ի վրա, որտեղ x-ը անկախ փոփոխականն է:

Փոփոխականների առաջարկված տարբերակումն առ այսօր կարևորվում է փորձարարական հոգեբանությունում: Երբեմն այն կոչվում է «կառավարվող գործոն», որովհետև գտնվում է հետազոտողի ղեկավարման ներքո, և նա ինքն է մշակում իրադրություններ, որոնց պետք է մասնակցեն հետազոտվողները հետազոտության ընթացքում:

Բոլոր անկախ փոփոխականները, որոնք կառավարվում են հետազոտության ընթացքում, բաժանվում են երեք հիմնական տեսակի՝ իրադրային, աշխատանքային և ինստրուկտիվ փոփոխականներ:

Իրադրային փոփոխականները շրջապատի տարբեր առանձնահատկություններն են, որոնք ստեղծվում են գիտափորձի մասնակիցների համար: Օրինակ, եթե գիտնականն ուզում է պարզել, թե ինչքանով է մարդկանց օգնելու պատրաստակամությունը կախված այլ մարդկանց ներկայությունից, նա կարող է ստեղծել մի իրադրություն, որտեղ հետազոտվողները կհանդիպեն մի մարդու, որն օգնության կարիք ունի: Մի դեպքում մասնակիցը օգնության կարիք ունեցող մարդուն կհանդիպի միայնակ ժամանակ, մյուս դեպքում՝ այլ մարդկանց ներկայությամբ: Այս դեպքում որպես իրադրային անկախ փոփոխական է հանդես գալիս շրջապատող մարդկանց թիվը, որը կարելի է փոփոխել՝ ելնելով հետազոտության նպատակներից:

Աշխատանքային փոփոխականների դեպքում հետազոտվողների հանձնարարվում է կատարել տարբեր տիպի հանձնարարություն: Օրինակ՝ կոգնիտիվ հոգեբանության հետազոտություններում սխալների առավել տարածված տեսակները որոշելու համար մասնակիցներին հանձնարարում են լուծել տրամաբանական տարատեսակ խնդիրներ:


Ինստրուկտիվ փոփոխականների դեպքում մասնակիցների տարբեր խմբերին խնդրում են միևնույն հանձնարարությունը կատարել տարբեր կերպ: Օրինակ՝ հիշողության հետազոտման ժամանակ բոլոր մասնակիցներին մտապահելու համար տրվում է բառերի միևնույն ցուցակը, սակայն հանձնարարվում է կիրառել մտապահման տարբեր մեխանիզմներ. մի խմբին խնդրում են ստեղծել տվյալ բառերի պատկերավոր կերպարները, մյուսին՝ տվյալ բառերին համապատասխան ստեղծել ասոցիացիաներ, իսկ երրորդ խմբին՝ պարզապես յուրաքանչյուր բառը կրկնել երեք անգամ:

Պետք է նաև նշել, որ հաճախ միևնույն հետազոտության մեջ կարելի է համատեղել անկախ փոփոխականների մի քանի տեսակներ: Օրինակ՝ ուսումնասիրում ենք, թե ինչքանով է մարդու՝ խնդիր լուծելու կարողությունը կախված նրան շրջապատող այլ մարդկանցից, նրա դրդապատճառներից և խնդրի բարդությունից: Այս դեպքում մարդկանց մի խմբին կարելի է տեղավորել փոքր, մյուսներին՝ մեծ սենյակներում՝ դրանով իսկ իրադրային փոփոխականների միջոցով ազդելով մարդկանց կուտակվածության վրա: Բացի այդ՝ մի սենյակի մասնակիցներին կարելի է տալ բարդ, մյուսին՝ համեմատաբար ավելի հեշտ խաչբառեր (աշխատանքային փոփոխականներ): Կամ ինստրուկտիվ փոփոխականների միջոցով կարելի է ազդել հետազոտվողների դրդապատճառների վրա. մի խմբին ասել, որ նրանք լուծված միևնույն խնդրի համար կստանան 100 դրամ, իսկ մյուս խմբին՝ 500 դրամ:

Անկախ և կախյալ փոփոխականների հարաբերակցությունը գիտափորձում: Անկախ փոփոխականը կարելի է դիտարկել

որպես ռեկանտ (համապատասխանության աստիճան) ազդակ (**St(r)**), որը փոփոխում է փորձարարը, միևնույն ժամանակ կախյալ փոփոխականը հետազոտվողի, նրա հոգեկանի հակազդումն (ռեակցիան) է այդ ռեկանտ ազդակի ներգործությանը: Ազդակը (լատ. *Stimulus*) ուժեղ դրդիչ պահ է, ռեակցիա կամ գործողություն առաջացնող ներքին կամ արտաքին գործոն:

Որպես կանոն, անկախ փոփոխականից բացի, բոլոր պայմանների փնտրվող կայունությունը հոգեբանական գիտափորձում դժվար է նվաճել, քանի որ գործնականում, այդ երկու փոփոխականներից բացի, գոյություն ունեն նաև լրացուցիչ փոփոխականներ (կամ արտաքին փոփոխականներ), որոնք ոչ ռեկանտ (**St(1)**) և պատահական ազդակներ են (**St(2)**) և համապատասխանաբար պարբերական ու պատահական սխալների են հանգեցնում: Այսպիսով, փորձարարական գործընթացի գծապատկերը հետևյալն է.




Ծանոթագրություն. Գծանկարը կազմված է ըստ Ռ. Վուդվորթի (R. Woodworth) նկարագրի:

Նկար 7. Անկախ և կախյալ փոփոխականների հարաբերակցությունը գիտափորձում

Հետևաբար, գիտափորձում կարելի է առանձնացնել փոփոխականների երեք տեսակ՝ *անկախ փոփոխական*, որը մտադրված ընտրվում կամ ներգործությունների է ենթարկվում փորձարարի կողմից՝ կախյալ փոփոխականի վրա նրա ազդեցությունը բացահայտելու նպատակով, կախյալ փոփոխական, որը գիտափորձում չափվող փոփոխականն է, և որի փոփոխությունը կապում են անկախ փոփոխականի փոփոխությունների հետ:

Գիտափորձում անկախ փոփոխականի օրինակ կարող է համարվել ազդակի ինտենսիվությունը, կախյալ փոփոխականի օրինակ՝ այդ ազդակը զգալու հետազոտվողի ընդունակությունը: Լրացուցիչ (կամ արտաքին) փոփոխականները ոչ ռելևանտ փոփոխականներ են: Դրանք այնպիսի փոփոխականներ են, որոնք տարբերվում են այն համատեքստից, որին պատկանում են կախյալ և անկախ փոփոխականները: Կարող են ներառել իրավիճակի կամ առաջադրանքի այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են՝ տարվա եղանակը, օրվա ժամը, հարցերին թղթային կամ էլեկտրոնային տարբերակով պատասխանելը և այլն: Սրանք այնպիսի ազդեցություններ են, որոնց հետևանքով կարող է աղավաղվել անկախ փոփոխականի իրական ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա, ուստի դրանք պետք է հնարավորինս վերահսկել²⁸:

²⁸ *Stu Research Methods In Psychology*, November 2012, pp. 113-125, https://saylordotorg.github.io/text_research-methods-in-psychology/:



Նկար 8. Փոփոխականների տեսակները

5.2. Վերահսկողություն արտաքին փոփոխականների նկատմամբ

Փորձարարական հետազոտության մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ հետազոտողը ձգտում է վերահսկել, այսպես կոչված, **արտաքին փոփոխականները**: Դրանք անկառավարելի գործոններ են, որոնք իրականում չեն հետաքրքրում հետազոտողին, բայց կարող են ազդել ուսումնասիրվողների վարքի վրա: Այսպիսի երևույթը կոչվում է բարդություն:

Այսպիսի բարդության հետևանքները նկարագրելու համար քննարկենք մի գիտափորձ:

Հետազոտողն իր առջև նպատակ է դրել ապացուցելու, որ այն ուսանողները, որոնք ձգտում են կարճ ժամանակում սովորել մեծ քանակությամբ նյութ, չեն ունենում այնպիսի լավ արդյունքներ, ինչպես այն ուսանողները, որոնք ուսումնական գործընթացը նախապես բաժանել են մի քանի փուլերի: Այլ խոսքերով ասած՝ ենթադրվում է, որ ուսումնական նյութի համաչափ ուսուցումն ավելի արդյունավետ է, քան այն կարճ ժամանակում անգիր անելը:

Նշված ենթադրությունը կարող է հանդիսանալ հետազոտության վարկած: Գիտափորձի անցկացման համար առանձնաց-

վում է ուսանողների երեք խումբ, որոնցից յուրաքանչյուրին հանձնարարվում է սովորել հինգ գլուխ ընդհանուր հոգեբանության դասագրքից: Առաջին խմբին նյութը սովորելու համար երկուշաբթի օրը տրվում է երեք ժամ, երկրորդ խմբին՝ երեք ժամ երկուշաբթի օրը և երեք ժամ երեքշաբթի օրը, իսկ երրորդ խմբին՝ երեքական ժամ երկուշաբթի, երեքշաբթի և չորեքշաբթի օրերին: Ուրբաթ օրն անցկացվում է քննություն՝ երեք խմբերի գիտելիքները ստուգելու համար (աղյուսակ 4.):

Աղյուսակ 4.

Անցկացված գիտափորձի ծրագրի օրինակը

	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ
Խումբ I	3 ժամ	-	-	-	քննություն
Խումբ II	3 ժամ	3 ժամ	-	-	քննություն
Խումբ III	3 ժամ	3 ժամ	3 ժամ	-	քննություն

Քննության արդյունքները ցույց տվեցին, որ III խմբի ուսանողները ստացել են ամենաբարձր գնահատականները, ավելի ցածր գնահատականներ են ստացել II խմբի ուսանողները, իսկ I խումբն անհաջողության է մատնվել: Դրանից ելնելով էլ՝ հետազոտողը եզրակացրել է, որ բաշխված չափանիշներն ավելի արդյունավետ են, քան մի քանի ժամում անգիր անելը:

Արդյո՞ք կարելի է համաձայնել այս եզրակացությանը: Իհարկե՝ ոչ, որովհետև այս հետազոտության մեջ կարելի է նկատել առնվազն երկու բարդացնող հանգամանք:

Ուսանողների պարապմունքների օրերի քանակն իսկապես տարբերվում է (1, 2 և 3 օր), բայց միևնույն ժամանակ տարբերվում է նաև պարապմունքների ընդհանուր ժամաքանակը (3, 6 և 9 ժամ): Սա արդեն բարդացնող հանգամանքի վառ օրինակ է, քանի որ անհնար է ստույգ ասել՝ արդյոք քննության արդյունքները

կախված են միայն ծանրաբեռնվածության բաշխումից, թե նաև ուսանողներին տրված ընդհանուր ժամանակի քանակից:

Նկատենք, որ նման գիտափորձում անտեսվում են նաև այն-պիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ ուսանողների ընդունակությունները, ուսումնական պայմանները և այլն: Նման «անտեսումները» թույլատրելի են, եթե մասնակիցների թիվը մեծ է, և մյուս չափանիշները միատարր են (ուսումնական կիսամյակը, կուրսը, առարկան, քննող դասախոսը և այլն):

Մյուս բարդացնող հանգամանքը նյութը սովորելու պահից մինչև քննությունն ընկած ժամանակահատվածն է, որն ուսանողների տարբեր խմբերի մոտ տարբեր է: Այսպես, հնարավոր է՝ III խմբի ուսանողներն ամենաբարձր արդյունքներն են ստացել, քանի որ նրանք նյութը սովորել են ավելի ուշ և դրա համար էլ ավելի քիչ նյութ են մոռացել: Եվ հակառակը, I խմբի ուսանողները ձախողել են իրենց քննությունը, որովհետև նյութը սովորելուց հետո շատ ավելի երկար ժամանակ է անցել մինչև քննության օրը:

Այսպիսով, յուրաքանչյուր բարդացնող հանգամանք իր հերթին կարող է ազդել գիտափորձի արդյունքի վրա և այս կամ այն ձևով փոխել դրա ընդհանուր պատկերը (աղյուսակ 5):

Աղյուսակ 5.

Բարդացնող հանգամանքների ազդեցությունը գիտափորձի արդյունքների վրա

	Տրամադրված օրերի քանակը	Պարապմունքների ընդհանուր ժամանակը	Մինչև քննությունն ընկած օրերի քանակը	Ուրբաթ
Խումբ I	1	3	3	ցածր
Խումբ II	2	6	2	միջին
Խումբ III	3	9	1	բարձր

Այս դեպքում իրադրությունը շտկելու համար անհրաժեշտ է, որ բոլոր խմբերի մոտ պարապմունքների ընդհանուր ժամաքանակը և մինչև քննությունն ընկած օրերի քանակը նույնը լինեն:

Կախյալ փոփոխականներ: Ինչպես արդեն նշել ենք, գիտափորձը կարելի է բնութագրել որպես մի հետազոտություն, որտեղ ուսումնասիրվում է x-ի ազդեցությունը y-ի վրա, և որտեղ x-ը անկախ փոփոխականն է, հետևաբար y-ը կախյալ փոփոխականն է:

Գիտափորձը, որտեղ ուսումնասիրվում էր բռնի տեսարանների ազդեցությունը երեխաների ագրեսիվության դրսևորման վրա, կախյալ փոփոխական է ագրեսիվությունը, իսկ ծանրաբեռնվածության գործոնի բաշխման հետազոտությունում կախյալ փոփոխականը քննության արդյունքներն են:

Կառավարվող և սուբյեկտիվ փոփոխականներ: Ինչպես գիտենք, հետազոտություններում փորձարարական ու ստուգիչ խմբերի մասնակիցները բոլոր որակներով միանման են և իրարից տարբերվում են միայն նրանով, որ փորձարարական խումբն իր վրա կրում է որոշակի փորձարարական ներգործություն: Բայց շատ հաճախ համեմատվում են այնպիսի խմբեր, որոնք իրարից տարբերվում են նաև այլ որակներով: Դրանք **սուբյեկտիվ (լրացուցիչ) փոփոխականներն** են: Դրանց թվին են պատկանում՝ հետազոտվողի սեռը, տարիքը, ինտելեկտը, ֆիզիկական և հոգեկան խանգարումները և անձին բնութագրող մնացած բոլոր որակները: Հետազոտության ընթացքում օգտագործելով սուբյեկտիվ փոփոխականներ՝ բնական է, որ հետազոտողը դրանք չի կարող անմիջականորեն կառավարել, ուստի գիտափորձի անցկացման համար անհրաժեշտ է ընտրել այնպիսի մարդկանց, որոնք առավելապես ունեն միանման, ընդհանուր որակներ:

Փոփոխականի վերահսկում ստուգիչ խմբի օրինակով: Հոգեբանական գիտափորձի ապացուցելիությունն ապահովվում է հետազոտության արդյունքների համեմատությամբ, որն ապացուցվում է հատուկ վիճակագրական բանաձևերի միջոցով: Մի շարք հետազոտություններում հետազոտվողների մի խումբ իր վրա կրում է ինչ-որ ազդեցություն, իսկ մյուս խումբը՝ ոչ: Օրինակ՝ ուսումնասիրում ենք, թե ինչքանով են հեռուստացույցով ցուցա-

դրված բռնության տեսարաններն ազդում երեխաների ազդեցիկության դրսևորման վրա: Գիտափորձի կազմակերպումը պահանջում է, որ այս դեպքում երեխաների մի խմբին (հիմնական կամ փորձարարական) ցուցադրվեն բռնի տեսարաններով տեսաֆիլմեր, իսկ մյուս մասին՝ ոչ:

Այստեղ «**էքսպերիմենտալ խումբ**» եզրույթը գործածվում է՝ բնութագրելու համար այն մասնակիցներին, որոնք իրենց վրա կրում են ինչ-որ փորձարարական ներգործություն, իսկ իրենց վրա ներգործություն չկրած մասնակիցները կազմում են ստուգիչ խումբ:

Գիտափորձի կատարյալ տարբերակում փորձարարական և ստուգիչ խմբերի մասնակիցները բոլոր որակներով միանման են և իրարից տարբերվում են միայն նրանով, որ էքսպերիմենտալ խումբն իր վրա կրում է որոշակի փորձարարական ներգործություն. այս դեպքում դիտում է բռնություն պարունակող տեսաֆիլմեր: Դրա շնորհիվ ստուգիչ խմբերը տալիս են այնպիսի ցուցանիշներ, որոնցով հնարավոր կլինի համեմատել փորձարարական խմբի գնահատականները:

5.3. Քվազիէքսպերիմենտը հոգեբանական հետազոտությունում

Այն իրավիճակներում, երբ չի կարելի իրականացնել փոփոխականների փորձարարական վերահսկողություն, կիրառվում է քվազիէքսպերիմենտը: Քվազիէքսպերիմենտի դեպքում հետազոտություններն ուղղված են պատճառի և հետևանքի ստուգմանը: Բայց այդ դեպքում ձեռք չի բերվում անկախ փոփոխականի վերահսկման լիակատարություն, կամ այն խառնվում է այլ փոփոխականների հետ: Օրինակ՝ հանուն հետազոտական խնդիրների հոգեբանը հատուկ չի կազմակերպի ինչ-որ վթար՝ այդպիսի դեպ-

քերում նշանակալի բազիսային գործընթացների մասին վարկածներ ստուգելու նպատակով:

Հնարավոր կառուցված (պատճառական) հոգեբանական վարկածների այլ օրինակ է սթրեսի հետազոտությունը. այդ վարկածների համար կիրառվում է քվազիէքսպերիմենտալ մոտեցումը: Հոգեբանը կարող է նաև ստեղծել իրավիճակներ, որոնցում բացահայտվում են անձնային կամ կոգնիտիվ հատկություններ, որոնց կառավարել հնարավոր չէ, սակայն հնարավոր է ձևավորվող փոփոխականների հետ ներառել փորձարարական ընթացակարգում ուսումնասիրվող բազիսային գործընթացների կառուցվածքագործառութային առանձնահատկություններին վերաբերող հարցերի լուծման համար:


Տ. Վ. Կորնիլովան [Корнилова Т., 2006] ներկայացնում է քվազիէքսպերիմենտի հետևյալ օրինակը: Մեծահասակ հետազոտվողներին տրվում են վերբալ խնդիրներ, որտեղ որոշման ընդունումը կարող է ներառել կողմնորոշում դեպի անմուսնալուծությունների հաճախությունը երկրում: Հետազոտվողներին նկարագրվում է իրավիճակ, երբ տեղի է ունեցել ամուսնություն, և տրվում են իրական տեղեկություններ երկրում ամուսնալուծությունների հաճախության մասին՝ ըստ բնակչության խմբերի: Հետազոտվողները դատողություններ են անում այն մասին, թե ինչպիսի հավանականությամբ ամուսնացած գույզը որոշակի ժամկետ անց կամուսնալուծվի: Նմանատիպ օրինակներ կարելի է բերել այն հետազոտությունների վերաբերյալ, որոնցում կիրառվում են պրոյեկտիվ մեթոդիկաներ:

Պարզվում է, որ որոշում ընդունելիս հետազոտվողները գլխավորապես վերհիշում են ամուսնալուծության դեպքեր իրենց ծանոթների շրջանում և ընտրում այն պատասխանը, որն առավել համապատասխանում է իրենց փորձին: Նրանք անտեսում են իրական հաճախությունների մասին տեղեկությունը, որոնք կարող էին հաշվի առնվել «ամուսնալուծություն» իրադարձության հա-

վանական գնահատման դեպքում: Այստեղ որոշում ընդունելիս որպես տրամաբանության աղավաղումը հասկանալուն օգնող բացատրական սկզբունք հանդես է գալիս հոգեբանական հասանելիության էվրիստիկան: Դրան համապատասխան գործելով՝ մարդն իրադարձությունները համարում է ավելի քան հավանական, որքան հեշտությամբ հիշողությունից կարելի է հանել նմանատիպ իրադարձությունների օրինակները: Երկարատև և կարճատև հիշողությունները կարևոր դեր են խաղում իրադարձությունների հավանական բնութագրերի գնահատումներում:

Այսպիսով, քվազիէքսպերիմենտալ հետազոտությունները փոխում են պատճառական գործող գործոնի հասկացումը. անկախ փոփոխականի պայմանը միայն դրսևորում է խորքային պատճառների ազդեցություն, որոնք ենթադրվում են քվազիէքսպերիմենտալ մոտեցման դեպքում որպես բազիսային փոփոխականներ: Փորձարարական պայմանները ստեղծվում են, որպեսզի բացահայտեն նրա ներգործությունը և ոչ թե ներգործություն իրականացնեն: Որպես կառավարման մեջ պատճառական գործոն՝ անկախ փոփոխականի սահմանափակումը կառուցվում (պատճառական) վարկածների քվազիէքսպերիմենտալ ստուգման էական տարբերությունն է: Քվազիէքսպերիմենտալ հետազոտությունները պահպանում են ուղղվածությունը դեպի պատճառական եզրակացության հիմնական պայմանների կատարումը, բայց փոփոխականների միջև պատճառահետևանքային կախվածություն հաստատելու համար պահանջվում է բացահայտել հավաստի կամ վալիդ եզրակացության բոլոր երեք սպառնալիքները, որոնք ծագում են փորձարարական վերահսկողության նվազման արդյունքում (նկար 9): Հետևաբար գիտափորձի նման ձևակերպման դեպքում տուժում է ներքին վալիդությունը [Myers A., Hansen Ch., 2011]²⁹:

²⁹ Տե՛ս **Myers Anne, Christine H. Hansen**, Experimental Psychology, Oakland University, USA, 7th edition, 2011, p. 148:



Նկար 9. Քվազիէքսպերիմենտալ ծրագրերի կառուցվածքը

5.4. Գործոնային գիտավորձ

Անկախ և ուղեկցող փոփոխականներ: Եթե գիտավորձում հաշվի է առնվում մեկից ավելի անկախ, կառավարվող փոփոխականների փոփոխությունը, ապա այդպիսի փորձը կոչվում է գործոնային: Գործոնային գիտավորձի ծրագիրը պետք է ներառի պայմանների նշումը, որոնցում համադրվում են երկու կամ ավելի փոփոխականների մակարդակները: Համաձայն մեկուսացված պայմանների սկզբունքի՝ անկախ փոփոխականի գործառնական վերահսկումը տեղի է ունենում մյուսից անկախ: Երկրորդ անկախ փոփոխականը կարող է մտցվել միևնույն հիմնարար գործընթացի հետ կապված փոփոխությունները վերահսկելու նպատակով, որի վրա ազդում է առաջին անկախ փոփոխականը, կամ էլ կախյալ փոփոխականի փոփոխությունները պայմանավորող հոգեբանական մեխանիզմների ճշգրտման համար: Այդ վարկածների ճշգրտումը կարող է ներկայացվել նաև որպես ենթադրյալ հիմնարար փոփոխականներից մեկի արդյունքների հիման վրա ստացված ընտրանք, որոնք վերակառուցվում են որպես կախյալ փոփոխականների կենտրոնական բաղադրիչներ: Գործոնային սխե-

մաների վրա հիմնված հոգեբանական վարկածների ճշգրտման այլ տեսակներ են ուղեկցող երևույթների վերահսկողությունը և բազմափուլ փորձերի անցկացումը: Գործոնային գիտափորձում կախյալ փոփոխականը կարող է հանդես գալ միայնակ: Եթե դրանք մի քանիսն են, ապա տվյալների մշակման ընդհանուր սխեման սովորաբար միանման է տարբեր ցուցանիշների համար և փոփոխվում է միայն այս կամ այն վիճակագրական չափանիշների համար կիրառելիության տեսակետին համապատասխան: Գործոնային գիտափորձը չպետք է շփոթել բազմաչափի հետ, որի համար բնորոշ են անկախ և կախյալ փոփոխականների բազմակի փոփոխությունները:

Դ. Գաֆանի կատարած գիտափորձը կապիկների մոտ «կամարի հատում» փոփոխականով ներառում էր երկրորդ անկախ փոփոխականի ներմուծումը: «Հետաձգման ինտերվալ» փոփոխականի ներմուծումը հեղինակին թույլ տվեց որոշում ընդունել այն մասին, որ կամարի հատման դեպքում խախտվում է ոչ թե «ճանաչում», այլ «հետքերի պահպանում» հիմնարար փոփոխականը:

Պետք է հաշվի առնել, որ հենց վիրաբուժական միջամտությունը ներառում էր «կամարի հատում» փորձարարական գործոնը և «տրավմատիկ վնասվածք վիրահատությունից հետո» գործոնը, որը հանդես է գալիս որպես ուղեկցող փոփոխական: Երկրորդ գործոնի ազդեցությունը, որն իմնոտիվորեն (երկարատև սթրեսի ազդեցության պատճառով մարդու հոգեֆիզիոլոգիական առողջության վատթարացում) կապված էր անկախ փոփոխականի տրման եղանակի հետ, պետք է կառավարման ենթարկվեր մրցակցող վարկածի իրավասությունը որոշելու համար. հենց տրավմատիկ վնասվածքներն են, առանց որոնց կամարի հատումն անհնար է. վիրահատության ժամանակ պայմանավորում են կենդանիների հիշողության խանգարման ազդեցությունները: Այդ պատճառով ստեղծվել է կապիկների ստուգիչ խումբ, որոնց

մոտ կամարը պետք է ամբողջական մնար, բայց կենդանին ենթարկվում էր նմանատիպ վիրաբուժական միջամտության: Այդ ստուգիչ պայմանի օգնությամբ ապահովվում է ուղեկցող փոփոխականի ակտիվ մակարդակը:

Հոգեբանության մեջ լավ հայտնի է փոփոխականների վերահսկման այնպիսի ձև, որը ապահովում է այլ փոփոխականների ազդեցության հաշվարկը, որոնք առկա են հենց փորձարարական ազդեցության կազմակերպման ժամանակ, որը կոչվում է «ուղեկցող խառնման վերահսկման սխեմա»:

Փորձարարական իրավիճակում երկու կամ ավելի փոփոխականների ներմուծումը տալիս է փորձնական պլանների համեմատման նոր չափանիշներ. անկախ փոփոխականների վարիացիան կարող է ներկայացվել ինչպես ներանհատական, այնպես էլ միջխմբային գծապատկերներում:

Պետք է նշել, որ յուրաքանչյուր նոր գործոն կարող է ներառել փորձարարական վերահսկման նոր եղանակ: Բացի լրիվ պլաններից՝ հոգեբանության մեջ ակտիվորեն կիրառվում են նաև, այսպես կոչված, մասնակի պլաններ: Երբեմն այդ պլանների աղբյուրը նոր առաջացած մրցակցող վարկածն է, որի էմպիրիկ գնահատականի համար հետազոտողն ավելացնում է նոր տվյալներ՝ նախկինում անցկացված փորձի խմբերի արդյունքների հետ համեմատելու համար: Մասնակի պլանների մշակման մյուս պատճառը տնտեսական նկատառումներով ամբողջական փորձնական գծապատկերի իրագործման անհնարիությունն է կամ երկու անկախ փոփոխականների որոշակի պայմանների համադրման անհնարիությունը:

«Մարֆեյի էֆեկտը գիտության մեջ» աշխատությունում առաջ է քաշվել վարկած այն մասին, որ ԱՄՆ-ում կրթական համակարգը նպաստում է բարձրագույն կրթության ստացմանը հաջորդող գիտական պրոդուկտիվությամբ այն անձանց, որոնք համեմատաբար վաղ են ի հայտ բերել իրենց ընդունակությունները և,

ընդհակառակը, խոչընդոտում են նրանց հետագա ճանաչում ձեռք բերելուն, որոնց ընդունակությունները հնարավոր է՝ ավելի ուշ կորստորվելին, եթե նրանց հնարավորություն տրվեր նման կրթություն ստանալու: Իրականում հարցն այն է, որ այդ մարդիկ չեն ստանում սոցիալական աջակցություն և հետո չեն կարողանում իրենց դրսևորել [Готтсданкер Р., 2005]³⁰:

Ռոբերտ Գոթսդանքերը նշում է, որ Ջ. Կեմպբելը (1996) մասնակի պլանները դասում է քվազիփորձական սխեմաներին՝ ցուցադրելով դրանց անփոխարինելիությունը համարժեք համեմատելի խմբերի նախնական ընտրանքի անհնարիության դեպքում: Մասնավորապես նաև բերում է հետազոտության այնպիսի պլանի օրինակ, որը կատարվում է ռազմասօդային դպրոցի կուրսանտների ամառային պատրաստության ազդեցության վարկածի ստուգման նպատակով և դիտակում է հարաբերության փոփոխությունը պետերի և ենթակաների նկատմամբ [Готтсданкер Р., 2005]:

Կուրսանտների կողմից նման պատրաստության անցումը տևում է 14 ամիս: Ըստ հիպոթեզի էության՝ պետք է իրականացվի դրվածքի չափում հրամանատարային պատրաստության անցումից առաջ և հետո: Տեսականորեն ստուգիչ խումբը պետք է կազմեն կուրսանտները, որոնք չէին անցնելու համապատասխան 14 ամսվա պատրաստություն: Այդպիսի խումբ ընտրելն անհնար է: Առաջին հերթին, հետազոտական նպատակներով անհրաժեշտ գոյացության նման «զրկումը» անթույլատրելի կլիներ:

Երկրորդ, եթե նույնիսկ դա տեղի ունենար իրական ձևով, այսինքն՝ ռազմաբազա ուղարկված կուրսանտներին հետ ուղարկելին, ապա նրանց վրա ազդեցություն կունենար կյանքի ռիթմի խախտումը: Այդ պատճառով եկան ընդհանուր եզրահանգման: Համեմատել էին երկու խումբ ծառայության տարբեր ժամկետով: Առաջին խմբի հետազոտվողներին մնում էր մեկ շաբաթ՝ հրամա-

³⁰ Տե՛ս Готтсданкер Р., Основы психологического эксперимента, М.: «Академия», 2005, 367 с.:

նատարական պատրաստությունն անցնելու համար. այդ խումբը ստուգիչ էր: Երկրորդ փորձարարական խումբը թեստավորվում էր երկու անգամ՝ ռազմաբազա հասնելուց մեկ շաբաթ անց, այսինքն՝ ժամկետի սկզբում, ապա՝ 13 ամիս անց՝ ուսուցումից հետո: Առաջին համեմատությունն անցկացվել է չափված կախյալ փոփոխականի չափմամբ երկու խմբերում էլ. այն կարծես համապատասխանում է երկու խմբերի հետ պլանին: Երկրորդ համեմատությունը վերաբերում էր «մինչև-հետո» փորձարարական խմբին:

Տվյալների ստացման ամբողջական գործոնային պլանի իրագործման համար համեմատվող կախյալ փոփոխականների շարքերը քիչ էին չորսից: Յուրաքանչյուր անկախ փոփոխականի յուրաքանչյուր երկու մակարդակին կարելի է տալ չորս պայման («այո/ոչ» պայման, «հրամանատարական պատրաստություն», ինչպես նաև չափման տարբեր ժամանակ՝ ուսուցումից առաջ և հետո): Ստուգիչ պայման ունենալու ամենարհմությունն առանց հրամանատարական պատրաստության անձի և կախյալ փոփոխականի՝ մինչև ուսուցումը չափման համադրությունը հանգեցրեց նրան, որ արդյունքները քննարկվում էին մասնակի պլանով հետազոտությունն անցկացնելիս մեկ բացակայող խմբի հետ:

Այսպիսով, նոր անկախ փոփոխականի ներմուծումը սխեմայի մեջ կարող է ծառայել ստուգվող վարկածի մեջ նոր հարաբերության ներմուծումը: Երկրորդ փոփոխականի ներմուծումը հնարավոր է նաև տարբեր հիմնարար գործընթացների տարանջատման նպատակով, որոնք արդիականացնում են հիմնական փոփոխականների զանազան մակարդակների դեպքում:

Եթե հոգեբանական վարկածում ենթադրվում է երկու կամ ավելի փորձնական գործոնների ազդեցությունը կախյալ փոփոխականների վրա, ապա այդպիսի վարկածը կոչվում է կոմբինացված: Կոմբինացված վարկածների ստուգումը կարող է դիտվել որպես գործոնային փորձերի հիմնական առավելություն: Սակայն

պետք է դիտարկել գործոնային պլանավորման ևս մեկ տեսակետ, որը պայմանավորված է նրանով, որ հենց փորձարարական պայմանները, ավելի ճիշտ՝ դրանց ներկայացման հերթականությունը, հանգեցնում են երկրորդ անկախ փոփոխականների առաջացման: Դա առկա է բազմափուլ փորձերում:

5.4.1. Բազմաշափ, գործոնային գիտափորձ

Ավելի քան երկու մակարդակների օգտագործմամբ փորձերի անցկացումը միևնույն անկախ փոփոխականով նույնպես հանգեցնում է գործոնային սխեմաների առաջացման: Պետք է տարբերակել որակական կամ քանակական անկախ փոփոխականներ: «Բազմափուլ փորձ» հասկացությունը սովորաբար ներառում է երկու հատկանիշ. 1) անկախ փոփոխականը ներկայացված է ավելի քան երկու մակարդակներով, 2) այդ երեք կամ ավելի միևնույն անկախ փոփոխականով պայմանների ներկայացման կարգը ղեկավարվում է հատուկ սխեմայով, որը ենթադրում է կարգային դիրքի հավասարեցում յուրաքանչյուր մակարդակում և պայմանների ընդհանուր հաջորդականությամբ: Բազմափուլային փորձը հակադրվում է բիվալենտայինին: Բիվալենտային փորձում, որտեղ օգտագործված է անկախ փոփոխականների երկու մակարդակ, փորձնական և ստուգիչ պայմանները կարող են տարբերվել քանակապես ու որակապես: Փոփոխականների քանակական փոփոխությունների մասին սովորաբար խոսում են այն դեպքերում, երբ ցուցանիշները բավարարում են կարգային, ինտերվալային կամ հարաբերությունների սանդղակներին: Անկախ փոփոխականների մակարդակների դասակարգումը տալիս է որակական փոփոխություն բոլոր այն դեպքերում, երբ պայմանները փոփոխվում են ըստ մի շարք պարամետրերի կամ ըստ մեկ պարամետրի, բայց առանց զոնե անկախ փոփոխականների այդ մակարդակի փոփոխությունների օգտին ենթադրությունների:

Օրինակ կարող է ծառայել Ջ. Ատկինսոնի փորձը, որը նկարագրվել է 1953 թ., չնայած հիմնական միտքը ներկայացվել էր ավելի վաղ: Այս դեպքում անկախ փոփոխականը ներկայացված էր հետազոտվողի հետ «շփման ոճ» փոփոխականով մոդելավորվող երեք պայմաններով: «Չնական-թողտվական», «ավտորիտար» և «դեմոկրատիկ» ոճերի միջև տարբերությունները չեն կարող դիտվել որպես քանակական, չնայած մակարդակները երեքն են: Քանակական փորձին անցումը որոշվում է ոչ թե անկախ փոփոխականի մակարդակով, այլ գոնե անկախ փոփոխականներից մեկի չափման հնարավորությամբ:

Բազմափուլ փորձերը հիմնականում կառուցվում են գործոնային սխեմաների վրա, քանի որ պայմանների ներկայացման կարգն այդ դեպքում դառնում է երկրորդ փորձնական գործոն: Բերենք առավել հայտնի տարբերակներից երկուսը՝ ա) ըստ լատինական քառակուսու լրիվ հավասարեցման սխեմայի և բ) ըստ բալանսավորված լատինական քառակուսու հավասարեցման սխեմայի: Երկու սխեմաներն էլ փորձնական պլանների տարբերակներ են, որոնցում առաջին անկախ փոփոխականի բոլոր մակարդակներն առաջադրվում են յուրաքանչյուր հետազոտվողի, իսկ երկրորդ անկախ փոփոխականը առաջանում է խմբերում հետազոտվողների բաշխման շնորհիվ, որոնցից յուրաքանչյուրին առաջադրվում է առաջին անկախ փոփոխականի մակարդակների հնարավոր հաջորդականություններից մեկը:

Աղյուսակ 6.

Բազմափուլ գիրափորձի պլանավորման սանդղակ (վեցմակարդակային լատինական քառակուսի)

Հետազոտվողների խումբը	Չբալանսավորված լատինական քառակուսի	Բալանսավորված լատինական քառակուսի
1	ԱԲԳԴԵԶ	ԱԲԳԴԵԶ
2	ԳԵԴԱԶԲ	ԲԴԱԶԳԵ
3	ԵԳԱԶԲԴ	ԳԱԵԲԶԴ
4	ԲԴԶԳԱԵ	ԴԶԲԵԱԳ
5	ԴԶԲԵԳԱ	ԵԳԶԱԴԲ
6	ԴԱԵԲԶԳ	ԶԵԴԳԲԱ

Բալանսավորված քառակուսու գծանկարի յուրահատկությունն այն է, որ անկախ փոփոխականի յուրաքանչյուր մակարդակին նախորդում է մեկ այլ մակարդակ: Անկախ փոփոխականի մի մակարդակի՝ մյուսի վրա ազդեցության հաջորդականության ազդեցությունները չեն հեռացվում այդ պլաններում, բայց վերահսկվում են յուրաքանչյուր մակարդակում կախյալ փոփոխականների համար ստացված ցուցանիշների միջինացված եղանակով: Մակարդակները տարբեր տեղ են զբաղեցնում յուրաքանչյուր հաջորդականության մեջ: Դիրքային հավասարեցման գծանկարները կարող են հանդես գալ որպես ներանհատական պլաններ: Բայց մակարդակների տարբեր հաջորդականությունը, որոնցից յուրաքանչյուրում անկախ փոփոխականի յուրաքանչյուր պայմանը ներկայացված է միայն մեկ անգամ, և դա կարելի է առաջադրել հետազոտվողների տարբեր խմբերին: Նման դեպքում փորձը կոչվում է խաչաձև-անհատական: Համարժեք խմբերը փորձնական առաջադրանքները կկատարեն անկախ փոփոխականի բոլոր փուլերում, բայց իրարից կտարբերվեն միայն մակարդակների դրսևորման կարգով: Այսպիսով, առաջադրման կարգը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես երկրորդ անկախ փոփոխական:

Նման խաչաձև-անհատական գծանկարում փորձնական վերահսկողության են ենթարկվում բոլոր փոփոխականները, որոնք կապված են միջանհատական տարբերությունների հետ. բոլոր հետազոտվողները անցնում են անկախ փոփոխականի ստուգվող վարկածի տեսանկյունից հիմնական համարվող առաջին մակարդակով: Հաջորդականությունների էֆեկտների վերահսկողությունն իրականացվում է կախյալ փոփոխականների ցուցանիշների միջինացմամբ մինևույն մակարդակի ամբողջության տեսակետից բոլոր հաջորդականություններում: Հասկանալի է, որ հաջորդականության էֆեկտները ցանկացած բազմափուլ փորձում ներքին վալիդության հիմնական սպառնալիքներից մեկն է, անկախ նրանից՝ փորձը ներանհատական է, թե խաչաձև-անհատական:

Դիրքային հավասարեցման և պատահական հաջորդականության սխեմաները բիվալենտ փորձից բազմամակարդակին անցնելիս սկզբունքորեն չեն փոխվում, բայց սովորաբար ենթադրվում է փորձը կատարողի ուժերի լրացուցիչ լարում նմուշների հաջորդականությունը կազմելիս: Այսպիսով, ներանհատական բազմամակարդակ փորձում պատահական մարտավարության փոխարեն սովորաբար կիրառվում է քվադրպատահականը. ենթադրվում է փորձնական գործոնների տարբեր մակարդակների պատահական կարգ ընդհանուր հաջորդականության առանձին հատվածում: Հաջորդականության քվադրպատահական վերահսկողությունը ներառում է ռանդոմիզացիայի խախտում, քանի որ նմուշների ընդհանուր հաջորդականությունը կազմելիս լրացուցիչ կերպով բալանսավորվում է դրանց ներկայացվածությունը հաջորդականության տարբեր մասերում: Հակառակ դեպքում պատահականորեն կարող է դրսևորվել անհամաչափություն գործոնի առավել բարձր և առավել ցածր մակարդակների բաշխման մեջ:

Ներանհատական բազմամակարդակ գծանկարներում ժամանակի գործոնի վերահսկողությունն առանձին խնդիր է դառնում, որը մասնակիորեն կարող է լուծվել խաչածև-անհատական փորձի անցնելիս: Այդ դեպքում պարզագույն տարբերակը կլինի, օրինակ, ռեվերսիոն (հետադարձ) հավասարեցման սխեման. հետազոտվողների առաջին խումբը կստանա ԱԲԳԴ պայմանը, իսկ երկրորդը՝ ԴԳԲԱ-ն, այսինքն՝ նույն հաջորդականությունը հակառակ կարգով: Եթե հոգեբանական վարկածը թույլ է տալիս ցուցանշների խմբի միջինացված վերլուծություն, ապա այդպիսի սխեմայի դեպքում հարց է բարձրանում կողմնակի փոփոխականների վերահսկողության աստիճանի մասին, մասնավորապես կախյալ փոփոխականների ցուցանիշների ֆոնային փոփոխությունների դիտարկման հնարավորությունը ժամանակի ընթացքում դառնում է գծային: Դիրքային հավասարեցումը համարժեք սխեմա է միայն փոխանցման էֆեկտների սիմետրիկության և վերջին պայմանի կատարման դեպքում:

Խաչաձև-անհատական սխեմաներին անցնելիս սահմանափակումներն առաջին հերթին պայմանավորված են բովանդակային պլանավորման խնդրի լուծմամբ: Լատինական քառակուսին կարելի է կիրառել երկու՝ և՛ ներանհատական, և՛ խաչաձև-անհատական տիպի սխեմաների համար, ինչպես և մյուս սխեմաներում. վերահսկողության այդ ձևը չի հանում փոխանցման էֆեկտները, իսկ դա նշանակում է, որ անհամասեռ կամ ասիմետրիկ էֆեկտների դեպքում տվյալների միջինացումը տեղի է ունենում ներքին վատ վալիդության դեպքում:

Եթե անկախ փոփոխականի մի մակարդակի՝ մյուսի վրա ազդեցության բոլոր ազդեցությունները համաչափ լինելն և կապված անկախ փոփոխականի մեկ նախորդ մակարդակի հետ, ապա բալանսավորված քառակուսին բազմամակարդակ փորձի համար կհամարվեր լավագույն գործոնային սխեմա: Սակայն բազմամակարդակ փորձում փորձնական նմուշները կազմում են շարք, որում տարբերվում են ոչ միայն անկախ փոփոխականների մակարդակները, բայց և անկախ փոփոխականի մակարդակին նախորդող հաջորդականությունները: Արդյունքում առաջանում են շարքի այնպիսի էֆեկտներ, ինչպիսին կենտրոնացման էֆեկտն է, երբ ամենաբարենպաստ պայմաններում են հայտնվում շարքի միջին անդամները:

Որակական անկախ փոփոխականների մակարդակները, որոնք տարբեր են փոփոխականների տարբեր խմբերում, հաճախ չեն կարող ունենալ ազդեցության մակարդակների տեսք: Օրինակ՝ խոսքը մոտիվացիայի զանազան մակարդակների կամ տարբեր տարիքների մասին է, որոնք չափվել են որպես լատենտ դիսպոզիցիաներ: Ըստ էության, նկատի են առնվում քվազիփորձնական հետազոտությունները, որոնց համար իրականացված է անհատական տարբերությունների ինչ-որ գործոնով տարբերվող խմբերի ընտրություն: Սակայն քվազիփորձը՝ որպես փորձնական գործոնների վերահսկողության սահմանափակ ձևերով փորձ,

կենթադրեր տվյալների մշակման այլ սխեմաներ: Դրանք առաջին հերթին սխեմաներ էին, որոնք ուղղված էին հիմնարար գործընթացի առանձնացմանն ուղեկցող փոփոխականների խմբից, որոնք միշտ առկա են, եթե հիմնարար փոփոխականը արտացոլում է հետազոտվողների ինտելեկտուալ կամ անձնային առանձնահատկությունները: Գործոնների փոխազդեցության վերլուծական հաշվարկը կառուցվում է որպես երկու տարբերությունների տարբերություն: Դրա հաշվարկի համար անհրաժեշտ է օգտագործել ոչ թե աղյուսակի ծայրերում տեղադրված միջինները, այլ վանդակների ներսում կախյալ փոփոխականների արժեքները: Սկզբում որոշենք, թե ում՝ մեծամասնության, թե փոքրամասնության հատորդագրություններն են ավելի շատ ազդել առաջին պայմանի վրա՝ $0.33-0.19=0.14$: Այժմ հաշվենք միևնույն էֆեկտի ազդեցությունը երկրորդ փոփոխականի երկրորդ պայմանի համար՝ $0.17-0.25=0.08$: Դրանից հետո կարելի է հաշվել այս երկու արդյունքների տարբերությունը, որն էլ թվապես կներկայացնի փորձնական գործոնների փոխազդեցության էֆեկտի մեծությունը՝ $(0.33-0.19)-(0.17-0.25)=0.22$:

Փոխազդեցության ազդեցության այդ էֆեկտը գրաֆիկական պատկերման դեպքում բավական ուժեղ է արտահայտված: Բազմամակարդակ փորձի դեպքում փորձնական էֆեկտը կարող է առավել ակնհայտ լինել գործառական կախվածության նկարագրման տեսանկյունից, որը ներկայացված է կորի տեսքով, և որը միացնում է կախյալ փոփոխականի արժեքներն անկախ փոփոխականի տարբեր մակարդակների կետերում: Եթե հետազոտողի համար կարևոր է ցույց տալ երկրորդ փոփոխականի ներմուծման ազդեցությունը, ապա գրաֆիկի վրա ներկայացված կլինեն այնքան հատվածներ կամ կորեր, որքան մակարդակներ ունեն առաջին անկախ փոփոխականը: Այդպիսով, կախյալ փոփոխականի արժեքները կոորդինատների առանցքի վրա կներկայացնեն նրա փոփոխությունները արցիսների առանցքի վրա երկրորդ անկախ

փոփոխականի արժեքներին համապատասխան առաջին փոփոխականի յուրաքանչյուր մակարդակի համար:

Մի դեպքում անկախ փոփոխականները համարժեք են, քանի որ դրանց առաջինը կամ երկրորդը լինելը վարկածի էությունը չի փոխում: Այլ դեպքերում, օրինակ, ստուգիչ անկախ փոփոխական ներմուծելիս հենց առաջին անկախ փոփոխականն է դիտարկվում որպես վարկածի հիմնական պատճառագործնական պայման:

5.5. Մոդելավորող գիտափորձը՝ որպես հետազոտության առանձին մեթոդ

Մոդելավորող գիտափորձը՝ որպես հետազոտության առանձին մեթոդ, արդիական է և հանդես է գալիս ոչ միայն հոգեբանության մեջ, այլև բնագիտական (ֆիզիոլոգիա, կենդանաբանություն և այլն) և հասարակագիտական գիտություններում (սոցիոլոգիա և այլն): Նմանատիպ գիտափորձի կիրառման հիմնական պահանջն առաջանում է այն ժամանակ, երբ հետազոտությունն անհնար է իրականացնել այս կամ այն իրավիճակում, վերարտադրել որևիցե պայմաններ կամ իրականացնել անբարենպաստ ներագրում (օրինակ՝ ավտովթար, բնական կամ տեխնոգեն աղետ, խուճապ): Մոդելավորող գիտափորձը լայն տարածում է գտել հոգեբանության բազմաթիվ բնագավառներում՝ ինժեներական, սպորտի, ռազմական, մանկավարժական հոգեբանությունում, արտակարգ և ճգնաժամային իրավիճակների հետազոտություններում:

Մոդելավորումը ուսումնասիրության մեթոդ է, որի հիմքում ընկած է ուսումնասիրվող օբյեկտի, երևույթի մոդելի կառուցումը: Մոդելը գործնական հոգեբանին հետաքրքրող երևույթի կամ օբյեկտի պատճենն է. այն նախատեսված է ուսումնասիրվող օբյեկտի գլխավոր և էական առանձնահատկությունների առանձնացման համար:

Մոդելը հետազոտության օբյեկտ է՝ նմանակող կամ պարզեցված տեսքով, և արտացոլում է միայն նրա էական (մոդելը ստեղծողի տեսանկյունից) հատկությունները: Երկրագունդը (մոդելը) Երկրի ֆիզիկական մոդելն է, իսկ աշխարհի քարտեզը՝ նրա նշանային մոդելը: Երկրագնդի (գեոիդ) ձևը կարելի է ներկայացնել մաթեմատիկական մոդելի՝ երկրագնդի ձևը նկարագրող մաթեմատիկական հավասարման տեսքով: Այն կունենա շարքի տեսք, որում առաջին անդամը տալիս է Երկրի ձևի ամենակոպիտ մոտեցումը՝ գնդի տեսքով: Շարքի երկրորդ անդամի ավելացումը ճշգրտում է Երկրի ձևը՝ ներկայացնելով այն էլիպսոիդի (ձվածրակերպի) տեսքով: Շարքի յուրաքանչյուր հաջորդող անդամի մոտեցումը էլ ավելի հստակեցում է տալիս մեր մոլորակի «իրական» ձևին:

Հոգեբանությունում մոդելներին մենք բախվում ենք արդեն այնպիսի հիմնարար հոգեկան գործընթացներ ուսումնասիրելիս, ինչպիսին ընկալումն է: Ընկալման փորձարարական հոգեբանության մեջ գոյություն ունեն դիստալ (տարածական, հեռակա) և պրոքսիմալ (մոտակա) դրդապատճառներ: Մեր կողմից ընկալվող օբյեկտն ինչ-որ կերպով ուղարկում է մեզ ֆիզիկական ազդակներ (օրինակ՝ արտացոլում-բացթողում, մղում է լուսային կամ ձայնային ալիքներ). սա հեռակա շարժառիթ է, դրդապատճառ: Օբյեկտի կողմից մեզ ուղարկվող ազդակների ամբողջությունը ձևավորում է օբյեկտի ֆիզիկական մոդելը: Այդ ազդակներն ընկնում են մեր համապատասխան եղանակավորող, ձևավորող զգայական օրգանի վրա (աչք, ականջ և այլն): Ըստ որում, զգայական օրգանի վրա ստեղծվում է ազդակի երկրորդ ֆիզիկական մոդելը, որը կոչվում է հեռակա դրդապատճառ (օրինակ՝ տափակ, շրջված եռաչափ օբյեկտի պատկերն աչքի ցանցաթաղանթի վրա տեսողական ընկալման դեպքում): Այնուհետև այդ ցանցենային պատկերը փոխակերպվում է էլեկտրական ազդակների լրակազմի նյարդային շղթաներով, որոնք պատկերի մասին տեղեկատվությունը փոխանցում են մեր ուղեղին: Ազդակների այս լրակազմը

նույնպես օբյեկտի ֆիզիկական մոդել է: Վերջապես ստացվում է այն, որ մենք տեսնում ենք «իրական» օբյեկտը: Որքանով է այդ օբյեկտն իրական, դժվար է դատել, ավելի շուտ դա օբյեկտի հերթական, արդեն սուբյեկտիվ մոդելն է: Մի շարք հետազոտություններ ցույց են տալիս, որ դա իսկապես մոդել է, որը կարող է էականորեն տարբերվել իրական օբյեկտից, այսինքն՝ հեռու լինել սկզբնական օբյեկտից:

Յու. Մ. Չարբոդինը գրում է. «Դեպքերի մեծամասնությունում մարդկանց մոտ իրական իրադրությունների ճշգրիտ իմացություն չկա, այլ կա միայն պատրանք այդ իմացության» [Забродин Ю., 1997]³¹: Այսպիսով, մեր «ամենօրյա կյանքում» մենք ոչ միայն ճանաչում ենք աշխարհը նրա մոդելների անընդհատ կառուցման միջոցով, այլև ուղղակի ապրում ենք շրջապա տող միջավայրի «սուբյեկտիվ» մոդելների աշխարհում:

Է. Յու. Արտեմևան տարբերում է մոդելային պատկերացումների 3 շերտ.

- Պերցեպտիվ (ըմբռնելի) աշխարհ – պերցեպտիվ մոդելը ընկալվող առարկաների (և հենց սուբյեկտի մարմնի) մեկը մյուսի նկատմամբ որոշակիորեն համակարգված քանակությունն է:

- «Աշխարհի նկարը» – աշխարհի օբյեկտների նկատմամբ վերաբերմունքի կառուցված, կազմավորված ամբողջությունն է, որը այդ առանձին մոդելային նշանակությունների համադրությունն է:

- Ամենախորքային շերտը «աշխարհի պատկերն է»: Այն աշխարհի ներգործության սպասման ամբողջական, համընդհանուր համակարգի մոդելն է: Սուբյեկտիվ աշխարհի իրական մոդելը պետք է արտացոլի այս շերտերի փոխներգործությունը:

Գիտական հետազոտությունում ցանկացած փորձարարական իրավիճակ ներկայացնում է իրականության մոդել, որում դրսևորվում է հետազոտվող հոգեկան երևույթը: Հետազոտության

³¹ Տե՛ս Забродин Ю. М., Очерки теории психической регуляции поведения, М., 1997:

հաջողությունը որոշվում է նրանով, թե որքանով է այդ մոդելը պահպանել օբյեկտի էական հատկությունները և անտեսել ոչ էականները:

Հետազոտության խնդրին համապատասխանող օբյեկտի մոդելի կառուցման կարողությունը հետազոտողի կամ փորձագետի պրոֆեսիոնալիզմի գլխավոր պահանջն է:

Որոշ հետազոտողներ առաջարկում են առանձնացնել փորձարարական իրավիճակի մոդելի մանիպուլյացիայի գործընթացը որպես հետազոտության հատուկ ձև՝ «մտավոր գիտափորձ»: «Մտավոր գիտափորձը» իրականությունում չկատարվող, պատկերավոր փորձն է: Երբեմն այս դասին են վերագրում նաև ապագայում պլանավորվող իրական գիտափորձի կազմակերպման և անցկացման վերաբերյալ մտածական մանիպուլյացիաները: Սակայն իրական փորձի այսպիսի նախնական «խաղարկումը», փաստորեն, նրա պարտադիր պայմանն է, որն իրագործվում է հետազոտության նախնական փուլում (խնդրի առաջադրում, վարկածի ձևակերպում, պլանավորում և այլն): Այս գիտափորձը կոչվում է նաև «ideomotor» կամ «mental»:


Մեծ հետաքրքրություն են առաջացնում մաթեմատիկական մոդելները, որոնց էվրիստիկական (հուշող հարցերով բացատրելու մեթոդ) ուժը թույլ է տալիս դուրս գալ գիտափորձի տվյալներից շրջանակներից: Մաթեմատիկական մոդելավորման առավելություններից մեկն այն է, որ միևնույն մոդելը կարող է համապատասխանաբար նկարագրել երևույթների որակապես տարբեր կողմեր՝ հոգեկան երևույթներից մինչև ֆիզիկական գործընթացներ:

Մաթեմատիկական մոդելը կառուցվածքային ձևավորում է, որը ներդրվում է որոշակի մաթեմատիկական տեսության մեջ, այսինքն՝ բաղկացած է այն նույն բնության տարրերից, ենթարկվում է այն նույն տեսություններին և ունի եզրակացության այն նույն կանոնները, որոնք կազմում են այդ տեսությունը: Լուծելով հա-

տուկ ենթադրությունների հիման վրա կառուցված դիֆերենցիալ հավասարումները՝ մենք ստանում ենք որոնելի մոդելը: Կառուցված մոդելի ճշտությունը ստուգում ենք էմպիրիկ ուսումնասիրման ճանապարհով, անցկացնում ենք հատուկ գիտափորձ կամ ստուգում ենք մոդելի համապատասխանությունն ավելի վաղ ստացված արդյունքների հետ:

Մտաշարժողական (mental) գիտափորձի տարբերակներից մեկում, որն իրականացվել է սպորտի հոգեբանության ոլորտում [Հովհաննիսյան Ս., 2004], կիրառվել է նաև կենսաբանական հետադարձ կապի (ԿՀԿ) սկզբունքը (BFB – biology feedback): Չնայած ԿՀԿ հասկացողությունը համեմատաբար նոր է, այնուհանդերձ այն հենվում է գիտահետազոտական հիմնական օրենքների վրա: Հայտնի է, որ անկաշկանդ հմտության տիրապետման համար անհրաժեշտ է մարդու գործողություններն արտացոլող հետադարձ կապ: Ընդ որում, աչքի է ընկնում այն փաստը, որ ԿՀԿ մեթոդիկայի կիրառումը սպորտում թույլ է տալիս մարզիկներին ինքնուրույն կարգավորել իրենց ֆիզիոլոգիական գործընթացները: ԿՀԿ հիմքում ընկած է մարդու անմիջական փոխներգործությունը զգացողական սարքի հետ, որը հետազոտվողին տեղեկություն է տալիս նրա կենսաբանական գործառույթների վիճակի կամ գործունեության մեջ յուրաքանչյուր որոշակի պահին դրանց դրսևորումների մասին: Հետազոտության ժամանակ ԿՀԿ հաղորդվում է տարբեր եղանակներով՝ վիզուալ կամ տեսողական և վերբալ կամ խոսքային: Գիտափորձը կազմակերպելիս հիմք է վերցվել ուրվագիծը, որում տեղեկատվությունը, որը հասնում է մարդուն կամ մարզիկին նրա կողմից կատարված գործողություններից և գործունեության արդյունքներից, կոչվում է հետադարձ կապ [Հովհաննիսյան Ս., 2004]: Մարզական, այդ թվում՝ նաև ուսումնամարզական գործունեությունը շատ դեպքերում մարզիկի համար լավագույն ձևով ներկայացված և արագ արտաքին տեսողական տեղեկատվություն չի տալիս, իսկ մարզիչի տված հրահանգները՝

«արագ», «դանդաղ», «ուժեղ», «թույլ» և այլն, որոնք քանակապես աստիճանանշված չեն, շոշափելի արդյունքի չեն հանգեցնում շարժողական հմտությունների տիրապետման կամ կատարելագործման մեջ: Այդ իսկ պատճառով հրատապ է դառնում մարզիկներին շտապ տեղեկատվության ճանապարհով տեղեկություն հաղորդելու հատուկ միջոցների մշակման խնդիրը: Հետադարձ կապը նման գիտափորձերում իրականացվում է երկու եղանակով՝ տեսողական և խոսքային (վիզուալնոնիտորից, վերբալիտազոտորից): Նկար 10-ում պատկերված է կառուցված ԿՀԿ ուրվագիծը, որը կիրառվել է հեծանվորդի մրցակցական և մարզումային գործունեությունը մոդելավորող հոգեբանական գիտափորձում:



Նկար 10. Կենսաբանական հետադարձ կապի (ԿՀԿ) ուրվագիծը


5.6. Հետազոտության հոգեֆիզիոլոգիական մեթոդներ

Հոգեբանական ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ են գրավում հոգեֆիզիոլոգիական ախտորոշման մեթոդները՝ կապված մարդու վեգետատիվ նյարդային համակարգի կարգավիճակի գնահատականի հետ:

Նշված մեթոդների օգնությամբ տարվող հետազոտություններից ստացված տեղեկությունները հնարավորություն են տալիս լիարժեք պատկերացում կազմելու գիտափորձի պայմաններում մարդու գործառական համակարգի վիճակների, ինչպես նաև հուզական վիճակի դինամիկայի ու առաջիկա գործունեությանը նրա պատրաստականության մասին:

Հոգեֆիզիոլոգիական մեթոդների համալիրն է՝ էլեկտրոէնցեֆալոգրաման (ԷԷԳ)³² [Գրիգորյան Վ., 2007], էլեկտրոմաշկային դիմադրության գրանցում (ԷԴԳ), կվազիստացիոնար պոտենցիալի գրանցում (ԿՊԳ), ռեակցիայի ժամանակը (պարզ, բարդ, շարժվող օբյեկտի նկատմամբ ռեակցիաներ), Թեպինգ թեստ (ՏԹ) և տրենոմետրիա (Տր.) [Ավանեսյան Գ., 2002]: Ի տարբերություն մնացած մեթոդների ԷԷԳ-ն հուսալի և ճշգրիտ է, բայց միաժամանակ այն պահանջում է հետազոտողի հատուկ պատրաստություն և բավականին աշխատատար է: Օրինակ՝ մարդու հոգեկան աշխատունակության օպերատիվ վերահսկման մեթոդներից է գլխուղեղի կեղևի կվազիստացիոնար պոտենցիալի գրանցումը: Կվազիստացիոնար պոտենցիալի մեծություններն արտահայտում են մարդու հոգեկան աշխատունակության վիճակը, ստացվող ցուցանիշներն ընկալելու և մշակելու նրա ընդունակությունները, որոշումներ ընդունելը որևէ գործողության կատարման գործընթացում (նկար 11):

³² Տե՛ս Վ. Հ. Գրիգորյան, նշվ. աշխ.:



Ծանոթագրություն.

- ԷԴԳ էլեկտրոնազկային դիմադրության գրանցում (ՅԿԸ):
- ԿՊԳ կվազիստացիոնար պոտենցիալի գրանցում (ԿՇԻ):
- ՏՎԼԱՀ տեսողական վերլուծիչի լուսային ազդակների հաճախականություն (ԾԿՄ):

Նկար 11. Հոգեֆիզիոլոգիական թեստավորման համակարգի օրինակ

Կվազիստացիոնար պոտենցիալի (ԿՄՊ) մակարդակի չափումները տարվում են թույլ բեռնված քլորարժաթ էլեկտրոդների օգնությամբ, որոնք միացվում են բարձրաօհմ դիմադրությամբ բիոպոտենցիալի ուժեղացուցիչին:

Ակտիվ (դրական) էլեկտրոդը դրվում է ճակատին (ճակատի կենտրոնում), պասիվը (բացասական)՝ ձեռքի ավի մեջ (թեմարի մաս): Էլեկտրոդների նման տեղադրման ժամանակ ցուցանիշների մեծությունը կարող է տատանվել 0-ից մինչև 100 մվ, իսկ ար-

տահայտված հոգնածության ժամանակ՝ 20-50 մվ սահմաններում:

Էլեկտրոդները մաշկին կարելի է ամրացնել հատուկ ամրակների օգնությամբ, ինչը թույլ չի տա էլեկտրոդների բևեռացմանը և հնարավոր կդարձնի ուսումնասիրել ԿՄՊ դիմամիկան իրական գործունեության պայմաններում:

ԿՄՊ չափումները պետք է անցկացնել այնքան ժամանակ, մինչև գրանցվի ինդիկատորի թվերի հարաբերական կայունացումը (30 վրկ):

Ստացված ցուցանիշը պետք է համապատասխանի ԿՄՊ մեծությանը չափման պահին: Վերոհիշյալ մեթոդի օգնությամբ ստացված տվյալների ի մի բերումը շատ պարզ է և հրատապ: Թվային տվյալները կարելի է վերածել գնահատման միավորների համապատասխան սանդղակի օգնությամբ:

Էլեկտրամաշկային դիմադրության գրանցման մեթոդ: Հետազոտող հոգեբանի աշխատանքում լայնորեն է կիրառվում էլեկտրամաշկային դիմադրության գրանցման մեթոդը (ԷՄԳ): ԷՄԳ-ն բնութագրում է բարձրակարգ վեգետատիվ կենտրոնների գրգռման մակարդակը: ԷՄԳ- ցուցանիշի ախտորոշման տեսանկյունից արժեքավոր արտահայտիչ է հոգեֆիզիոլոգիական վիճակի բնութագրման համար:

ԷՄԳ հետազոտումը հիմնված է մաշկային դիմադրության մեծության չափումների վրա հատուկ սանդղակի օգնությամբ: Սարքը նաև թույլ է տալիս աջ և ձախ ձեռքերի մատների սեղմումով որոշել ասիմետրիայի ցուցանիշները: ԷՄԳ- օպտիմալ մեծությունը որոշվում է անհատականորեն, ինչպես նաև կապված ինքնագնահատման ցուցանիշների և ուրիշ հոգեֆիզիոլոգիական մեծությունների հետ: ԷՄԳ- մեծությունը այդ դեպքում կարող է տատանվել 100-50 կ.Օհմի սահմաններում:

ԷՄԳ-ն ուղղակիորեն առնչվում է կատարվող աշխատանքի արդյունավետությանը, ինչպես նաև դրա բարդությանը: ԷՄԳ- ցու-


ցանիշներն իջնում են հոգեկան լարվածության մակարդակի բարձրացման դեպքում և, հակառակը, բարձրանում են հանգստի պայմաններում:

Ռեակցիայի հետազոտման մեթոդ: Մարդու հոգեկան և ֆիզիկական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է պսիխոմոտոր (հոգեշարժիչ) գործառույթներով, որոնց կառուցվածքում առանձնահատուկ տեղ է գրավում ռեակցիայի արագությունը (ՌԱԺ-ռեակցիայի արագության ժամանակ):

Ռեակցիայի արագության ժամանակը որոշելու համար հետազոտվողին առաջարկվում է լուսային ազդանշանի առկայության դեպքում որքան հնարավոր է արագ սեղմել կոճակը՝ անջատելով այն: Լուսային ազդանշանի տրման հետ մեկտեղ միանում է միկրովայրկենաչափը: Գիտափորձի մասնակիցն անջատում է այն իր պատասխան գործողությամբ: Ազդանշանի սկզբի և պատասխանի միջև ընկած ժամանակահատվածն էլ հենց ներկայացնում է ռեակցիայի ժամանակը: Փորձը կրկնվում է 10 անգամ, որից հետո վերցվում է միջին արդյունքը: Հետազոտվողի դիրքը մնում է անփոփոխ՝ աթոռին նստած, լույսի աղբյուրը նրանից պահպանվում է նույն տարածության վրա: Այսպես իրականացվում է պարզ սենսոմոտոր ռեակցիայի հետազոտումը: Բարդ ռեակցիայի ժամանակ տրվում են մի քանի լուսային ազդանշաններ (ընտրվում են երեք գույնի լուսային ազդանշաններ), որոնց միջոցով հնարավոր է պատկերացում կազմել հետազոտվողի ուշադրության կենտրոնացման, նյարդային գործընթացների ճկունության և լաբիլականության մասին:

Ռեակցիայի ժամանակի ցուցանիշները կտրուկ փոխվում են մարդու հոգեվիճակի փոփոխման հետ մեկտեղ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ գրգռված վիճակում գտնվող հետազոտվողների մոտ ռեակցիայի ժամանակի ցուցանիշների մեծությամբ կտրուկ աճում է, իսկ հանգստի վիճակում այդ ցուցանիշները մնում են առավել կայուն: Թաքնված (լատենտ) ռեակցիայի

ցուցանիշները որոշելու համար նրան առաջարկվում է լուսային ազդանշանի վառվելուց հետո հնարավորինս արագորեն սեղմել հատուկ կոճակը՝ անջատելով լույսը (նկար 12):



Նկար 12. Գիտավորձի գործընթացում ռեակցիայի չափման օրինակ

Որոշ դեպքերում ազդանիշ տալու հետ միաժամանակ (կարելի է լույսը փոխարինել ձայնով) միանում է միլիվայրկենաչափը: Հետազոտվողն այն անջատում է պատասխան գործողությամբ: Ազդանշանի և պատասխանի միջև ընկած հատվածը ռեակցիայի արագության ժամանակն է: Բարդ ռեակցիայի ուսումնասիրությունն ընդգրկում է մի շարք ազդանշաններից բաղկացած տարբերակների ընտրությունը: Օրինակ՝ սեղմել կոճակը (միացնել միկրովայրկենաչափը) կարելի է միայն կարմիր լույսի կամ երկու գույների գուգորությամբ (երկու լապտերի վառվելու դեպքում):

Դիրքորոշումը կարելի է փոխել՝ գիտափորձի նպատակներից ելնելով:

Բարդ ռեակցիայի ժամանակի ցուցանիշներով կարելի է դասել ուշադրության կենտրոնացման, նյարդային գործընթացի, շարժունակության մասին:

Տրեմորոմետրիա: Տրեմորոմետրիան վերին վերջույթների դիստալ հատվածների փոքր տատանումների (տրեմորի) գրանցման մեթոդիկան է: Տրեմորը նորմալ ֆիզիոլոգիական ռեակցիա է, որը կարգավորվում է կենտրոնական նյարդային համակարգի կողմից և անդրադառնում է շնչառության, սրտի կծկման ու մարմնի կայունության վրա:

Տարբերում են ստատիկ (կայուն) և դինամիկ (փոփոխական) տրեմոր: *Սիրարիկ տրեմորն* առաջ մեկնած ձեռքի դիստալ օղակի տատանումն է: *Դինամիկ տրեմորը* չափանկատվում է՝ ընդգծելով տարբեր կառուցվածքներ:

Տրեմորի գրանցումը կարելի է իրականացնել տատանումներ գրառող սարքավորման միջոցով (սեյսմոցուցիչ՝ միացած գրանցող սարքին): Հետազոտվողին առաջարկվում է ուղիղ կանգնել, ցուցիչը ձեռքը բռնած առաջ պարզել և պահել որոշակի ժամանակ (1 րոպե) համապատասխան ֆիզիկական բեռնվածությունից հետո (վարժություն, մարզում, աշխատանք): Սովորաբար սքրեսից կամ ֆիզիկական բեռնվածությունից տրեմորի (տատանումների) մեծությունը փոխվում է (մեծանում է տատանումների կորագիծը կամ կորության հաճախականությունը): Նշված գիտափորձը կիրառվում է ստատիկ գործունեության ձևերում: Դա հնարավորություն է տալիս դասելու տարբեր տեսակի ծանրաբեռնվածության չափավորման մասին, գնահատելու նրա ազդեցությունը մարդու հոգեֆիզիկական վիճակի վրա:

Թեսինգ քեստ (Typing test): Գործունեության տարբեր ձևերում ձեռք բերված բարձր նվաճումները պայմանավորված են մարդու՝ իր շարժողական տեմպը կարգավորելու կարողությամբ:

Արագային հատկություններն ուսումնասիրող մեթոդիկաներից է Թեպինգ թեստը, որի օգնությամբ բացահայտվում են շարժման արագության որակը ու ինքնակառավարումը, ինչպես նաև շարժման արագային դիմացկունությունը: Հետազոտվողին առաջարկվում է առավելագույն արագությամբ (10 վրկ-ի ընթացքում) հարվածել այն տարածության վրա, որտեղ տեղադրված է ցուցիչը՝ ամրացված հաշվիչին:

Թեպինգ թեստի միջոցով որոշվում է շարժողական ակտիվությունը, որն ուղղակիորեն կապված է նաև հոգեկան վիճակի դիմամիկայի հետ:

Փորձարարական հոգեբանությունում կարևոր տեղ է զբաղեցնում մարդու շարժումների արագությունը բնորոշող ցուցանիշների հետազոտությունը: Շարժողական գործողությունների արագության ցուցանիշներից մեկը գրանցվում է «Թեպինգ թեստ» մեթոդիկայի միջոցով, որոշվում է հետազոտվողի արագության և դիմացկունության աստիճանը, ինչպես նաև հուզական (էմոցիոնալ) վիճակը:

Թեպինգ թեստի ժամանակ առաջարկվում է մատիտով կամ էլեկտրոնային ձողիկով կատարել հարվածներ ամրագրված ժամանակահատվածում (10 վրկ) գծված կամ մետաղական շրջանակի վրա (10 սմ տրամագծով): Գիտավորձը բաղկացած է հետևյալ երեք փուլերից՝

1. առավելագույն հաճախականության հարվածներով որոշվում է ընդհանուր շարժողական ակտիվությունը,

2. առավելագույն հաճախականության հարվածների 1/2-ի չափով (ուժերի կեսով) որոշվում է շարժողական ակտիվության ինքնակառավարման ընդունակությունը,

3. մոբիլիզացված առավելագույն հաճախականության հարվածներ գնահատվում է կենտրոնանալու և բարձր արդյունքի ձգտելու մոտիվացիան:

5.7. Փորձագիտական գնահատականների մեթոդների կիրառումը

Փորձագիտական գնահատականների մեթոդը կանխատեսման համար գիտականորեն հիմնավորված գործիք է: Այն հիմնվում է հոգեբանական տեսակետների հետազոտման մեթոդաբանական, կազմակերպչական և մաթեմատիկական տեսական բավականին լուրջ աշխատությունների, ինչպես նաև վերջիններով պայմանավորված մեծաքանակ կանխատեսումների վրա:

Փորձաքննության անցկացման կազմակերպումը: Նախևառաջ անհրաժեշտ է ձևավորել մասնագետ-կազմակերպիչների աշխատանքային խումբ, որը պետք է ապահովի փորձագետների արդյունավետ գործունեության պայմանները, մշակի փորձաքննության ընթացակարգը: Այդ խմբի խնդիրներն են.

- ա) հիմնախնդրի առաջադրում, փորձաքննության, դրա սահմանների, հիմնական փուլերի նպատակների ու խնդիրների որոշում,
- բ) փորձաքննության ընթացակարգի մշակում,
- գ) փորձագետների ընտրություն, նրանց իրազեկության ստուգում և փորձագետների խմբի ձևավորում,
- դ) հարցման անցկացում և գնահատականների համաձայնեցում,
- ե) ստացված տեղեկությունների ձևավորում, մշակում, վերլուծում և մեկնաբանում:

Աշխատանքային խումբը պետք է կազմված լինի ոչ քիչ, քան 5-7 մասնագետներից: Հիմնախնդրի որոշումից հետո փորձաքննության կազմակերպիչները պետք է հստակ ձևակերպեն նպատակներն ու խնդիրները, որոնցից կախված է կանխատեսման հուսալիությունը: Այս ամենը պետք է հիմնվի համակարգային վերլուծության մեթոդաբանության վրա:

Փորձաքննության ընթացակարգի մշակումը: Փորձաքննության ընթացակարգի մշակումը ներառում է հարցման մեթոդների որոշում՝ անհատական կամ խմբային (կոլեկտիվ), անձնական (առերես) կամ հեռակա, բանավոր կամ գրավոր:

Փորձագետներին հասցեագրված հարցերի ձևակերպումը պետք է լինի հստակ և պարզ՝ բացառելով հնարավոր ամեն կարգի երկիմաստ մեկնաբանություն: Որպես կանոն, բոլոր հարցերը պետք է կենտրոնացված լինեն հարցարանի (անկետայի) տեսքով, յուրաքանչյուր հարց պետք է տրամաբանորեն կապված լինի փորձաքննության կենտրոնական խնդրի հետ: Հարցարանի բոլոր հարցերը, ըստ բովանդակության, նպատակահարմար է ստորաբաժանել 2 խմբի՝ տվյալներ փորձագետի մասին (տարիք, պաշտոն, աշխատանքային ստաժ, կրթություն, կոչում և այլն) և կանխատեսման հիմնախնդիրն ըստ էության ուսումնասիրող հարցեր:

Ըստ ձևի՝ հարցերը կարող են լինել բաց, փակ, կիսափակ (կիսաբաց), ուղղակի կամ անուղղակի:

Տարբերում են հարցերի 3 տեսակ, ըստ որոնց՝ տրվում է փորձագիտական գնահատական.

1. հարցեր, որոնց պատասխանները պարունակում են քանակական գնահատական,
2. հարցեր, որոնք պահանջում են բովանդակային պատասխաններ,
3. հարցեր սեղմ և ծավալուն ձևերով:

Նախքան հարցաթերթիկները փորձագետների միջև տարածելը նպատակահարմար է դրանք հետազոտել անձնական հարցազրույցի ձևով «բազմակողմանի» փորձագետների հետ (գիտնականներ, մարզիչներ և այլն): Այսպիսի ստուգումը կօգնի հարցաշարը դարձնել առավել կարճ, պարզ, հարցերի ճշգրիտ ձևակերպումներով, հաջողված կառուցվածքով և բովանդակությամբ:

Միայն հարցերի ստուգումից ու ճշգրտումից հետո կարելի է անցնել փորձագետների ընտրությանը:

Փորձագետների ընտրությունը: Փորձագետների ընտրության կարևորագույն նախապայման է նրանց կոմպետենտության աստիճանը, որը, իրազեկվածության չափանիշից բացի, ներառում է նաև նրանց հիմնական և լրացուցիչ կրթությունը, աշխատանքային փորձը, տարիքը, սեռը և ընտանեկան կարգավիճակը:

Փորձագետներին հասցեագրված հարցերի ձևակերպումը պետք է լինի հստակ և պարզ:

Անհրաժեշտ է ուսումնասիրել մասնագետների փորձագիտական որակները 4 խումբ մեթոդների օգնությամբ՝ 1. ինքնագնահատման, 2. յուրաքանչյուր մասնագետի խմբովի գնահատման, 3. փորձագետի գնահատման՝ անցյալ գործունեության արդյունքի հիման վրա, 4. փորձագետի թեկնածուի իրազեկության որոշման մեթոդներ:



1. **Ինքնագնահատման մեթոդի** էությունն այն է, որ փորձագետն իր մասնագիտական, փորձագիտական և անձնային որակներին վերաբերող, համապատասխան մշակված հարցերին տալիս է սեփական պատասխանը սանդղակային կամ տարբերակային գնահատման եղանակով:

2. **Խմբի կողմից յուրաքանչյուր մասնագետի գնահատումը** փորձագետի մտավոր, անձնային և գործնական որակների կոլեկտիվ, տարբերակող գնահատումն է:
3. **Անցյալ գործունեության արդյունքի հիման վրա փորձագետի գնահատման** ձևով որոշվում է փորձագետների հուսալիությունը, այսինքն՝ նրա կողմից առավել ճշգրիտ կանխատեսված դեպքերի թվի հարաբերակցումն իր իսկ կողմից կանխատեսվող երևույթների (իրադարձությունների) գնահատման բոլոր դեպքերի թվի հետ:

Այն դեպքերում, երբ մասնագետը մասնակցում է կոլեկտիվ փորձաքննությանը, անհրաժեշտ է նրա գործունեությունը համեմատել գործընկերների գործունեության հետ: Դրա համար կիրառվում է հարաբերական հուսալիության չափորոշիչը, որը սահմանվում է որպես տվյալ փորձագետի հուսալիության «բացարձակ» մակարդակի հարաբերություն փորձագետների որոշակի խմբի համար հաշվարկված հուսալիության միջին ցուցանիշի հետ:

4. **Փորձագետի թեկնածուի իրազեկության որոշման** կիրառումը ենթադրում է, որ փորձագետը, պատասխանելով հատուկ մշակված հարցերին, պետք է ցուցադրի իր խորագիտակությունը, վերլուծական ընդունակությունը, հնարամտությունը, մտածողության արագությունն ու ոչ սովորականությունը, ուսումնասիրվող հարցի վերաբերյալ գիտելիքների մակարդակը:

Իրականացնելով փորձագետների ընտրությունը՝ անհրաժեշտ է որոշել նրանց լավագույն քանակակազմը: Այժմ ընդունված է, որ փորձագետների խմբի լավագույն նվազագույն քանակակազմը 5-7-ն է, առավելագույնը՝ 29-ը (0.4 միջին խմբային շեղման դեպքում): Փորձագետների խմբաքանակի հարցը դեռ մնում է վիճելի:

Փորձագետների հետ աշխատանքի ձևերը: Տարբերում են աշխատանքի 2 ձև՝ *անհատական և խմբային*: Առաջինի դեպքում կանխատեսումը մշակվում է մասնագետների կողմից՝ անկախ մյուս մասնագետներից: Երկրորդի դեպքում կանխատեսումը մշակվում է կանխատեսվող առարկայի վերաբերյալ կարծիքների փոխանակմամբ (բանավոր կամ գրավոր, առկա կամ հեռակա): Անհատական ձևով աշխատանքի դեպքում կիրառվում են հիմնականում հարցազրույցի ու վերլուծական տիպի գնահատականներ, իսկ խմբայինի դեպքում՝ «ուղեղային գրոհի» մեթոդը (տեսլականների կոլեկտիվ արտաբերում), սովորական քննարկման և հարցման մեթոդները, «Դելֆյան» և «Պատտերն» մեթոդները, բազմաստիճանային (բազմամակարդակ, բազմափուլային) հարցման մեթոդը:

Հարցազրույցն իրականացվում է ազատ զրույցի ձևով փորձաքննության կազմակերպիչի ու փորձագետի միջև հատուկ մշակված ծրագրով: Այս մեթոդը պահանջում է փորձագետից հետազոտման առարկայի վերաբերյալ խորքային գիտելիք, մտածողության արագություն և ինքնատիպություն: Վերլուծական գնահատականները (ինչպես, օրինակ, զեկույցի կամ հաշվետվության գրառումներ) հիմնվում են հիմնախնդրի և երևույթի զարգացման հեռանկարների խորը, բազմակողմանի տեսական ու մեթոդապես հիմնավորված վերլուծության վրա: Այս դեպքում փորձագետը կարող է համապատասխան գիտական գրականության և պարբերական հրատարակությունների ուսումնասիրության, քննարկումներին մասնակցության, ոլորտում հայտնի գործիչների հետ զրույցների, մտորումների և իմաստավորման ճանապարհով մանրակրկտորեն նախապատրաստվել հետազոտության անցկացմանը:

Փորձագետների հետ աշխատանքի *խմբային կամ կոլեկտիվ ձևերում* առաջադրվել են դրանցից առավել մատչելիները՝ «**ուղեղային գրոհի**» (brainstorming) և «**Դելֆյան**» մեթոդները:

«Ուղեղային գրոհի» կամ «գաղափարների կոլեկտիվ արտադրման» մեթոդը ենթադրում է փորձագետների միջև կարծիքների միանգամայա փոխանակում՝ անձնական շփումներով: Առաջին հերթին պետք է ձևակերպված լինեն քննարկման համար նախատեսված մոտավոր հարցերը, երկրորդ, ընտրված լինեն բարձր որակավորմամբ և ինքնատիպ մտածող մասնագետներ տվյալ և հարակից ոլորտներից, երրորդ, տվյալ աշխատանքի իրականացման համար նախատեսված լինի բարեկամական և շահագրգիռ մթնոլորտ: Այս աշխատանքի արդյունավետությունն ամբողջովին կախված է ղեկավարի մոտավոր ու կազմակերպչական ընդունակություններից: Նպատակահարմար է, որ արտահայտված բոլոր մտքերն արձանագրվեն (ձայնագրվեն, տեսագրվեն, գրառվեն): Այս մեթոդը նպատակահարմար է կիրառել ստեղծագործական լուծումների, նոր մտքերի, նոր հայեցակետերի պակասի ճգնաժամային իրավիճակներում:

Դելֆյան տեխնիկայի կիրառումը ենթադրում է «ղեմ առ ղեմ» տեսակի շփումներից հրաժարում: Սա հարցման անցկացում է մի քանի փուլով. փորձագետները ծանոթանում են նախորդ փուլերի հարցման արդյունքներին հաջորդ ձուլերում: Այս մեթոդը բնութագրվում է հետևյալ հիմնական գծերով.

- փորձագետների անանունություն հատուկ հարցարանների կամ անհատական հարցման այլ միջոցների (օր.՝ շփումներ համակարգչի միջոցով) օգնությամբ,
- կարգավորվող հետադարձ կապ, որն իրականանում է հարցման մի քանի փուլի անցկացման ամփոփման հաշվին,
- խմբային պատասխան, որը ստացվում է վիճակագրական մեթոդներով և արտացոլում փորձաքննության մասնակիցների ընդհանրացված կարծիքը:

Դելֆյան մեթոդն ունի ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Առավելություն է անանունությունը, որը ենթադ-

րում է կանխատեսման վերաբերյալ ազատ, անկաշկանդ, առանց արտաքին ճնշումների սեփական մտքերի արտահայտում այս կամ այն ոլորտում: Առավելություն է նաև այն, որ կազմակերպիչների միջև գոյություն ունի հետադարձ կապ հարցման յուրաքանչյուր փուլից հետո, որը հնարավորություն է տալիս առավել քննադատաբար անդրադառնալու ուսումնասիրվող հիմնախնդրի շուրջ սեփական արտահայտումներին: Թերություններին կարելի է դասել փորձագետների միջև անմիջական շփումների բացակայությունը, հետազոտման տուրերին վերաբերող հարցաթերթիկներ կազմելու ժամանակատարությունը, կանխատեսման հիմնախնդրի մասին սկզբնական տեղեկատվության բացակայությունը:

Փորձաքննության անցկացման մեթոդիկան: Ողջ բազմազանության մեջ գոյություն ունեն փորձագիտական գնահատականների 4 հիմնական մեթոդներ՝

1. պարզ դասավորման (կամ նախապատվության կարգի) մեթոդ,
2. կշռային գործակիցների առաջադրման մեթոդ,
3. հաջորդական համեմատությունների մեթոդ,
4. գույգային համեմատությունների մեթոդ:

Պարզ դասավորման (կամ ըստ նախապատվության) մեթոդի էությունն այն է, որ յուրաքանչյուր փորձագետի խնդրում են աստիճանակարգել համարակալված հատկանիշները՝ ըստ նախապատվության կարգի և առաջնայնության: Այնուհետև տրվում է նոր համարակալում՝ ըստ կարևորության, որից հետո մաթեմատիկական վիճակագրության մեթոդների օգնությամբ ստանում են փորձագետների ընդհանրացված կարծիքը: Այսպիսով որոշվում է յուրաքանչյուր հատկանիշի միջին կարգը (ռանգը):

Նշված մեթոդի առավելություններն են գնահատականների ստացման ընթացակարգի հարաբերական պարզությունը և քիչ քանակի փորձագետների ներգրավման հնարավորությունը՝ հատկանիշների միևնույն հավաքածուն մյուս մեթոդներով գնա-

հատման համեմատությամբ: Թերությունն այն է, որ գնահատականների բաշխումն ակնհայտորեն համարվում է հավասարաչափ (համաչափ), և ենթադրվում է՝ հատկանիշների կարևորությունը նույնպես հավասարաչափ է, որը գործնականում խիստ հազվադեպ է լինում:

Կշռային գործակիցների առաջադրման մեթոդի էությունն այն է, որ հատկանիշներին վերագրվում է կշռային գործակիցներ, որոնք կարող են նշված լինել երկու եղանակով.

1. բոլոր հատկանիշներին նշանակում են կշռային գործակիցներ այնպես, որ գործակիցների գումարը հավասար լինի ամրագրված որևիցե թվի (օր.՝ 1-ի, 10-ի, 100-ի),

2. բոլոր հատկանիշներից առավել կարևորին տրվում է գործակից, որը հավասար է որևիցե ամրագրված թվի, իսկ մնացյալ հատկանիշներին՝ գործակիցներ, որոնք հավասար են այդ թվի մասերին:

Փորձագետների ընդհանրացված կարծիքը նույնպես ստացվում է մաթեմատիկական վիճակագրության մեթոդներով՝ յուրաքանչյուր հատկանիշի միջինացված արժեքի որոշմամբ: Որքան մեծ է այն, այնքան մեծ է նրա կարևորությունը:

Փաստացիորեն այս մեթոդը բարդ դասավորման (աստիճանավորման) կամ թույլատրելիությամբ աստիճանակարգման մեթոդ է, որը հնարավորություն չի տալիս նրա վրա տարածելու չափորոշիչների կիրառում, որոնցով կարելի է որոշել փորձագիտական գնահատականների իդեալական բաշխման համապատասխանության աստիճանը:

Հաջորդական համեմատությունների մեթոդի էությունը հետևյալն է.

1. փորձագետը դասավորում է բոլոր հատկանիշներն ըստ դրանց արժեքի նվազման կարգի,
2. առաջին հատկանիշին միավոր արժեք է վերագրում, մյուս հատկանիշներին տալիս է կշռային գործակիցներ միավորի մասերից,

3. համեմատում է առաջին հատկանիշի արժեքը հաջորդող բոլոր հատկանիշների արժեքների գումարի հետ,
4. համեմատում է առաջին հատկանիշի արժեքը հաջորդող բոլոր հատկանիշների արժեքների գումարի հետ՝ հանած ամենավերջին հատկանիշի արժեքը,
5. ընթացակարգը շարունակվում է մինչև առաջին հատկանիշի արժեքի համեմատումը երկրորդի ու երրորդի արժեքների գումարի հետ, որից հետո փորձագետն անցնում է երկրորդ հատկանիշի գնահատման ճշգրտմանը միևնույն սխեմայով:

Այս մեթոդի առավելությունն այն է, որ փորձագետը հատկանիշների գնահատման ընթացքում ինքնուրույն վերլուծում է սեփական գնահատումը: Գործակիցների նշանակմանը կից ծագում է դրանց ստեղծման ստեղծագործական գործընթաց: Մեթոդի թերություններից են բարդությունը, մեծածավալությունը, փորձագետների կարծիքների համաձայնեցվածության գնահատման վիճակագրորեն հիմնավորված միջոցների բացակայությունը:

Չույգային համեմատությունների մեթոդը նախատեսում է կանխատեսվող երևույթի բոլոր հատկանիշների միմյանց միջև համեմատում: Դրա համար լրացվում է աղյուսակ (շախմատային կամ ֆուտբոլային վանդակների տեսքով), որի վանդակներում շարվում են 1-եր (եթե տվյալ հատկանիշը գերակշռում է զույգային համեմատվողների մեջ) կամ 0-ներ (տվյալ հատկանիշի «պարտության» դեպքում): Անհրաժեշտ է նկատել, որ զույգային համեմատման դեպքում վանդակների լրացման մեթոդները շատ են: Որոշ հետազոտողներ առաջարկում են 2, 1, 0 թվերը, մյուսներն առաջարկում են վանդակներում ներգրել կշռային գործակցով առաջին հատկանիշի և երկրորդի, երրորդի... համեմատման արդյունքը:

Առավել նպատակահարմար է կիրառել 1 և 0 թվերի համակարգով գրանցումը: Նախևառաջ սա զույգային համեմատման

անցկացում է. այսպիսի համակարգը հեշտացնում է փորձագիտական տվյալների մաթվիճակագրական գործընթացը և վերջապես ուժեղացնում է փորձագետների պատասխանատվության զգացումն ու անաշատությունը:

Թվարկված բոլոր մեթոդներից վերջինս հնարավորություն է տալիս անցկացնելու փորձագետների համակարծության վերաբերյալ խիստ, վիճակագրորեն կոռ հիմնավորված վերլուծություն, բացահայտելու՝ արդյոք պատահական են ստացված գնահատականները: Ինչպես երևում է, զույգային համեմատման մեթոդի ընթացակարգն ավելի բարդ է պարզ աստիճանակարգման մեթոդից, բայց առավել հեշտ է հաջորդական համեմատման մեթոդից: Անկասկած, այս մեթոդը լայն կիրառություն ունի կանխատեսման գործունեությունում:

Փորձաքննության անցկացման վերոհիշյալ բոլոր մեթոդներով ստացված տվյալները մշակվում են մաթեմատիկական վիճակագրության տարբեր մեթոդներով: Մաթեմատիկական մշակման արդյունքները ենթարկվում են հոգեբանական վերլուծությունների և համապատասխան կիրառություն ստանում հոգեբանական կանխատեսման ոլորտում:

ԳԼՈՒԽ 6

ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ

Տվյալների գրանցման առանձնահատկությունները հոգեբանական մեթոդի սահմաններում: Հոգեբանական տվյալները կարող են դիտարկվել որպես կոնկրետ փորձարարական մեթոդների իրականացման արդյունք (դիտում, գիտափորձ, հոգեբանական սանդղակավորում, հոգեախտաբանություն): Առաջնային ցուցանիշները կարող են օգտագործվել ինչպես հոգեբանական հասկացությունների կոնկրետացման, այնպես էլ հոգեբանական հատկությունների վերաբերյալ վարկածների ստուգման համար: Փորձարարական տվյալները՝ որպես հոգեբանական մեթոդների կիրառման արդյունքներ, մի կողմից կախված են մեթոդի կառուցվածքից, մյուս կողմից՝ մեթոդիկայի տիպից:

Առաջին դեպքում խոսում են դիտարկման կորեկյացիոն կամ փորձարարական տվյալների մասին՝ նկատի ունենալով «պասիվ դիտարկողի» հետազոտության կառուցվածքային կազմակերպումը կորեկյացիոն կամ հենց փորձարարական տեսանկյունից: Հետազոտվող առարկայի հանդեպ վերաբերմունքը հետազոտման տարբեր տիպերի դեպքում ենթադրում է մաս կորձարարական տվյալների տարբեր տիպեր: Երկրորդի դեպքում խոսում են մարդու ճանաչողական ոլորտի (ուշադրության, հիշողության, երևակայության, մտածողության ուսումնասիրման մեթոդիկաները), հուզական-դրդապատճառային ոլորտի (դրդապատճառների ախտորոշման, վարքի կամային վերահսկման, հույզերի նույնականացման և այլ մեթոդիկաներ), ինքնագիտակցության (ինքնագնահատականի մեթոդիկա) կամ արժեքային կողմնորոշիչների (արժեքների ռանգավորման մեթոդիկա) վերաբերյալ ստացված տվյալների մասին:

Ընտրված ցանկացած հետազոտական վերաբերմունքի դեպքում անհրաժեշտ է տարբերակել «մեթոդ» և «մեթոդիկա» հասկա-

ցությունները՝ որպես հոգեբանական իրականության վերլուծության տարբեր մակարդակների միավորներ: Դա կարևորվում է այնքանով, որքանով գիտափորձի մեթոդը կախված է փոփոխականների գործառնությունից (իբրև ուշադրության, նպատակասլացության գործընթացների ցուցանիշների գրանցում): Փորձարարական նախագիծը կարող է ներառել դիտարկման կամ վերարտադրման արդյունավետության գնահատման մեթոդիկաներ ոչ կամաձին մտապահման ուսումնասիրման ժամանակ, միօրինականացված թեստեր կամ հոգեբանական փոփոխականների՝ որպես առաջնային ցուցանիշների գրանցման այլ միջոցներ, որոնք վերամշակման ժամանակ վերակառուցվում են համեմատման այս կամ այն նախագծերի մեջ: Փորձարարական տվյալները կրում են երկրորդային փոփոխականների բնույթ այն իմաստով, որ նրանցում փորձարարական գործոնը հատուկ գործընթացների և առաջնային տվյալների վերամշակման արդյունք է:

Տվյալների տրիպերը հետազոտական տեսանկյունից: Փորձարարական հետազոտության և հոգեբանական ուսումնասիրության ընդունված բաժանումը հնարավորություն է տալիս դիտարկելու մեթոդիկայի օգտագործման հարաբերականությունը տարբեր ենթատեքստերի տեսանկյունից, որոնց մեջ նրանք կարող են ներառվել:

Ուսումնասիրման ժամանակ հետազոտական հնարները երբեմն կարող են անվանվել «հետազոտական փորձ»: Առաջնային ցուցանիշների գրանցման մեթոդիկաները հնարավորություն են տալիս հոգեբանին իրականացնելու նախապես դրված հոգեբանական ախտորոշումը, վերահսկման գործընթացը և մարդու անձնային յուրահատկությունների ախտորոշումը:

Գիտափորձի մեթոդի կամ հոգեբանական չափման կառուցվածքային իրականացման միջոցով ստացված տվյալները նույնպես կարող են ծառայել իբրև ախտաբանական խնդիր: Այդ պատճառով խոսելով փորձարարական-բժշկական մեթոդի մա-

սին՝ ենթադրվում է ոչ թե հետազոտվողի նոգրոզիական պատկանելությունն այս կամ այն խմբին, այլ փորձի տվյալների օգտագործումը կոնկրետ մարդու մասին հոգեբանական եզրակացության համար:

Հետազոտական նպատակներով ստացված էմպիրիկ տվյալների դեպքում հիմնական ուղղվածությունը հոգեբանական օրինաչափությունների ճանաչումն է: Հետազոտման տվյալները պետք է բացահայտվեն հիպոթետիկ կամ էմպիրիկ ճանապարհով հաստատված սահմաններում:

Ցուցանիշների ոչ յուրահատկության խնդիրը հեղազոտվող խնդիրների հանդեպ:

Առաջնային ցուցանիշների գրանցումը ենթադրում է դրա հետ կապված հոգեբանական գործընթացների, երևույթների և վիճակների բովանդակային բնութագրության իմացությունը: Պարզ է, որ այդ բնութագրումները կներառվեն մեկնաբանման մախազում և կհիմնվեն այս կամ այն հոգեբանական ուղղությունների հասկացությունների վրա: Սակայն այդ ցուցանիշները կարող են լինել առաջնային տարբեր մեթոդների և տարբեր հետազոտական առարկաների ուսումնասիրման ժամանակ:

Մեթոդների բաշխումն ընդհանուրի և մասնավորի ենթադրում է, որ ինչ-որ ցուցանիշներ կարող են առավել սերտորեն կապվել հոգեբանական իրականության այս կամ այն դրսևորման կամ, այսպես կոչված, հիմնարար գործընթացների հետ: Այս իմաստով առավել համապատասխանող մեթոդներն անվանում են *հատուկ*: Օրինակ՝ Բուրդոնի թեստը [Ավանեսյան Հ., 2015] ուշադրության չափման հատուկ մեթոդիկա է: Միևնույն ժամանակ «պիկտոգրամայի» մեթոդիկան կիրառվում է վարկածների լայն շրջանակներում: Այսինքն՝ այս մեթոդիկան գործընթացների առաջնայնության տեսանկյունից որոշակիորեն գնահատում է կոնկրետ հոգեբանական որակների այս կամ այն երանգները:

Հատուկ մեթոդիկաները կարող են մտնել հետազոտական տարբեր նախագծերի մեջ: Այնպիսի ցուցանիշ, ինչպիսին է մաշկազավանային հակազդումը (ՄԳ-Հ), հոգեբանությունում կիրառվում է էականորեն տարբեր հետազոտական նախագծերում: «Գրանցված լինելով» հույզերի հոգեֆիզիոլոգիայի բնագավառում՝ այն օգտագործվել է տարբեր տիպի լարվածությունների տարբերակման համար՝ օպերացիոնալ և հուզական, մարդու կողմից չլուծվող խնդիրներին նախորդող չվերբալիզացվող, մույնիսկ հուզական մտածական խնդիրների փուլայնության ուսումնասիրման ժամանակ [Ավանեսյան Հ., 2002], այնպիսի փորձերում, որոնցում ղեկավարվում էին քաջալերման և պատժի սկզբունքի կիրառմամբ ԿՆՀ էլեկտրոնային ակտիվության փոփոխության միջոցով:

Մեթոդիկայի ոչ հատուկ լինելը կարող է հասկացվել նաև այլ կերպ՝ որպես իրականացված էմպիրիկ տվյալների որակական նկարագրում հետազոտողի հարաբերական անկախության, հիպոթետիկ կառույցների ընտրության կամ նախագծերի մեկնաբանության տեսանկյունից:

Էմպիրիկ տվյալների տիպերն ըստ նրանց օգտագործման բնույթի: Մեթոդների և մեթոդիկաների դասակարգումը՝ ըստ էմպիրիկ տվյալների օգտագործման տիպի, ունի իր պատմությունը:

Հոգեբանական մեթոդների ամենաընդունված դասակարգումը՝ ըստ էմպիրիկ տվյալների ստացման միջոցի, Քեթթելի դասակարգումն է: Վերջինս տարբերում է **L**, **T** և **Q** տվյալների տիպերը (**L**– **life record**, **T**– **testing**, **Q**– **questionnaire**): **L** տվյալները կենսագրական փաստաթղթերն են, որոնք ձեռք են բերվում ավելի վաղ հետազոտությունում կամ առաջադրվում են հետազոտվողի կողմից ակտուալ հետազոտության ընթացքում: Կարևոր չէ, թե ինչ մեթոդական միջոցներ են կիրառվել. դրանց ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանք անցյալի ապացույցներ են: Նրանց մեկնաբանության ժամանակ հոգեբանը

պետք է առաջնորդվի փաստաթղթի վերլուծության որոշակի չափանիշներով:

Արդյունքների մեկնաբանության ժամանակ ստացված **L** տվյալների հիման վրա հոգեբանը կարող է օգտվել պատմագրության որևէ հնարից. օրինակ՝ ինչո՞ւ այս կամ այն իրադարձությունն արտացոլված չէ փաստաթղթում: «Անգիտակցական մոռացումը» կամ լռելու փաստը կարող է վկայել այլ իրադարձության հատուկ կարևորության մասին: Նրանք հարցադրումը հանգեցնում են այլ վարկածների, քան տվյալ իրադարձության փաստաթղթերում բացակայությանը: **T** և **Q** տվյալները **Ռ**. Քեթթելի դասակարգումում ունեն ընդհանուր հատկություն՝ հետազոտության ակտուալ իրականացումը, այսինքն՝ հոգեբանը կարող է իրականացնել վերահսկման այս կամ այն ձևերը տվյալների ստացման և ամրագրման դեպքում: Այդ տվյալները կարող են վերստուգվել էմպիրիկ նյութի շարունակական ստացման ճանապարհով:

T տվյալների տարբերությունը, ըստ **Ռ**. Քեթթելի, այն է, որ դրանք թեստավորման արդյունքներ են: Այդ ցուցանիշները գործառվում են տարբեր մեթոդական գործընթացների միջոցով, բայց ընդհանուր առմամբ ենթադրվում են վարքային, հոգեֆիզիոլոգիական կամ այն ինդիկատորների բնութագրությունները, որոնց տատանման սահմանները կարող են չնչին փոփոխվել հետազոտվողների գիտակցական ռեֆլեքսիայի արդյունքում: Այդ տվյալները երբեմն հասկացվում են իբրև «ռեակտիվ» վարքի ձևեր:

T տվյալների մյուս առանձնահատկությունը դրանց դիֆերենցիալ հոգեբանական բնութագրությունն է: Թեստային տվյալները, ըստ **Ռ**. Քեթթելի, ենթադրում են հետազոտվողների հաջողությունների համադրումը մասն իրավիճակներում այլ մարդկանց հաջողությունների միևնույն դրդապատճառներով: Սակայն դա է հոգեբանի քննարկման չափանիշների խնդիրը հոգեախտաբանական խնդիրների լուծման ժամանակ:

Գրականություն (Գլուխ 5 և 6)

1. **Ավանեսյան Հ. Մ.**, Սպորտի կիրառական հոգեբանության մեթոդներ, Եր., «Էդիտ Պրինտ», 2002, 128 էջ:
2. **Ավանեսյան Հ. Մ.**, Հոգեբանական գիտափորձերի պրակտիկում, Ուսումնամեթոդական ուղեցույց, կազմ.՝ Հ. Մ. Ավանեսյան, Եր., 2015, 50 էջ:
3. **Գրիգորյան Վ. Հ.**, Հոգեֆիզիոլոգիա, Եր., ԵՊՀ հրատ., 2007:
4. **Հովհաննիսյան Ս. Վ.**, Մոդելավորող մարզումների համակարգի անհատականացումը հեծանվային սպորտում, Սեղմագիր մանկ. գիտ. թեկ. հայցման համար, Եր., 2004, 25 էջ:
5. **Готтсданкер Р.**, Основы психологического эксперимента, М.: «Академия», 2005, 367 с.
6. **Забродин Ю. М.**, Очерки теории психической регуляции поведения, М.: «Магистр», 1997.
7. **Myers Anne, Christine H. Hansen**, Experimental Psychology, Oakland University, USA, 7th edition, 2011, p. 148.
8. Saylor Academy Research Methods In Psychology, November 2012, pp. 113-125. <https://www.saylor.org/books/>.

ԳԼՈՒԽ 7
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՕԲՅԵԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

7.1. Տվյալների տիպերը և վերարտադրման չափանիշները

Հոգեբանական գրականությունում, տվյալների օբյեկտիվություն ասելով, հասկացվում է հետազոտության ընթացքում ստացված տվյալների վերարտադրությունն անհատական փորձի կամ միևնույն մարդու կայուն իրականության մասին: Տարբերում են տվյալների կայունությունը՝ ըստ կոնկրետ օրինաչափության ցուցադրման, կամ արտահայտվում են որոշակի տեղաշարժեր՝ ըստ ամրագրվող ցուցանիշների, բայց այդ տեղաշարժերը միշտ ունեն միևնույն ուղղությունը:

Կայուն գնահատման համատեքստում էմպիրիկ տվյալների հուսալիությունը ընկալելու համար ներմուծվում է «տվյալների հուսալիություն» հասկացությունը: Հուսալի են համարվում այն տվյալները, որոնք կրկնակի ստացման արդյունքում, միևնույն պայմաններում առաջնային մեծությունից տարբերվում են աննկատ շեղումներով: Նման դեպքում հուսալիությունը կապվում է ոչ թե տվյալների կայունության հետ, այլ գնահատման հավանական պահանջների հետ կայուն որոշումների հիման վրա: Տվյալների ոչ հուսալիությունը կարող է բազմաթիվ պատճառների հետևանք հանդիսանալ՝ ուսումնասիրվող փոփոխականների տատանումներ, չափման սխալներ, ոչ բարենպաստ գործոնների ազդեցություն:

Վերարտադրման խնդրի հետ կապվում է նաև ներսուբյեկտիվության խնդիրը, այսինքն՝ տարբեր հետազոտողների կողմից բացահայտված լինելը: Այն, որ սուբյեկտիվ իրականությունը չի կարող հասանելի լինել այլ մարդու մտահորիզոնների համար, չի նշանակում գիտելիքների ներսուբյեկտիվային բնույթից հրաժա-

րում: Հոգեբանության մեթոդական միջոցները տարբեր չափով են կախված հետազոտվողի մեկնաբանությունից այլ մարդու (հետազոտվող) սուբյեկտիվ փորձի վերաբերյալ:

«Հոգեբանական հետազոտության մեթոդաբանությունը և մեթոդիկաները» դասագրքում [Куликов Л., 1999] հոգեբանական մեթոդիկաները բաշխված են հաջողության մեթոդիկաների, դատողության մեթոդիկաների և մեկնաբանման մեթոդիկաների: Վերջինիս թվին պատկանում են այն բոլոր մեթոդիկաները, որոնցում հետազոտվողի մտքերի արտահայտումը ենթարկվում է հետագա որակական վերամշակման հոգեբանի կողմից, որի արդյունքում ստացվող տվյալները դասվում են մեկնաբանվողների դասին (պրոյեկտիվ մեթոդիկաներ): Եթե հաջողության և դատողության մեթոդիկաները հնարավորություն են տալիս խոսելու տվյալների ներսուբյեկտիվության մասին, քանզի դրանք վերարտադրվում են այլ հետազոտողի կողմից առանց ներթափանցելու դրանց որակի մեջ, ապա մեկնաբանման մեթոդիկաների համար այդ պայմանը բավարար չէ: Դրանց կիրառման ժամանակ հնարավոր է փորձագետների անհամաձայնությունն անհատական դեպքի քննարկման ժամանակ տվյալների ոչ հուսալիության և այդ տվյալների մեկնաբանման ոչ միանման նախագծերի հետևանքով: Մեկնաբանման մեթոդիկայի օրինակ են պրոյեկտիվ մեթոդիկաները, որոնց համար հոգեբանների անհամաձայնությունը կարող է կրել սկզբունքային նշանակություն, եթե փորձագետների կարծիքները միջնորդավորվում են տարբեր տեսական մոտեցումներով [Ավանեսյան Հ., 2017]:

Պետք է նշել, որ տվյալների հուսալիությունը հետազոտության վալիդության գնահատման պայման է: Այսպիսով, տվյալների հուսալիությունը կարող է սահմանվել որպես հոգեբանական իրականության ոչ կայունություն (հոգնաժողություն և այլն), իրենց սուբյեկտիվ աշխարհի միջնորդավորվածությունն այլ մարդու աշխարհով, մեթոդական չափման ընթացակարգի ոչ հուսալիություն

կամ հատուկ ներգործությունների առկայություն, որոնք չեն կարող ենթարկվել փորձարարական վերահսկման: Ենթադրվում է, որ հետազոտման մեթոդի կառուցման մշակույթը և հոգեբանական մեթոդիկայի կիրառումը ներառում է նաև բոլոր խնդիրների լուծումը, որոնք կապվում են տվյալների մանրակրկիտ ընտրության հետ, դրանց աղճատման հավանականության նվազեցումը ամրագրման կամ մեկնաբանության ժամանակ՝ հաշվի առնելով գործընթացների հետ հավանական խառնվելը:

Մանրակրկիտ ընտրությանը ներկայացվող պահանջները վեր են գտնվում դրանց վերարտադրման հասկացությունից: Հոգեբանական հետազոտություններում ախտորոշվող կախվածությունը ոչ միշտ է կրկնվող և վերարտադրվող: Այսպիսով, կարելի է պայմաններ ստեղծել խնդիրների ստեղծագործական լուծման համար, բայց չի կարելի երաշխավորել այդ ստեղծագործական որոշումը, քանզի դրանք կապված են հետազոտվողի ակտիվության հետ, և արդյունքը հաճախ չի կարելի կանխատեսել նույնիսկ նրա համար:

Հոգեբանական երևույթի յուրահատկությունն այն է, որ հաճախ պայմանավորված է հետազոտվողի կողմից առաջադրվող հանձնարարականների բացակայությամբ, ինչը, սակայն, չի ժխտում նրանց ուսումնասիրումն այս կամ այն հետազոտական մեթոդների սահմաններում:

7.2. Հետազոտական տվյալների և մեթոդների օբյեկտիվությունը

Հոգեբանական մեթոդի և կոնկրետ մեթոդիկաների կիրառման արդյունքում ստացված «տվյալների օբյեկտիվություն» հասկացությունները տարբեր են: Այլ կերպ ասած՝ հոգեբանության պատմության մեջ սուբյեկտիվ փորձի, ապրումների վրա չիմնվելը երբեմն կարող է համարվել որպես հրաժարում տվյալների

օբյեկտիվ բնույթից: Տվյալների տիպերի և օբյեկտիվության տարբերակման անհրաժեշտությունը հիմնավորվել է Բ. Մ. Տեպլովի կողմից «Օբյեկտիվության մեթոդը հոգեբանության մեջ» աշխատությունում:

Ըստ Բ. Տեպլովի՝ հոգեբանական բառարանից չպետք է դուրս հանել «հասկացա», «հիշեցի» և նման այլ արտահայտություններ՝ դրանց փոխարինելով այնպիսի գիտական տերմիններով, ինչպիսիք են «կապը փակվեց» և այլն: Գիտությանը բնորոշ է որոշակի էմպիրիկ, սուբյեկտիվ բովանդակության բացահայտումը և դրան համապատասխանող տերմինի հետագա մշակումը: Այդ պատճառով անհրաժեշտ է ոչ թե գիտական տերմինի մեջ փնտրել հոգեբանական բովանդակություն, այլ հոգեբանական տերմինում բացահայտել դրա բազմաբովանդակ իրականությունը: Դա նաև նշանակում է չվախենալ նորամուծություններից, այսինքն՝ հենց հոգեբանական կառույցների զարգացումից՝ հեռանալով էմպիրիկ տվյալներից [Корнилова, Т. В., 2016]³³: Անթույլատրելի է համարել, որ օբյեկտիվ են միայն հոգեբանական մեթոդները, որոնցում իրականացվում է օբյեկտիվ գրանցում՝ առանց հետազոտվողի տվյալների մասնակցության [Rosenthal R., 1994]:

Այսպիսով, Բ. Մ. Տեպլովը ներմուծում է օբյեկտիվության այլ չափանիշ՝ ընտրված մեթոդների համապատասխանությունը հետազոտության վարկածին և նպատակներին:

Դրանով է գնահատվում այն հոգեբանական ցուցանիշների տվյալների ներկայացուցչականությունը (ռեպրեզենտատիվությունը), որոնք լավագույնս ապահովում են հետազոտվող գործունեությունը կամ երևույթները: Սա նաև ցուցանիշների հիմնավորումն է իբրև հոգեբանական հատկանիշ՝ անկախ դրանց օբյեկտիվության մակարդակից: Հոգեբանական կարող են համարվել ոչ

³³ Տե՛ս **Корнилова, Т. В.**, Экспериментальная психология : учебник для бакалавров / Т. В. Корнилова, 3-е изд., перераб. и доп., М.: Изд-во «Юрайт», 2016, 639 с.:

միայն մարդու ներաշխարհը ներկայացնող փոփոխականները, այլև արտաքին գործոնները, որոնք օրինաչափորեն ներգործում են հոգեբանական գործընթացների վրա: Օրինակ՝ ստացած աշխատավարձը մարդու ինքնագնահատականի համար կարևոր պայման է: Այդ դեպքում այն կարող է դիտարկվել իբրև հոգեբանական փոփոխական: Այսինքն՝ եկամտի գործոնն ինքնին տնտեսական է, սակայն կարող է հանդիսանալ նաև հոգեբանական վարկածի բաղկացուցիչ մաս:

ԳԼՈՒԽ 8

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԳՆԵՐԻ ԵՎ ԷՄՊԻՐԻԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ՈՒ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պատմականորեն ձևավորված համակարգը

Ինտրոսպեկտիվ, էքստերոսպեկտիվ և հասկացման մեթոդներ: Մեթոդների այսպիսի դասակարգումը պատմականորեն բավականին հին է, սակայն չի կորցրել իր արդիականությունը:

Ինտրոսպեկտիվ մեթոդն ուսումնասիրվում է ընդհանուր հոգեբանության և հոգեբանության պատմության կողմից: Գիտակցության ալիքը, մտքի կայացումը, «ներքին իմաստը» ինքնադիտման այն առարկաներն են, որոնք պայմանավորում են ինտրոսպեկցիայի արդյունքների բովանդակությունը: Այսինքն՝ ինտրոսպեկտիվ մեթոդը, մի կողմից, ենթադրում է հոգեբանական գիտելիքների սուբյեկտիվ բովանդակություն, մյուս կողմից յուրահատուկ չէ իր առարկայով: Այդ պատճառով վունդոյան լաբորատորիայում ծնվեց փորձարարական ինտրոսպեկցիայի «կենտավորը», որտեղ գիտափորձից օգտագործվում էր ստիմուլյացիայի փոփոխումը (գույն, ձայն և այլն), իսկ ինտրոսպեկցիայից՝ էմպիրիկ տվյալների օգտագործման մեթոդը (սուբյեկտի ներքին փորձի մասին):

Ներքին դիտումը, որում օգտագործվում է ներկայիս պրագմատիկ փորձը, ունի երկու կարևոր բաղադրիչ՝ իբրև ինքնադիտման արդյունք դիտարկվող հետազոտվողի ինքնահաշվետվության վերլուծություն և սուբյեկտիվ բաղադրիչի ներդրման գնահատական ցանկացած արտաքին դիտման գործընթացում (ինտրոսպեկցիայի մեթոդ չի համարվում):

Էքստերոսպեկցիայի մեթոդն այլ մարդու կամ խմբի դիտարկումն է կամ պարզապես արտաքին դիտարկումը: Այստեղ «հետազոտվողի» և դիտողի դիրքերը տարբերվում են: «Էքստերոս-

պեկցիա» նեղացված հասկացությունը վարքի դիտարկումն է: Սակայն արտաքին դիտումը հնարավոր է նաև այն գործընթացների և վիճակների համար, որոնք վարքի բնութագրմանը որևէ առնչություն չունեն: Իրականության դիտարկման տիրույթի սահմանափակ լինելը կախված է կիրառվող հոգեբանական ռեկոնստրուկցիաների տեսական հիմնավորումներից: Այսպես, «բարձրաձայն մտածելու» մեթոդի օգտագործման ժամանակ, երբ խոսքային (վերբալ) վարքը ոչ այլ ինչ է, քան մտածողության փուլերի և մեխանիզմների արտաքին ցուցանիշների աղբյուր, հետազոտության հեղինակները մշակում են տարբեր հոգեբանական վարկածներ: Դա վերաբերում է նաև դիմախաղի (միմիկայի) դիտարկմանը հույզերի ինքնության հաստատման ժամանակ:

Հասկացման մեթոդի ընդհանրական էությունը «անմիջակամորեն ուրիշի հոգու ընկալումն է»: Հարկ է առանձնացնել այս մեթոդի բնորոշման երեք հիմնական ոլորտները: Առաջինը կապվում է հոգեբանության առարկայի կոնկրետացման հետ՝ իբրև հոգու ճանաչում: Նման դիրքին հավատարիմ հոգեբանների հավակնությունն էլ հենց այն է, որ միայն նրանք են մոտ գտնվում հոգեբանության էության հասկացմանը:

Երկրորդ դեպքում մեթոդի նման սահմանումը ենթադրում է տարբեր մեխանիզմների օգտագործումը հոգեբանական հասկացման նպատակին հասնելու համար: Եթե նախկինում այդ մեթոդը ենթադրում էր անդրադարձ ինտուիցիային, ապա այժմ ավելի հաճախ գործածում են «Էմպատիա» (սպրումակցում) հասկացությունը: Էմպատիայի և ռեզոնանսի տեսությունը ենթադրում է, որ հաճախ դիտումն իրականացնող անձի նախկին սուբյեկտիվ փորձը հետք է թողնում դիտվողի վարքային ցուցանիշների գրանցման վրա: Նախկինում խորքային հոգեբանության մեջ բացատրական ու նկարագրական մոտեցումը (կապված էբինհաուզի և Դիլտեի անունների հետ) և հասկացման (հերմենեվտիկայի) մեթոդը հանդես էին գալիս իբրև հոգեբանական ճանաչման ինքնուրույն միջոցներ: Ժամանակակից մոտեցումներում հասկացու-

մը դիտարկվում է իբրև մտածողության բաղադրիչ և հոգեբանական խորհրդատվության ու հոգեթերապիայի մասնագիտական հմտություն:

Եվ երրորդ՝ հասկացումը՝ իբրև մեթոդ, որը ենթադրում է հոգեբանի կողմից ռեֆլեքսիայի չենթարկվող հոգեբանական իրականության մեկնաբանություն. դա նշանակում է որոշակի վերաբերմունք նրա պրոֆեսիոնալիզմի մակարդակի հանդեպ: Նման տեսանկյունից կարելի է առանձնացնել խնդրի վերաբերյալ երկու գնահատող տեսակետ: Առաջինը կապվում է մասնագետի մտածողության բանական և գիտակցական սխեմաների կամ մտածողության ինտուիտիվ կարգավորման հետ: Նման դեպքում ինտուիցիան՝ իբրև հասկացման տարր, ոչ թե լուծում, այլ վեր է հանում հասկացումը պայմանավորող հոգեբանական մեխանիզմների հարցը: Ժամանակակից պատկերացումներում հոգեբանական բանականությունը ընկալվում է իբրև մարդու հմտություն՝ հիմնվելու ոչ ռեֆլեքսիվ կողմնորոշիչների վրա, ընդունելու որոշումներ անորոշության իրավիճակում, դուրս գալու մտքի և գործողությունների տրված սահմաններից: Հասկացման մեթոդի վերաբերյալ երկրորդ տեսակետը ենթադրում է հոգեբանի կողմից հոգեբանական իրականության մեկնաբանությունը: Նրա գնահատող տեսակետը կապվում է հետևյալ արտահայտության հետ. «Ես սկզբունքորեն չեմ կարող համակարծիք լինել ուրիշներին տվյալ երևույթի հարցում»: Նման դեպքում բաց է մնում հարցն այն մասին, թե իսկապես նման տեսակետ ունեցող հոգեբանները բարձրագույն ճանաչման են հասել, թե պարզապես ոչ պրոֆեսիոնալ են: Ամեն դեպքում հասկացման մեթոդը կապվում է ռեֆլեքսիայի հետ՝ իբրև հոգեբանական մեկնաբանման և դրանց հասնելու մեթոդների արդյունք [Корнилова Т. В., 2002]³⁴:


³⁴ Տե՛ս **Корнилова Т. В.**, Экспериментальная психология: Теория и методы: Учебник для вузов, М.: «Аспект Пресс», 2002, 381 с.:

8.2. Հետազոտության կազմակերպման ժամանակակից համակարգը

Մեթոդների համակարգի հետ ծանոթացումը պետք է հիմնվի այն միջոցների վրա, որոնք ներկայացնում են հոգեբանական իրականության ճանաչման առանձնահատկությունները: Օրինակ՝ դա կարող են լինել այս կամ այն մեթոդի միջոցով իրականացվող առաջադրանքների հաջորդականությունը: Այլ ճանապարհ կարող է լինել էմպիրիկ հետազոտության կառուցումը և եզրակացությունների ձևակերպումն ուղղորդող չափանիշների տարբերության ցուցադրումը:

Հոգեբանական հետազոտության կազմակերպումը կապված է նաև վարկածի յուրահատկության հետ, որի էմպիրիկ հիմնավորումը կատարվում է մասնագիտական տարբեր նախագծերի հիման վրա՝ տարբեր մեթոդների օգտագործման միջոցով:

Հետինգենում տպագրվող «Հոգեբանական հանրագիտարանը» ակադեմիական ճանապարհով իրականացնում է մեթոդների համադրում՝ ըստ հետազոտական խնդիրների: «Վարկածի ստուգում» հատուկ հատորը լուսաբանում է գիտափորձի մեթոդի բացահայտումը՝ իբրև կաուզալ վարկածի ստուգման միջոց [Hager W., Westermann R., 1983]: Ինքնուրույն մեթոդ են դիտման, հոգեբանական չափման, հոգեախտորոշման մեթոդները:



Նկար 13. Հետազոտության կազմակերպական մեթոդների գծանկարը

Ուսումնական գրականությունում տարբերում են դիտման, չափման, գիտափորձի և հոգեախտորոշման միջոցները: Հոգեախտորոշման խնդիրների լուծումը կապում են ուսումնասիրման նպատակների հետ, իսկ մնացյալ երեք հիմնական մեթոդները դիտարկվում են իբրև հետազոտման պարադիգմա: Մյուս մեթոդների՝ գրույցի և անհատական փորձի վերլուծության բացահայտումը կառուցվում է հոգեբանական հետազոտության ավելի մեծ միավորների դիտարկմամբ:

Տվյալ մոտեցումների հանդեպ կողմնորոշումը չի բացառում մեթոդների դասակարգման մյուս սկզբունքները: Տվյալ դեպքում նպատակահարմար է հետազոտական մեթոդների երկու հիմնական խմբերի տարբերակում՝ պասիվ-դիտարկող մեթոդներ՝ դի-

տում ու կորեյացիոն մոտեցում, և ակտիվ մեթոդներ՝ գիտափորձ: Դրանց ավելանում են քվազիփորձերը՝ ուղղված կառուցված վարկածների ստուգմանը, որոնք, սակայն, չեն ենթադրում վերահսկման այնպիսի խիստ չափանիշներ, ինչպիսիք կան փորձարարական նախագծերի իրականացման ժամանակ: Լոնգիտյուդային, միջնշակութային, հոգեգեներտիկ և այլ հետազոտությունների հիմքում ընկած մեթոդները պայմանականորեն կարող են վերագրվել որպես քվազիփորձարարական վերահսկման սահմանափակման չափանիշի հիման վրա [Корнилова Т. В., 2002]: Սակայն դրանք սկզբունքորեն կտարբերվեն հոգեբանական վարկածի պարունակությամբ և կառուցվածքով, քանզի նրանցում պատճառական բացատրությունները չեն կարող հիմնվել ներգործման փորձարարական վերահսկմամբ:

8.3. Հոգեբանական հետազոտության մեկնաբանության մոտեցումները

Հետազոտության արդյունքները հասկանալու, դրանցից եզրակացություններ անելու համար անհրաժեշտ է կիրառել այս կամ այն մեկնաբանության մեթոդը, որը նաև մեկնաբանության սկզբունքն է: Սկզբունքը կիրառելով՝ այն դարձնում ենք մեթոդ: Տարբերում են ժառանգական (գենետիկական), կառուցվածքային (ստրուկտուրային), գործառութային (ֆունկցիոնալ), համալիր (կոմպլեքսային), համակարգված (սիստեմային), նկարագրային մեկնաբանության սկզբունքներ: Այս սկզբունքները չեն բացառում միմյանց, այլ մեկնաբանության ժամանակ միմյանց համալրում են:

1. Ժառանգական մեկնաբանությունը հետազոտության այնպիսի միջոց է, որը վերլուծում և բացատրում է երևույթները, այդ թվում՝ նաև հոգեկան երևույթների զարգացումն օնտոլոգիական և ֆիլոգենետիկական տեսանկյունից: Գենետիկական մեթոդի կիրառումն ունի հետևյալ հիմնական պահանջները՝

- երևույթի առաջացման նախնական պայմանները,
- գլխավոր փուլերի բացահայտումը,
- զարգացման հիմնական միտումների գրանցումը:

Գենետիկական մեթոդի նպատակն է ուսումնասիրվող երևույթների փոփոխության բացահայտումը ժամանակի առումով և ստորինից դեպի վերին աստիճանների անցման դիտարկումը: Գենետիկական մեթոդը լայն կիրառություն ունի հոգեբանության տարբեր բնագավառներում և հատկապես տարիքային զարգացման հոգեբանության մեջ:

2. Կառուցվածքային մոտեցումը ենթադրում է երևույթների կառուցվածքի նկարագրություն և բացահայտում դրանց ակտուալ կարգավիճակում:

3. Ֆունկցիոնալ մոտեցման նպատակն է օբյեկտների կամ երևույթների գործառույթների ուսումնասիրումը և բացահայտումը: Գործառույթը օբյեկտի հատկությունների դրսևորումն է հարաբերությունների որոշակի համակարգում: Իսկ հատկությունը օբյեկտի որակի այնպիսի դրսևորումն է, որն առաջանում է այլ օբյեկտների հետ հարաբերակցության գործընթացում: Գործառույթը օբյեկտի և միջավայրի հարաբերակցության իրականացումն է, ինչպես նաև այդ երկուսի միմյանց համապատասխանությունը: Ֆունկցիոնալ մոտեցումն ուսումնասիրում է հետազոտվող օբյեկտը և նրա կապվածությունը միջավայրի հետ: Ֆունկցիոնալ մոտեցման օրինակ է բիհևիորիզմը: Այն հիմնականում դրսևորվում է վարքային դրսևորումների մեկնաբանության ժամանակ:

4. Համալիր մոտեցումը հետազոտման օբյեկտը դիտարկում է բազմաթիվ բաղադրիչների համադրության տեսքով, որը պետք է ուսումնասիրել տարբեր մեթոդների համալիրի միջոցով: Բնորոշ է Անանկի տեսությանը, որը համակարգային մոտեցման տեսանկյունից մարդուն դիտարկում է որպես կենսաբանական տեսակ (homo sapiens), որպես գիտակցության և ճանաչողության ակտիվ էլեմենտ, հարաբերությունների սուբյեկտ և, ի վերջո, բոլոր հատկությունների կրող յուրահատուկ անհատականություն:

5. Համակարգային մոտեցումը հոգեբանության մեթոդաբանական ուղղություն է, որն իրականության ուսումնասիրության գործընթացում նրա յուրաքանչյուր բաղադրիչ դիտարկում է որպես առանձին համակարգ: Համակարգային հետազոտությունները հիմնվում և իրականացվում են համակարգային վերլուծության ու համադրության հիման վրա: Վերլուծության դեպքում համակարգն առանձնացվում է միջավայրից, որի ժամանակ բացահայտվում են նրա բովանդակությունը, կառուցվածքը, գործառույթները և այն գործոնների համակարգը, որի միջոցով օբյեկտը փոխկապված է միջավայրի հետ: Համադրության գործընթացում կազմվում է իրական համակարգի մոդել, ուժեղացվում է ընդհանրացումների մակարդակը, կիրառվում է համակարգի նկարագրման արստրակցիան, որոշվում են զարգացման օրինաչափությունները: Համակարգային մեթոդը օբյեկտների համակարգված նկարագրության միջոց է, որը ներառում է բացատրական ու կանխատեսման գործառույթներ: Համակարգային մոտեցումը ներառում է բոլոր վերը նշվածները, կառուցում է դրանց դասավորվածությունը և համալրվածությունը:

6. Նկարագրային մոտեցումը փիլիսոփայական նշանակություն ունի և կիրառվում է հումանիտար գիտություններում, դիտարկվում է որպես սոցիալական կացության պայման, այս կամ այն երևույթների նկարագրման և մեկնաբանման միջոց: Կրում է հետևյալ կողմերը՝ սեմանտիկ, ռեֆլեքսիվ-ինքնաճանաչման և էքզիստենցիալ: Լայն տարածում է գտել հոգեվերլուծության մեջ որպես վերլուծական տեխնիկա: Այն ունի հետևյալ նշանակությունը՝

1. մեկնաբանության արվեստ,
2. իմաստի հասկացության մոտեցում կամ իմաստի նվաճում,
3. ուրիշի անհատականության ճանաչում,
4. հումանիտար գիտությունների սկզբունքների մասին ուսմունք:

8.3.1. Այլընտրանքային մեկնաբանությունները գիտափորձում

Հետազոտությունում առաջադրված վարկածի ապացուցման գործընթացում հոգեբան-հետազոտողը պարտավոր է իրազեկված լինել այլընտրանքային մեկնաբանությունների առկայության մասին: Նշված մոտեցումների քանակը մշտապես տատանվում է և ուղղակիորեն անդրադառնում նախնական վարկածի հավաստիության աստիճանի վրա: Չկանխատեսված փոփոխականների, հատկապես դրանց մի քանի տեսակի «ներխուժումը» գիտափորձի պայմաններ անդրադառնում է մասնակիցների վարքի վրա, դրանով իսկ խաթարում է արդյունքների կանոնավոր մեկնաբանությունը: Նման իրավիճակում կասկածելի են դառնում փորձարարական հետազոտության արդյունքում ստացված վերջնական եզրակացությունները: Փորձարարական հոգեբանությունում առանձնացվում են չնախատեսված փոփոխականների ամենահաճախ հանդիպող երկու խմբեր: Առաջինը Ռոզենտալն անվանել է «սպասման էֆեկտ», իսկ երկրորդը, որը նկարագրել է Ռոբերթսը, անվանվել է «պլացերո էֆեկտ»: «Սպասման էֆեկտը» գրանցվում է այն դեպքում, երբ փորձարարն աննկատ ուղղորդում կամ արհեստականորեն հրահրում է մասնակիցներին դեպի որոշակի վարք, ինչն էլ իր հերթին առաջացնում է հետազոտության համար ցանկալի հակազդում: Նկարագրված դեպքում դրված հակազդումն առաջանում է հետազոտողի ազդեցությամբ, այլ ոչ թե փոփոխականների ներգործության ներքո (պատճառով):

«Պլացերո էֆեկտի» առաջացման պատճառներն այլ բնույթի են: Երբ հետազոտության մասնակիցների վարքը փոփոխվում է ոչ թե փորձարարական մանիպուլյացիաների ազդեցությամբ, այլ մասնակիցների պատկերացումների, դիրքորոշումների ու անձնային այլ դրսևորումների դեպքում կարող է դիտարկվել որպես «Պլացերո էֆեկտ»: Այս հասկացությունը լայն կիրառություն

ունի բժշկագիտությունում, երբ հիվանդի առողջությունը բարելավում է բուժական ազդեցություն չունեցող դեղորայքի ընդունման ժամանակ: «Պլացերո էֆեկտի» դրսևորումը պայմանավորված է հոգեբանական գործոններով, քանի որ առողջացման ֆունկցիոնալ տեղաշարժերի հիմքում ընկած է այցելուի հավատը դեպի դեղորայքի բուժական ազդեցությունը: Նմանատիպ ազդեցությունը կարող է կրել նաև բացասական բնույթ, օրինակ՝ հետազոտության մասնակիցների թերահավատությունը հոգեբանական թեստերի նկատմամբ: Հետազոտության կազմակերպման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ գոյություն ունի պլացերոէֆեկտի բացահայտման միջոց, որի ժամանակ հետազոտությունում ներառվում են հատուկ փորձարարական այնպիսի պայմաններ, որոնք մասնակիցների նկատմամբ չեն կիրառում իրական ներագրում, որը միևնույն ժամանակ ենթադրվում է հետազոտողի կողմից: Նմանատիպ հետազոտությունները կոչվում են պլացերո-գիտափորձ:

Նշված երկու էֆեկտների իմացությունն էլ կարևոր է, քանի որ դրանք շատ հաճախ են հանդիպում, և գիտափորձի ժամանակ պետք է հնարավորինս բացառել նման անցանկալի ազդեցությունները:

Գրականություն (Գլուխ 7 և 8)

1. **Ավանեսյան Հ. Մ.**, Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 256 էջ:
2. **Корнилова Т. В.**, К 67 Экспериментальная психология: Теория и методы: Учебник для вузов, М.: «Аспект Пресс», 2002, 381 с.

3. **Корнилова Т. В.**, Экспериментальная психология : учебник для бакалавров / Т. В. Корнилова, 3-е изд., М.: Изд-во «Юрайт», 2016, 639 с.
4. **Куликов Л. В.**, Методология и методы психологического исследования, СПб.: ЛГОУ, 1999.
5. **Hager W., Westermann R.**, Planung und Auswertung von Experimenten. 2. Kapitel // Enzyklopdie der Psychologie. Bd. 5. Hypothesenprfung, Gettingen, 1983.
6. **Rosenthal R.** (1994)., Science and Ethics in conducting, analyzing, and reporting psychological research. Psychological Science, №5, pp.127-133.

ԳԼՈՒԽ 9

ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԳԻՏԱՓՈՐՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Հոգեբանական գիտափորձի կազմակերպման ընդհանուր դրույթներ: Հոգեբանության մեջ բացարձակապես բոլոր պահանջներին համապատասխանելու համար «անբասիր գիտափորձը» պետք է լինի «իդեալական կամ կատարյալ», «անվերջ, անսահման», «լիարժեք համապատասխանող» [Готтеданкер Р., 1984]:

1. Իդեալական գիտափորձում փոխվում է միայն անկախ փոփոխականը, իսկ բոլոր մյուս գործոնները մնում են անփոփոխ: Հետևաբար հետազոտվում է հենց կախյալ և անկախ փոփոխականների հարաբերությունը (օրինակ՝ բոլոր ազդակները առաջադրվում են միաժամանակ և միևնույն տարածության մեջ):

Քննարկենք հրուշակեղենի դեզուստացիայի (համի միջոցով որակը որոշելու) գիտափորձի իրավիճակը: Գիտափորձի նպատակն է պարզել, թե ստուգման համար ներկայացված շաքից, օրինակ, կոնֆետի որ տեսակն է ավելի լավը: Այդ դեպքում համեմատելու համար կիրառում ենք հոգեչափման սանդղակներ: Անկախ փոփոխականն այս դեպքում դեզուստացիայի ենթարկվող կոնֆետի համն է: Բավարարելու համար «իդեալական գիտափորձի» չափորոշիչը անհրաժեշտ է ձերբազատվել բոլոր գործոնների ազդեցությունից՝ բացի անկախ փոփոխականից, այսինքն՝ կոնֆետի համից: Այդպիսի գործոններ կարող են լինել ետնահամը, հուշող գործոնները՝ հիշողությունն անցյալ ազդակի՝ կոնֆետի և ավելի վաղ համտեսված կոնֆետների մասին, ինչպես նաև մեր պատկերացումները կազմող դիրքորոշումները, թե ինչպիսին պետք է լինի «արտակարգ կոնֆետի» համը և այլն: Նմանատիպ ազդակներից ձերբազատվելու միակ միջոցը բոլոր կոնֆետները միաժամանակ համտեսելն է:

Այսպիսով, «խղեալական» գիտափորձի պահանջները բավարարելու ձգտումը, նույնիսկ այսպիսի դյուրին փորձարարական իրավիճակում, ինչպիսին «դեգուստացիան» է, մեզ բերում է արսուրդի:

2. Անվերջ գիտափորձ: Պարզելու համար ոչ ռելևանտ ազդակների, բոլոր կողմնակի ազդեցությունների բոլոր հնարավոր դեպքերը և ձևերը, որոնք կարող են աղավաղել անկախ փոփոխականի գործողությունը, մենք պետք է շարունակենք մեր գիտափորձը՝ անսահման և՛ ժամանակի առումով, և՛ փորձերի քանակով: Եթե մենք կանգ առնենք, մեզ իսկույն կառնարկեն. «Իսկ ի՞նչ կլինեն, եթե դուք շարունակեիք»: Հնարավոր է՝ հաջորդ փորձում կամ հաջորդ բույսին ինչ-որ բան կպատահի, ի հայտ կգա ավելի վաղ ինչ-որ անհայտ և կխանգարի գիտափորձի իղեալականությունը: Եվ նրանք իրավացի կլինեն: Հետևաբար «խղեալականության» չափորոշիչը բավարարելու համար մենք, սկսելով փորձարարական հետազոտությունը, իրավունք չունենք կանգ առնելու, պարտավոր ենք շարունակել այն մեր ամբողջ կյանքում և կտակենք մեր ժառանգներին: Այսինքն՝ կրկին գալիս ենք արսուրդի:

3. Լիարժեք համապատասխանության գիտափորձ: Փորձարարական հետազոտության նպատակը ամենից առաջ ընդհանրացման հնարավորության մեջ է, այսինքն՝ ստացված արդյունքների հիման վրա արված եզրակացությունները պետք է հավատարիմ մնան փորձարարական իրավիճակի սահմաններից դուրս: Լիարժեք համապատասխանության գիտափորձը ոչ միայն ուղղակի բնական (դաշտային) գիտափորձ է. այդ գիտափորձում փորձարարական իրավիճակը (էկոլոգիան) ամբողջությամբ համընկնում է իրականության էկոլոգիայի հետ: Այսպիսով, լիարժեք համապատասխանության գիտափորձի արդյունքները իմաստ ունեն միայն այն իրական իրավիճակի համար, որում ստացվել են: Սակայն ամբողջությամբ միանման իրավիճակներ իրականության մեջ չեն լինում, դեռ ավելին, ցանկացած իրադրություն ժա-

մանակի հետ փոխվում է, հետևաբար լիարժեք համապատասխանության գիտափորձի արդյունքները չունեն ո՛չ նշանակություն, ո՛չ իմաստ: Մենք կրկին հանգում ենք արսուրդի:

Այսպիսով, մենք համոզվեցինք, որ բավարարել գիտական խստության և ճշգրտության պահանջները և անցկացնել անբասիր գիտափորձ սկզբունքորեն ոչ միայն հնարավոր չէ (արսուրդ է), այլև ոչ մի գործնական նշանակություն չունի: Այնուամենայնիվ, «անբասիր գիտափորձի» մոդելն իր բոլոր «իրականության», «անվերջության» և «լրիվ համապատասխանության» պահանջներով խիստ օգտակար է: Այն ներկայացնում է այն իդեալը, որը հասանելի չէ, բայց որին մենք պարտավոր ենք ձգտել: Մեր կողմից մշակվող գիտափորձերը պետք է հնարավորինս ավելի համապատասխանեն այս մոդելի պահանջներին: Որքան մոտ է իրական գիտափորձը «անբասիրին», այնքան ավելի վստահություն են ներշնչում նրանում ստացված տվյալները, այնքան այն լավն է: Ցանկացած փորձարարական հետազոտություն կազմակերպելիս և անցկացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել այս չափորոշիչով:

Բազմաթիվ գրական աղբյուրների վերլուծությունից պարզ է դառնում, որ հոգեբանական հետազոտության կազմակերպման ժամանակ նպատակահարմար է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով և մոտեցումներով.

- համապատասխանության սկզբունքը, որը նախատեսում է ստացված արդյունքների կիրառումը հետազոտվողների անձնային աճի համար, հետևաբար նրանց տեղեկացումը ընդհանրացված ձևով և ստացված տվյալների քննարկումը նրանց հետ,
- համալիրության սկզբունքը, որը պահանջում է մեթոդների ողջ համախմբի տվյալների համադրում (գործառութային լրացչության սկզբունք),

- հետազոտության նպատակների, խնդիրների և փուլերի, հետազոտվողների քանակի, նրանց տարիքի և կրթության մասնագիտացման ռեկլամտության սկզբունքը,
- առաջադրված խնդիրների իրականացման համար օգտագործել գիտական մեթոդների համալիր,
- տեսական (տեսական-մեթոդաբանական վերլուծություն, գիտական տվյալների ընդհանրացում և մեկնաբանում) մեթոդ,
- փորձարարական (բնական և լաբորատոր գիտափորձեր) մեթոդ, որն իրականացվում է հոգեբանամանկավարժական թրեյնինգի միջոցով, դիտումների մեթոդ, այլ թվում՝ ներառված, հարցաթերթիկների կազմում, հարցումների բազմազան տարբերակներ՝ գրույցներ, բաց և միօրինակացված հարցաթերթիկներ, զույգերով աստիճանավորման մեթոդ), պրոյեկտիվ նկարչական թեստ:

Վերը նշված սկզբունքների անտեսման դեպքում իրականացված հետազոտության արդյունքները կարող են աղավաղվել և նույնիսկ դառնալ զավեշտալի օրինակ:

Դիտարկենք օրինակ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի իրականացրած «Ինչ-պիսի՞ն է Ձեր կարծիքն այլ երկրներում սննդի պակասի վերաբերյալ» համաշխարհային հարցումը հնարավոր չէր ամփոփել հետևյալ պատճառներով.

- եվրոպական երկրներում չեն հասկացել՝ ինչ է սննդի պակասը,
- Հարավային Ամերիկայում չեն հասկացել՝ ինչ ասել է այլ երկրներ,
- Աֆրիկայի բնակչությունը չի հասկացել՝ ինչ է սնունդը,
- Ասիական երկրներում չեն հասկացել, ինչ է նշանակում անձնական կարծիք:

Այստեղից բխում են նաև հոգեախտորոշիչ թեստերին ներկայացվող պահանջները: Որպես ճշգրիտ հոգեախտորոշիչ մեթոդ-

ներ՝ թեստերին ներկայացվում են մի շարք յուրահատուկ պահանջներ: Դիտարկենք հարցման տվյալ օրինակի թերություններն ըստ ընդունված չափանիշների.

1. թեստի սոցիալ-մշակութային տեղայնացումը – հաշվի չեն առնվել ազգային ավանդույթների և երկրի աշխարհագրական առանձնահատկությունները,

2. թեստային առաջադրանքների միարժեքությունը և ձևակերպումների պարզությունը – ձևակերպումները չեն համապատասխանում բնակչության արժեհամակարգին և կենսակերպի առանձնահատկություններին,

3. տվյալ թեստի համար թեստային չափանիշների (նորմերի) առկայությունը – հարցումը չի նախատեսել ազգային նորմերի հաշվառումը և չի ունեցել նախնական (պիլոտաժ) հետազոտություն:

Բերված օրինակում առկա են զավեշտալի տարրեր, որոնք միաժամանակ ուսուցողական են:

9.1. Հասկացություն հետազոտության հիմնահարցի, առարկայի և օբյեկտի մասին

Հոգեբանության մեթոդաբանության համապատասխան բաժիններում գիտական գործունեության վերլուծության համար ներդրված և մշակված են մի շարք հատուկ հասկացություններ:

Գիտական հիմնահարցը կամ պրոբլեմը դժվարությունների կամ հակասությունների լուծման անհնարության գիտակցումն է, որն առաջանում է այս կամ այն իրավիճակում առկա գիտելիքների և փորձի միջոցով: Հիմնահարցի, ինչպես նաև խնդրի ակունքները գտնվում են խնդրահարույց իրավիճակում: Այն երևան է գալիս նոր փաստերի՝ առկա պատկերացումների սահմանումներում բացատրություն տալու անհնար լինելու պատճառով և սովորաբար ձևակերպվում է հարցի կամ ենթադրության տեսքով: Հիմնա-

կանում այն վերաբերում է տարբեր երևույթների պատճառների և այնպիսի գործոնների, որոնք պայմանավորում են այս կամ այն երևույթի գոյությունը կամ յուրահատկությունը: **Խնդրահարույց իրադրությունը** կարևոր նշանակություն ունի գիտական տեսլականի ձևավորման գործընթացում, որի առաջացումը պայմանավորված է բազմաթիվ գործոններով և դրանց բարենպաստ համադրությամբ: Հետազոտման տեսանկյունից հետաքրքիր և նշանակալից տեսլականն ուղղակիորեն կախված է անհատական գիտելիքներից ու փորձից, ընդունակություններից և ուսումնասիրման հնարավորություններից:

Վերոհիշյալ հասկացությունների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում նաև «ճանաչողական իրադրությունը»: **Ճանաչողական իրադրության** հիմնահարցը ներառում է ճանաչման դժվարությունը (գիտության մեջ ձևավորված հիմնախնդրի և առկա միջոցների միջև տարանջատումը), հետազոտության առարկան, ներկայացվող պահանջները, ինչպես նաև գիտական հետազոտության կազմակերպման և իրականացման միջոցները:


Այստեղ գործածված «հետազոտության առարկա» հասկացությունը ենթադրում է դրա տարանջատումը հետազոտության օբյեկտ հասկացությունից:

Հետազոտության առարկան մեթոդաբանական վերլուծության առանցքային կատեգորիաներից մեկն է: Գիտության ծնունդը և զարգացումը կապված են գիտության առարկայի ձևավորման ու փոփոխման հետ: Հետազոտության առարկայի կտրուկ փոփոխությունը հանգեցնում է հեղափոխության հենց գիտության մեջ: Հետազոտության առարկան ներառում է ուսումնասիրման օբյեկտը, հետազոտական խնդիրը, մեթոդաբանական միջոցների համակարգը և դրանց օգտագործման հաջորդականությունը:

Առավել պարզեցված մեթոդաբանության ներքո հետազոտության առարկան դիտվում է որպես օբյեկտի կողմ կամ տեսակետ, որն անմիջականորեն առանձնացվում է նրանում հիմնախնդրի

պրիզմայի միջոցով: Հետազոտության առարկաները կարող են լինել ընդհանրության տարբեր աստիճանների: Առավել ծավալուն է տվյալ գիտության առարկան (ընդհանուր առմամբ), որը մասնավոր հետազոտության առարկայի հանդեպ ունի մեթոդաբանական գործառույթ:

«Հետազոտության օբյեկտ» հասկացությունը ևս պահանջում է պարզաբանում. դա պարզապես արտաքին իրականության որոշակի մասը չէ, որը կարելի է ուղղակի ցույց տալ:



Հետազոտության առարկայի և օբյեկտի ընդհանրությունը բարդ գործընթաց է:

Հետազոտության օբյեկտն անմիջականորեն դիտարկվող իրականության այն հատվածն է, որի համար բացահայտված են կայուն և անհրաժեշտ կապեր նրա առանձին բաղադրիչների միջև, որոնք ամրագրված են գիտական վերացարկման համակարգում: Օբյեկտի կառուցման համար անհրաժեշտ է նաև դրա բովանդակությունը տարանջատել այդ բովանդակության արտացոլման ձևից՝ անկախ ճանաչող սուբյեկտից: Գիտական հետազոտության օբյեկտի կառուցման գործընթացն անհնար է առանց որոշակի ճանաչողական խնդրի՝ գիտական հիմնահարցի առաջացման:

Հետազոտության միջոցները գիտության հիմնարար հասկացություններն են, որոնց միջոցով տարանջատվում է հետազոտության օբյեկտը, և ձևավորվում են հիմնախնդիրը, օբյեկտի ուսումնասիրման սկզբունքներն ու մեթոդները, էմպիրիկ տվյալների ստացման միջոցները, ներառյալ տեխնիկական միջոցները:

Միևնույն օբյեկտը կարող է ընդգրկվել մի քանի տարբեր հետազոտությունների և նույնիսկ տարբեր գիտությունների առարկաների մեջ: Լիովին տարբեր առարկաներ են կազմվում մարդու ուսումնասիրման ժամանակ այնպիսի գիտություններում, ինչպիսիք են մարդաբանությունը, սոցիոլոգիան, հոգեբանությունը, ֆիզիոլոգիան, էրգոնոմիկան: Այդ իսկ պատճառով «հետազոտության առարկա» հասկացությանը հակադրվում է ոչ թե օբյեկտը, այլ **էմպիրիկ հատվածը**՝ գիտական փաստերի և նկարագրությունների համակցությունը, որոնց վրա ծավալվում է հետազոտության առարկան:

Ելնելով գիտական գիտելիքի տվյալ գատումից՝ կարելի է առանձնացնել հետազոտական շարժման հաջորդական փուլերը, որոնք բացվում են նորմատիվ-մեթոդաբանական վերլուծության պրիզմայի միջոցով: Որպես այդպիսի փուլեր առանձնացվում են՝ հիմնախնդրի սահմանումը, հետազոտության առարկայի կառուցումը և հիմնավորումը, տեսության կառուցումն ու ստացված արդյունքների ստուգումը: Հարկ է նշել, որ հիմնախնդրի սահմանումը հիմնվում է ոչ միայն առկա գիտելիքի անլիարժեքության բացահայտման վրա, այլև տվյալ բացը լրացնելու միջոցի մասին որոշակի «նախափնացության» վրա: Այստեղ առաջատար դեր է խաղում հենց քննադատական ռեֆլեքսիան, որը հանգեցնում է գիտելիքի համակարգում բացթողումների կամ նրա ոչ ցայտուն նախադրյալների սխալության/անճշտության բացահայտմանը: Հիմնախնդրի ձևակերպման աշխատանքն ինքը կրում է սկզբունքայնորեն մեթոդաբանական բնույթ՝ անկախ այն բանից, թե հետազոտողը գիտակցաբար է հիմնվում այս կամ այն մեթոդաբանա-

կան դրույթների վրա, կամ դրանք որոշում են նրա մտքի ընթացքը ոչ բացահայտ ձևով:

Հետազոտության առարկայի սահմանման և հիմնավորման աշխատանքը ևս առավելապես մեթոդաբանական է, որի ժամանակ կատարվում է հիմնախնդրի պարզաբանում, դրա ընդգրկում գոյություն ունեցող գիտելիքի համակարգ: Հենց այստեղ էլ տեղի է ունենում մեթոդաբանության ձուլումը ճանաչողական գործընթացի բովանդակային կողմի հետ: Մեթոդաբանությունն այս փուլում կատարում է ավելի շուտ կառուցողական, քան քննադատական գործառույթ՝ շտկելով հետազոտողի աշխատանքը: Հետազոտության առարկայի սահմանման/կառուցման փուլում են առավել հաճախ ներմուծվում նոր հասկացություններ, տվյալների վերանշակման մեթոդներ և առաջադրված խնդրի լուծման համար անհրաժեշտ այլ միջոցներ:

Մասնավոր գիտական տեսության առաջխաղացման և ստացված արդյունքների ստուգման փուլերում հիմնական իմաստային բեռն ընկնում է առարկայական բովանդակության մեջ շարժման վրա: Այստեղից երևում է, որ միայն մեթոդաբանության օգնությամբ չի կարելի լուծել ոչ մի մասնավոր գիտական խնդիր, և չի կարելի կառուցել ոչ մի մասնավոր հատվածի/բնագավառի առարկայական բովանդակությունը: Մեթոդաբանական մտքի նվաճումների հաջող օգտագործման համար անհրաժեշտ է «վերևից ներքև» և «ներքևից վերև» ստեղծագործական շարժման համակցությունը:

Մեթոդաբանությունը կառուցվում և հարստանում է ոչ թե մտատեսողական գծապատկերների կառուցման հաշվին, այլ աճում է այն նվաճումների ընդհանրացումից, որոնք ձեռք են բերվել առարկայական բովանդակությունում շարժման հաշվին իրականության այս կամ այն հատվածի/բնագավառի վերլուծության ժամանակ:

Մեթոդաբանական սկզբունքի ցանկացած հաջող իրականացումը կոնկրետ գիտական հետազոտությունում ոչ միայն ներդրում է տվյալ գիտության, այլև մեթոդաբանության մեջ, քանի որ այդ իրականացումը չի մնում առանց հետևանքների այն գիտելիքի համար, որը վերցվել էր որպես հետազոտության մեթոդի նախադրյալ: Վերջիններս ոչ միայն հաստատվում, այլև լրացվում են ամեն անգամ, երբ սկսում են նոր կյանք՝ վերափոխվելով ևս մեկ առարկայական ոլորտի նյութում:

9.2. Գիտական վարկածը փորձարարական հետազոտություններում

Փորձարարական հետազոտություններում կարևորագույն տարրեր են վարկածի առաջադրումն ու ստուգումը: Վարկածը դրույթ է, ենթադրություն, որի ճիշտ կամ սխալ լինելն անհայտ է, բայց կարելի է ստուգել փորձարարական ճանապարհով:

Գիտական վարկածը պետք է բավարարի ժխտման (ֆալսիֆիկացիայի) և հաստատման (վերիֆիկացիայի) սկզբունքներին: Այսինքն, եթե չի հաստատվում գիտական վարկածը, ապա հաստատվում է հակավարկածը (կոնտրիպոթեզը), որը վարկածի հակադիր բովանդակությունն ունի: Հակավարկածը, այսպես ասած, փորձարարական հետազոտության «պարտությունն է», բայց այդ պարտությունը ևս կարող է նպաստել գիտելիքների ավելացմանը:

Այն դեպքում, երբ վարկածը չի ժխտվել, այնուամենայնիվ, չի կարող համարվել վերջնականորեն «ապացուցված» և բաց է մնում հետագա ստուգման համար այլ մեթոդական միջոցների և վերաձևակերպումների միջոցով:

Ըստ բովանդակության՝ վարկածները լինում են.

1. վարկած՝ որևէ երևույթի առկայության վերաբերյալ (օրինակ՝ արդյո՞ք գոյություն ունի էքստրասենսոր ընկալման երևույթը, թե ոչ),

2. վարկած՝ երևույթների միջև կապի առկայության մասին (օրինակ՝ արդյո՞ք կապ կա ինտելեկտի մակարդակի և ստեղծարարության միջև),

3. վարկած՝ երևույթների միջև պատճառային կապի առկայության վերաբերյալ (օրինակ՝ ծնողական դեպրիվացիայի հետևանքով արդյո՞ք երեխաների մոտ ձևավորվում է ագրեսիվության բարձր մակարդակ):

Վարկածի տեսակից է կախված, թե հետազոտությունն ինչ մեթոդով կիրականացվի: Օրինակ՝ պատճառահետևանքային բնույթ կրող վարկածները ստուգվում են միայն գիտավորձի միջոցով: Որևէ երևույթի առկայության մասին վարկածը կարող է ստուգվել դիտման մեթոդով:

Գիտության մեջ տարբերում են տեսական և փորձարարական վարկածներ: Տեսական վարկածներն առաջ են քաշվում տեսության մեջ ներքին հակասությունները վերացնելու համար կամ տեսության ու փորձարարական արդյունքների տարբերությունները հաղթահարելու նպատակով, և տեսական գիտելիքները կատարելագործող «գործիքներ են»:

Փորձարարական վարկածները պարտադիր կերպով չեն հիմնվում տեսության վրա: Փորձարարական վարկածը կապ ունի էմպիրիկ ճանապարհով նկատվող օրինաչափությունների հետ:


Առանձնացնում են մաս վիճակագրական վարկածներ, երբ հետազոտողը ընդունում է ստացված արդյունքները որպես նշանակալի ու ճշգրիտ և պատրաստ է գնահատել սխալների հավանականությունը: Այս դեպքում հավանականությունը բաշխվում է որոշակի «տարածքի» վրա: Ընդ որում, որքան ավելի շատ է փորձերի քանակը, և մեծ է ընտրանքը, այնքան ավելի բարձր կլինի ճշգրտության մակարդակը:

Գուրտարանկերը առանձնացնում է փորձարարական վարկածների հետևյալ տեսակները.

- հակավարկածը փորձարարական վարկած է, որն այլընտրանքային է հիմնական ենթադրության նկատմամբ և առաջանում է ինքնաբերաբար,
- երրորդ՝ մրցակցող փորձարարական վարկած, որը փորձարարական վարկած է կախյալ փոփոխականի վրա անկախ փոփոխականի ազդեցության բացակայության վերաբերյալ, ստուգվում է միայն լաբորատոր գիտափորձում,
- ճշգրիտ փորձարարական վարկած, որը ենթադրություն է լաբորատոր գիտափորձում միակ անկախ փոփոխականի և կախյալ փոփոխականի միջև կապի մասին: Ստուգումը պահանջում է առանձնացնել անկախ փոփոխականը և «մաքրել» նրա պայմանները,
- փորձարարական վարկած առավելագույն կամ նվազագույն (մաքսիմալ կամ մինիմալ) մեծության վերաբերյալ, ենթադրություն այն մասին, թե անկախ փոփոխականի որ մակարդակի դեպքում է կախյալը ձեռք բերում առավելագույն կամ նվազագույն նշանակություն,
- փորձարարական վարկած՝ բացարձակ կամ համաչափ հարաբերությունների մասին, որը ճշգրիտ ենթադրություն է անկախ փոփոխականի աստիճանական (քանակական) փոփոխմանը զուգընթաց կախյալ փոփոխականի աստիճանական փոփոխման բնույթի մասին,
- փորձարարական վարկած՝ մեկ փոխկապակցվածության վերաբերյալ, որը ենթադրություն է մեկ անկախ և մեկ կախյալ փոփոխականների միջև կապի մասին: Փորձարարական վարկածը ստուգելու համար կարող է կիրառվել նաև գործոնային գիտափորձ, բայց երկրորդ անկախ փոփոխականն այդ դեպքում վերահսկիչ է,

- համակցված (կոմբինացված) փորձարարական վարկած, որը ենթադրություն է, մի կողմից, երկու (կամ մի քանի) անկախ փոփոխականների, մյուս կողմից՝ կախյալ փոփոխականի միջև որոշակի կապի մասին: Ստուգվում է միայն ֆակտորային գիտափորձում:

Այսպիսով՝ վարկածներ առաջադրելու և ստուգելու գործընթացը կարելի է համարել հետազոտողի հիմնական և առավել ստեղծագործական փուլ: Հաստատված է, որ վարկածների քանակը և որակը որոշվում են հետազոտողի կրեատիվությամբ:




Նկար 15. Փորձարարական վարկածի բովանդակությունը

Այս գծանկարը ցույց է տալիս, թե ինչպես է փորձարարական հետազոտությունում ստուգվում դիտումների հիման վրա առաջադրված վարկածը, և ինչպես են ստացված եզրակացություններն ամրագրվում տեսական դրույթներով: Այստեղ տեսությունը դիտարկվում է նեղ իմաստով, այսինքն՝ որպես որոշակի պնդումներ, որոնք վերաբերում են փոփոխականների ենթադրվող աբստրակտ կապերի առկայությանը:

9.3. Գիտական վարկածի հիմնական բնութագրերը

Վարկածը հետազոտողի ենթադրությունն է այն մասին, թե ինչ լուծում է ունենալու խնդիրը: Ըստ հիմնավորման ձևի՝ տարբերում են ինդուկտիվ և դեդուկտիվ վարկածներ:



Նկար 16. Գիտական վարկածի բնութագրերի գծանկարը

Ինդուկտիվ գիտական վարկածներ. ունեն հիմնականում էմպիրիկ հիմնավորում: Ծնվում են առանձին փաստերի դիտարկումից: Փաստն ընդունվում է որպես այդպիսին, եթե հնարավոր է մեկնաբանել որևէ տեսության շրջանակներում:

Դեդուկտիվ³⁵ գիտական վարկածներ. ձևակերպվում են փաստերի կամ տեսական դրույթների միջև արդեն հայտնի հարաբե-

* Ինդուկցիա – եզրակացության տրամաբանական գործընթաց, որը կայացվում է եզակի կամ մասնավոր դեպքերից դեպի ընդհանուրը:

րությունների հիման վրա: Հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդի հիմնական գործիքն են: Ըստ նախադրությունների տիպի՝ հիպոթետիկ դեդուկտիվ դատողությունները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝

1. դատողություններ, որոնց նախադրությունները վարկածներն են և էմպիրիկ ընդհանրացումները,

2. դատողություններ, որոնց եզրակացությունները հիմնված են այնպիսի նախադրությունների վրա, որոնք հակասում են կա՛մ հստակ հաստատված փաստերին, կա՛մ տեսական սկզբունքներին,


3. դատողություններ, որոնց դրույթները ընդունված մեթոդներին և համոզմունքներին հակասող պնդումներ են:

Հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդի օգնությամբ վարկածներ չեն առաջադրվում, ստուգվում են միայն դրանցից բխող հետևանքները, որոնց օգնությամբ վերահսկվում է հետազոտության գործընթացը:


«**Լավ**» **վարկածը** պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

- համարժեքություն խնդրին (հարցին),
- ճշմարտությանը, այսինքն՝ անհակասականություն գիտական տվյալներին, թեև նրանում կարող են լինել նոր գիտելիքի տարրեր,
- ստուգելիությանը:

Դեդուկցիա – եզրակացության տրամաբանական գործընթաց, որը կայացվում է ընդհանուրից դեպի մասնավորը:



Նկար 17. Փորձարարական վարկածների տեսակները



Նկար 18. Ինդուլցիայի և դեդուլցիայի դերը տեսության և փորձարարական հետազոտության փոխկապվածությունում

ԳԼՈՒԽ 10

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՈՃԵՐԸ

Հոգեբանական մտածողության ոճերն ու տարատեսակներն ընդունված է դասակարգել հոգեբանական տեսությունների գիտականության չափանիշներին համապատասխան: Գոյություն ունեն հոգեբանական մտածողության հետևյալ երեք տարատեսակները՝ գործնական, էմպիրիկ և տեսական: Նշված ստորաբաժանման հիմքում ընկած են հետևյալ երեք չափանիշները՝

ա) մտածողության գործընթացում օգտագործվող հասկացությունների կազմավորման միջոցները,

բ) կիրառվող առարկաները,

գ) խնդիրները, որոնց հիմնականում ուղղված են մարդու մտածողությունը և հետաքրքրությունները:

Առանձնացված մտածողության տարատեսակները կոնկրետ մարդու մոտ կարող են ներկայացված լինել չգիտակցված դիրքորոշումով, ինչպես նաև դրսևորվել և գիտակցվել հստակության տարբեր աստիճանով: Վերջինս գիտնականի սեփական հայեցակարգի սուբյեկտիվ չափանիշ է: Անթույլատրելի է հոգեբաններին բաժանել՝ նրանց տալով «գործնական», «էմպիրիկ» և «տեսաբան» միանշանակ բնութագրումները, քանի որ մասնագիտական գործունեության ընթացքում յուրաքանչյուր հոգեբան միաժամանակ կամ հերթականությամբ զբաղեցնում է վերոհիշյալ դիրքերը:

Հնարավոր է նաև այնպիսի տարբերակ, երբ մտածողության որևիցե տարատեսակ սկսում է գերակշռել՝ բնորոշելով տվյալ հոգեբանի մտածողության և մասնագիտական գործունեության ուղղվածությունը: Հոգեբանական մտածողության որևէ տեսակի գերակայության դեպքում դրան բնորոշ բոլոր առանձնահատկությունները տարածվում են մարդու և նրա գործունեության ողջ ոլորտի վրա: Այս դեպքում «պրակտիկ հոգեբան» կարելի է ան-

վանել այն մարդուն, որին բնորոշ է հետևյալը. նա հիմնվում է մարդու որակների և հարաբերությունների ու վիճակների վերաբերյալ պատկերացումների վրա, որոնք ստացվել են անհատական փորձի, թերապևտիկ, խորհրդատվական կամ ուսումնական աշխատանքի արդյունքում:

Մտածողության այս տեսակին բնորոշ է նաև այն, որ ուղղված է կոնկրետ մարդու հոգեբանական խնդիրներին, որոնք էլ դառնում են ուսումնասիրման առարկա: Պրակտիկի հոգեբանի խնդիրները հիմնականում ենթադրում են հոգեթերապիայի, խորհրդատվության կամ ուսուցման ընթացքում օգնել մարդուն լուծել իր անձնական, աշխատանքային կամ ուսուցման ոլորտում գոյություն ունեցող խնդիրները, փոխել նրա դիրքորոշումներն ու վիճակները, անձնային որակներն ու հարաբերությունները, մարդկանց հետ շփման միջոցները և այլն:

Էմպիրիկ և տեսական մտածողության ոճերն ունեն իրենցից յուրաքանչյուրի համար հատուկ, բնութագրական ընդհանրացման և առանձնացման ձևեր: Էմպիրիկ ընդհանրացումը հետևողականորեն ուսումնասիրում է տարբեր օբյեկտների անհատական հատկությունները և որոշում է, թե ինչով են այդ առարկաները տարբերվում միմյանցից [Казанцева. И., 1959]: Այդ հատկությունների համեմատման շնորհիվ ձևավորվում են միանգամայն նույնական, արտաքնապես նման ընդհանուր հատկանիշներ, որոնց շնորհիվ առարկաները վերագրվում են որոշակի ֆորմալ դասակարգերին՝ անկախ նրանից, թե դրանք կապ ունեն իրար հետ, թե ոչ: Այս ձևով դրսևորվող ընդհանրացման արդյունքն էմպիրիկ գիտելիքն է, որը արտացոլում է միայն օբյեկտների և երևույթների արտաքին հատկությունները՝ լիովին հիմնված տեսողական ներկայացումների վրա [Давыдов В., 2004]³⁶: Մտածողությունը, որն իրականացվում է նման ընդհանրացումների և արստ-

³⁶ Ст'ю Давыдов В.В., Проблемы развивающего обучения. 2-е изд., М.: «Педагогика», 2004:

րակցիաների միջոցով, հանգեցնում է էմպիրիկ հասկացությունների ձևավորմանը [Константинов В., 2005]³⁷:

Մտածողության էմպիրիկ տիպին բնորոշ է մտածողության առարկայի կամային կամ ակնառու հատկանիշներն առանձնացնելը, որն էլ հիմք է «տարրունակություն» հասկացության (ըստ Ռ. Առնհեյմի), «կոմպլեքսների կամ սինկրետների» (ըստ Լ. Ս. Վիգոտսկու) կամ «էմպիրիկ» հասկացությունների (ըստ Վ. Վ. Դավիդովի) առաջացման համար: Այսպիսի հասկացություններն իրենց բովանդակության մեջ պարունակում են տրամաբանորեն չկազմակերպված և անհամակարգ հատկանիշների խումբ: Էմպիրիկ կերպով ձևավորված հասկացության օրինակ է «աշխարհի պատկեր» բառակապակցությունը:

Հոգեբանի էմպիրիկ մտածողության առարկան ուղղված է անկետավորման, թեստավորման և սանդղակավորման միջոցով արդյունքների ստացմանն ու իմաստավորմանը: Մտածողության այս տեսակը հարաբերակցվում է նաև ինքնադիտման, մարդկանց խմբերի կարծիքների և տրամադրությունների, նրանց մասնագիտական ու անձնային որակների և այլ մարդկանց հետ ունեցած փոխհարաբերությունների ուսումնասիրման հետ: Հոգեբանի էմպիրիկ մտածողությունը կարող է արտահայտվել նաև նրանում, որ լուծելով ուսումնասիրվող փաստերի և գյուծի խնդիրները՝ այն սահմանափակվում է միայն դրանց էմպիրիկ (ֆակտորային, կորելյացիոն) մոդելների կառուցմամբ: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ մտածողության էմպիրիկ տեսակը ժխտում է որոշակի ընդհանրացված տեսական սկզբունքների և օրենքների միջոցով ուսումնասիրվող օրինաչափությունների բացատրումը:

Տեսական մտածողության առանձնահատկությունն այն է, որ այն կանգ չի առնում օբյեկտիվ իրականության օբյեկտների և երևույթների արտաքին նմանության կամ տարբերության վրա,

³⁷ Տե՛ս **Константинов В. В.**, Основы общей психологии, Уч. метод. пособие, Пенза, 2005, 75 с.:

այլ ուսումնասիրում է իրենց բնույթը, ուսումնասիրում է դրանց փոփոխությունները և կապերը՝ որպես լայն փոխգործակցության պահեր: Նման մտածողության ոճը պարունակում է օբյեկտիվորեն փոխկապակցված երևույթներ, որոնք ներկայացնում են անբաժանելի համակարգ: Տեսական մտածողության հիմնական նպատակն է բացատրել համակարգի ծագումը, այսինքն՝ ինչու և ինչպես առաջացան դրա առանձնահատկություններն ու բնութագրերը [Давыдов В., 1986]: Նման մտածողության գործընթացում տեսական հայեցակարգը միավորում է ոչ թե տարբեր անհամապատասխան տարրեր, այլ համամարդկային և անհատական օբյեկտիվ կապեր: Տեսական մտածողության դեպքում փորձարարական տվյալների մանրամասն վերլուծության հիման վրա մարդը գալիս է ներքին աղբյուրների, գաղափարների ու ուսումնասիրված երևույթների փոփոխությանը: Այս մտածելակերպը սկզբնապես շեղվում է ուսումնասիրվող առարկայի մասնավոր արտաքին հատկանիշներից՝ ընդգծելով և հաշվի առնելով միայն հիմնական, առաջատար ներքին հարաբերությունները և կապերը [Константинов В., 2005]³⁸:

Մտածողության տեսական տիպին բնորոշ է մտածողության առարկաների որակների և հարաբերությունների համակարգերի առանձնացումը: Հոգեբանության մեջ տեսական հասկացության օրինակ է «գործունեություն» բառի նշանակությունը, որը բացատրվում է որպես «սուբյեկտի և օբյեկտի միջև ակտիվ ու նպատակատուղված փոխազդեցություն» կամ որպես «սուբյեկտի կյանքի միավոր»: Վերը նշված սահմանումներն արտահայտում են գործունեության առավել ընդհանրացված և էական հատկությունները: Սակայն կարելի է առանձնացնել մաս գործունեությանը բնորոշ առավել մասնավոր այնպիսի հատկություններ, ինչպիսիք են «առարկայականությունը», «սուբյեկտիվությունը» և այլն:

³⁸ Տե՛ս **Константинов В. В.**, Основы общей психологии, Уч. метод. пособие. Пенза, 2005, 75 с.:

Տեսական մտածողության ուսումնասիրման առարկաներ կարող են լինել տարբեր հոգեկան կառույցների առաջացման ու զարգացման մեխանիզմները, սկզբունքներն ու օրենքները, ինչպես նաև այն տեսական հասկացությունների բովանդակությունն ու կառուցվածքը, որոնց օգնությամբ իրականացվում է մտածողության այս տիպը: Տեսաբանի դերում կամ դիրքում գտնվող հոգեբանի խնդիրները կարող են լինել տեսական հասկացությունների միջոցով հոգեկան գործընթացների տիպաբանության և մարդու հարաբերությունների ու հատկությունների կառուցումը, տարբեր հոգեկան կառույցների ձևավորման և զարգացման տեսությունների մշակումը, հոգեբան-տեսաբանի աշխատանքի տեսական հիմքերի բացահայտումը և այլն:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հոգեբանական մտածողության տեսական, էմպիրիկ, պրակտիկ տեսակները մարդկային մտածողության առավել մասնավոր և ընդհանուր տեսակներն են: Դրանք բոլորն էլ կարող են բնորոշ լինել կոնկրետ մարդուն, սակայն իրավիճակի առանձնահատկություններից կախված՝ դրանցից որևէ մեկը կարող է գերակայել մյուսների նկատմամբ: Անհրաժեշտ է նշել նաև, որ մտածողության վերոնշյալ դասակարգումն առավել մանրամասն վերլուծված և նկարագրված է Վ. Վ. Դավիդովի, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ռ. Առնհեյմի և ուրիշների կողմից:

10.1. Հոգեբանական մտածողության ոճերը

Առանձնացնում են հոգեբանական մտածողության հետևյալ ոճերը՝

1. դոգմատիկ (անառարկելի),
2. սկեպտիկ (թերահավատ, կասկածային),
3. մետաֆորիկ (փոխաբերական, այլաբանական),
4. կառուցվածքաբանադատական:

Մտածողության դոգմատիկ ոճով ստեղծված պատկերացումները հիմնավորված են ոչ թե բանականությամբ, այլ հավատով: Ինչպես նշում է Գ. Գ. Շպետը [Шпет Г., 1989], «դոգմիկն իր կարծիքներն ընդունում է որպես կատարյալ ճշմարտություն և կարողանում է կատարելության հասցնել անկատարյալը»: Դոգմատիզմը չի ընդունում նաև գեներտիկ բացատրություններ, քանի որ դրանք պահանջում են տրամաբանական և փաստացի հիմնավորում: Մտածողության դոգմատիկ ոճը խանգարում է ստեղծագործական մտածողության դրսևորմանը, ստեղծում է սկեպտիցիզմ»:

Սկեպտիցիզմի էության և մտածողության սկեպտիկ ոճի խորը վերլուծությունը տրված է Գ. Գ. Շպետի «Սկեպտիկը և նրա հոգին» աշխատության մեջ, որտեղ հեղինակը նշում է հետևյալը. «Սկեպտիցիզմի հիմնական սկզբունքն այն է, որ ցանկացած դրույթի դեմ կարող է առաջադրվել մեկ այլ, դրան հավասարագոր դրույթ»: Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ սկեպսիսը նույնը չէ, ինչ որ կասկածը: Կասկածը սուբյեկտիվ ապրում է, վստահության շատ ցածր աստիճան: Այն կարող է վերաբերել միայն մի շարք դատողությունների: Սկեպսիսն իր սկզբունքները տարածում է բոլոր դատողությունների վրա: Սկեպտիցիզմի ալոզիզմը բխում է նրանից, որ մտածողությունը միայն ձևավորում և համակարգում է ճանաչման նյութը: Սա է պատճառը, որ ըստ սկեպտիցիզմի՝ մտածողությունը խանգարում է ճանաչմանը և ենթակա է «հաղթահարման»: Այսպիսով, պարզ է դառնում, որ սկեպտիցիզմի, ինչպես նաև դոգմատիզմի մեջ ընդունվում է երկու իրականությունների գաղափարը, որոնցից մեկը տեսանելի իրականությունն է, մյուսը՝ մարդու ներսում, հոգում գոյություն ունեցող իրականությունը, այսինքն՝ երկրորդ իրականությունը մարդու ներքին զգացողություններն են:

Մտածողության մետաֆորիկ ոճը հիմնված է ազատ զուգորությունների վրա, որոնք հիմնավորվում են հիմնականում ակնա-

ուու պատկերներով և դրանց միջև գոյություն ունեցող հարաբերությունների ինտուիտիվ պատկերացումներով:

Մտածողության կառուցվածքաքննադատական ոճն օժտված է գիտականության առավել բարձր աստիճանով: Մտածողության կառուցվածքայնությունը ենթադրում է տեսական գաղափարների առաջադրման և ընկալման համար այնպիսի միջոցների օգտագործում, ինչպիսին է մարդու գիտակցությունը: Մտածողության քննադատականությունը ներառում է մարդու ռեֆլեքսիվ վերաբերմունք մտածողության գործընթացների և արդյունքների վերաբերյալ: Ինչքան բարդ է ուսումնասիրման առարկան, այնքան դժվար է դրա նկատմամբ ձևավորել և կիրառել մտածողության կառուցվածքաքննադատական ոճը: Վերջինս անհրաժեշտ է այդ առարկայի գիտական տեսության կառուցման և զարգացման համար: Մտածողության այս ոճը չի ընդունում վերլուծական և սինթետիկ դատողություններ, այլ պահանջում է ապացույցներ: Եթե արևը լուսավորում է քարը, և քարը տաքանում է, ապա սա դեռ չի նշանակում, որ այս երկու երևույթների միջև գոյություն ունի պատճառահետևանքային կապ:



Քաժակները...

- դատա՞րկ են,
- լի՞ քն են,
- հավասա՞ր են,
- կիսա՞տ են.

հարաբերական է:

Մտածողության փարբեր ոճերի դրսևորում՝ դոզմապիկ, սկեպտիկ, մեպաֆորիկ, կառուցվածքաքննադատական, կառուցողական:

10.2. Գիտական մտավախությունների տեսակները

Բազմամյա մանկավարժական փորձը վկայում է այն մասին, որ ուսանողներն ու երիտասարդ գիտնականները, նախապատրաստվելով գիտահետազոտական աշխատանքին, հաճախ դրսևորում են անհիմն «համարձակություն» կամ գտնվում են խուճապի, անորոշության մեջ:

Նշված ապրումները, ըստ Գ. Մարտինի, պայմանակորեն կոչվեցին գիտական ֆոբիաներ (հուն. phobos – վախ) կամ մտավախություններ, որոնք առաջանում են գիտահետազոտական աշխատանքի նախնական փուլում կամ բուն գործընթացում:

Հոգեբանական գիտափորձի առանձնահատկությունների անբավարար իմացությունը հաճախ կարող է առաջացնել անիրատեսական մտավախություններ, որոնք դժվարեցնում են հետազոտական գաղափարի առաջադրումը: Գ. Մարտինն առաջարկում է այդպիսի բնույթի մտավախություններն անվանել հոգեբանական տերմինով՝ ֆոբիաներ: Նշված ֆոբիաների դասակարգման իմացությունը կօգնի երիտասարդ գիտնականներին և ուսանողներին ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք նախաձեռնելու և իրականացնելու ժամանակ:


Մեր դիտումները ցույց են տվել, որ մման հոգեվիճակներ կարող են առաջանալ հետևյալ դեպքերում՝

- հետազոտական թեման, հիմնահարցը (պրոբլեմը) և մեթոդներն ընտրելիս,
- հետազոտության արդիականությունը և գիտական նորույթը որոշելու ժամանակ,
- հետազոտության արդյունքները դասակարգելու և վերլուծելու ժամանակ,
- հետազոտությունը ամփոփելիս և եզրակացությունները կազմելիս:


Գիտական մտավախությունների առաջացման հիմնական պատճառներն են տեսական պատրաստվածության անհամապատասխան աստիճանը, գիտահետազոտական փորձի պակասը, փորձարարական հոգեբանության հետազոտական դրույթների և կանոնների ոչ լիարժեք իմացությունը:

Դ. Մարտինը տարբերակում է հետևյալ գիտական ֆորբիաները կամ մտավախությունները [Мартин Д., 2002] (նկարները բերված են՝ հասկացությունն ավելի պատկերավոր դարձնելու նպատակով).

1. Հանճարավախ (genius, гениофобия), երբ թվում է, թե գիտական հետազոտությունը միայն հանճարների մենաշնորհն է:



2. Նմանակելու վախ (imitatio, имитациофобия), որը նորը, առաջադեմը բացահայտելու և կրկնօրինակելու մտավախությունն է:



3. Սարքավորումներից օգտվելու վախ (parafen, парафенолофобия), որը այնպիսի հետազոտություններ նախաձեռ-

նելու մտավախությունն է, որոնք պահանջում են էլեկտրոնային սարքավորումների կիրառում:




4. Չեռքի աշխատանքից վախ (manual, мануалофобия), որը գիտավորձում պարզ միջոցներ (մեխանիկական սարքեր, գրենական պիտույքներ, խաղալիքներ և օժանդակ այլ միջոցներ) օգտագործելու մտավախությունն է:



5. Տնտեսվարության/պարզության վախ (oikonomos, экономофобия), որը գիտավորձի անհիմն տնտեսվարում է, երբ թվում է, թե գիտությունը պահանջում է բարդ և ծախսատար հետազոտություններ:



6. Վիճակագրական հաշվարկների վախ (calculator, калькулятофобия), որը մաթեմատիկական, վիճակագրական բանաձևերի կիրառման վախն է:



7. Անկատարության վախ (imperfectum, имперфектофобия), որը կատարյալ, հիմնարար կամ օբյեկտիվ հետազոտության իրականացման վախն է:



8. Կեղծ գիտականության վախ (pseudosnonphonescien, псевдононфоносциентфобия), որը գիտական հայեցակարգերի, հասկացությունների կամ գիտության այլ չավանդիչներին չհամապատասխանելու վախն է:



9. Վախ աշխատանքից (ergon, эргофобия), որը ցանկացած նոր աշխատանք սկսելու, նախաձեռնելու վախն է: Այս դեպքում սկսելն անհիմաստ է:



Սկսի՛ր հետազոտությունը և ձգտի՛ր աշխատել հիմնավորված ու համարձակ, նախաձեռնող և հեռատես:

Գրականություն (Գլուխ 9 և 10)

1. **Готтсданкер Р.**, Основы психологического эксперимента: Учеб. пособие. Пер. с англ., М.: Изд-во Моск. ун-та, 1982, 464 с.
2. **Давыдов В. В.**, Виды обобщений в обучении (логико-психологические проблемы построения учебных предметов), М.: «Педагогика», 1972, 424 с.
3. Дидактика / Пер. с нем. // Под ред. **И. Н. Казанцева**, М.: Изд-во АПН РСФСР, 1959, 287 с.
4. **Константинов В. В.**, Основы общей психологии: мышление, память, внимание: Учебно-методическое пособие. Пенза: ПГПУ им. В. Г. Белинского, 2005, 75 с.
5. **Мартин Д.**, Психологические эксперименты, секреты механизмов психики / Д. Мартин, СПб.: Прайм-ЕВРОЗНАК, 2002, 480 с.
6. **Шпет Г. Г.**, Герменевтика и ее проблемы//Контекст. Литературно-теоретические исследования, М., 1989, 93 с.

ԳԼՈՒԽ 11

ՄԵԹՈԳՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

Այս բաժինը մեկնաբանելուց առաջ անդրադառնանք մեթոդների տեսրոլիդ համակարգի կիրառման առանձնահատկությունների: Հետազոտության մեթոդի և մեթոդիկաների ընտրությունից առաջ նպատակի ընտրության և վարկածի ձևակերպման համար հիմնվում ենք տեսությունից բխող մեթոդաբանության վրա (U_1), այնուհետև, ավելացնելով էմպիրիկական բաղադրիչը, ընտրում ենք մեթոդը (U_2): Հետազոտողի հաջորդ քայլը ենթադրում է U_1 -ի և U_2 -ի ձևակերպումից հետո իրականացնել մեթոդիկաների ընտրությունը (U_3), որը ենթադրում է գիտափորձի պայմանների կազմակերպում և համակազմի պարտադիր հաշվառում: Գիտափորձը ծրագրավորելուց առաջ մենք նախևառաջ պետք է դիտարկենք նրա նպատակը և ձևակերպենք այն հարցը, որի պատասխանը հույս ունենք գտնել գիտափորձի արդյունքում: Սրանից են կախված հետազոտության վարկածի ձևակերպումը, նրա ձևն ու բովանդակությունը: Դրական փորձարարական վարկածը պահանջում է հաստատում, որը համընկնում է գիտափորձի արդյունքներից մեր սպասելիքներին: Նրա շեղումը խոսում է ի վնաս ուսումնասիրվող տեսական մոդելի: Բացասական փորձարարական վարկածը պարունակում է հաստատում՝ հակառակ հետազոտվող տեսական մոդելի կանխատեսումներին: Այդ պատճառով նրա շեղումը հաստատում է ստուգվող տեսական դրույթների ճշտությունը: Հաճախ իմաստ ունի ձևակերպել հենց բացասական փորձարարական վարկածները: Դա օգտակար է գոնե նրանով, որ «վարկածը հերքվում է» եզրակացությունը ավելի կատեգորիկ է հնչում, քան «վարկածը հերքելու բավարար հիմքեր չեն ստացվել» եզրակացությունը: Վերջին դեպքում տեսական դրույթների հետազոտումը շարունակելու և դրանց հաստատումն այլ՝ ավելի նրբին գիտափորձերում գտնելու հույս է մնում: Էմպիրիկ (պրակ-

տիկ, փորձարարական) գիտությունում փորձարարական վարկածները չի կարելի հաստատել. դրանք կարելի է կան հերքել, կան գտնել բավարար հիմքեր՝ դրանք հերքելու համար:

Չևակերպելով հարցը՝ պետք է ընտրել փորձարարական մեթոդ, որը կօգնի գտնել պատասխանը: Հաճախ գիտափորձերը անցկացնում են ոչ թե վարկածը ստուգելու, այլ դրանց ակնհայտ իրականությունը ներկայացնելու, ցույց տալու համար: Բավական ակնհայտորեն կարելի է ենթադրել, որ ատրակցիա առաջանում է, եթե մարդն ուրիշին ընդունում է որպես իր հայացքները, ճաշակը, դիրքորոշումները կիսող և այլն (որքան շատ են նման համընկնումները, այնքան մեծ համակրանք են նրանք առաջացնում): Սակայն դժվար թե ամուսինը համակրանք տաժի ուրիշ տղամարդու հանդեպ, որը նույնպես սիրում է իր կնոջը: Վերջին օրինակը կասկածի տակ է դնում արված ենթադրության ակնհայտությունը, որի ճշտությունը, այնուամենայնիվ, կարող է ներկայացվել մի շարք գիտափորձերում:

Այսպիսով, ներկայացվող գիտափորձի արդյունքը կախված է փորձագետ-ռեժիսորից, որն ունակ է մոդելավորելու իրավիճակ, որը կներկայացնի ակնհայտ վարկածի ճշտությունը: Բերված օրինակը, ինչպես նաև ներքին վալիդությանը (համապատասխանությանը) սպառնացող գործոնների քննարկումը կրկին հիշեցնում են մեզ, թե որքան ոչ ակնհայտ, ծուղակներ կան, որոնք կարող են ազդել գիտափորձի արդյունքների վրա:

Փորձարարական մեթոդի ընտրությունը որոշվում է նախևառաջ անկախ և լրացուցիչ փոփոխականների (ռելևանտ և ոչ ռելևանտ ազդակների) միջև հարաբերակցության բնույթով: Ըստ այս չափորոշիչի՝ Ռ. Գոտտսդանկերն առանձնացնում է փորձարարական մեթոդների երեք հիմնական խմբեր՝

- դաշտային, բնական գիտափորձեր, որոնք նա անվանում է «իրական աշխարհը կրկնօրինակող գիտափորձեր»,

- իրականությունը ձևավորող գիտափորձեր. այս խումբը անվանում է «մարզասարք տեսակի գիտափորձեր»,
- լաբորատոր գիտափորձեր:

Իրական աշխարհը կրկնօրինակող և իրական աշխարհը ձևավորող գիտափորձերն ավելի հաճախ հետապնդում են գործնական նպատակներ, իսկ լաբորատոր գիտափորձերը, որպես կանոն, անցկացվում են գիտական նպատակով: Օրինակ՝ լաբորատորիայում մենք ուսումնասիրում ենք տեսողական ընկալման ընդհանուր օրինաչափությունները, մարզասարքերի վրա մենք հետազոտում ենք տեսողական ընկալման հիմնական օրինաչափությունները կոնկրետ վարորդի գործունեության գործընթացում, ընդ որում, «մարզասարք» տեսակի գիտափորձում անհրաժեշտ է ընդգրկել այնպիսի լրացուցիչ փոփոխականներ, ինչպիսիք են վարորդի գործունեությանը ուղեկցող աղմուկը, թրթռումը, դրոշմը և այլն: Բնական գիտափորձում մենք ստուգում ենք մարզասարքերի վրա ստացված գիտափորձերի արդյունքները և համապատասխան ճշտումներ մտցնում մարզասարքի կառուցվածքում: Միայն այս նախնական քայլերից հետո ենք մենք անցնում հետազոտության կոնկրետ մեթոդիկայի ընտրությանը:

Հետազոտական մեթոդիկաների համալրման չափանիշները:

Մեթոդիկաների համալրումը վերաբերում է միևնույն երևույթի բազմակողմանի ուսումնասիրությանը: Մեթոդիկաները կարող են համալրվել՝

- ըստ համակողմանիության սկզբունքի,
- ըստ միմյանց չհակասելու սկզբունքի,
- ըստ միմյանց լրացնելու սկզբունքի,
- ըստ ստանդարտության և ոչ ստանդարտության,
- ըստ ստանդարտիզացվածության և պրոյեկտիվության չափանիշների և այլն:

Օրինակ՝ նույն երևույթի ուսումնասիրությունը թեստերով և պրոյեկտիվ մեթոդիկաներով, դիտման մեթոդով և հոգեֆիզիոլո-

գիական մեթոդներով կամ օրինակ դիտումը՝ թեստավորումից առաջ և հետո: Նախևառաջ ընտրված մեթոդիկաները պետք է համապատասխանեն չափվող օբյեկտի հատկանիշներին՝ անձի առանձնահատկություններ, վարքի կամ սթրեսի դրսևորումներ և այլ:

11.1. Փորձարարական հետազոտության փուլերը

1. Ցանկացած հետազոտություն սկսվում է խնդրահարույց իրավիճակից, որը պայմանավորում է հետազոտական թեմայի ընտրությունը,
2. նպատակը՝ ինչը ուսումնասիրելու և ինչու,
3. վարկածը, որը պարտադիր առաջադրվում է հետազոտությունից առաջ,
4. խնդիրներ՝ վարկածի հաստատման հերթականության քայլեր: Խնդիրները կարող են ձևակերպել հետևյալ սկզբնաբառերով՝
 - իրականացնել,
 - բացահայտել,
 - ապացուցել,
 - նկարագրել,
 - մշակել գործնական առաջարկներ:
5. Ուսումնասիրելով և համադրելով տեսական տարբեր մոտեցումներ՝ գտնել գիտական աշխատանքի մեթոդաբանական սկզբունքները (U_1) և հիմնական մեթոդները (U_2), որոնց վրա պետք է հիմնվի հետազոտությունը:
6. U_3 . մեթոդիկաների ընտրությունը կապված է հետազոտության սկզբունքների, ինչպես նաև մոտեցումների հետ: Մեթոդիկաների ընտրությունը պայմանավորված է նաև հետազոտական ծրագրերով:

7. Հետազոտական ընտրանք՝ ո՞ւմ, ինչի՞օ համար, ի՞նչ տարիքի, ի՞նչ կրթության, սեռը, աշխատանքային փորձը, բնակության վայրը և այլն: Ընտրանքը պետք է համապատասխանի ընտրված մեթոդիկաներին: Վերջինիս ընտրությունը համոզիչ դարձնելու համար կարելի է օգտագործել գծանկարներ:
8. Հետազոտական ծրագիր, որը որոշակիացնում է հետազոտության ժամանակը, հետազոտվողի հետ աշխատելու ձևը (անհատական, խմբային): Հետազոտական ծրագրում ներկայացվում են նաև հետազոտության ընթացքում անհրաժեշտ նյութատեխնիկական պարագաները:
9. Փորձարարական հետազոտություն, ըստ որի՝ անհրաժեշտ է ամրագրել՝ արդյոք հետազոտությունն անցկացվում է մեկ կտրվածքով, թե ոչ:
10. Տվյալների հավաքագրում և մշակում (որակական կամ քանակական).
 - 10.1 Վիճակագրական վերլուծություն (քանակական տվյալները): Որակական տվյալները կարելի է բերել քանակականի (օրինակ՝ կոնտենտ վերլուծության մեթոդի կիրառման միջոցով):
 - 10.2 Աղյուսակների և նկարների կազմում:
 - 10.3 Մեկնաբանություն, որը պետք է համապատասխանի և համեմատության մեջ մտնի տեսական վերլուծության հետ:
11. Եզրակացություն, որը պետք է համապատասխանի վարկածին . կա՞ն հաստատի, կա՞ն հերքի այն:
12. Գործնական առաջարկների մշակում:


Հոգեբանական հետազոտության մեջ կիրառվող մեթոդները հոգեբանական օբյեկտների հետ կատարվող համակարգային գործընթացների ամբողջություն են: Ինչպես գիտենք, նախքան

մեթոդի և մեթոդիկայի ընտրությունը հետազոտողը իրականացնում է հետևյալ քայլերը.

1. առաջին փուլում կատարվում է նպատակի ընտրությունը: Այնուհետև հետազոտողը փորձում է նպատակի և հիմնախնդրի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրել: Այս փուլում է կատարվում նաև վարկածի ձևակերպումը: Վարկածի որոշման փուլը յուրաքանչյուր հետազոտության սկիզբ է: Վարկածը որոշելիս պետք է ուշադրություն դարձնել դրա աննախադեպ լինելու փաստին,
2. երկրորդ փուլում կատարվում է մեթոդի ընտրությունը,
3. երրորդ փուլում արդեն իրականացվում է մեթոդիկաների ընտրությունը, որը կատարվում է հետազոտության անցկացման պլանավորած պայմաններին համապատասխան:

Այս քայլերին հետևելով՝ պետք է նաև հետամուտ լինել նրան, որ հետազոտության մեջ ամեն ինչ տրամաբանորեն կապված լինի իրար [Дружинин В. Н., 2000]³⁹:

³⁹ Ст'я Дружинин В. Н., Экспериментальная психология, Минск, 2000, с. 21-55:




Նկար 20. Մեթոդաբանության, մեթոդների և մեթոդիկաների փոխկապակցվածությունը փորձարարական հետազոտությունում


Ծանոթագրություն

1. Գիտելիք * Նախադեպ * Փորձ * Պատմություն * Դիտում,
2. Մեթոդաբանություն * Տեսություններ * Հայեցակարգ,
3. Հիմնահարց * Վարկած * Նպատակ * Խնդիրներ,

4. Մեթոդներ * Գիտափորձ * Մեթոդիկաներ * Ընտրանք* մասնակիցներ,
5. Տեսական վերլուծություն՝ մեմագրություններ, գիտական ամսագրեր, ժողովածուներ, ատենախոսություններ և այլն,
6. Հետազոտական ծրագրի կազմում,
7. Նախնական և հիմնական գիտափորձ,
8. Արդյունքների ամփոփում, վիճակագրական վերլուծություն, աղյուսակներ, նկարներ և գծանկարներ, ընթացիկ եզրահանգումներ, համեմատություն, համադրում,
9. Եզրակացություններ,
10. Գործնական առաջարկություններ, մեթոդական ցուցումներ:



Նկար 21. Փորձարարական հետազոտության փուլերի հերթականության շրջանաձև տարբերակ



Նկար 22. Փորձարարական հետազոտության փուլերի հերթականության հիերարխիկ տարբերակ

ԳԼՈՒԽ 12

ԳԻՏԱՓՈՐՉԻ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Հոգեբանամանկավարժական գիտափորձի կամ հոգեբանական թեստավորման արդյունքները, բացի դրանց տեքստային նկարագրումից, կարելի է ներկայացնել նաև աղյուսակների, գծանկարների, գրաֆիկների, նկարների տեսքով և այլ ձևերով:

Աղյուսակները որակական և քանակական տվյալների հորիզոնական կամ ուղղահայաց տեսքով համակարգված լրակազմն են (հավաքակազմը), որոնք եզրափակված, ներառված են շրջանակներում կամ էլ առանց դրանց: Աղյուսակները կարող են ունենալ կամ չունենալ անվանումներ, ենթավերնագրեր, որոնք ցույց կտան, թե ինչպիսի տվյալներ են նրանցում պարունակվում:

Աղյուսակները կառուցվում և ձևակերպվում են ոչ թե կամայականորեն, այլ որոշակի կանոնների՝ համապատասխան: Քննարկենք այդ օրենքները:

Եթե աղյուսակները տեքստում երկու-երեքից ավելի են, ապա դրանք համարակալվում են: «Աղյուսակ» բառը սովորաբար գրվում է աղյուսակի վերևում աջ կողմից կամ մեջտեղից: Անմիջականորեն նրա տակ տեղակայվում է աղյուսակի անվանումը, եթե այն կա: Երբեմն դրա համար արվում են ծանոթագրություններ, որոնք վերաբերում են աղյուսակում պարունակվող նյութի որոշ առանձնահատկություններին: Այդպիսի ծանոթագրությունները, որպես կանոն, տեղակայվում են անմիջապես աղյուսակի ներքևում: Աղյուսակներն ունենում են խորագրեր, որոնք ցույց են տալիս, թե ինչ է ներկայացված առանձին սյունակներում, ինչպես նաև տարանջատում ըստ տողերի, որտեղ նշված են ներկայացվող նյութի առանձնահատկությունները:

Որպես օրինակ դիտարկենք տիպիկ աղյուսակների կառուցման ձևերն ու եղանակները.

1. անվանում չունեցող, առանց ընդհանուր վերնագրի և ծանոթագրությունների (աղյուսակ 7),
2. սյունակավորված, անվանումով և վերնագրով (աղյուսակ 8),
3. սյունակավորված, անվանումով, վերնագրերով և ծանոթագրություններով (աղյուսակ 9):

Աղյուսակ 7.

Անվանում չունեցող, առանց ընդհանուր վերնագրի և ծանոթագրությունների աղյուսակի օրինակ

Խմբեր	Տարրական դասարաններ 1-5	Միջին դասարաններ 6-8	Բարձր դասարաններ 9-11
Աշակերտների քանակը	120	130	100
Միջին տարիքը (տարիներով)	10.5	12.5	15
Առաջադիմությունը (միջին գնահատական)	3.8	3.5	4.0
Մտավոր զարգացվածության մակարդակը (ԲԳ)	102	104	105

Առաջինում չկա ընդհանուր վերնագիր, որը կմիավորեր բոլոր սյունակների անվանումները, այլ կան միայն մասնակի ենթավերնագրերի անվանումներ, որոնք վերաբերում են առանձին սյունակներին: Չկա նաև աղյուսակի ընդհանուր անվանում, քանի որ նրանում ներկայացված տվյալների բովանդակությունն ինքնուրույն պարզ է: Կան աղյուսակի առանձին տողերի անվանումները, առանց դրանց անհասկանալի կլիներ, թե ինչ են նշանակում աղյուսակի տողերում առկա թվերը: Նմանատիպ աղյուսակներ խորհուրդ է տրվում կառուցելու այն ժամանակ, երբ աղյուսակի սյունակներում և տողերում ներկայացվող տվյալների ընդհանուր քանակը համեմատաբար մեծ չէ (ըստ տողերի և սյունակների չորս տարբեր ձևի տվյալներից ոչ ավելի, այսինքն՝ չորս տողից և

չորս սյունակից ոչ ավելի): Մնացած այլ դեպքերում խորհուրդ է տրվում կառուցելու երկրորդ աղյուսակը (աղյուսակ 8):

Աղյուսակ 8.

Սյունակավորված, անվանումով և վերնագրով

Երեխաների տարիքը: Նրանց սովորելու և դաստիարակվելու վայրը մինչ այդ:	Դպրոցի ուսուցմանը երեխաների հոգեբանական պատրաստվածության հիմնական ցուցանիշները									
	Ինտելեկտուալ					Անձնային			Միջանձնային	
	ուշադրություն	երևակայություն	հիշողություն	մտածողություն	խոսք	ուսուց. որոշակաճանաչ	բնավորություն	ընդունակություն	հարյուրակցում	շվում
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
մանկապարտեզ հաճախած 6-ամյա երեխաներ	7.2	7.6	7.9	8.0	7.1	6.2	7.2	8.0	8.4	8.4
տանը դաստիարակված 6-ամյա երեխաներ	7.2	7.6	7.9	8.0	7.1	6.2	7.2	8.0	8.4	8.4
մանկապարտեզ հաճախած 7-ամյա երեխաներ	7.2	7.6	7.9	8.0	7.1	6.2	7.2	8.0	8.4	8.4
տանը դաստիարակված 7-ամյա երեխաներ	7.2	7.6	7.9	8.0	7.1	6.2	7.2	8.0	8.4	8.4

Աղյուսակ 8-ի 3-րդ տողում ներկայացված են սյունակների հերթական համարները, որոնք օգտագործվում են, երբ աղյուսակը չի տեղավորվում մեկ էջում, և կարիք է լինում այն տեղափոխելու հաջորդ էջ:

Այն դեպքերում, երբ աղյուսակում հարկավոր է ներկայացնել շատ մեծ թվով տվյալներ, որոնք անհնար է ամբողջությամբ նկարագրել տողերի և սյունակների ենթավերնագրերում դրանց մեծ ծավալի պատճառով, անդրադառնում են երրորդ տիպի աղյուսակներին (աղյուսակ 9), որոնցում համապատասխան անվանումները կողավորված են, իսկ դրանց պարզաբանումը տրվում է աղյուսակի ծանոթագրության մեջ: Իսկ հետագոտական խմբերի թեստավորման վիճակագրական ցուցանիշները ներկայացնելու օրինակը բերված է աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 9.

Սյունակավորված, անվանումով, վերնագրերով և ծանոթագրություններով

Երեխաների պայմանական նշանակումները	Հետազոտության ցուցանիշները											
	1-ին				2-րդ				3-րդ			
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Ա												
Բ												
Գ												
-												
-												
-												

Ծանոթագրություն. Ա. Արայոմ, Բ. Բաբկեն, Գ. Գոհար, 1-ին՝ երեխաների սոցիալ-հասարակական տվյալները, 2-րդ՝ առանձին առարկաների առաջադիմությունը, 3-րդ՝ հոգեբանական զարգացվածության տվյալները, 1-ին՝ տարիք, 2-րդ՝ սեռ և այսպես շարունակ:

Աղյուսակ 10.


Հետազոտական խմբերի թեստավորման վիճակագրական ցուցանիշների ներկայացման օրինակ (n = 50)

№	Ցուցանիշի անվանում	1-ին խումբ	2-րդ խումբ
1			
2			
...			
50			


Σ-գումար			
X-միջին			
δ-շեղում			

Փորձարարական տվյալների ներկայացման մյուս ձևը գրաֆիկական եղանակն է: Գծապատկերը (Գրաֆիկը) հարթության վրա որոշակի գիծ է, որը պատկերում է երկու փոփոխականների միջև կախվածությունը, իսկ տարածական գրաֆիկը՝ հարթություն, որը ներկայացնում է կախվածությունը երեք փոփոխականների միջև: Երկչափ գրաֆիկ կիրառելիս հորիզոնական գծով հարթության վրա սովորաբար տեղակայում են անկախ փոփոխականը, այսինքն՝ այն, որը փոխվում է փորձագետի մտադրությամբ և քննարկվում է որպես հնարավոր որոնվող պատճառ: Ուղղահայաց գծով տեղակայում են կախյալ փոփոխականը՝ այն, որը դառնում կամ քննարկվում է որպես ենթադրվող պատճառ:

Առաջադիմություն (գնահատականներ)



Նկար 23. Սովորողների առաջադիմության և ընդունակությունների միջև կախվածության գծանկար



Նկար 24. Փորձարարական տվյալների եռաչափ տեղաբաշխում: X-առանցքով՝ հուրական գրգռվածության մակարդակը, Y-ով՝ տազնապայմության մակարդակը, Z-ով՝ գործունեության արդյունավետությունը:


Եթե խոսքը վերաբերում է եռաչափ, տարածական գրաֆիկին, ապա նրա հորիզոնական հարթության X և Y առանցքներով ամենից հաճախ տեղակայում են անկախ փոփոխականները, իսկ ուղղահայաց հարթության Z առանցքով՝ կախյալ փոփոխականը: Սակայն կարող են լինել նաև այս օրենքից շեղվելու դեպքեր: Դրանք լինում են, օրինակ, երբ գիտավորժում ուսումնասիրվում են մեկ անկախ և երկու կախյալ փոփոխականներ: Այս դեպքում անկախ փոփոխականներին վերաբերող տվյալները տեղակայվում են ուղղահայաց X առանցքի երկայնքով, իսկ կախյալ փոփոխականների տվյալները՝ Y և Z առանցքների երկայնքով:

Զննարկենք երկու օրինակ: Նկար 23-ում ներկայացված են հարթության վրա, իսկ նկար 24-ում՝ տարածական գրաֆիկներ: Գրաֆիկները կարող են կառուցվել առանձին կետերով (նկար 23)

կամ ներկայացնել չընդհատվող, շարունակվող գծեր (հարթություններ, նկար 24):

Փորձարարական արդյունքների գրաֆիկական պատկերների յուրահատուկ տարատեսակ են հիստոգրամները: Դրանք սյունակաձև դիագրամներն են (նկար 25), որոնք բաղկացած են ուղղահայաց ուղղանկյուններից, որոնք հիմքերով տեղակայված են մեկ ուղիղ գծի վրա: Դրանց բարձրությունը արտացոլում է հետազոտվողի մոտ այս կամ այն որակի զարգացվածության աստիճանը կամ մակարդակը: Հետազոտվողների ընտրանքում որակի հաճախակի նկատելիության հաճախականությունը ցույց տվող թվերը տեղակայվում են կա՛մ հիստոգրամայի սյունակների ներսում, կա՛մ նրանց վերևում, կա՛մ գրաֆիկի ուղղահայաց առանցքով: Երբեմն պատկերավոր լինելու համար հատկապես այն դեպքերում, եթե հիստոգրամն համապատասխանում է եռաչափ տարածությանը, այն պատկերում են որպես ծավալային (նկար 26): Ստացված տվյալների տոկոսային հարաբերությունը ներկայացնելիս նախապատվությունը տալիս են տափօղակային գծանկարին (նկար 27), իսկ խմբերի դեպքում՝ միայն միջին ցուցանիշներին (նկար 28):


Պատրաստություն ուսուցման հանդեպ (%)




Նկար 25. Հիստոգրամների ձևերը հարթության վրա

Ա. Դասարանում գնահատականների բաշխվածության հիստոգրաման:


Բ. Դպրոցական ուսուցմանը տարբեր տարիքի երեխաների պատրաստության ցուցանիշների բաշխվածության հիստոգրաման:



Նկար 26. Ճավալային կամ եռաչափ հիստոգրամի օրինակ



Նկար 27. Արդյունքների %-ային հարաբերության տափօղակային գծանկարով ներկայացման օրինակ



Նկար 28. Խմբերի միջին ցուցանիշների համեմատության ներկայացման օրինակ

Գրականություն (Գլուխ 11 և 12)

1. **Боднар А. М.,** Экспериментальная психология: курс лекций: учеб. пособие/ Екатеринбург: Изд-во Урал. ун-та, 2011, 238 с.
2. **Дружинин В. Н.,** Экспериментальная психология, Минск, 2000, с. 21-55.
3. **Ихсанова Д. Т.,** Экспериментальная психология, Методические рекомендации к практическим занятиям, Алматы, 2015, 65 с.
4. **Собкин В. С., Адамчук Д. В.,** Особенности употребления алкоголя в подростковой среде // Вестник практической психологии образования, 2006. № 1 (6), с. 39-48.
5. **Хекхаузен Х.,** Мотивация и деятельность. 2-е изд., перераб. СПб.: «Питер-Пресс», М.: «Смысл», 2003, с. 642.

ԳԼՈՒԽ 13 ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՔ

Կախյալ և անկախ փոփոխականների որոշումից հետո հոգեբանի հաջորդ քայլը հետազոտության օբյեկտի ընտրությունն է: Երբեմն հետազոտության օբյեկտը հայտնի է սկզբից, այլ դեպքերում պետք է ընտրել այն օբյեկտը, որն ավելի է համապատասխանում հետազոտության խնդիրներին:

Հոգեբանական հետազոտությունների իդեալական օբյեկտ կարող է լինել անհատը կամ խումբը: Առաջին դեպքում խոսում ենք ընդհանուր հոգեբանական, երկրորդ դեպքում՝ սոցիալ-հոգեբանական գիտափորձի մասին: Գիտափորձի իրական օբյեկտն իր բնութագրիչներով պետք է համապատասխանի իդեալական օբյեկտին, իսկ նրա մասնակցությամբ ստացված արդյունքները պետք է կիրառվեն այլ օբյեկտների հանդեպ: Եթե բոլոր մարդիկ նման լինեին իրար, իսկ որ ավելի լավ է՝ լինեին լիովին միանման, ապա ոչ մի խնդիր չէր առաջանա. գիտափորձը կանցկացվեր մի հոգու հետ, իսկ արդյունքները կկիրառվեին բոլոր մարդկանց վարքի բացատրման համար: Սակայն մարդիկ տարբերվում են իրենց սեռով, տարիքով, ռասայով, ազգությամբ, այս կամ այն մշակույթին կամ կրոնական պատկանելիությամբ, սոցիալական և տնտեսական դիրքով և այլն: Հետևաբար մեկ անձի հետազոտումից ստացված տվյալների գեներալիզացիան (ընդհանրացումը) անհնար է: Ինչպես նշվեց, գիտափորձը կարող է անցկացվել մեկ հետազոտվողի (single experiment) կամ խմբի հետ: Մեկ հետազոտվողի հետ գիտափորձն անց է կացվում այն դեպքում, երբ.

- անհատական տարբերությունները կարելի է անտեսել, հետազոտությունն իր ծավալով չափազանց մեծ է և ներառում է բազմաթիվ էքսպերիմենտալ փորձեր,
- հետազոտվողը բացառիկ օբյեկտ է (օրինակ՝ հանճարեղ երաժիշտ),

- հետազոտվողից պահանջվում է հատուկ կոմպետենտություն հետազոտման անցկացման ընթացքում (գիտափորձ սովորեցրած հետազոտվողների հետ),
- տվյալ գիտափորձի կրկնումն այլ հետազոտվողների մասնակցությամբ անհնար է:

Մեկ հետազոտվողով գիտափորձի համար մշակված են հատուկ փորձարարական պլաններ: Ավելի հաճախ հետազոտությունն անց է կացվում փորձարարական խմբի հետ, որում բոլոր հետազոտվողներն օբյեկտիվորեն տարբեր են, բայց ընտրված և բաշխված են ենթախմբերի այս կամ այն մարտավարության օգնությամբ: Տարբերում են փորձարարական խմբեր կազմելու 4 հիմնական տարբերակ:

1. Հետազոտությունն անց է կացվում երկու տարբեր՝ փորձարարական և վերահսկիչ խմբերի հետ, որոնք տարբեր պայմանների մեջ են դրվում: Սա ամենատարածված միջոցն է:

2. Հետազոտությունն անց է կացվում մեկ խմբի հետ, որի վարքը հետազոտվում է փորձարարական և վերահսկիչ պայմաններում: Այն կիրառվում է այն դեպքում, երբ կա միայն փորձարարական խումբ, իսկ վերահսկիչ խումբ ձևավորելու հնարավորություն չկա: Բայց այս պլանը ոչ մի կերպ չի վերահսկում «հաջորդականության էֆեկտը» և կիրառվում է միայն այն հազվադեպ դեպքերում, երբ հաջորդականության էֆեկտը կարելի է անտեսել:

3. Խմբերի կազմում «գույգային ձևավորման» մեթոդով: Խմբի յուրաքանչյուր սուբյեկտի համար ընտրվում է նրան համարժեք (նրան նման) մեկը, և նրանք բաշխվում են տարբեր խմբերի մեջ: Համապատասխանաբար փորձարարական և վերահսկիչ խմբերը մասնակիցների կազմով նման են դառնում: Իհարկե, այս դեպքում անհնար է հասնել խմբերի բարձր համարժեքությամբ գիտափորձի, բայց այս միջոցը զգալիորեն ավելի լավն է, քան տարբեր պայմաններում միևնույն խմբի մասնակցությամբ գիտափորձը:

4. Խառը պլան, երբ բոլոր խմբերը դրվում են տարբեր պայմանների մեջ: Այսպես ձևավորվում են մի քանի խմբեր: Այս ձևը կիրառվում է գիտափորձի գործոնային պլանավորման դեպքում:

Այսպիսով, հետազոտվողների ընտրանքի՝ փորձարարական խմբի ձևավորումը պետք է ենթարկվի մի շարք կանոնների:

1. Բովանդակային չափանիշ (օպերացիոնալ վալիդության չափանիշ): Օպերացիոնալ վալիդությունը որոշվում է ստուգվող վարկածի հետ փորձարարական մեթոդի համապատասխանությամբ: Փորձարարական խմբի ընտրությունը պետք է որոշվի հետազոտության առարկայով և վարկածով: Օրինակ՝ անիմաստ է ստուգել կամածին մտապահման զարգացվածության աստիճանը մեկանյա երեխաների մոտ: Այսպիսով, փորձագետը պետք է ստեղծի փորձարարական հետազոտության իդեալական օբյեկտի մոդել իր մասնավոր դեպքի համար և փորձարարական խմբի ձևավորման ժամանակ հնարավորինս հետևի այդ մոդելի նկարագրին: Իրական փորձարարական խմբի բնութագրերը պետք է նվազագույն չափով շեղվեն իդեալական փորձարարական խմբի բնութագրերից:

2. Հետազոտվողների համարժեքության չափանիշ (ներքին վալիդության չափանիշ): Փորձարարական ընտրանքի հետազոտման ժամանակ ստացված տվյալները պետք է տարածվեն նրա յուրաքանչյուր անդամի վրա: Այսինքն՝ մենք պետք է հաշվի առնենք հետազոտման օբյեկտի բոլոր նշանակալի բնութագրերը, որոնց արտահայտվածության տարբերությունները կարող են էապես ազդել կախյալ փոփոխականի վրա: Համարժեք խմբերի և համարժեք հետազոտվողների ընտրության գործընթացը կոչվում է ռանդոմիզացիա:

3. Ռեպրեզենտատիվության չափանիշ (արտաքին վալիդության չափանիշ): Գոյություն ունեն հետազոտվողների ընտրանքի ռեպրեզենտատիվության (ներկայացվածության) տեսական վիճակագրական չափանիշներ: Գիտափորձին մասնակցող ան-

ձանց խումբը պետք է ներկայացնի պոպուլյացիայի ողջ մասը, որի հանդեպ մենք կարող ենք կիրառել գիտափորձում ստացված տվյալները: Փորձարարական ընտրանքի մեծությունը կարող է հավասար լինել բազմաթիվ անհատների, որոնց վարքը մեզ հետաքրքրում է, կարող է նաև ներկայացնել միայն մեզ հետաքրքրող բազմության մի մասը: Գլխավոր խնդիրն այն է, որ որոշվի, թե որ այլ՝ մեզ հետաքրքրող խմբերի վրա կարելի է տարածել անցկացված հետազոտության արդյունքները: Փորձարարական խմբի ընտրությունն իրականացվում է տարբեր ստրատեգիաների օգնությամբ: Ռ-ազմավարության կիրառումն անհրաժեշտ է, որ.

- կասեցվի «փոխազդման էֆեկտը»: Այս տերմինը նշանակում է մասնակիցների միջև անհատական տարբերությունների ազդեցությունն անկախ և կախյալ փոփոխականների կապի վրա: Օրինակ՝ լավ աշխատանքի համար հրապարակային խրախուսանքին տարբեր խառնվածքով մարդիկ տարբեր կերպ են արձագանքում: Դրանով վերահսկվում է կողմնակի փոփոխականի ազդեցությունը ներքին վալիդության վրա,
- փորձարարական խումբը ներկայացնի ուսումնասիրվող պոպուլյացիան, այսինքն՝ ապահովի գիտափորձի արտաքին վալիդությունը:

Փորձարարական ընտրանքի մոդելավորման ռազմավարությունները հետևյալն են.

1. իրական խմբերի ներգրավում, ինչն առաջ է բերում հետազոտվողների անհատական հատկությունների հետ անկախ փոփոխականների փոխազդում: Արդեն ակնհայտ է, որ փորձարարական ընտրանքն ամբողջ պոպուլյացիայի կամ նրա՝ մեզ հետաքրքրող մասի մոդելն է,

2. ռեպրեզենտատիվ մոդելավորումը ավելի պարզ տարբերակ է, որի դեպքում կազմում են հետազոտվողների ռեպրեզեն-

տատիվ խմբեր, որի բնութագրերը համապատասխանում են մեզ հետաքրքրող պոպուլյացիայի բնութագրերին,

3. մոտավոր մոդելավորումը օգտագործվում է այն ժամանակ, երբ անհնար է գտնել ռեպրեզենտատիվ խմբի ստեղծման միջոցը: Օրինակ՝ հետազոտությունը կարող է անցկացվել երկրորդ կուրսի ուսանողների մասնակցությամբ, իսկ տվյալները՝ վերագրվել 17-21 տարեկան միջնակարգ կրթությամբ անձանց: Որքան փոքր է ընդհանրացումը, այսինքն՝ որքան ճշգրիտ է այն պոպուլյացիան նկարագրող չափանիշների խումբը, որի վրա տարածվում են փորձարարական ընտրանքի բնութագրերի մասին հետևությունները, այնքան բարձր է գիտափորձի արտաքին վալիդությունը:

4. Ռ-անդոմիզացիա կամ պատահական ընտրության մեթոդ, որի դեպքում փորձարարական ընտրանքը կազմում են այնպես, որ յուրաքանչյուր անձի գիտափորձին մասնակցելու հավասար հնարավորություն է տրվում: Յուրաքանչյուր անհատի համարակալում են, և պատահական թվերի ալյուսակի օգնությամբ տեղի է ունենում փորձարարական ընտրանքի ձևավորումը: Ընթացակարգը դժվար իրագործելի է, քանի որ մեզ հետաքրքրող պոպուլյացիայի յուրաքանչյուր ներկայացուցիչ պետք է հաշվի առնվի: Պրակտիկայում դիմում են պատահական ընտրության ավելի պարզ միջոցների: Ընտրում են հետազոտվողների ցանկացած խումբ, ապա չափում են նրանց մոտ գիտափորձի համար նշանակալի անհատական հատկությունը: Դրանից հետո հետազոտվողներին բաժանում են խմբերի Մոնտե-Կարլոյի (վիճակագրական փորձարկումների մեթոդ, հաշվողական մաթեմատիկայի մեթոդ, որը հենվում է պատահական մեծությունների և պրոցեսների *մոդելավորման* և փնտրվող մեծությունների վիճակագրական գնահատականների կառուցման վրա) մեթոդով այնպես, որ խմբում ընդգրկվելու հավանականությունը յուրաքանչյուր հետազոտվողի համար հավասար է:

5. Ռ-անդոմիզացիա՝ ստրատների առանձնացմամբ (ստրատոմետրիական ընտրություն): Հիմնական ամբողջությունը դի-

տարկվում է որպես որոշակի բնութագրիչներ ունեցող խմբերի ամբողջություն: Փորձարարական ընտրանքում ներառվում են համապատասխան բնութագրիչներով հետազոտվողներն այնպես, որ նրանում հավասարաչափ ներկայացված լինեն անձինք յուրաքանչյուր ստրատիգ: Ամենից հաճախ օգտագործվում են հետևյալ բնութագրերը՝ սեռ, տարիք, քաղաքական նախասիրություններ, կրթության և եկամուտների մակարդակ: Այս ռազմավարությունը կիրառում են հոգեբախտորոշողները թեստեր մշակելիս, մանկավարժական հոգեբանները, հիմնականում՝ սոցիոլոգներն ու սոցիալական հոգեբանները հասարակական կարծիքի մասին հարցումներ անելիս, սոցիալական դիրքորոշումները հետազոտելիս և այլն:

6. Չույգային ընտրություն: Այս դեպքում փորձարարական և վերահսկիչ խմբերը կազմվում են գիտավորձի համար նշանակալի կողմնակի չափանիշներով համարժեք անհատներից: Իդեալական տարբերակը երկվորյակային (մոնո և դիգիգոտ) զույգերի օգտագործումն է: Այս ռազմավարության տարատեսակներից է միասեռ ենթախմբերի ընտրությունը, որոնցում հետազոտվողները հավասարեցված են բոլոր բնութագրիչներով՝ բացի հետազոտողին հետաքրքրող լրացուցիչ փոփոխականներից:

Մյուս տարբերակը նշանակալի լրացուցիչ փոփոխականի առանձնացումն է: Բոլոր հետազոտվողները թեստավորվում են, ռանգավորվում՝ ըստ փոփոխականի արտահայտվածության մակարդակի: Խմբերը ձևավորվում են այնպես, որ փոփոխականի միանման կամ մոտ իմաստներ ունեցող հետազոտվողներն ընկնեն տարբեր խմբեր:

Տարբերում են հետազոտվողներին խմբում ներառելու երկու հիմնական տիպ՝ ա) ընտրություն, որն անցկացվում է ռանդոմիզացիայի, ստրատոմետրիկ ընտրության, ռեպրեզենտատիվ և մոտավոր մոդելավորման դեպքում, և բ) բաշխում, որն իրականացվում է զույգային ընտրության և իրական խմբերի մասնակցության դեպքում:

Ներքին և արտաքին ամենալավ վալիդություն ապահովվում է համարժեք գույզերի ընտրության և ստրատոմետրիկ ռանդոմիզացիայի ռազմավարությունների դեպքում. այս ռազմավարությունների օգնությամբ հետազոտվողների անհատական առանձնահատկություններն առավելագույն չափով են վերահսկվում: Մյուս դեպքերում հետազոտվողների համարժեքության, անհատական տարբերությունների վերահսկման և խմբի ներկայացուցչության որևէ երաշխիք չկա [Киреева З. А., 2014]:

Կամավորների ներառումը կամ պարտադրական մասնակցությունը գիտափորձին խախտում է ընտրանքի ռեպրեզենտատիվությունը: Միայն նշենք, որ գույզային մոդելավորման, մոտավոր մոդելավորման և ստրատոմետրիկ ռանդոմիզացիայի ռազմավարությունները, ի տարբերություն ռանդոմիզացիայի ռազմավարության (պատահական ընտրված խմբերի), ենթադրում են, որ մեզ հայտնի են լրացուցիչ չափանիշները՝ անհատական առանձնահատկությունները, որոնք կարող են նշանակալի ազդեցություն գործել գիտափորձի արդյունքի վրա: Այդ պարամետրի առանձնացման սխալը կամ այլ չափանիշները հաշվի չառնելը փորձագետին տանում են անհաջողության: Ակնհայտ է, որ խմբերի ձևավորման մեծ ռազմավարությունների կիրառումը պետք է հիմնվի դիֆերենցիալ (անհատական տարբերությունների) հոգեբանության ոլորտի լուրջ գիտելիքների վրա: Կեմպբելը և շատ այլ հեղինակներ համարժեք գույզերի ընտրությունը համարում են ավելի քիչ հուսալի մեթոդ, քան ռանդոմիզացիան: Ռանդոմիզացիան կարելի է համարել առավել հուսալի ռազմավարություն գիտափորձում ուսումնասիրվող պոպուլյացիայի ռեպրեզենտացիայի և լրացուցիչ փոփոխականների վերահսկման տեսանկյունից: Ռանդոմիզացիայի դեպքում առավել էական խնդիրը հետևյալն է. որքանով է նախնական ընտրանքը, որից մենք ձևավորում ենք փորձարարական և վերահսկիչ խմբերը, իրոք, ներկայացնում հիմնական ամբողջություն: Այս խնդրի լուծումը փորձագետի ներըմբռնման խնդիրն է:

Առանձին խնդիր է փորձարարական ընտրանքի թվակազմը: Կախված նպատակներից և հնարավորություններից՝ այն կարող է տատանվել մեկից մի քանի հազար մարդկանց միջև: Հետազոտվողների քանակն առանձին խմբում (փորձարարական և վերահսկիչ) փորձարարական հետազոտությունների մեծ մասում տատանվում է 1-100-ի սահմաններում: Խորհուրդ է տրվում, որ համեմատվող խմբերում մարդկանց թիվը լինի 30-35-ից ոչ պակաս՝ ելնելով վիճակագրական նկատառումներից. 0.35-ից բարձր կորելյացիայի գործակիցները մասնակիցների այդ քանակի դեպքում նշանակալի են $\alpha = 0.05$ դեպքում:

Եթե տվյալները մշակելիս օգտագործվում է գործոնային վերլուծություն, ապա գոյություն ունի պարզ կանոն. հուսալի գործոնային որոշումներ կարելի է ստանալ միայն այն դեպքում, երբ հետազոտվողների քանակն ավելի քան երեք անգամ գերազանցում է գրանցվող պարամետրերի քանակը: Բացի այդ, ինչպես խորհուրդ է տալիս Լ. Վ. Կուլիկովը, նպատակահարմար է մեծացնել հետազոտվողների քանակը գոնե պահանջվածից 5-10 %-ով ավել, քանի որ նրանց մի մասը գիտափորձի կամ փորձարարական արձանագրությունների վերլուծության ընթացքում անվավեր են համարվում (չեն հասկացել հրահանգը, չեն ընդունել խնդիրը, տվել են «դևիանտ» արդյունքներ և այլն):

Ինչ վերաբերում է սեռային և տարիքային կազմին, ապա խորհուրդ է տրվում (բացի հատուկ դեպքերից) ընդհանուր խումբը բաժանելու կանանց և տղամարդկանց ենթախմբերի և տվյալները մշակելու յուրաքանչյուրի համար առանձին: Տարիքային կազմը որոշվում է՝ ելնելով հետազոտության նպատակներից:

Ինչպե՞ս պետք է վերաբերվել մասնակիցներին: Շատ կարևոր է ուշադրություն դարձնել հետազոտողների և հետազոտվողների միջև հարաբերություններին՝ ներառելով քաղաքավարության որոշակի կանոններ: Այնուհետև գրանցում ենք, թե ինչպես են այդ հարաբերություններն ազդում գիտափորձի արդյունքների վրա:

Քաղաքակիրթ վերաբերմունք մասնակից մարդկանց նկատմամբ: Քանի որ հոգեբանության մեջ իրականացվող ուսումնասիրության նպատակը մարդու վարքը հասկանալն է, մենք սովորաբար փոխազդում ենք մարդկանց հետ (և որոշակի դեպքերում՝ կենդանիների հետ): Ըստ ավանդույթի՝ հոգեբանները հետազոտվող (subjects) են անվանում այն մարդկանց, որոնք «բավարարում են» այդ վարքը: Վերջին տարիներին այդ տերմինը փոխվել է և կոչվում է մասնակից:

Այս բաժնում կարևոր է անդրադառնալ «դեբրիֆինգ» հասկացությանը: Հոգեբանական հետազոտության մեջ մասնակցությունը պետք է լինի հետազոտողի և մասնակցի միջև տեղեկատվության փոխադարձ փոխանակման գործընթաց: Ուսումնասիրելով մասնակցի ռեակցիաները՝ հետազոտողը կարող է ինչ-որ նոր բաներ իմանալ վարքի ֆենոմենի մասին, իսկ մասնակիցը պետք է տեղեկացված լինի հետազոտության նպատակի, վարկածի, ենթադրվող արդյունքների, սպասվելիք շահի մասին: Յուրաքանչյուր մասնակից գիտափորձից հետո անցնում է մանրակրկիտ դեբրիֆինգ, որի ընթացքում հետազոտողը ներկայացնում է նրան ամբողջ հնարավոր տեղեկատվությունը, որը վերաբերում է հետազոտությանը, և համոզվում է, որ ոչ ոք չի մնացել տարակուսանքի, տհաճության կամ անհարմարության զգացմամբ: Եթե հետազոտության ընթացքում անհրաժեշտություն է եղել մոլորեցնելու մասնակիցներին, ապա հետազոտողը մանրակրկտորեն բացատրում է դրա պատճառները: Եվ վերջապես, մասնակիցները իրավունք ունեն վերանայելու/հանելու այն տվյալները, որոնք իրենց հետ կապ ունեն, եթե նրանց թվա, որ չարաշահվել է իրենց վստահությունը կամ այս կամ այն կերպ խախտվել են իրենց իրավունքները [Герринг Р., Зимбардо Ф., 2004]⁴⁰:

⁴⁰ Տե՛ս Герринг Р., Зимбардо Ф., Психология и жизнь, 16-е изд., СПб.: «Питер», 2004, 955 с.:

Հոգեբանության վաղ փուլում ոչ որ չէր անհանգստանում, թե ինչպես անվանեին մարդկանց, որոնց հետ փորձ էին անում, քանի որ հետազոտողը և մասնակիցը նույն մարդն էին: Այդ ժամանակ հոգեբանների մեծ մասը հաղորդում էին սեփական ներքին զգացումների մասին, որոնք հանդիսանում էին իրենց փորձերի առարկան: Ենթադրելով, որ միայն ժամանակն ու փորձը հնարավորինս գիտակցական կղարձեն այդ զգացումները, հետազոտվողները իրենց համարում էին իրենց փորձի ամենալավ մասնակիցները: Հետո հոգեբանության պատմության մեջ շատ հետազոտողներ եկան այն համոզմունքին, որ նման տեղեկատվությունն ընդունելի չէ հոգեբանական գիտության մեջ: Ապացուցելով, որ միաժամանակ չեն կարող լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ, այդ հետազոտողները կատարեցին հեղափոխություն հոգեբանության մեջ: Որոշ հոգեբաններ, բուռն կերպով պատասխանելով այդ հեղափոխությանը, որոշեցին, որ միայն կենդանիներն են պետք հոգեբանական փորձի համար: Չնայած հետազոտողները բավականին վարժ էին, որ մկների հետ փորձեր կատարեին. մկները նման չեն մարդկանց: Պետք էր գտնել «պարզ» մարդու: Այդպիսի մարդ դարձավ քուլեջի ուսանողը: 70-80 %-ն այլ ֆակուլտետներից էր, իսկ 90 %-ը՝ հոգեբանության ֆակուլտետից: Այդ ժամանակ մասնակիցները պետք է լինեին պարզամիտ, հետաքրքրվեին ուսումնասիրությամբ: Սակայն մասնակիցներն ունեին որոշակի գաղափարներ փորձի մասին, որին մասնակցում էին, և ձգտում էին հասնել կոնկրետ նպատակների, որոնք տարբերվում են հետազոտողի նպատակներից:

Քաղաքավարության օրենքները: Մի քանի կարևոր կանոններ կան, որոնց պետք է հետևել:

1. Եղևք տեղում: Երբ մարդը համաձայնում է փորձին մասնակցել, պետք է ուժ գործադրենք, որ կատարենք փորձին ներկա լինելու մեր պարտականությունը: Եթե կան խանգարող հանգա-

մանքներ, անհրաժեշտ է մասնակիցներին տեղյակ պահել այն մասին, որ փորձը հետաձգվում է ինչ-որ պատճառով:

2. Եղե՛ք արագաշարժ: Մասնակցի ժամանակը նույնպես քանկ է: Այդ ժամանակը անօգուտ մի՛ վատնեք:

3. Եղե՛ք պատրաստ: Պետք է մշակել փորձի բոլոր կանոնները, թե ինչպես հանդիպել մասնակիցների հետ: Եթե Դուք տալիս եք սխալ հրահանգ, ամբողջ փորձի ժամանակ անվստահ եք լինում: Մասնակիցները կարող են շփոթմունքի մեջ ընկնել կամ այնքան նյարդային լինել, որ ցույց տան վատ արդյունքներ:

4. Եղե՛ք սիրալիր: Փորձե՛ք պահանջ ներկայացնել խնդրանքի ձևով, գործածե՛ք «խնդրում եմ», «շնորհակալ եմ» բառերը:

5. Կոնֆիդենցիալ եղե՛ք: Ուշադիր եղեք ոչ միայն այն բանի նկատմամբ, ինչը մասնակիցը պատմում է Ձեզ, այլև, թե ինչպես է նա կատարում հրահանգները:

6. Եղե՛ք վարժ: Չպետք է լինել չափից ավելի լուրջ և ձևական կարգ ու կանոն պահանջող, որ մասնակիցներն իրենց անհարմար չզգան, բայց նաև մի՛ եղեք անփույթ և թեթևամիտ, որ նրանց չքվա՝ փորձը ձեզ համար այդքան էլ կարևոր չէ:

Պետք է փորձել բոլոր էթիկական կանոններին հետևել, չնայած հաճախ են լինում ռիսկային իրավիճակներ, երբ որևէ կարծիք հաշվի չի առնվում: Այդ պատճառով գիտական-ուսումնական կազմակերպություններում կան դիտող ինստիտուցիոնալ խորհուրդներ, որոնք հետևում են փորձի ընթացքին: Դրանք ձևավորվում են վարժ հետազոտողներից: Չնայած խորհուրդները կարող են օգտակար լինել, սակայն հիմնական պարտականություններն էթիկայի կողմով պատկանում են հետազոտողին:

Համաձայնություն ստանալը: Շատ կարևոր հարցերից է նաև համաձայնություն ստանալը: Մինչև մասնակիցները կհամաձայնեն մասնակցել, նրանց պետք է տեղեկացնել փորձի մասին, որպեսզի նրանք որոշում կայացնեն: Երբ նրանք կտեղեկացվեն հա-

մապատասխան ձևով, հետագոտողը պետք է նշի նրանց համաձայնությունը՝ անպայման գրավոր ձևով:

Ուսումնասիրությանը մասնակցելու համաձայնության ստացումը կատարվում է հետևյալ կերպ.

ա) Հոգեբանները մասնակիցների համաձայնությունը հիմնավորում են փաստաթղթով:

բ) Հոգեբանները մասնակիցներին հասկանալի լեզվով տեղեկացնում են գիտափորձի բնույթի մասին, բացատրում փորձից հրաժարվելու կամ ընթացքում դուրս գալու հետևանքների մասին և այլն:

գ) Հոգեբանները հատուկ միջոցներ են ձեռնարկում, որ պաշտպանեն մասնակիցներին հետագոտությունից հրաժարվելու բացասական հետևանքներից:

դ) Երբ մասնակցությունը պարտադիր ուսումնական պահանջ է, մասնակիցներին հնարավորություն է տրվում գործունեության այլընտրանքային ձևեր ընտրելու:

ե) Եթե լինում են դեպքեր, երբ տվյալ մասնակիցն օրենքով չի կարող հաղորդել մասնակցության մասին, ապա հոգեբանն աղեկավատորեն բացատրում է և ստանում համապատասխան թույլտվություն իրավաբանական լիազորի կողմից, եթե տվյալ համաձայնությունը թույլ է տրվում օրենքով:

զ) Մասնակցության համաձայնության հաղորդումը չի կարողանում:

Երբ համոզվում եք, որ մասնակիցները տվել են համաձայնություն, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետագոտող-մասնակից հարաբերություններին: Այդ հարաբերությունների բնույթը կարևոր է այնքանով, որ նրանք ազդում են ոչ միայն մասնակիցների իրավունքների վրա, այլև փորձի արդյունքի վրա:

Ենթադրվող պահանջները: Երբ մասնակիցները գալիս են հետագոտության, նրանք ունեն անորոշ վերաբերմունք այն մասին, թե ինչ պետք է անեն, բայց նրանք հետաքրքրված են և հստակ ու-

զում են իմանալ, թե ինչին է նվիրված փորձը: Հետազոտողներն իրենց հերթին փորձում են թաքցնել, իսկ մասնակիցները դա պարզելու համար հիմնվում են որոշակի նշանների վրա: Այդ նշանները, որոնք ազդում են մասնակիցների վրա փորձարարական վիճակում, կոչվում են ենթադրվող պահանջներ, որովհետև պահանջում են որոշակի պատասխան: Չնայած հետազոտողը մեծաթիվ տեղեկություններ է հաղորդում փորձի մասին, սակայն մասնակիցները, միևնույն է, փորձում են փոխառել ենթադրվող պահանջները: Եթե նրանք լսել են հոգեբանության մասին, կարդացել են հոգեբանական գիտափորձերի մասին կամ լսել են ընկերներից, կարող են ունենալ հետևյալ սպասումները. «հետազոտողը փորձում է ինձ գցել շոկի մեջ», «նա փորձում է որոշել իմ ինտելեկտը», «նա փորձում է խորամանկորեն ինձանից որևէ բան քաղել»: Երբեմն դրանք այնքան խորն են տպավորված լինում, որ նրանց հակառակը համոզել չի ստացվում: Փորձերից մեկի ժամանակ մասնակցին խնդրում են հիշել այն բառերի շարքը, որը նա պետք է լսեր ականջակալներով: Փորձի ժամանակ նա, ականջակալները պոկելով ականջներից, բղավեց. «Այս ականջակալներն ինձ հոսանք են հաղորդում»: Ենթադրելով, որ հնարավոր է, որ նա ճիշտ է, հետազոտողն արագորեն ստուգեց՝ արդյոք հոսանք է հաղորդում: Դրանք բավականին ապահով էին: Երբ հետազոտողը շարունակեց փորձը, մասնակիցն առաջվա պես պնդեց, որ հոսանք կա, որ իրեն փորձում են շոկի մեջ գցել: Հետազոտողին այդպես էլ չհաջողվեց ապացուցել հակառակը, ինչի արդյունքում էլ նրա տվյալները դուրս բերվեցին փորձից: Ենթադրվող պահանջների աղբյուր կարող են հանդիսանալ նաև հետազոտողները: Այդպիսի նշանների նվազեցման համար պետք է փորձը նախապես պլանավորել, կանոնավորել:

Հետազոտողները պարզել են, որ մասնակիցներն անընդհատ հետաքրքրվում են փորձի մասին, ենթադրում վարկածը, փորձում են երևալ կոմպետենտ, համակրանք ներշնչող: «Ի՞նչ կմտածեն

ին մասին» միտքն անհանգստացնում է մասնակիցներին և ձգտում բավարարել հետազոտողի սպասումները կամ օգնել՝ հաստատելու վարկածը:



***Բարոյական նորմերի անբեռուն օրենքով չի վերահսկվում,
բայց դրանց պահպանումը պարտադիր պահանջ է:***

ԳԼՈՒԽ 14

ՀՈԳԵՔԱՆԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոգեբան-հետազոտողի մասնագիտական գործունեությունը բավականին բարդ ու պատասխանատու ոլորտ է, որը պահանջում է համապատասխան կրթություն և մասնագիտական վարպետություն: Յուրաքանչյուր հոգեբանական գիտավորձ հետազոտողի ու հետազոտվողի համատեղ գործունեություն է, որը կազմակերպվում է փորձագետի կողմից և ուղղված է հետազոտվողների հոգեկան առանձնահատկությունների հետազոտմանը: Հետազոտության ընթացքում հետազոտողը մեծ հնարավորություններ ունի ազդելու հետազոտվողների վրա, ինչը նրան մեծ պատասխանատվության առջև է կանգնեցնում: Այս առումով հոգեդիագնոստիկային և հետազոտողներին ներկայացվում են սոցիալ-էթիկական մի շարք պահանջներ, որոնք կարելի է համարել հոգեդիագնոստիկայի սկզբունքներ: Դրանք կարգավորում են հոգեբանի գործունեությունը, ուստի յուրաքանչյուր հետազոտող պարտավոր է ապահովել բարոյագիտական բոլոր սկզբունքների հաստատումն ու պահպանումը ողջ հետազոտության ընթացքում: Հակառակ դեպքում կարող է խախտվել հոգեբանի մասնագիտական էթիկայի կարևորագույն՝ անձին բարոյական վնաս չհասցնելու պահանջը:

Այս բաժնում ամփոփված են Ամերիկայի հոգեբանական ասոցիացիայի (APA) էլեկտրոնային կայքում և ՌԴ ամսագրերում ներկայացված հոգեբանի գործունեությունը կարգավորող չափանիշները:



Հեղափոխությունից առաջ անհրաժեշտ է ծանոթանալ և ծանոթացնել աշխատանքի էթիկական սկզբունքներին:

Հետազոտողի աշխատանքի բարոյագիտական սկզբունքները

1. Հետազոտողը պարտավոր է լինել կոմպետենտ, ինչը ենթադրում է.

ա) լավ տեսական նախապատրաստվածություն,

բ) հոգեդիագնոստիկ մեթոդիկաների և դրանց գործածման կանոնների խոր իմացություն,

գ) համապատասխան մեթոդիկաների պրակտիկ օգտագործման բավականաչափ փորձի առկայություն:

Յուրաքանչյուր հոգեդիագնոստիկ մեթոդիկայի հիմքում ընկած է որևէ հոգեբանական տեսություն, ուստի ուսումնասիրվող երևույթի մասին լայն և խոր վերլուծություն ու հետևություններ կարելի է անել՝ միայն լավ իմանալով համապատասխան տեսու-

թյունը: Սակայն միայն տեսության գերազանց իմացությունը դեռ բավարար չէ. պետք է նաև խորությամբ տիրապետել մեթոդիկաներին, դրանց գործածման ընթացքին, տվյալների վերլուծության և մեկնաբանման կանոններին: Բացի այդ՝ անհրաժեշտ է համապատասխան մեթոդիկայի պրակտիկ գործածման բավականաչափ փորձ, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հմտություններ ու ունակություններ: Հակառակ դեպքում հետազոտողը կարող է լուրջ սխալներ թույլ տալ հետազոտության անցկացման ընթացքում, արդյունքները վերլուծելիս, մեկնաբանելիս և հետևություններ անելիս: Ոչ մի հոգեբան չի կարող կոմպետենտ լինել բոլոր թեստերի օգտագործման մեջ, այդ պատճառով ցանկացած թեստ կիրառելիս պետք է նախապես մանրակրկիտ պատրաստվել: Հետազոտողը պետք է տեղեկություն ունենա կիրառվող մեթոդի վալիդության, հուսալիության, կիրառման սահմանափակումների մասին: Որոշ թեստերի կիրառման համար հոգեբանը նույնիսկ պետք է ունենա հատուկ լիցենզիա (օրինակ՝ Կալիֆորնիական հոգեբանական հարցարանը):

2. Նախքան բուն հետազոտությունը սկսելը հետազոտողը պարտավոր է ճշգրիտ գնահատել դրա էթիկական ընդունելիությունը, այսինքն՝ որքանով է հետազոտության պլանը համապատասխանում հետազոտություն անցկացնելու սկզբունքներին: Մեթոդիկան ընտրելիս հետազոտողը պետք է լինի օբյեկտիվ. նախապատվություն չտա որևէ մեթոդի, այլ ընտրի դրանք՝ ելնելով հետազոտության շահերից: Կիրառվող մեթոդիկան պետք է համապատասխանի հետազոտության առաջադրված նպատակներին:

3. Հետազոտողը պարտավոր է նախքան հետազոտությունը սկսելը մասնակիցներին տեղեկացնել հետազոտության բոլոր կողմերի մասին, որոնք կարող են ազդել նրա՝ մասնակցություն ցուցաբերելու ցանկության վրա: Մասնակիցը պետք է որոշակի պատկերացում ունենա թեստավորման նպատակների, ընթացքի, նրբությունների մասին: Նրան անհրաժեշտ է զգուշացնել, որ հե-

տագոտության ընթացքում նա կարող է ակամա այնպիսի տեղեկություն տալ իր մասին, իր մտքերի և զգացմունքների մասին, որն ինքն էլ չի գիտակցում: Հետագոտողը պետք է հնարավորինս սպառնիչ պատասխաններ տա հետագոտության մասին հետագոտվողի բոլոր հարցերին:

4. Չի թույլատրվում մարդուն հոգեբանական հետագոտության ենթարկել նրա կամքին հակառակ կամ առանց նրա իմացության՝ բացառությամբ հատուկ դեպքերի, դատական, բժշկական պրակտիկայի՝ համաձայն օրենքի: Երեխաների հետ հետագոտությունը կարելի է իրականացնել միայն ծնողների կամ նրանց փոխարինող անձանց համաձայնությամբ: Ընդ որում, վերջիններս պետք է բարոյական և իրավական պատասխանատվություն ունենան երեխաների հանդեպ: Հետագոտողը պարտավոր է հարգել մասնակցի՝ հետագոտության ցանկացած պահին իր մասնակցությունը կրճատելու կամ ընդհատելու իրավունքը:

5. Հետագոտությունը պետք է սկսել հետագոտողի և հետագոտվողի միջև հստակ ու արդարացի համաձայնության հաստատմամբ, որը բաշխում է կողմերի պատասխանատվությունը: Հետագոտողը պարտավոր է հաշվի առնել այդ համաձայնության մեջ ներառված բոլոր խոստումներն ու պայմանավորվածությունները:

6. Հետագոտողը պարտավոր է հարգանքով վերաբերվել մասնակիցներին, հոգալ նրանց արժանապատվության և բարօրության մասին: Հոգեբանը պետք է զերծ մնա «պիտակներ փակցնելուց», հետագոտվողի հանդեպ կանխակալ վերաբերմունք դրսևորելուց: Նա պատասխանատվություն է կրում նաև հետագոտվողների հանդեպ իր գործընկերների, ասիստենտների, ուսանողների բարոյական վերաբերմունքի համար:

Պրակտիկ հոգեբանի գործունեության բարոյագիտական և պրոֆեսիոնալ-մասնագիտական սկզբունքները: Մի շարք զարգացած երկրներում գոյություն ունեն հոգեբանի բարոյական կո-

դեքսներ (օրենսգիրք), որոնք կանոնավորում են նրա մասնագիտական գործունեությունը: Այդ կողմերսերը կազմավորող պահանջների ու չափանիշների (ստանդարտների) խախտումը կարող է հանգեցնել հոգեբանին որակավորումից, դիպլոմից, հոգեբանական ծառայություններ իրականացնելուց զրկելուն:

Հայրենական կիրառական հոգեբանության խնդիրը ոչ միայն հոգեբանների առանձնացման և սկզբունքների միակ ձևավորված ցանկի բացակայությունն է, որոնք կանոնավորում են մասնագիտական գործունեությունը, այլև այն, որ մեր երկրում դեռ չկան մասնավոր հոգեբանական գործունեություն իրականացնելու թույլատրագիր (լիցենզիա) տալու մանրակրկիտ մշակված ընթացակարգեր, արարողակարգեր, ինչպես նաև սահմանված չեն այս ոլորտում պետական վերահսկողության ձևն ու բովանդակությունը:

Հոգեբանի բարոյական վարքականոնի պարտադիր բովանդակությունը կազմում են համընդհանուր բնույթ ունեցող մի շարք առավել կարևոր պահանջներն ու սկզբունքները, որոնց պահպանումն էլ պրակտիկ հոգեբանի արդյունավետ գործունեությունն է: Այդ սկզբունքներից առավել կարևորներն են՝

1. *Մարդու հիմնական իրավունքների և արժանապատվությանն նկատմամբ հարգանքը*: Յուրաքանչյուր մարդու եզակիության, անկրկնելիության և բացարձակ արժեքավորության, կարևորության ճանաչումը հոգեբանական գործունեության կարևոր պայմաններից մեկն է: Հոգեբանը հարգում է յուրաքանչյուրի անձնական կյանքի, գաղտնիության, ինքնորոշման և ինքնավարության իրավունքը, հոգ է տանում այն իրավիճակների լուծման համար, որոնցում իրավաբանական, մասնագիտական կամ այլ պարտականությունները հակադրության մեջ են մտնում այդ իրավունքների իրականացման հետ:

2. *Այցելուի բարօրության, քարեկեցության համար հոգածությունը*: Բժշկական պրակտիկայի հիմնական սկզբունքի նմանությամբ «Մի՛ վնասիր» դրույթը պետք է դառնա գլխավոր, կանոնա-

վորի հոգեբանի յուրաքանչյուր գործողությունը, նրա մասնագիտական փոխհարաբերությունները:

3. Կոմպետենտությունը (ձեռնահասություն, գիտակություն): Հոգեբանը աշխատանքում պետք է ձգտի պահպանել հեղինակավորության բարձր չափանիշները՝ միաժամանակ ընդունելով իր պրոֆեսիոնալ հեղինակավորության որոշակի սահմանափակությունը: Այսպես, հոգեբանը կարող է իրականացնել միայն այն ծառայությունները և օգտագործել միայն այն մեթոդները, որոնց վրա տարածվում է համապատասխան մասնագիտական որակավորումը՝ հաստատված կրթության մասին փաստաթղթերով, հոգեբանության կոնկրետ կիրառական ճյուղերում անցած քրեյնինգների մասին վկայականներով: Այնտեղ, որտեղ ընդունված մասնագիտական չափանիշները դեռևս մշակված չեն, հոգեբանը պետք է գործի շատ զգույշ և կիրառի բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի պաշտպանի նրանց բարեկեցությունը, ում հետ նա աշխատում է:

4. Ազնվությունը: Հոգեբանը իր մասնագիտական գործունեությունում պետք է ազնիվ լինի ինքն իր հետ և այն մարդկանց հետ, որոնց հետ նա ունենում է մասնագիտական փոխհարաբերություններ: Իր որակավորման, ծառայությունների, վարձատրության մասին տեղեկություններ հաղորդելիս նա իրավունք չունի կեղծ, ստահող հայտարարություններ անելու և այցելուներին զցելու մոլորությունների մեջ:

5. Երկակի հարաբերությունների արգելքը: Պրակտիկ գործունեություն իրականացնելիս հոգեբանը պարտավոր է պահպանել մասնագիտական հարաբերությունների մաքրությունը ցանկացած այլ հարաբերություններից և պահանջներից (անձնական, բարեկամական, սեռական): Այս առումով նպատակահարմար չէ հոգեբանական խորհրդատվություն անցկացնել բարեկամների, ընկերների, աշխատակիցների, այլ կերպ ասած՝ հոգեբանին շատ մոտ անձանց հետ, քանի որ նմանօրինակ փոխհարաբերություն-

ներում ոչ պրոֆեսիոնալ կարծրատիպերը անխուսափելիորեն ներխուժում են աշխատանքի մեջ և էապես ազդում նրա արդյունավետության վրա:

6. Պատասխանատվությունը: Պահպանելով բարձր մասնագիտական չափանիշները, բացատրելով իր մասնագիտական դերը և պարտականությունները՝ հոգեբանը լրիվ պատասխանատվություն է կրում իր վարքի համար:

Վերը ներկայացված պրակտիկ հոգեբանի գործունեության կազմակերպման բարոյագիտական և մասնագիտական սկզբունքները կրում են համընդհանուր բնույթ և որոշում են պրոֆեսիոնալ (արհեստավարժ) հոգեբանի աշխատանքի մակարդակն ու որակը:

Հոգեբանի մասնագիտական էթիկան (բարոյագիտությունը):

Հոգեբանի մասնագիտական էթիկան իրացվում է հոգեբանի կողմից իր գործունեությանը հատուկ բարոյականության պահանջներով, վարքի նորմերով ինչպես գործընկերների, այնպես էլ գիտական ընկերակցության, հետազոտվողների, փորձագետների, հոգեբանական օգնության դիմող անձանց հետ փոխհարաբերություններում:

Բոլոր կարգի գիտնականների համար կարևոր համընդհանուր բարոյական սկզբունքների և նորմերի հետ միասին (գիտական ազնվությունն ու կոռեկտությունը, փորձարարական տվյալների հավաքման ընթացքում ուրիշի գաղափարների և հետազոտությունների արդյունքների յուրացումից, չստուգված տվյալների վրա արված հսկայական եզրահանգումներից հրաժարվելը, սեփական գիտական հայացքների պահպանումը ցանկացած գիտական միջավայրում, հեղինակավոր գիտնականների հետ վիճաբանումը և այլն) հոգեբան-գիտնականը հետազոտություն անցկացնելիս չպետք է կիրառի այնպիսի մեթոդներ, տեխնիկա, ընթացակարգեր, որոնք կնվաստացնեն հետազոտվողների անձի արժանապատվությունը, նրանց հետաքրքրությունները: Նա պետք է

խստագույնս պահպանի հետազոտվողների հաղորդած տեղեկությունների չիրապարակման՝ գաղտնիության երաշխիքները, պետք է նաև հետազոտվողներին տեղեկացնի հետազոտության նպատակների մասին:

Այն դեպքում, երբ հետազոտվողի տված տեղեկությունների գիտակցորեն կամ անգիտակցորեն աղավաղումներից խուսափելու նպատակով հետազոտվողին նախապես չեն հաղորդվում գիտավորձի նպատակները, ապա դա պետք է արվի գիտավորձի ավարտից հետո: Եթե մասնակցությունը հետազոտությանը ենթադրում է հոգեբանի ներխուժում անձնական հետաքրքրությունների կամ ինտիմ ապրումների ոլորտը, ապա հետազոտվողին պետք է տրվի անվիճարկելի հնարավորություն՝ ցանկության դեպքում ցանկացած պահի հրաժարվել հետազոտությանը հետագա մասնակցությունից: Ստացված արդյունքների հիման վրա հանձնարարականներ տալը հոգեբանին չի ազատում դրանք հասարակական պրակտիկա ներդնելու հետևանքների բարոյական պատասխանատվությունից:

Հոգեբանի բարոյագիտական նորմերը

1. Հոգեբանի գործունեությունն ուղղված է մարդասիրական և սոցիալական այնպիսի նպատակների իրագործմանը, ինչպիսիք են բարեկեցությունը, առողջությունը, կյանքի բարձր որակը, անհատական և սոցիալական կյանքի տարբեր կազմավորումներում անհատների ու խմբերի լիարժեք զարգացումը: Քանի որ հոգեբանը միակ մասնագետը չէ, որի գործունեությունն ուղղված է այս նպատակների իրագործմանը, ուստի այլ մասնագետների հետ փորձի փոխանակումն ու համագործակցությունը ցանկալի, իսկ որոշ դեպքերում էլ անհրաժեշտ են՝ առանց վերջիններիս կոմպետենտության ու գիտելիքների նկատմամբ որևէ նախատրամադրվածության:

2. Հոգեբանությունը՝ որպես մասնագիտություն, կառավարվում է սկզբունքներով, որոնք ընդհանուր են բոլոր մասնագիտա-

կան կողերսների համար: Դրանք են՝ հարգանք անձի նկատմամբ, մարդու իրավունքների պաշտպանություն, պատասխանատվության զգացում, այցելուի (շահառուի) նկատմամբ անկեղծություն և ազնվություն, շրջահայացություն՝ գործիքներ և միջոցառումներ կիրառելիս, մասնագիտական կոմպետենտություն (գիտակություն), հաստատակամություն ներգործության կամ միջամտության նպատակին հասնելու մեջ և կայունություն դրա գիտական հիմքում:

3. Հոգեբանները չպետք է մասնակցեն կամ նպաստեն անհատի անկախության, նրա ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության դեմ ուղղված մեթոդների մշակմանը: Խոշտանգումների կամ ծաղրանքի անմիջական մշակմանը կամ իրականացմանը նպաստելը, բացի այն, որ հանցագործություն է, նաև հոգեբանի մասնագիտական էթիկայի ամենաձանր խախտումն է: Ո՛չ որպես հետազոտողներ, ո՛չ որպես օգնականներ կամ համագործակիցներ՝ հոգեբանները չպետք է մասնակցություն ունենան խոշտանգումների կամ այլ դաժան, ոչ մարդասիրական, ստորացուցիչ գործողությունների իրականացմանը՝ անկախ այն հանգամանքից, թե ով է դրանց օբյեկտը, ինչ մեղադրանքներ կամ կասկածանքներ են առաջ քաշվել տվյալ անձի դեմ, ինչ տեղեկատվություն է հնարավոր ստանալ նման ճանապարհով և նույնիսկ անկախ այն պայմաններից (ռազմական կոնֆլիկտ, քաղաքացիական պատերազմ, հեղափոխություններ, սհաբեկչական գործողություններ կամ ցանկացած այլ հանգամանքներ), որոնք կարող են դիտվել կամ բացատրվել որպես նման գործողությունների արդարացում:

4. Հոգեբանները պետք է նվազագույնը տեղյակ պահեն իրենց մասնագիտական միավորումներին մարդու իրավունքների ոտնահարման, ծաղրանքի, դաժանության, ձեռքակալման ոչ մարդասիրական կամ ստորացուցիչ պայմանների մասին՝ անկախ այն բանից, թե ով է գոհը, ինչպես նաև ցանկացած նման

դեպքում, ինչը հայտնի է դարձել իր մասնագիտական պրակտիկայում:

5. Հոգեբանները պետք է հարգեն իրենց այցելուների կրոնական և բարոյական համոզմունքները և հաշվի առնեն դրանք մասնագիտական ներգործության համար անհրաժեշտ հարցումների ժամանակ:

6. Օգնություն ցուցաբերելիս հոգեբանը չպետք է խտրական վերաբերմունք ցուցաբերի՝ ըստ ծագման, տարիքի, ռասայական և սոցիալական պատկանելիության, սեռի, հավատքի, գաղափարախոսության, ազգության և ցանկացած այլ տարբերակող ցուցանիշի:

7. Հոգեբանը չպետք է օգտագործի իր մասնագիտության ընձեռած իշխանությունն ու գերակայությունն այցելուի նկատմամբ, որպեսզի շահույթ կամ որևէ առավելություն, արտոնություն ստանա ինչպես իր, այնպես էլ երրորդ անձի համար:

8. Հատկապես գրավոր փաստաթղթերի պարագայում հոգեբանը պետք է չափազանց զգույշ լինի, զուսպ և քննադատորեն վերաբերվի իր հայեցակարգերին (կոնցեպցիաներին) ու եզրակացություններին՝ հաշվի առնելով, որ դրանք կարող են ընկալվել որպես նսեմացնող և խտրականություն դնող, օրինակ՝ նորմալ, ոչ նորմալ, ադապտացված, ոչ ադապտացված, ինտելիգենտ, մտավոր հետամնաց:

9. Հոգեբանները չպետք է ձեռնածուական (մանիպուլյատիվ) ընթացակարգեր կիրառեն այն նպատակով, որ որոշակի այցելուներ դիմեն իրենց, ինչպես նաև գործեն այնպես, որ մենաշնորհ ունենան իրենց բնագավառում: Հասարակական կազմակերպություններում աշխատող հոգեբանները չպետք է օգտագործեն այդ առավելությունը՝ սեփական մասնավոր պրակտիկան ընդլայնելու համար:

10. Հոգեբանը չպետք է թույլ տա իր անվան կամ ստորագրության օգտագործումն անհրաժեշտ որակավորում և պատրաստ-

վածություն չունեցող անձանց հոգեբանական մեթոդների անօրեն կիրառման համար: Հոգեբանները պետք է տեղյակ պահեն ուրիշի իրավունքների վրա կատարված ոտնձգության բոլոր դեպքերի մասին, որոնք հայտնի են դարձել իրենց: Անօգուտ և ստի վրա հիմնված գործողությունները չպետք է կոծկվեն հոգեբանի որակավորմամբ:

11. Այն դեպքում, երբ այցելուի անձնական հետաքրքրությունները հակադրության մեջ են հաստատության հետաքրքրությունների հետ, հոգեբանը պետք է առավելագույնս անկողմնակալ կատարի իր գործառույթները: Տվյալ հաստատություն օգնության համար դիմելը ենթադրում է այցելուի հետաքրքրությունների կարևորում, նրա հանդեպ հարգանք և ուշադրություն հոգեբանի կողմից, որը համապատասխան հանգամանքներում կարող է հանդես գալ որպես նրա պաշտպան հաստատության տնօրինության (ադմինիստրացիայի) հանդեպ:

Մասնագիտական կոնսլտերենություն և այլ մասնագետների հետ հարաբերությունների մասին

12. Մասնագիտացված հոգեբանի իրավունքներն ու պարտականությունները հիմնված են մասնագիտական անկախության և ինքնավարության սկզբունքի վրա՝ անկախ որևէ կազմակերպությունում զբաղեցրած ծառայողական դիրքից և ավելի բարձր աստիճան ունեցող մասնագետներից, տնօրինությունից:

13. Հոգեբանի մասնագիտական կարգավիճակը հիմնված է նրա ընդունակությունների և որակավորման վրա, որոնք անհրաժեշտ են նրա պարտականությունների իրականացման համար: Հոգեբանը պետք է մասնագիտորեն պատրաստված լինի և մասնագիտացում ունենա տվյալ ոլորտում կիրառվող մեթոդների, գործիքների, միջոցառումների կիրառման համար: Նրա աշխատանքի մասն է կազմում սեփական մասնագիտական գիտելիքները և կարողությունները ժամանակակից մակարդակի վրա պահելը:

14. Հոգեբանը չպետք է կիրառի մեթոդներ և արարողակարգեր, որոնք ժամանակակից գիտության շրջանակներում չեն անցել բավականաչափ փորձարկումներ առանց նախատրամադրված վերաբերմունքի գոյություն ունեցող բազմազան տեսությունների և դպրոցների հանդեպ: Դեռ գիտական գնահատական չստացած հոգեբանական մեթոդիկաների փորձարկման դեպքում այցելուին պետք է նախօրոք տեղեկացնել այդ մասին:

15. Բոլոր հոգեբանական տվյալները՝ որպես հետազոտության արդյունքներ, ինչպես նաև ներգործության և բուժման մասին տվյալները պետք է հասանելի լինեն միայն մասնագիտացված հոգեբաններին, որոնց պարտականությունների մեջ է մտնում դրանք չհրապարակելը ոչ գիտակ, իրազեկ անձանց մոտ: Հոգեբանները պետք է որոշակի քայլերի դիմեն համապատասխան փաստաթղթերը պահելու համար:

16. Երբ հոգեբանական հետազոտությունը կամ ներգործությունը պահանջում է սերտ համագործակցություն ուրիշ բնագավառի մասնագետների հետ, հոգեբանը պետք է ապահովի համապատասխան փոխազդեցությունն այնպես, որ այն ուղղված լինի հոգեբանի և այցելուի բարօրությանը:

17. Ինչպես կիրառելիս, այնպես էլ հասարակությանը ներկայացնելիս հոգեբանական մեթոդները չպետք է խառնվեն այնպիսի մեթոդների, որոնք չեն համապատասխանում հոգեբանության գիտական հիմքերին:

18. Չհրաժարվելով գիտական քննադատությունից այն դեպքում, երբ անհրաժեշտ է՝ հոգեբանները չպետք է խտրականորեն վերաբերվեն գործընկերներին և այլ մասնագիտությունների ներկայացուցիչներին, որոնք կիրառում են մույն կամ այլ գիտական մեթոդներ, և պետք է հարգանքով վերաբերվեն այն դպրոցներին ու ուղղություններին, որոնք գիտականորեն և մասնագիտորեն հմուտ ու գիտակ են:

19. Հոգեբանի աշխատանքը հիմնված է այլ մասնագետների հարգելու (և նման վերաբերմունքից օգտվելու) իրավունքի ու պարտականության վրա, հատկապես այն ոլորտներում, որոնք իրենց գործունեությամբ սերտորեն հարուս են հոգեբանությանը:

Ներգործության մասին

20. Հոգեբանը պետք է հրաժարվի ներգործությունից կամ միջամտությունից, եթե համոզված է, որ իր օգնությունն օգտագործվելու է ի վնաս կամ հակառակ անհատների, խմբերի, կազմակերպությունների կամ համայնքների օրինական հետաքրքրություններին:

21. Անհատների, խմբերի, կազմակերպությունների կամ համայնքների վրա ներգործություն կիրառելով՝ հոգեբանը պետք է նրանց անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրի լուծվող հիմնական խնդիրների, առաջադրված նպատակների և կիրառվող մեթոդների մասին: Անչափահասների և իրավաբանորեն անգործունակ անձանց դեպքում պիտի տեղեկացվեն ծնողները կամ խնամակալները: Ամեն դեպքում անհրաժեշտ է խուսափել անհատներով ձեռնածություն անելուց և ձգտել կոնկրետ դեպքի զարգացմանն ու ինքնավարությանը:

22. Հոգեբանը պետք է ձգտի ավարտել ներգործությունը և չերկարացնել այն տեղեկատվության կոծկման կամ ստելու մեթոդներով ինչպես դրված նպատակին հասնելու դեպքում, այնպես էլ վերջինիս անհնարինության պարագայում բավական երկար ժամանակի ընթացքում մատչելի մեթոդների և միջոցների կիրառումից հետո: Վերջին դեպքում անհատները, խմբերը, կազմակերպությունները կամ համայնքները պիտի տեղեկացվեն այն մասին, թե ինչ այլ հոգեբաններ կամ գիտական այլ բնագավառների ներկայացուցիչներ կարող են շարունակել ներգործությունը:

23. Ո՛չ ներգործության ավարտման, ո՛չ էլ այլ հոգեբանի կամ ուրիշ մասնագետի հետ խորհրդատվության առումով այցելուի ազատությունը չպետք է սահմանափակվի: Պետք է խրախուսել բա-

վական տեղեկատվության հիմքի վրա որոշում կայացնելու այցելուի ընդունակությունը: Հոգեբանը կարող է հրաժարվել ներգործությունը շարունակելուց, եթե այն կատարվում է ուրիշ մասնագետի կողմից իրականացվող այլ տիպի ներգործության հետ միաժամանակ:

24. Հոգեբանները չպետք է օգտագործեն իրենց կարգավիճակի ընձեռած իշխանությունը՝ պահանջելու համար առանձնահատուկ աշխատանքային պայմաններ կամ վարձատրություն, որը գերազանցում է սովորական պայմաններում ընդունվածը:

25. Հոգեբանը չպետք է թույլ տա, որ իրեն ներգրավեն մասնագիտական առումով անորոշ վիճակի մեջ, որում անտեղի կամ երկիմաստ կլինեն նրա դերն ու գործառնությունները:

26. Հոգեբանները չպետք է խառնվեն այլ մասնագետների ձեռնարկած գործողություններին:

27. Այն դեպքում, երբ հոգեբանի ծառայությունները պահանջվում են գովազդային կամ առևտրային կազմակերպությունների համար, նա պետք է համագործակցի՝ նպատակ ունենալով ապահովելու տեղեկատվության ճշմարտացիությունը և պաշտպանելու անհատների հետաքրքրությունները:

28. Հոգեբանը պետք է հատուկ զգուշավորություն ցուցաբերի, որպեսզի չառաջացնի անհիմն ակնկալիքներ, որոնք վերջինս անկարող կլինի հետագայում մասնագիտորեն իրականացնել:

Հեղազոտական աշխատանքների և կրթության մասին

29. Բոլոր հոգեբաններն էլ, հոգեբանության ինչ բնագավառում էլ աշխատելիս լինեն, պիտի ձգտեն նպաստել ընդհանրապես գիտության, մասնավորապես հոգեբանության առաջընթացին՝ իրականացնելով հետզոտություններ և իրենց գործունեության մեջ հավատարիմ մնալով գիտական մոտեցումներին, ինչպես նաև իրենց գիտելիքները փոխանցելով ուսանողներին և այլ մասնագետներին:

30. Հետազոտություն իրականացնելիս հոգեբանը պետք է կտրականապես հրաժարվի այնպիսի գործողություններից, որոնք կարող են կայուն, անդարձելի կամ ոչ անհրաժեշտ վնաս պատճառել հետազոտվողներին: Ցանկացած հետազոտական ծրագրի մասնակիցները պետք է արտահայտեն իրենց միանշանակ համաձայնությունը փորձի անցկացմանը. անչափահասների կամ իրավաբանորեն անգործունակ անձանց դեպքում մնան համաձայնություն պետք է ստացվի ծնողներից կամ խնամակալներից:

31. Եթե հոգեբանական հետազոտությունն ուղեկցվում է ժամանակավոր որևէ վնասով կամ անհարմարությամբ, ինչպես, օրինակ, էլեկտրական ցնցումը (շոկը) կամ զգայական մեկուսացումը, հետազոտողը պետք է առաջին հերթին համոզվի, որ փորձի բոլոր մասնակիցները գործում են բոլորովին անկախ՝ առանց ցանկացած ձևի կողմնակի ճնշման. ոչ մեկի մասնակցությունը փորձին չպիտի թույլատրվի, քանի դեռ հետազոտողը չի համոզվել, որ այդ վնասի մասին հետազոտվողները իրազեկվել են նախօրոք և տվել են իրենց համաձայնությունը: Փորձից առաջ համաձայնություն տալու դեպքում անգամ հետազոտվողը ցանկացած պահի կարող է որոշում ընդունել ծրագրում իր հետագա մասնակցությունն ընդհատելու մասին:

32. Եթե գիտափորձի պայմանները պահանջում են ապատեղեկատվություն տալ կամ ստել հետազոտվողներին, հոգեբանը պետք է համոզվի, որ դա չի հանգեցնի որևէ տևական վնասի փորձի մասնակիցներին, ամեն դեպքում ստի անհրաժեշտությունն ու փորձարարական բնույթը պետք է բացահայտվեն փորձարարական ծրագրի ավարտից հետո:

33. Հոգեբանական հետազոտությունները նորմալ իրավիճակում՝ ինչպես փորձարարական, այնպես էլ դիտողական, պետք է իրականացվեն հարգանքով անհատի արժանապատվության հանդեպ, սեռական վարքի հետազոտության ժամանակ՝ հավատալիքների, ինտիմ իրավիճակների, համեստության, խոհեմու-

թյան հանդեպ, ինչպես նաև տարեցների, հիվանդների, ձերբակալվածներին հետազոտելիս, այսինքն՝ այնպիսի անձանց հանդեպ, որոնք ոչ միայն որոշակի սոցիալական սահմանափակումներ ունեն, այլև մարդկային լուրջ դրամա են ապրում:

34. Կենդանիների հետ կատարվող փորձերի դեպքում առաջ քաշված հետազոտական նպատակին հասնելու համար բացարձակ անհրաժեշտություն չներկայացնող, բայց գիտության և մարդու հետաքրքրությունների տեսանկյունից արդարացված տանջանքները, վնասն ու անհարմարությունը պետք է բացառվեն կամ հասցվեն ամենացածր մակարդակի: Կենդանիներին վիրահատելու դեպքում պետք է կիրառվեն ցավազրկողներ, և ձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր՝ բարդությունները կանխարգելելու համար: Կենդանիների հետ անմիջական հետազոտական աշխատանքով զբաղվող անձնակազմը պետք է կենդանիներին պահելիս, նրանց հետ վարվելիս և էվթանազիայի դեպքում առաջնորդվի միջազգային չափորոշիչներով:

Ընդհանուր սկզբունքներ

Այս բաժինը բաղկացած է ընդհանուր սկզբունքներից: Ընդհանուր սկզբունքները, ի տարբերություն բարոյական չափորոշիչների, հետապնդում են որոշակի նպատակ՝ առաջնորդել և ոգեշնչել հոգեբաններին դեպի մասնագիտության ամենաբարձր բարոյական գաղափարները: Ընդհանուր սկզբունքները, ի տարբերություն էթիկական չափորոշիչների, չեն ներկայացնում պարտավորություններ և չպետք է լինեն պատժամիջոցներ կիրառելու հիմք: Հիմնվելով ընդհանուր սկզբունքների, այս նպատակներից որևէ մեկի համար՝ խաթարում է ընդհանուր սկզբունքների նշանակությունն ու նպատակները:

Սկզբունք Ա՝ օգնել և չվնասել

Հոգեբանները ձգտում են օգնել նրանց, ում հետ նրանք աշխատում են՝ փորձելով վնաս չպատճառել: Իրենց մասնագիտական գործողություններում հոգեբանները ձգտում են պաշտպանել

այն մարդկանց բարեկեցությունն ու իրավունքները, որոնց հետ նրանք համագործակցում են մասնագիտորեն, ինչպես նաև փորձում են հոգալ ազդեցության ենթարկվող այլ անձանց և կենդանիների, հետազոտությունների կենսապայմանների բարօրության մասին: Երբ հակամարտություններ են տեղի ունենում հոգեբանների պարտավորությունների կամ մտահոգությունների միջև, նրանք փորձում են այդ հակամարտությունները լուծել պատասխանատու կերպով, որը թույլ է տալիս խուսափել կամ իջեցնել վնասի մակարդակը: Քանի որ հոգեբանների գիտական և մասնագիտական դատողությունները, գործողությունները կարող են ազդել մյուսների կյանքի վրա, նրանք զգոն են, զգուշանում են անձնական, ֆինանսական, սոցիալական, կազմակերպական կամ քաղաքական գործոններից, որոնք կարող են հանգեցնել իրենց ազդեցության չարաշահմանը: Հոգեբանները ձգտում են տեղյակ լինել իրենց ֆիզիկական և հոգեկան առողջության հնարավոր ազդեցության մասին, որը կարող է անդրադառնալ մարդկանց վրա աշխատելու իրենց ունակության վրա:

Սկզբունք Բ՝ հավատարմություն և պատասխանատվություն

Հոգեբանները վստահության վրա հիմնված հարաբերություններ են հաստատում նրանց հետ, ում հետ նրանք աշխատում են: Նրանք գիտակցում են սեփական մասնագիտական և գիտական պարտականությունները հասարակության ու որոշակի համայնքների հանդեպ, որոնց հետ նրանք աշխատում են: Հոգեբանները պահպանում են վարքագծի մասնագիտական չափանիշները, հստակեցնում են իրենց մասնագիտական դերը և պարտականությունները, ընդունում են իրենց վարքի համար պատշաճ պատասխանատվություն և ձգտում են գերծ մնալ շահերի բախումներից, որոնք կարող են հանգեցնել շահագործման կամ վնասի: Հոգեբանները խորհրդակցում, դիմում կամ համագործակցում են այլ մասնագետների և հաստատությունների հետ այնքանով, որքանով նրանք պետք է ծառայեն այն մարդկանց շահերին, որոնց

հետ նրանք աշխատում են: Նրանք մտահոգված են իրենց գործընկերների գիտական և մասնագիտական վարքագծի բարոյական համապատասխանությամբ: Հոգեբանները ձգտում են աջակցել իրենց մասնագիտական ժամանակի քիչ կամ ոչ ամբողջական հատուցմամբ կամ անձնական շահով:

Սկզբունք Գ՝ անկախություն

Հոգեբանները ձգտում են խթանել ազնվությունը և ճշմարտությունը գիտության, ուսուցման և հոգեբանության պրակտիկայում: Այս գործողություններում հոգեբանները չեն գողանում, խաբում կամ խարդախության մեջ գցում, զբաղվում կեղծիքով կամ փաստի չարաշահումներով: Հոգեբանները ձգտում են պահել իրենց խոստումները և խուսափել անտեղի կամ անորոշ որոշումներից: Հոգեբանները լուրջ պարտավորություն ունեն այն դեպքերում, երբ խաբեությունը կարող է բարոյապես արդարացված լինել՝ օգնությունը առավելագույնի հասցնելու և վնասը նվազագույնի հասցնելու համար՝ հաշվի առնելով այդպիսի մեթոդների անհրաժեշտությունը, հնարավոր հետևանքներն ու դրանց պատասխանատվությունը, շտկելու արդյունքում առաջացած անվստահության կամ այլ վնասակար հետևանքների վերացման անհրաժեշտությունը:

Սկզբունք Գ՝ արդարություն

Հոգեբանները գիտակցում են, որ արդարությունն ու արդարադատությունը թույլ են տալիս բոլոր անձանց հասնել և օգտվել հոգեբանության ներդրումներից ու հոգեբանների կողմից իրականացվող գործընթացներից, ընթացակարգերից ու ծառայությունների հավասար որակից: Հոգեբաններն իրականացնում են խոհեմ դատողություն և նախազգուշական միջոցներ են ձեռնարկում, որպեսզի նրանց հնարավոր կողմնորոշումները, իրենց իրավասությունների սահմանները և իրենց փորձի սահմանափակումները չհանգեցնեն կամ չհամապատասխանեն անարդար գործելակերպի:

Սկզբունք Ե՝ հարգանք մարդկանց իրավունքների և արժանապատվության հանդեպ

Հոգեբանները հարգում են բոլոր մարդկանց արժանապատվությունն ու արժանիքները, ինչպես նաև անհատների գաղտնիության, ինքնորոշման իրավունքները: Հոգեբանները գիտակցում են, որ կարող են անհրաժեշտ լինել հատուկ երաշխիքներ՝ պաշտպանելու մարդկանց կամ համայնքների իրավունքները և բարօրությունը, որոնց խոցելիությունը թույլ չի տալիս ինքնուրույն որոշումներ կայացնել: Հոգեբանները գիտակցում և հարգում են մշակութային, անհատական և դերային տարբերությունները, ներառյալ տարիքի, սեռի, գենդերային ինքնության, ռասայի, էթնիկության, մշակույթի, ազգային ծագման, կրոնի, սեռական կողմնորոշման, հաշմանդամության, լեզվի և սոցիալ-տնտեսական կարգավիճակի վրա հիմնված և նման խմբերի անդամների հետ աշխատելու գործոնները: Հոգեբանները փորձում են վերացնել այն ազդեցությունները, որոնք հիմնված են այդ գործոնների վրա, և չեն մասնակցում կամ հորդորում ուրիշների գործունեությունը՝ հիմնվելով այդպիսի նախապաշարմունքների վրա:

14.1. Բարոյագիտական (էթիկական) վերահսկողությունը հոգեբանական գիտափորձում

Հոգեբանությունը՝ որպես համեմատաբար երիտասարդ գիտություն, այսօր, ինչպես երբևէ, էթիկայի հետ փոխկապակցված լինելու անհրաժեշտություն ունի: Այս հիմնահարցին սերտորեն առնչվում է հոգեբանական մեթոդների, մասնավորապես հոգեբանական գիտափորձի մեթոդի թույլատրելի սահմանների հիմնահարցը:

Մարդու կողմից ստացված յուրաքանչյուր գիտական գիտելիք միշտ ենթադրում է դրան հետևող մարդկային գործունեություն, լինի դա տվյալ գիտելիքի հիման վրա նոր գիտելիքի դրվագ-

ների ստացմանն ուղղված, թե դրա յուրացմանն ու օգտագործմանն ուղղված գործունեություն: Այն իմացություն է ոչ միայն բնության երևույթների, այլև առանձնահատկությունների մասին: Միշտ գոյություն ունի ոչ միայն գիտություն՝ ինչ-որ բանի «մասին», այլև՝ ինչ-որ բանի «համար»: Այդ իսկ պատճառով մարդու մասին գիտելիքները, այդ թվում՝ և հոգեբանության բնագավառից, միշտ կարող են վտանգավոր դառնալ մարդու համար:

Բիոէթիկա գիտությունը զբաղվում է մասնավորապես մարդկանց և կենդանիների հետ կատարվող բժշկականաբանական փորձերի էթիկական կարգավորմամբ: Այս կապակցությամբ մտորելու տեղիք է տալիս այն հանգամանքը, որ հոգեբանական գիտության զարգացումն անհնար է պատկերացնել առանց մարդկանց հետ փորձեր կատարելու: Եվ այս դեպքում անխուսափելի է հետազոտողի այնպիսի ներազդեցությունների ռիսկը, որոնք տրավմատիկ են մարդու հոգեկան աշխարհի համար կամ նվաստացնում են մարդկային արժանապատվությունը:

Այնպես, ինչպես բիոէթիկայում, ստեղծվում են միջոցներ մարդկային կյանքի և առողջության համար վտանգավոր միջամտությունների դեմ, հոգեբանական մեթոդների ասպարեզում նույնպես անհրաժեշտ է նման քայլեր ձեռնարկել: Իհարկե, հոգեբանական գիտափորձն ավելի «մեղմ» է թվում, քան բժշկականաբանականը: Սակայն այդ գիտափորձի ազդեցությունը, միջնորդավորված լինելով, միայն թվում է այդպիսին, քանի որ հոգեբանությունը գործ ունի արտաքին ազդեցությունների հանդեպ այնքան զգայուն և խոցելի մատերիայի հետ, ինչպիսին է մարդու հոգեկանը, նրա հոգին, նրա անձը և, ի վերջո, «ինքնությունը»: Գրականության մեջ նկարագրված է էթիկական տեսանկյունից դասական դարձած մի փորձ: Այն իրագործել է 1960-ական թթ. ամերիկյան հետազոտող Ս. Միլգրամը:

Սենյակում նստած հետազոտվողներին ապակե միջնորմից այն կողմ գտնվող հետազոտվողներն առաջադրանքներ էին տա-

լիս: Մխալ պատասխանի դեպքում հետազոտողը պատժում էր հետազոտվողին հոսանքի հարվածով: Հարվածի ուժգնությունը մեծանում էր սխալ պատասխանների աճի հետ մեկտեղ: Հետազոտողները տեսնում էին հետազոտվողների տանջանքները, բայց նրանց մեծամասնությունը շարունակում էր մեծացնել պատիժը՝ հասցնելով լարումը մինչև 450 վոլտ, որը սարքի վրա նշված էր «վտանգավոր է, լուրջ ցնցում» գրությամբ:

Փորձի հետաքրքրությունն այն էր, որ իրականում հոսանքի հարվածներ չկային, սպակու այն կողմում դերասաններ էին, որոնք ցուցադրում էին տանջանքներ՝ կախված նրանից, թե ինչ հոսանքի «չափաբաժին» էր տալիս նրանց հետազոտողը: Այլ կերպ ասած՝ փորձարկվում էին հենց իրենք՝ հետազոտողները: Ըստ Միլգրամի՝ փորձի նպատակն էր պարզել, թե որքան հեռու կարող է գնալ մարդը, երբ նրան ինչ-որ բան են հրամայում, տվյալ դեպքում՝ ավելի շատ ցավ պատճառել ներկա սուբյեկտին: Այս փորձի էթիկական քննադատությունն ընթանում է հետևյալ կերպ: Արդյո՞ք անհրաժեշտ էր իրականացնել այդ գիտափորձը, եթե պատմականորեն գոյություն ունի այնպիսի երևույթ, ինչպիսին է ենթարկվել այն հրամանին, որը պահանջում է ցավ պատճառել ուրիշին: Կարելի՞ էր արդյոք խաբել հետազոտվողներին, թե՞ գիտափորձը պետք է կազմակերպվեր այլ կերպ՝ բացառելով սուտը:

Այս և նմանատիպ այլ դեպքերը մեծ արձագանք առաջացրին Արևելքում և հանգեցրին նրան, որ առաջացավ կենդանիների ու մարդկանց հետ տարվող փորձարկումների վերահսկողության ավելի կատարելագործված ձև: Կազմավորվեցին նույնիսկ «էթիկական կոմիտեներ» այն կառույցներին կից, որտեղ կային նման փորձեր իրականացնող լաբորատորիաներ: Ցավոք, նույնը չի արձանագրվում էթիկայի և բարոյական նորմերի վտանգավոր եզրագծի վրա տատանվող հայրենական հոգեբանական գիտության մեջ: Մեթոդի ընտրության խնդիրը բազմակողմանի է, և այն ընդհանրապես դժվար է առանձնացնել համընդհանուր էթիկական

համատեքստից: Մասնավորապես չկա «հետազոտվող» հասկացության հատուկ սահմանում. հաճախ այդ դերում հանդես են գալիս հենց հոգեբանները: Նրանք ազատ կարող են փորձեր կատարել իրենք իրենց վրա այնպես, ինչպես իրենց հարմար է, ինչպես դա անում է ֆիզիոլոգ Հեդը, որը կտրել էր իր մատների նյարդային վերջավորությունները՝ հետևելու համար, թե ինչպես են վերականգնվում (վերադառնում) շոշափողական զգայությունները: Բայց այդ ամենն այնքան անվնաս չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից: Երբ մարդը սկսում է տանջել իրեն՝ նույնիսկ կառուցողական գիտական նպատակներից ելնելով, դրանով իսկ ստեղծում է նախադեպ. հերքում է այն միտքը, որ այդպիսի բան ընդհանրապես հնարավոր է անել մարդու հետ:

Հետազոտվողների մյուս տարատեսակը պրոֆեսիոնալ հետազոտվողներ են, օրինակ՝ հետազոտվող-օդաչուներ, տիեզերագնացներ, մարզիկներ, որոնք ինքնակամ գնում են ռիսկի, վճարվում են դրա համար և գիտեն, թե ինչ քայլի են դիմում: Նաև գոյություն ունեն կամավորներ՝ «թնդանոթի միս»՝ գիտատեխնիկական, կենսաբժշկական տեսակի փորձերի համար: Այս խմբի հետ անցկացնում են պտույտների ցենտրիֆուգներում, պահում են անօդ տարածության մեջ, կազմում են վիճակագրական տվյալներ և որոշում են փորձի անցկացման սահմանային պայմանները:

Կան նաև ոչ ինքնակամ հետազոտվողներ՝ Ուրալի և Չերնոբիլի ատոմային վթարների, երկրաշարժերի, այլ աղետների տուժածներ և այլն: Եվ ընդհանրապես մենք բոլորս հետազոտվողներ ենք և միևնույն ժամանակ հետազոտողներ գիտատեխնիկական առաջընթաց անվանումով համընդհանուր փորձի մեջ: Այդ իսկ պատճառով հաճախ դժվար է էական տարբերություն գտնել հետազոտողի և հետազոտվողի միջև:

Վերլուծենք ռուս գիտնականների բանավեճերի նյութերը՝ «հոգեբանությունը և էթիկական օրինաչափությունները» թեմայով: Յու. Շրեյդերը գրում է. «Յուրաքանչյուր փորձ, կապված

մեկ ուրիշի հոգեկանի հետ, այս թե այն կերպ փոխում է հետազոտողի հոգեկանը: Ես այդ գգում եմ նույնիսկ այնպիսի պարզ գործունեության ընթացքում, ինչպիսին է էթիկայի մասին դասախոսություններ կարդալը: Որպես դասախոս՝ ես մշտապես դժվարություններ ունեմ. գգում եմ, որ ասելով ինչ-որ շատ հիմար բան՝ կյանքում (այդ թվում՝ և իմ կյանքում) այն ավելի իրական եմ դարձնում, քան առաջ էր...»:

Երբ մենք արտաբերում ենք ինչ-որ բան, այն մտքում դառնում է հնարավոր...:

«Արտաբերումը» փոխում է իրադրությունը հատկապես հոգեբանական փորձերում:

Երբ մարդը հետազոտվողի դերում է հայտնվում, նա փոխվում է, նույնիսկ եթե համոզված է, որ ինքն է հետազոտողը: Այս դեպքում թույլատրելի չէ փորձեր կատարել յուրահատուկ (բացառիկ) օբյեկտի հետ, իսկ յուրաքանչյուրիս հոգեկան ասպարեզը յուրահատուկ է:

Հետազոտողն այդ ասպարեզի հանդեպ իշխանություն ունի. նա կարող է անվերադարձ փոխել այն, քանի որ կատարվածը անդառնալի է: Հետազոտողը կարող է մեծ նշանակություն չտալ իր ունեցած իշխանությանը, բայց և այնպես կարող է հաճույք ստանալ դրանից: Այդ իսկ պատճառով էթիկական փորձաքննության և վերահսկողության առկայությունը հոգեբանական փորձում ուղղակի պարտադիր է և ոչ պակաս, այլ ավելի ուժեղ, քան կենսաբանական գիտության մեջ»:

Վ. Ջինչենկոն գրում է. «Գոյություն ունի մարդու ինքնագնահատականը և հավակնությունների մակարդակը բացահայտող փորձերի կատարելագործված համակարգ: Բոլոր նմանատիպ փորձնական մեթոդներում կա վտանգ. մարդուն կարծես այնպիսի իրադրության մեջ են գցում, որտեղ նա կորցնում է հավատը սեփական ուժերի հանդեպ, իրեն վիրավորված (թերի) է գգում: Ավելի քան 100 տարի է, ինչ հոգեբանության մեջ շարունակվում է բո-

լորի և ամեն ինչի ախտորոշումը՝ ուղեղի զարգացումը, հիշողությունը, պերցեպտիվ կարողությունները և այլն: Ստեղծված են բազմաթիվ թեստեր, տարվում է մեծ աշխատանք նոր թեստեր կազմելու ուղղությամբ, բայց դրանցից շատերը վալիդ չեն ստացվում ուղիղ և փոխաբերական իմաստով...»:

Ըստ Բ. Բրատուսի՝ «պետք է նշել, որ չնայած էթիկայի՝ որպես բարոյական ակունքների գիտության և հոգեբանության միջև կապը խորապես ընդունվում է բոլորի կողմից, այդ կապի իրական պատկերը, փաստորեն, շատ քիչ է ներկայացված: Իրականում հոգեբաններին էթիկան այդքան էլ չի հետաքրքրում. հետազոտման գործընթացում դրա դերը լավագույն դեպքում քննարկումների մեջ է և վերջնական ձայնի իրավունք չունի: Հոգեբանական հետազոտման խնդիրը տվյալ հոգեբանական ուղղության, հոգեբանական մեխանիզմների տրամաբանությունը բացահայտելն է, իսկ դա արդյո՞ք կապ ունի բարոյական օրենքի հետ, թե՞ ոչ, արդեն երկրորդական խնդիր է: Ավելին, Ջիզմունդ Ֆրոյդից հետո շատ հոգեբաններ յուրացրին, որ բարոյականությունը շատ հաճախ ուղղակի կեղծ է, դիրք է, իրական դեմքը կոծկելու միջոց, որը պայմանավորված է միայն արտաքին ճնշմամբ, ընդունված ձևերով, ցենզուրայով և այլն: Այդ իսկ պատճառով, չնայած հաստատված համբերատարությանը և հարգանքին, ներքին համոզմունքը, երբեմն վերածվելով ամուր նախահամոզմունքի, հոգեբանից պահանջում է հեռու մնալ բարոյական նորմերից և մտորումներից: Կարևոր է հարաբերակցել հոգեբանության ու էթիկայի գծերը, ցույց տալ դրանց հատման ոչ պատահական լինելը և բարոյական զարգացման խնդիրներին ծառայելու հոգեբանության գիտակցված նպատակները:

Գրականություն (Գլուխ 13 և 14)

1. APA Ethical Principles of Psychologists and Code of Conduct, 2010-2016, <https://www.apa.org/ethics/code>:
2. **Братусь Б. С.** (ред.), Психология и этика, <https://psychojournal.ru/books/2109-bratus-b-s-psihiologija-i-jetika.html>.
3. **Герринг Р., Зимбардо Ф.**, Психология и жизнь, 16-е изд., СПб.: «Питер», 2004, 955 с.
4. **Давыдов В. В., Брушлинский А. В., Юдин Б. Г.** и др., Психология и этика. Опыт построения дискуссии, Издательство: «Бахрах», 1999, 128 с.
5. **Киреева З. А.**, Методы психологического исследования, Курган: Изд-во Курганского гос. ун-та, 2014, 186 с.
6. Этический кодекс психолога, Российское психологическое общество, 2021, <http://psyrus.ru/rpo/documentation/ethics.php>.

ԳԼՈՒԽ 15
ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՄԱՆ
ՄԵԹՈԳՆԵՐ

Հոգեբանական հետազոտությունների արդյունքների մշակման ժամանակ վիճակագրական մեթոդները կիրառվում են գիտափորձի, հարցման և դիտման ընթացքում հավաքված քանակական տվյալներից առավելագույն հնարավոր օգտակար տեղեկատվություն ստանալու համար: Մասնավորապես հոգեճանաչման հետազոտությունների ընթացքում ստացվող տվյալների մշակման պարագայում այն հետազոտվողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների մասին տեղեկատվությունն է: Հոգեբանական հետազոտությունը սովորաբար հենվում է քանակական տվյալների վրա: Ժամանակակից մաթեմատիկական վիճակագրությունը գիտելիքների մեծ և բարդ համակարգ է: Չի կարելի կարծել, որ յուրաքանչյուր հոգեբան, որի մասնագիտացումն է հոգեճանաչումը, տիրապետում է այդ գիտելիքներին: Չնայած դրան՝ վիճակագրությունն անընդհատ անհրաժեշտ է հոգեբանին նրա ամենօրյա աշխատանքում: Վիճակագրագետները մշակել են պարզ մեթոդների մի ամբողջ համակարգ, որոնք ամբողջապես մատչելի են յուրաքանչյուր մարդու, որը չի մոռացել այն, ինչ սովորել է միջնակարգ դպրոցում: Կախված վիճակագրությանը ներկայացվող գիտության և գործնականի պահանջներից՝ ստեղծվում են աշխարհագրական, բժշկական, հոգեբանական վիճակագրության ձեռնարկներ (օրինակ՝ Наследов А. Д., Математические методы психологического исследования. Анализ и интерпретация данных. Учебное, СПб.: «Речь», 2004, 392 с.): Իսկ ժամանակակից «SPPS» վիճակագրական վերլուծության փաթեթը ներկայացված է վերջին տարիներին հրատարակված ձեռնարկներում (Слепко Ю. Н., Ледовская Т. В., Цымбалюк А. Э.,

Анализ данных и интерпретация результатов психологического исследования: учебное пособие, изд-е 2-е, Ярославль: Изд-во ЯГПУ им. К. Д. Ушинского, 2015, 164 с.):

Վերոնշյալ աշխատությունում առաջարկվում են հոգեբանների համար վիճակագրության պարզագույն մեթոդներ: Դրանց կիրառման համար անհրաժեշտ բոլոր հաշվումները կարելի է կատարել անձնական համակարգչի միջոցով կամ նույնիսկ հասարակ հաշվիչով: Այդ մեթոդների տեղին և գրագետ կիրառումը պրակտիկ մասնագետին և հետազոտողին հնարավորություն են տալիս նախնական վերլուծություն անցկացնելով ստանալու հետազոտության քանակական տվյալների ընդհանուր պատկերը, օպերատիվ վերահսկելու հետազոտության ընթացքը: Հետագայում անհրաժեշտության դեպքում հետազոտության նյութերը կարող են փոխանցվել մասնագետ-վիճակագրագետին առավել խորքային մշակման համար:

Վիճակագրական սանդղակներ: Այս կամ այն վիճակագրական մեթոդի կիրառումը պայմանավորվում է նրանով, թե որ վիճակագրական սանդղակին է վերաբերում ստացված նյութը: Ս. Ստիվենեն առաջարկել է տարբերակել չորս վիճակագրական սանդղակներ՝ անվանական (նոմինատիվ), կարգային, ինտերվալային, հարաբերությունների:

Իմանալով յուրաքանչյուր սանդղակի բնութագրական յուրահատկությունները՝ բարդ չի լինում որոշել, թե որ սանդղակին պետք է վերագրել վիճակագրական մշակման ենթակա նյութը:

Անվանական սանդղակ: Այս սանդղակին է վերաբերում այն նյութը, որում ուսումնասիրվող օբյեկտները տարբերվում են միմյանցից իրենց որակական հատկանիշներով: Այսպիսի նյութի մշակման ժամանակ իր բնութագրիչներից կախված նյութն ինչ-որ հերթականությամբ դասակարգելու կարիք ընդհանրապես չի առաջանում: Սկզբունքորեն օբյեկտները կարելի է դասավորել ցանկացած հերթականությամբ: Օրինակ՝ ուսումնասիրվում է միջազ-

գային գիտաժողովի կազմը, որտեղ կան ֆրանսիացիներ, անգլիացիներ, գերմանացիներ, ռուսներ և այլն: Արդյո՞ք նշանակություն ունի, թե ինչ հերթականությամբ են դասավորված մասնակիցները: Կարելի է դասակարգել այբբենական կարգով:

Այն հարմար է, սակայն պարզ է, որ սկզբունքային տարբերություն այս դասակարգման մեջ չկա: Նյութի թարգմանության ժամանակ այս հերթականությունը կխախտվի: Կարելի է նաև ազգային խմբերը դասակարգել ըստ մասնակիցների թվի: Սակայն այս նյութի համեմատումն այլ գիտաժողովի նյութի հետ ցույց կտա, որ կարգն այնքան էլ չի համապատասխանում: Անվանական սանդղակի օբյեկտները կարելի է դասակարգել ցանկացած հերթականությամբ՝ կախված հետազոտության նպատակից: Տվյալ բնույթի նյութի վիճակագրական մշակման ժամանակ պետք է հաշվի առնել այն, թե միավորների քանի թվով է ներկայացված յուրաքանչյուր օբյեկտը: Կան բավական արդյունավետ վիճակագրական մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս տվյալ թվային տվյալներից ստանալու գիտական արժեքավոր եզրակացություններ (օրինակ՝ չ-ի քառակուսի մեթոդը):

Կարգային սանդղակ: Եթե անվանական սանդղակում ուսումնասիրվող օբյեկտների հերթականությունը գործնականում ոչ մի դեր չէր խաղում, ապա կարգային սանդղակում, ինչպես պարզ է անվանումից, հենց հերթականության վրա է դրվում ողջ շեշտադրումը: Վիճակագրության մեջ այս սանդղակին են վերագրում այն հետազոտական նյութը, որում ուսումնասիրման են ենթակա մեկ կամ մի քանի դասերի պատկանող օբյեկտներ, որոնք համեմատման ժամանակ տարբերակվում են շատ քիչ, բարձր-ցածր որակումներով:

Առավել հեշտ է ցուցադրել կարգային սանդղակի առանձնահատկությունները, եթե անդրադառնանք յուրաքանչյուր սպորտային մրցությունների հրապարակվող արդյունքներին: Արդյունքներում հերթով թվարկվում են առաջին, երկրորդ, երրորդ և

համապատասխանաբար մյուս հերթական տեղերը: Սակայն վերջնական արդյունքներում հաճախ բացակայում են կամ երկրորդ պլան են մղվում մարզիկի իրական հաջողությունները, իսկ առաջին պլանում են հայտնվում նրանց կարգային տեղերը: Ենթադրենք, որ շախմատիստ Դ-ն մրցումներում զբաղեցրել է առաջին տեղը, իսկ ինչպիսի՞ն են նրա ձեռքբերումները: Պարզվում է, որ նա հավաքել է 12 միավոր: Շախմատիստ Ե-ն զբաղեցրել է երկրորդ տեղը՝ հավաքելով 10 միավոր, երրորդը՝ Ժ-ն՝ 6 միավորով և այլն: Մրցությունում նրանց հավաքած միավորները երկրորդ պլան են մղվում, և ուշադրության են արժանանում միայն նրանց զբաղեցրած տեղերը: Հենց հիմնական իմաստն էլ այն է, որ կարգային տեղին է հատկացվում ուշադրությունը: Մեր օրինակում, եթե փորձենք շախմատիստների ձեռքբերումները համեմատել թվաբանորեն, պետք է պնդենք, որ Ժ-ն երկու անգամ ավելի վատ է խաղում, քան Դ-ն: Սակայն սրան չի կարելի համաձայնել: Մրցություններն ավելի բարդ համակարգեր են, և թվաբանությունից վերանալով՝ պետք է ընդունել, որ Ժ-ն Դ-ից հետ է մնում երկու կարգային տեղով:

Նկատենք, որ այլ մրցություններում բացարձակ ձեռքբերումների հարաբերակցությունը կարող է այլ լինել. առաջին տեղը զբաղեցնողը կարող է մյուսին գերազանցել ընդամենը կես միավորով: Այստեղ կարևոր է, որ նա հավաքել է առավելագույն միավորներ: Միայն դրանից է կախված նրա կարգային տեղը:

Ինտերվալային սանդղակ: Այս տիպին են վերաբերում այնպիսի նյութեր, որոնցում տրված է ուսումնասիրվող օբյեկտի քանակական գնահատականը՝ ամրագրված միավորներով: Դիտարկենք մի փորձի օրինակ, որում հաշվի էր առնվում, թե քանի կետ կարող են դնել առավելագույն հնարավոր արագությամբ աշխատող Ալեքսանդրը և նրա հասակակիցները: Փորձում գնահատվող միավոր է հանդիսացել կետերի թիվը: Հաշվելով դրանք՝ հետազոտողը ստանում է կետերի այն բացարձակ թիվը, որն առաջարկ-

ված ժամանակահատվածում կարող է դնել յուրաքանչյուր հետազոտվող: Ինտերվալային սանդղակի նյութի մեկնաբանման ժամանակ հիմնական բարդությունն այն է, որ անհրաժեշտ է տրամադրության տակ ունենալ այնպիսի միավոր, որը բոլոր կրկնակի փորձերի ժամանակ նույնական կլինի, այսինքն՝ անփոփոխ և նմանատիպ: Շախմատիստների օրինակում (կարգային սանդղակ) նման միավոր ընդհանրապես գոյություն չունի:

Իրականում հաշվի են առնվում յուրաքանչյուր մասնակցի կողմից մրցության ժամանակ հաղթած պարտիաների քանակը: Սակայն պարզ է, որ պարտիաները նույնական չեն: Հնարավոր է, որ մրցության ժամանակ չորրորդ տեղը զբաղեցրած մասնակիցը, որը հաղթել է վեց պարտիաներում, հաղթել է նաև բարդագույն պարտիա մրցության առաջնորդի հետ պայքարում: Սակայն վերջնական արդյունքներում ընդունվում է, որ բոլոր պարտիաները նույնական են: Սակայն իրականում այդպես չէ: Ահա թե ինչու նման նյութի հետ աշխատելիս առավել տեղին է դրանք գնահատել կարգային, այլ ոչ ինտերվալային սանդղակի պահանջների համաձայն: Ինտերվալային սանդղակին համապատասխան նյութերը պետք է ունենան չափման միավոր:

Հարաբերությունների սանդղակ: Այս սանդղակին են վերաբերում այն նյութերը, որոնցում ոչ միայն հաշվի են առնվում ամրագրված միավորները, ինչպես ինտերվալային սանդղակում, այլև միմյանց միջև ստացված գումարային արդյունքների հարաբերությունները: Նման հարաբերությունների հետ աշխատելու համար անհրաժեշտ է ունենալ որոշակի բացարձակ կետ, որից սկսվում է հաշվարկը: Հոգեբանական օբյեկտների ուսումնասիրման ժամանակ այս սանդղակը գործնականում կիրառելի չէ:

Վիճակագրության պարամետրիկ և ոչ պարամետրիկ մեթոդներ: Սկսելով իր հետազոտությունների վիճակագրական մշակումը՝ հոգեբանը պետք է որոշի, թե տրված նյութի առանձնահատկություններից ինչպիսի մեթոդներ են նրան առավել համապա-

տասխանում՝ պարամետրիկ կամ ոչ պարամետրիկ: Նրանց միջև տարբերությունները հեշտ է հասկանալ: Վերադառնանք դպրոցականների շարժողական արագության հետազոտմանը: Ինչպես պետք է մշակել ստացված տվյալները: Նախ պետք է գրանցել բոլոր կատարված չափումները. տվյալ դեպքում այն յուրաքանչյուր հետազոտվողի կողմից դրված կետերի քանակն է, ապա պահանջվում է յուրաքանչյուր հետազոտվողի համար հաշվել բոլոր կատարված փորձերի միջին թվաքանականը: Հետո բոլոր նշված տվյալները դասակարգվում են ըստ ինչ-որ սկզբունքի, ասենք՝ սկսած ամենափոքր մեծությունից մինչև ամենամեծը: Տվյալների ամբողջական դիտարկման հեշտացման համար դրանք միավորվում են խմբերում. տվյալ դեպքում կարելի է միավորել 5-9 չափում մեկ խմբում: Նման միավորման համար նախընտրելի է, որ դեպքերի ընդհանուր թիվը չանցնի հարյուրից, որպեսզի միավորման ժամանակ խմբերի թիվը տասներկուսի կարգի լինի: Հետագայում անհրաժեշտ է ճշգրտել, թե քանի անգամ են հանդիպել յուրաքանչյուր խմբին համապատասխանող թվային արժեքները: Արդյունքում անհրաժեշտ է յուրաքանչյուր խմբի համար գրել նրա քանակությունը: Ստացված տվյալներն անվանվում են քանակությունների բաշխում: Խորհուրդ է տրվում տվյալ բաշխումը ներկայացնելու գծապատկերի տեսքով: Տվյալ բաշխման սահմանները օգնում են լուծել մշակման վիճակագրական մեթոդների հարցը: Հաճախ այն ունենում է զանգի տեսք՝ բաշխման կենտրոնում ամենամեծ հանդիպող հաճախականությամբ և համաչափ տարածվող ճյուղերով: Տվյալ բաշխումն անվանում ենք նորմալ: Այս հասկացությունը մաթեմատիկական վիճակագրություն է ներմուծել Կ. Ֆ. Գաուսը, դրա համար էլ կորը անվանում են նաև Գաուսյան կոր: Նա է տվել այդ կորի մաթեմատիկական բնութագրումը: Գաուսի (կամ նորմալ բաշխման) կորի կառուցման համար տեսականորեն անհրաժեշտ է դեպքերի մեծ բազմություն: Սակայն գործնականում ստիպված ենք լինում բավարարվել այն փաստա-

ցի նյութով, որն առկա է հետազոտությունում: Եթե հետազոտողի տրամադրության տակ գտնվող տվյալները գծապատկերով արտահայտելուց հետո միայն աննշան են տարբերվում նորմալ բաշխման կորից, ապա դա հետազոտողին իրավունք է տալիս վիճակագրական վերլուծության ընթացքում կիրառելու պարամետրիկ մեթոդներ, որոնց ելակետային դրույթները հենվում են նորմալ բաշխման Գաուսի կորի վրա: Նորմալ բաշխումը անվանում են պարամետրիկ, քանի որ Գաուսի կորի կառուցման և վերլուծության համար անհրաժեշտ և բավարար է ունենալ միայն երկու մեծություններ՝ միջին թվաբանականը, որը պետք է համապատասխանի կորի կենտրոնում կառուցվող ուղղահայացի բարձրությանը, և, այսպես կոչված, միջին քառակուսային կամ ստանդարտ շեղումը, մեծություններ, որոնք բնութագրում են կորի տատանումների չափը:

Պարամետրիկ մեթոդները հետազոտողին լայն հնարավորություններ են ընձեռում, սակայն չպետք է մոռանալ, որ նրանց կիրառումը թույլատրելի է միայն այն դեպքում, եթե մշակվող տվյալների բաշխումը միայն ոչ էական է տարբերվում գաուսյան բաշխումից: Պարամետրիկ մեթոդների կիրառման անհնարինության դեպքում անհրաժեշտ է դիմել ոչ պարամետրիկ մեթոդներին: Վերջիններս արդյունավետորեն մշակվում են վերջին երեք-չորս տասնամյակներում և նրանց մշակումը նախևառաջ պայմանավորվել է մի շարք գիտությունների, մասնավորապես հոգեբանության պահանջներից ելնելով: Վերջիններս ապացուցել են իրենց բարձր արդյունավետությունը և միևնույն ժամանակ չեն պահանջում բարդ հաշվողական աշխատանք:

Մերօրյա հոգեբան-հետազոտողը պետք է հաշվի առնի, որ «գոյություն ունեն մեծ քանակությամբ տվյալներ, որոնք կա՛մ ընդհանրապես չեն ենթարկվում վերլուծության նորմալ բաշխման կորի միջոցով, կա՛մ չեն բավարարում նրա կիրառման հիմնական նախադրյալներին»:

Հիմնական ամբողջություն և ընտրանք: Հոգեբանն անընդ-
հատ անհրաժեշտություն է զգում գործառելու այս երկու հասկա-
ցությունները: Հիմնական ամբողջությունն կամ պարզապես ամ-
բողջությունն այն բազմությունն է, որի բոլոր բաղադրիչներն
օժտված են ինչ-որ ընդհանուր երևույթով: Այսպես, բոլոր վեցե-
րորդ դասարանում սովորող դեռահաս, տասներկուամյա դպրո-
ցականներն ամբողջություն են կազմում: Նույն տարիքի երեխա-
ները, որոնք դպրոցում չեն սովորում կամ էլ սովորում են այլ դա-
սարաններում, այս բազմության մեջ ընդգրկվելու ենթակա չեն: Իր
խնդրի կոնկրետացման ընթացքում հոգեբանն անխուսափելիոր-
քեն պետք է սահմանազատի իր կողմից ուսումնասիրվող ամբող-
ջությունը: Արժի՞ արդյոք վերը նշված ամբողջության մեջ ընդ-
գրկել քոլեջներում, գիմնազիաներում կամ նմանատիպ հաստա-
տություններում նույն տարիքի սովորողներին: Այս և նմանատիպ
այլ հարցերի պատասխանները օգնում է գտնել վիճակագրությու-
նը: Դեպքերի մեծամասնությունում հոգեբանն ի վիճակի չէ ու-
սումնասիրել ողջ ամբողջությունը: Չնայած դա կապված է որոշա-
կի տեղեկատվության կորստի հետ, այնուամենայնիվ անհրաժեշ-
տություն է առաջանում ուսումնասիրելու ամբողջության մի մասը,
որն էլ անվանվում է ընտրանք:

Հետազոտողի խնդիրն է այնպիսի ընտրանքի ընտրությունը,
որը կներկայացնի ամբողջությունը, այլ կերպ ասած՝ ամբողջու-
թյան բաղադրիչների երևույթները պետք է ներկայացված լինեն
ընտրանքում: Այդպիսի ընտրանք կազմելը, որն ամբողջապես
կարտացոլի ամբողջությունը, գործնականում անհնար է: Այդ
պատճառով տեղեկատվության որոշ կորուստներ անխուսափելի
են: Կարևոր է, որ ընտրանքում պահպանված լինեն տվյալ հետա-
զոտության տեսանկյունից կարևորագույն երևույթները: Հնարա-
վոր են դեպքեր, երբ անհրաժեշտ է կազմել նույն ամբողջության
երկու ընտրանքներ, որի համար գոյություն ունեն համապատաս-
խան վիճակագրական մեթոդներ, ընդ որում՝ պետք է պարզել՝

արդյոք վերցված չեն ընտրանքները տարբեր ամբողջություններից: Այս և մնանատիպ այլ կազուսներ հոգեբանը պետք է նկատի ունենա ընտրողական հետազոտություններ անցկացնելիս:

Անհրաժեշտ է քննարկել այն խնդիրների տիպերը, որոնց հետ առավել հաճախ աշխատում է հոգեբանը: Համապատասխանաբար բերվում են այն վիճակագրական մեթոդները, որոնք կիրառվում են տվյալ խնդիրների լուծմանն ուղղված հոգեբանական նյութի վերլուծության ժամանակ:

Խնդիրների առաջին տիպ: Հոգեբանը պետք է տա ինչ-որ ընտրանքի, օրինակ՝ որոշակի դասարանի դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունների սեղմ, սակայն բավական բովանդակալից բնութագրումը: Տվյալ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է տրամադրության տակ ունենալ ճանաչողական փորձերի արդյունքներ: Բնական է, որ այդ փորձերը նախօրոք պետք է պլանավորել այնպես, որ դրանք տեղեկատվություն տան խմբի այն առանձնահատկությունների մասին, որոնք տվյալ դեպքում հետաքրքրում են հոգեբանին: Դրանք կարող են լինել մտավոր զարգացման, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններ, աշխատունակության մասին տվյալներ և այլն:

Ստանալով բոլոր փորձարարական տվյալները և դիտարկման նյութերը՝ անհրաժեշտ է մտածել այն մասին, թե ինչպես դրանք օգտվողին մատուցել ամփոփ ձևով՝ այդ պարագայում տեղեկատվության կորուստը նվազագույնի հասցնելու համար: Նման խնդիրների լուծման ժամանակ վիճակագրական մեթոդների ցանկում սովորաբար տեղ են գտնում և՛ պարամետրիկ, և՛ ոչ պարամետրիկ մեթոդները: Տվյալ վիճակագրական մեթոդների և դրանց օգտագործման մասին կխոսվի հետագայում:

Խնդիրների երկրորդ տիպ: Մրանք առավել հաճախ հանդիպող խնդիրներն են հոգեբանի հետազոտական և գործնական գործունեության մեջ: Միմյանց միջև համեմատվում են մի քանի ընտրանքներ՝ հաստատելու համար՝ անկախ են արդյոք ընտ-

բանքները, թե պատկանում են նույն ամբողջությանը: Այսպիսով, անցկացնելով հետազոտություններ երկու տարբեր դպրոցների ութերորդ դասարաններում՝ հոգեբանը համեմատում է այդ ընտրանքները միմյանց միջև:

Խնդիրների այս նույն տիպին է վերաբերում նույն ընտրանքից ստացված երկու ցուցանիշների շարքերի փոխկապակցվածության աստիճանի որոշումը, և տվյալ մշակման համար առավել հաճախ կիրառում են կորելյացիոն մեթոդը:

Խնդիրների երրորդ տիպ: Սրանք խնդիրներ են, որոնցում մշակման են ենթակա ժամանակավոր շարքերը, նրանցում տեղակայված են ժամանակի մեջ փոփոխական ցուցանիշները, նրանց մաս անվանում են դինամիկ շարքեր: Նախորդ խնդիրներում ժամանակի գործոնը հաշվի չէր առնվում, և նյութը վերլուծվում էր այնպես, կարծես այն հետազոտվողին է հասել միևնույն ժամանակահատվածում: Այսպիսի բացթողում թույլատրելի է միայն այն պարագայում, երբ նյութի հավաքման ժամանակահատվածը եղել է այնքան կարճ, որ այն չի կրել էական փոփոխություններ: Սակայն հոգեբանը ստիպված է լինում աշխատել մաս այնպիսի նյութի հետ, որում առավելագույն հետաքրքրություն է ներկայացնում հատկապես նրա փոփոխությունը ժամանակի մեջ: Ենթադրենք հոգեբանը պետք է ուսումնասիրի դպրոցականների աշխատունակության փոփոխություններն ուսումնական քառորդի ընթացքում: Այս դեպքում առավել տեղեկատվական են այն ցուցանիշները, որոնք հնարավորություն են տալիս դատելու աշխատունակության դինամիկայի մասին: Սկսելով նման նյութի մշակումը՝ հոգեբանը պետք է գիտակցի, որ դինամիկ շարքերի վերլուծության ժամանակ իմաստ չունի հաշվել շարքի միջին թվաբանականը, քանի որ այն կրողարկի շարժընթացի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը:

Նախկինում խոսվել է լոնգիտյուդային հետազոտության մասին, որում բովանդակային միանման հոգեբանական նյութը նույն

ընտրանքից հավաքվում է երկարատև ժամանակահատվածում: Լոնգհայտյուղի ցուցանիշները նույնպես դիմամիկ շարքեր են, և դրանց մշակման ժամանակ անհրաժեշտ է օգտագործել տվյալ շարքերի համար նախատեսված մեթոդներ:

Խնդիրների չորրորդ տիպ: Խնդիրներ, որոնք կանգնում են հոգեբանի առաջ, որը զբաղվում է ճանաչողական մեթոդիկաների կառուցմամբ, դրանց կիրառման արդյունքների ստուգմամբ ու մշակմամբ: Հոգեճանաչումը, հատկապես թեստաբանությունը, ունի մի շարք կանոններ, որոնց կիրառումը պետք է ապահովի ճանաչողական մեթոդներով ստացվող տեղեկատվության բարձր արդյունավետությունը: Այսպես, մեթոդիկան պետք է լինի հուսալի, հումոզեն և վալիդ: Թեստաբանությունում արմատացած կանոնների համաձայն՝ բոլոր այս հատկությունները ստուգվում են վիճակագրական մեթոդներով:

Ամփոփելով ասվածը՝ տեղին է նշել հոգեբանական հետազոտության անցկացման ժամանակ վիճակագրության մի քանի հնարավորություններ: Վիճակագրությունը՝ որպես այդպիսին, չի ստեղծում նոր գիտական տեղեկատվություն: Տվյալ տեղեկատվությունը կա՛ն պարունակվում է, կա՛ն էլ չի պարունակվում հետազոտվողի կողմից ստացված նյութերում: Վիճակագրության նշանակությունը տվյալ նյութից առավելագույն օգտակար տեղեկատվության դուրսբերման մեջ է: Մինևույն ժամանակ վիճակագրությունը ցույց է տալիս, որ այդ տեղեկատվությունը պատահական, չէ, և որ ստացված տվյալներն օժտված են որոշակի նշանակալի հավանականությամբ:

Վիճակագրական մեթոդները բացահայտում են ուսումնասիրվող երևույթների միջև եղած կապերը: Սակայն պետք է հստակ գիտակցել, որ ինչքան էլ բարձր լինի այդպիսի կապերի հավանականությունը, այն իրավունք չի տալիս հետազոտողին դրանք համարելու պատճառահետևանքային: Ինչպես գրում են հայտնի անգլիացի գիտնականներ Դ. Է. Յուլը և Մ. Ի. Կենդելը,

«Վիճակագրությունը վերլուծում է տվյալներ, որոնք ենթարկվում են բազում պատճառների ազդեցությանը»:

Վիճակագրությունը, օրինակ, հաստատում է, որ կա նշանակալի կապ շարժողական արագության և թեմիս խաղի միջև: Մակայն այստեղից դեռևս չի հետևում, որ հենց շարժողական արագությունն է արդյունավետ խաղի պատճառը: Որոշ դեպքերում նույնիսկ չի կարելի բացառել այն, որ շարժողական արագությունն արդյունավետ խաղի հետևանք է: Գոյություն ունեցող պատճառահետևանքային հարաբերությունները հաստատելու կամ ժխտելու համար հոգեբանը հաճախ պլանավորում է հետազոտությունների ամբողջ շարքեր: Եթե դրանք ճիշտ կառուցվեն և անցկացվեն, ապա վիճակագրությունը կօգնի դրանց արդյունքներից արտածել այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է հետազոտողին սեփական վարկածը հիմնավորելու, ժխտելու կամ այն չապացուցված համարելու համար:

15.1. Հիմնական բանաձևեր և գնահատման սանդղակներ

Ահա թե ինչ է անհրաժեշտ գիտենալ վիճակագրության օգտագործման ժամանակ: Վիճակագրական վերլուծության բանաձևերի օրինակներ: Միջին թվաբանականը հաշվելու համար

կիրառվում է հետևյալ բանաձևը՝ $\bar{x} = \frac{\sum x}{n}$, իսկ միջին քառա-

կուսային շեղման համար՝ $\sigma = \sqrt{\frac{\sum (x - \bar{x})^2}{n}}$ բանաձևը:

Այս բանաձևերում \bar{x} -ը միջին թվաբանականն է, x -ը՝ ուսումնասիրվող շարքի յուրաքանչյուր մեծությունը, \sum -ը՝ գումարը, σ -ն՝ միջին քառակուսային շեղումն է, n -ը՝ ուսումնասիրվող շարքի անդամների թիվը:

Այս կամ այն մեծության հանդիպման հաճախականությունը ցույց տվող f տառի ներառումը ոչինչ չի փոխում միջին թվաբանականի և միջին քառակուսային շեղման բանաձևերում:

Ուստի

$$\bar{x} = \frac{\sum x}{n} = \frac{\sum fx}{n}, \sigma = \sqrt{\frac{\sum (x - \bar{x})^2}{n}} = \sqrt{\frac{\sum f(x - \bar{x})^2}{n}}$$

բանաձևերը միանգամայն համարժեք են:

$$t\text{-ն հաշվելու բանաձևն է՝ } \tau = \frac{x_1 - x_2}{S}$$

$$S^2 = \sqrt{\frac{n_1 + n_2}{n_1 * n_2}} * \sqrt{\frac{\sum (x_1 - \bar{x}_1)^2 + \sum (x_2 - \bar{x}_2)^2}{n_1 + n_2 - 2}}$$

Դիտարկենք պարամետրիկ մեթոդը: Կիրառվել է Ստյուդենտի t հայտանիշը, որի բանաձևը գույգ ցուցանիշների համեմատության համար այսպիսին է՝

$$t = \frac{\bar{x}}{S/\sqrt{n}}:$$

Պետք է հաշվել այս բանաձևի մեջ մտնող բոլոր մեծությունները: Դիսպերսիոն գործակից S -ը ստանալու համար օգտագործվում է

$$S^2 = \frac{\sum x^2 - (\sum x)^2/n}{n}$$

բանաձևը:

Ստացված մեծությունից արմատ հանելով՝ ստանում ենք S -ի արժեքը: Այս բանաձևով կատարվում են համապատասխան հաշվարկները: Եթե հետազոտողը համոզված է, որ կորելյացվող երկու շարքերը կարելի է դիտարկել որպես պարամետրիկ շարքեր, ապա կորելյացիայի գործակիցը հաշվելու համար կիրառվում է պարամետրիկ մեթոդը՝ ըստ Պիրսոնի բանաձևի՝

$$r = \frac{\sum(x-\bar{x}) \sum(y-\bar{y})}{\sqrt{\sum(x-\bar{x})^2 \sum(y-\bar{y})^2}} :$$

Գործակիցը ցույց է տալիս «Համանմանություն» և «Դասակարգում» կորելյացիայի գործակցի հաշվարկ՝ ըստ Պիրսոնի: Գործակիցը ցույց է տալիս «Համանմանություն» և «Դասակարգում» թեստերի խնդիրների կատարման միջև կապի սերտությունը: «Համանմանություն» թեստով ստացված տվյալները նշանակված են x-ով, «Դասակարգում» թեստով ստացված տվյալները՝ y-ով:

Հաշվարկները պարզեցնելու համար ներմուծված են որոշ նույնություններ:

$$\begin{aligned} \sum(x-\bar{x})^2 &= \sum x^2 - \frac{(\sum x)^2}{n} \\ \sum(y-\bar{y})^2 &= \sum y^2 - \frac{(\sum y)^2}{n} \\ \sum(x-\bar{x})(y-\bar{y}) &= \sum xy - \frac{\sum x \sum y}{n} \end{aligned}$$

d-ն x շարքի և y շարքի ռանգերի (կարգերի) տարբերությունն է, այսինքն՝ (Rx - Ry), կամ միջին թվաբանականների տարբերությունը՝ ($x_1 - x_2 = d$):

Դիտարկվող և ենթադրվող (տեսական) թվակազմերի միջև տարբերության չափի որոշման մեթոդը x^2 -ն է, որի բանաձևն է՝

$$x^2 = \sum \frac{(f_o - f_e)^2}{f_o},$$

որտեղ f_o -ն դիտարկվող թվակազմերն են, f_e -ն՝ ենթադրվող (տեսական) թվակազմերը:

Բոլոր բանաձևերը առկա են հակարգչային ծրագրում, իսկ ցուցանիշների հավաստիությունը ստուգվում է ըստ ստորև բերված համապատասխան սանդղակների:



Վիճակագրական վերլուծության բանաչևերն սովորաբար «Excel» կամ «SPSS» համակարգչային ծրագրում:

Վիճակագրական վերլուծության արդյունքների գնահատման սանդղակներ

Աղյուսակ 11.

t-Ստյուդենտի չափանիշի կրիտիկական նշանակությունները/արժեքները (չուղ-դորդված այլընտրանքների ստուգման համար երկկողմանի չափանիշներ)

df	P				df	p			
	0,10	0,05	0,01	0,001		0,10	0,05	0,01	0,001
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	6,314	12,70	63,65	636,61	46	1,679	2,013	2,687	3,515
2	2,920	4,303	9,925	31,602	47	1,678	2,012	2,685	3,510
3	2,353	3,182	5,841	12,923	48	1,677	2,011	2,682	3,505
4	2,132	2,776	4,604	8,610	49	1,677	2,010	2,680	3,500
5	2,015	2,571	4,032	6,869	50	1,676	2,009	2,678	3,496
6	1,943	2,447	3,707	5,959	51	1,675	2,008	2,676	3,492
7	1,895	2,365	3,499	5,408	52	1,675	2,007	2,674	3,488
8	1,860	2,306	3,355	5,041	53	1,674	2,006	2,672	3,484
9	1,833	2,262	3,250	4,781	54	1,674	2,005	2,670	3,480
10	1,812	2,228	3,169	4,587	55	1,673	2,004	2,668	3,476
11	1,796	2,201	3,106	4,437	56	1,673	2,003	2,667	3,473
12	1,782	2,179	3,055	4,318	57	1,672	2,002	2,665	3,470
13	1,771	2,160	3,012	4,221	58	1,672	2,002	2,663	3,466

14	1,761	2,145	2,977	4,140	59	1,671	2,001	2,662	3,463
15	1,753	2,131	2,947	4,073	60	1,671	2,000	2,660	3,460
16	1,746	2,120	2,921	4,015	61	1,670	2,000	2,659	3,457
17	1,740	2,110	2,898	3,965	62	1,670	1,999	2,657	3,454
18	1,734	2,101	2,878	3,922	63	1,669	1,998	2,656	3,452
19	1,729	2,093	2,861	3,883	64	1,669	1,998	2,655	3,449
20	1,725	2,086	2,845	3,850	65	1,669	1,997	2,654	3,447
21	1,721	2,080	2,831	3,819	66	1,668	1,997	2,652	3,444
22	1,717	2,074	2,819	3,792	67	1,668	1,996	2,651	3,442
23	1,714	2,069	2,807	3,768	68	1,668	1,995	2,650	3,439
24	1,711	2,064	2,797	3,745	69	1,667	1,995	2,649	3,437
25	1,708	2,060	2,787	3,725	70	1,667	1,994	2,648	3,435
26	1,706	2,056	2,779	3,707	71	1,667	1,994	2,647	3,433
27	1,703	2,052	2,771	3,690	72	1,666	1,993	2,646	3,431
28	1,701	2,049	2,763	3,674	73	1,666	1,993	2,645	3,429
29	1,699	2,045	2,756	3,659	74	1,666	1,993	2,644	3,427
30	1,697	2,042	2,750	3,646	75	1,665	1,992	2,643	3,425
31	1,696	2,040	2,744	3,633	76	1,665	1,992	2,642	3,423
32	1,694	2,037	2,738	3,622	78	1,665	1,991	2,640	3,420
33	1,692	2,035	2,733	3,611	79	1,664	1,990	2,639	3,418
34	1,691	2,032	2,728	3,601	80	1,664	1,990	2,639	3,416
35	1,690	2,030	2,724	3,591	90	1,662	1,987	2,632	3,402
36	1,688	2,028	2,719	3,582	100	1,660	1,984	2,626	3,390
37	1,687	2,026	2,715	3,574	110	1,659	1,982	2,621	3,381
38	1,686	2,024	2,712	3,566	120	1,658	1,980	2,617	3,373
39	1,685	2,023	2,708	3,558	130	1,657	1,978	2,614	3,367
40	1,684	2,021	2,704	3,551	140	1,656	1,977	2,611	3,361
41	1,683	2,020	2,701	3,544	150	1,655	1,976	2,609	3,357
42	1,682	2,018	2,698	3,538	200	1,653	1,972	2,601	3,340
43	1,681	2,017	2,695	3,532	250	1,651	1,969	2,596	3,330
44	1,680	2,015	2,692	3,526	300	1,650	1,968	2,592	3,323
45	1,679	2,014	2,690	3,520	350	1,649	1,967	2,590	3,319

Մեծությունները (նշանակությունները) հաշվարկված են «Excel» ծրագրի օգնությամբ:

Աղյուսակ 12.

F-Ֆիշերի չափանիշի կրիտիկական նշանակությունները/արժեքները՝ ուղղորդված ալլոբրարյաների սրուզման համար $P = 0,05$

		Ազատությամբ ապիհանմանը համարիչի համար													
	1	2	3	4	5	6	7	8	10	12	24	?			
3	10,128	9,552	9,277	9,117	9,013	8,941	8,887	8,845	8,785	8,745	8,638	8,527			
5	6,608	5,786	5,409	5,192	5,050	4,950	4,876	4,818	4,735	4,678	4,527	4,366			
7	5,591	4,737	4,347	4,120	3,972	3,866	3,787	3,726	3,637	3,575	3,410	3,231			
10	4,965	4,103	3,708	3,478	3,326	3,217	3,135	3,072	2,978	2,913	2,737	2,539			
11	4,844	3,982	3,587	3,357	3,204	3,095	3,012	2,948	2,854	2,788	2,609	2,406			
12	4,747	3,885	3,490	3,259	3,106	2,996	2,913	2,849	2,753	2,687	2,505	2,297			
13	4,667	3,806	3,411	3,179	3,025	2,915	2,832	2,767	2,671	2,604	2,420	2,208			
14	4,600	3,739	3,344	3,112	2,958	2,848	2,764	2,699	2,602	2,534	2,349	2,132			
15	4,543	3,682	3,287	3,056	2,901	2,790	2,707	2,641	2,544	2,475	2,288	2,067			
16	4,494	3,634	3,239	3,007	2,852	2,741	2,657	2,591	2,494	2,425	2,235	2,011			
18	4,414	3,555	3,160	2,928	2,773	2,661	2,577	2,510	2,412	2,342	2,150	1,918			
20	4,351	3,493	3,098	2,866	2,711	2,599	2,514	2,447	2,348	2,278	2,082	1,844			
30	4,171	3,316	2,922	2,690	2,534	2,421	2,334	2,266	2,165	2,092	1,887	1,624			
40	4,085	3,232	2,839	2,606	2,449	2,336	2,249	2,180	2,077	2,003	1,793	1,511			
50	4,034	3,183	2,790	2,557	2,400	2,286	2,199	2,130	2,026	1,952	1,737	1,440			
70	3,978	3,128	2,736	2,503	2,346	2,231	2,143	2,074	1,969	1,893	1,674	1,355			
100	3,936	3,087	2,696	2,463	2,305	2,191	2,103	2,032	1,927	1,850	1,627	1,286			
200	3,888	3,041	2,650	2,417	2,259	2,144	2,056	1,985	1,878	1,801	1,572	1,192			
∞	3,843	2,998	2,607	2,374	2,216	2,100	2,011	1,940	1,833	1,754	1,519				

P = 0,01

Մեծությունները (նշանակությունները) հաշվարկված են « Excel» ծրագրի օգնությամբ:

Ազատության աստիճանները համարիչի համար												
	1	2	3	4	5	6	7	8	10	12	24	?
3	34,116	30,816	29,457	28,710	28,237	27,911	27,671	27,489	27,228	27,052	26,597	26,126
5	16,258	13,274	12,060	11,392	10,967	10,672	10,456	10,289	10,051	9,888	9,466	9,022
7	12,246	9,547	8,451	7,847	7,460	7,191	6,993	6,840	6,620	6,469	6,074	5,651
10	10,044	7,559	6,552	5,994	5,636	5,386	5,200	5,057	4,849	4,706	4,327	3,910
11	9,646	7,206	6,217	5,668	5,316	5,069	4,886	4,744	4,539	4,397	4,021	3,604
12	9,330	6,927	5,953	5,412	5,064	4,821	4,640	4,499	4,296	4,155	3,780	3,362
13	9,074	6,701	5,739	5,205	4,862	4,620	4,441	4,302	4,100	3,960	3,587	3,166
14	8,862	6,515	5,564	5,035	4,695	4,456	4,278	4,140	3,939	3,800	3,427	3,005
15	8,683	6,359	5,417	4,893	4,556	4,318	4,142	4,004	3,805	3,666	3,294	2,870
16	8,531	6,226	5,292	4,773	4,437	4,202	4,026	3,890	3,691	3,553	3,181	2,754
18	8,285	6,013	5,092	4,579	4,248	4,015	3,841	3,705	3,508	3,371	2,999	2,567
20	8,096	5,849	4,938	4,431	4,103	3,871	3,699	3,564	3,368	3,231	2,859	2,422
30	7,562	5,390	4,510	4,018	3,699	3,473	3,305	3,173	2,979	2,843	2,469	2,008
40	7,314	5,178	4,313	3,828	3,514	3,291	3,124	2,993	2,801	2,665	2,288	1,806
50	7,171	5,057	4,199	3,720	3,408	3,186	3,020	2,890	2,698	2,563	2,183	1,685
70	7,011	4,922	4,074	3,600	3,291	3,071	2,906	2,777	2,585	2,450	2,067	1,542
100	6,895	4,824	3,984	3,513	3,206	2,988	2,823	2,694	2,503	2,368	1,983	1,429
200	6,763	4,713	3,881	3,414	3,110	2,893	2,730	2,601	2,411	2,275	1,886	1,281
∞	6,637	4,607	3,784	3,321	3,019	2,804	2,641	2,513	2,323	2,187	1,793	

Աղյուսակ 13.

χ^2 չափանիշի կրիտիկական նշանակությունները/արժեքները

df	P				df	P			
	0,10	0,05	0,01	0,001		0,10	0,05	0,01	0,001
	2	3	4	5	6	7	8	9	10
1	2,706	3,842	6,635	10,829	46	58,641	62,841	71,221	81,431
2	4,605	5,992	9,211	13,817	47	59,774	64,013	72,463	82,752
3	6,251	7,815	11,346	16,269	48	60,907	65,183	73,703	84,069
4	7,779	9,488	13,278	18,470	49	62,038	66,351	74,940	85,384
5	9,236	11,071	15,088	20,519	50	63,167	67,518	76,175	86,694
6	10,645	12,593	16,814	22,462	51	64,295	68,683	77,408	88,003
7	12,017	14,068	18,478	24,327	52	65,422	69,846	78,638	89,308
8	13,362	15,509	20,093	26,130	53	66,548	71,008	79,866	90,609
9	14,684	16,921	21,669	27,883	54	67,673	72,168	81,092	91,909
10	15,987	18,309	23,213	29,594	55	68,796	73,326	82,316	93,205
11	17,275	19,677	24,729	31,271	56	69,919	74,484	83,538	94,499
12	18,549	21,028	26,221	32,917	57	71,040	75,639	84,758	95,790
13	19,812	22,365	27,693	34,536	58	72,160	76,794	85,976	97,078
14	21,064	23,688	29,146	36,132	59	73,279	77,947	87,192	98,365
15	22,307	24,999	30,583	37,706	60	74,397	79,099	88,406	99,649
16	23,542	26,299	32,006	39,262	61	75,514	80,232	89,591	100,887
17	24,769	27,591	33,415	40,801	62	76,630	81,381	90,802	102,165
18	25,989	28,873	34,812	42,323	63	77,745	82,529	92,010	103,442
19	27,204	30,147	36,198	43,832	64	78,860	83,675	93,217	104,717
20	28,412	31,415	37,574	45,327	65	79,973	84,821	94,422	105,988
21	29,615	32,675	38,940	46,810	66	81,085	85,965	95,626	107,257
22	30,813	33,929	40,298	48,281	67	82,197	87,108	96,828	108,525
23	32,007	35,177	41,647	49,742	68	83,308	88,250	98,028	109,793
24	33,196	36,420	42,989	51,194	69	84,418	89,391	99,227	111,055
25	34,382	37,658	44,324	52,635	70	85,527	90,531	100,425	112,317
26	35,563	38,891	45,652	54,068	71	86,635	91,670	101,621	113,577
27	36,741	40,119	46,973	55,493	72	87,743	92,808	102,816	114,834
28	37,916	41,343	48,289	56,910	73	88,850	93,945	104,010	116,092
29	39,087	42,564	49,599	58,320	74	89,956	95,081	105,202	117,347
30	40,256	43,780	50,904	59,722	75	91,061	96,217	106,393	118,599
31	41,422	44,993	52,203	61,118	76	92,166	97,351	107,582	119,850

32	42,585	46,202	53,498	62,508	78	94,374	99,617	109,958	122,347
33	43,745	47,408	54,789	63,891	79	95,476	100,749	111,144	123,595
34	44,903	48,610	56,074	65,269	80	96,578	101,879	112,329	124,839
35	46,059	49,810	57,356	66,641	90	107,565	113,145	124,116	137,208
36	47,212	51,007	58,634	68,008	100	118,498	124,342	135,807	149,449
37	48,363	52,201	59,907	69,370	110	129,385	135,480	147,414	161,582
38	49,513	53,393	61,177	70,728	120	140,233	146,567	158,950	173,618
39	50,660	54,582	62,444	72,080	130	151,045	157,610	170,423	185,573
40	51,805	55,768	63,707	73,428	140	161,827	168,613	181,841	197,450
41	52,949	56,953	64,967	74,772	150	172,581	179,581	193,207	209,265
42	54,090	58,135	66,224	76,111	200	226,021	233,994	249,445	267,539
43	55,230	59,314	67,477	77,447	250	279,050	287,882	304,939	324,831
44	56,369	60,492	68,728	78,779	300	331,788	341,395	359,906	381,424
45	57,505	61,668	69,976	80,107	350	384,306	394,626	414,474	437,487

Մեծությունները (նշանակությունները) հաշվարկված են «Excel» ծրագրի օգնությամբ:

Աղյուսակ 14.

Կրիտիկական նշանակությունները/արժեքները շարքերով բլի համար (շարքերով և՛ վարիանտների սրուցման համար $\alpha = 0,05$ -ի համար)

$W_{0,025}$

N1/N2	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	
2																				
3																				
4																				
5			2	2																
6		2	2	3	3															
7		2	2	3	3	3														
8		2	3	3	3	4	4													
9		2	3	3	4	4	5	5												
10		2	3	3	4	5	5	5	6											
11		2	3	4	4	5	5	6	6	7										
12	2	2	3	4	4	5	6	6	7	7	7									
13	2	2	3	4	5	5	6	6	7	7	8	8								
14	2	2	3	4	5	5	6	7	7	8	8	9	9							
15	2	3	3	4	5	6	6	7	7	8	8	9	9	10						
16	2	3	4	4	5	6	6	7	8	8	9	9	10	10	11					
17	2	3	4	4	5	6	7	7	8	9	9	10	10	11	11	11				
18	2	3	4	5	5	6.	7	8	8	9	9	10	10	11	11	12	12			
19	2	3	4	5	6	6	7	8	8	9	10	10	11	11	12	12	13	13		
20	2	3	4	5	6	6	7	8	9	9	10	10	11	12	12	13	13	13	14	

W/0,975

NI/N	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20		
2																					
1																					
2	4																				
3	5	6																			
4	5	7	8																		
5	5	7	8	9																	
6	5	7	8	9	10																
7	5	7	9	10	11	12															
8	5	7	9	10	11	12	13														
9	5	7	9	11	12	13	13	14													
10	5	7	9	11	12	13	14	15	15												
11	5	7	9	11	12	13	14	15	16	16											
12	5	7	9	11	12	13	15	15	16	17	18										
13	5	7	9	11	13	14	15	16	17	18	18	19									
14	5	7	9	11	13	14	15	16	17	18	19	19	20								
15	5	7	9	11	13	14	15	17	17	18	19	20	21	21							
16	5	7	9	11	13	15	16	17	18	19	20	20	21	22	23						
17	5	7	9	11	13	15	16	17	18	19	20	21	22	22	23	24					
18	5	7	9	11	13	15	16	17	18	19	20	21	22	23	24	24	25				
19	5	7	9	11	13	15	16	17	19	20	21	22	22	23	24	25	25	26			
20	5	7	9	11	13	15	16	17	19	20	21	22	23	24	24	25	26	26	27		

N1 = N2	$W_{0,025}$	$W_{0,375}$	N1 = N2	$W_{0,025}$	$W_{0,975}$
20	14	27	40	31	50
21	15	28	42	33	52
22	16	29	44	35	54
23	16	31	46	37	56
24	17	32	48	38	59
25	18	33	50	40	61
26	19	34	55	45	66
27	20	35	60	49	72
28	21	36	65	54	77
29	22	37	70	58	83
30	22	39	75	63	88
32	24	41	80	68	93
34	26	43	85	72	99
36	28	45	90	77	104
38	30	47	95	82	109
			100	86	115

Ճանապարհորդում: *Ու վարկածը մերժվում է, եթե W շարքերի էմպիրիկ թիվը փոքր կամ հավասար է $W_{0,025}$ (մեծ կամ հավասար է $W_{0,975}$):*

Սղարկարարը՝ *Джонсон Н., Лион Ф., Статистика и планирование эксперимента в технике и науке, М., 1980, 520 с.:*

Աղյուսակ 15.

*r-Պիրսոնի (r-Սպիրմենի) կորելյացիայի գործակիցների կրիտիկական
նշանակությունները/արժեքները
(չուղղորդված ալյրնարանքների սրուզման համար, n – ընդարանքի ծավալը)*

n	P				n	P			
	0,10	0,05	0,01	0,001		0,10	0,05	0,01	0,001
1	2	3	4	5	6	7	8	9	10
5	0,805	0,878	0,959	0,991	46	0,246	0,291	0,376	0,469
6	0,729	0,811	0,917	0,974	47	0,243	0,288	0,372	0,465
7	0,669	0,754	0,875	0,951	48	0,240	0,285	0,368	0,460
8	0,621	0,707	0,834	0,925	49	0,238	0,282	0,365	0,456
9	0,582	0,666	0,798	0,898	50	0,235	0,279	0,361	0,451
10	0,549	0,632	0,765	0,872	51	0,233	0,276	0,358	0,447
11	0,521	0,602	0,735	0,847	52	0,231	0,273	0,354	0,443
12	0,497	0,576	0,708	0,823	53	0,228	0,271	0,351	0,439
13	0,476	0,553	0,684	0,801	54	0,226	0,268	0,348	0,435
14	0,458	0,532	0,661	0,780	55	0,224	0,266	0,345	0,432
15	0,441	0,514	0,641	0,760	56	0,222	0,263	0,341	0,428
16	0,426	0,497	0,623	0,742	57	0,220	0,261	0,339	0,424
17	0,412	0,482	0,606	0,725	58	0,218	0,259	0,336	0,421
18	0,400	0,468	0,590	0,708	59	0,216	0,256	0,333	0,418
19	0,389	0,456	0,575	0,693	60	0,214	0,254	0,330	0,414
20	0,378	0,444	0,561	0,679	61	0,213	0,252	0,327	0,411
21	0,369	0,433	0,549	0,665	62	0,211	0,250	0,325	0,408
22	0,360	0,423	0,537	0,652	63	0,209	0,248	0,322	0,405
23	0,352	0,413	0,526	0,640	64	0,207	0,246	0,320	0,402
24	0,344	0,404	0,515	0,629	65	0,206	0,244	0,317	0,399
25	0,337	0,396	0,505	0,618	66	0,204	0,242	0,315	0,396
26	0,330	0,388	0,496	0,607	67	0,203	0,240	0,313	0,393
27	0,323	0,381	0,487	0,597	68	0,201	0,239	0,310	0,390
28	0,317	0,374	0,479	0,588	69	0,200	0,237	0,308	0,388
29	0,311	0,367	0,471	0,579	70	0,198	0,235	0,306	0,385
30	0,306	0,361	0,463	0,570	80	0,185	0,220	0,286	0,361
31	0,301	0,355	0,456	0,562	90	0,174	0,207	0,270	0,341
32	0,296	0,349	0,449	0,554	100	0,165	0,197	0,256	0,324
33	0,291	0,344	0,442	0,547	110	0,158	0,187	0,245	0,310
34	0,287	0,339	0,436	0,539	120	0,151	0,179	0,234	0,297
35	0,283	0,334	0,430	0,532	130	0,145	0,172	0,225	0,285
36	0,279	0,329	0,424	0,525	140	0,140	0,166	0,217	0,275
37	0,275	0,325	0,418	0,519	150	0,135	0,160	0,210	0,266

38	0,271	0,320	0,413	0,513	200	0,117	0,139	0,182	0,231
39	0,267	0,316	0,408	0,507	250	0,104	0,124	0,163	0,207
40	0,264	0,312	0,403	0,501	300	0,095	0,113	0,149	0,189
41	0,260	0,308	0,398	0,495	350	0,088	0,105	0,138	0,175
42	0,257	0,304	0,393	0,490	400	0,082	0,098	0,129	0,164
43	0,254	0,301	0,389	0,484	450	0,078	0,092	0,121	0,155
44	0,251	0,297	0,384	0,479	500	0,074	0,088	0,115	0,147
45	0,248	0,294	0,380	0,474	600	0,067	0,080	0,105	0,134

Մեծությունները (նշանակությունները) հաշվարկված են «Excel» ծրագրի օգնությամբ:

Աղյուսակ 16.

U-Մանն-Ուիթնիի չափանիշի կրիտիկական նշանակությունները/արժեքները (չուղղորդված ալյունդրանքների սրուզման համար)

P = 0,05

N2	N1													
	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
3	1	2	2	3	3	4	4	5	5	6	6	7	7	8
4	3	4	4	5	6	7	8	9	10	11	11	12	13	13
5	5	6	7	8	9	11	12	13	14	15	17	18	19	20
6	6	8	10	11	13	14	16	17	19	21	22	24	25	27
7	8	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34
8	10	13	15	17	19	22	24	26	29	31	34	36	38	41
9	12	15	17	20	23	26	28	31	34	37	39	42	45	48
10	14	17	20	23	26	29	33	36	39	42	45	48	52	55
11	16	19	23	26	30	33	37	40	44	47	51	55	58	62
12	18	22	26	29	33	37	41	45	49	53	57	61	65	69
13	20	24	28	33	37	41	45	50	54	59	63	67	72	76
14	22	26	31	36	40	45	50	55	59	64	67	74	78	83
15	24	29	34	39	44	49	54	59	64	70	75	80	85	90
16	26	31	37	42	47	53	59	64	70	75	81	86	92	98
17	28	34	39	45	51	57	63	67	75	81	87	93	99	105
18	30	36	42	48	55	61	67	74	80	86	93	99	106	112
19	32	38	45	52	58	65	72	78	85	92	99	106	113	119
20	34	41	48	55	62	69	76	83	90	98	105	112	119	127

P = 0,01

N2	N1													
	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
3			0	0	0	1	1	1	2	2	2	2	3	3
4	0	1	1	2	2	3	3	4	5	5	6	6	7	8
5	1	2	3	4	4	6	7	7	8	9	10	11	12	13
6	3	4	5	6	6	9	10	11	12	13	15	16	17	18
7	4	6	7	9	9	12	13	15	16	18	19	21	22	24
8	6	7	9	11	11	15	17	18	20	22	24	26	28	30
9	7	9	11	13	13	18	20	22	24	27	29	31	33	36
10	9	11	13	16	16	21	24	26	29	31	34	37	39	42
11	10	13	16	18	18	24	27	30	33	36	39	42	45	48
12	12	15	18	21	21	27	31	34	37	41	44	47	51	54
13	13	17	20	24	24	31	34	38	42	45	49	53	56	60
14	15	18	22	26	26	34	38	42	46	50	54	58	63	67
15	16	20	24	29	29	37	42	46	51	55	60	64	69	73
16	18	22	27	31	31	41	45	50	55	60	65	70	74	79
17	19	24	29	34	34	44	49	54	60	65	70	75	81	86
18	21	26	31	37	37	47	53	58	64	70	75	81	87	92
19	22	28	33	39	39	51	56	63	69	74	81	87	93	99
20	24	30	36	42	42	54	60	67	73	79	86	92	99	105

Уцарйшррнр` Мартин Д., Психологические эксперименты, СПб., 2002. с. 453-454:

Աղյուսակ 17.

*χ² Ֆրիդմանի չափանիշի կրիտիկական նշանակությունները/արժեքները՝ n < 10
բանակությամբ երեք ընդհանրանքների համար (չուղղորդված այլընտրանքների
սրուզման համար)*

n = 2		n = 3		n = 4		n = 5	
$\chi_{\alpha, \nu}^2$	p	$\chi_{\alpha, \nu}^2$	p	$\chi_{\alpha, \nu}^2$	p	$\chi_{\alpha, \nu}^2$	p
0	1,000	0,000	1,000	0,0	1,000	0,0	1,000
1	0,833	0,667	0,944	0,5	0,931	0,4	0,954
3	0,509	2,000	0,528	1,5	0,653	1,2	0,691
4	0,167	2,667	0,361	2,0	0,431	1,6	0,522
		4,667	0,194	3,5	0,273	2,8	0,367
		6,000	0,028	4,5	0,125	3,6	0,182
				6,0	0,069	4,8	0,124
				6,5	0,042	5,2	0,093
				8,0	0,0046	6,4	0,039
						7,6	0,024
						8,4	0,0085
						10,0	0,00077

n = 6		n = 7		n = 8		n = 9	
$\chi_{\alpha, \nu}^2$	p	$\chi_{\alpha, \nu}^2$	p	$\chi_{\alpha, \nu}^2$	p	$\chi_{\alpha, \nu}^2$	p
0,00	1,000	0,000	1,000	0,00	1,000	0,000	1,000
0,33	0,956	0,286	0,964	0,25	0,967	0,222	0,971
1,00	0,740	0,857	0,768	0,75	0,794	0,667	0,814
1,33	0,570	1,143	0,620	1,00	0,654	0,889	0,865
2,33	0,430	2,000	0,486	1,75	0,531	1,556	0,569
3,00	0,252	2,571	0,305	2,25	0,355	2,000	0,398
4,00	0,184	3,429	0,237	3,00	0,285	2,667	0,328
4,33	0,142	3,714	0,192	3,25	0,236	2,889	0,278
5,33	0,072	4,571	0,112	4,00	0,149	3,556	0,187
6,33	0,052	5,429	0,085	4,75	0,120	4,222	0,154
7,00	0,029	6,000	0,052	5,25	0,079	4,667	0,107
8,33	0,012	7,143	0,027	6,25	0,047	5,556	0,069
9,00	0,0081	7,714	0,021	6,75	0,038	6,000	0,057
9,33	0,0055	8,000	0,016	7,00	0,030	6,222	0,048
10,33	0,0017	8,857	0,0084	7,75	0,018	6,889	0,031
12,00	0,00013	10,286	0,0036	9,00	0,0099	8,000	0,019
		10,571	0,0027	9,25	0,0080	8,222	0,016
		11,143	0,0012	9,75	0,0048	8,667	0,010
		12,286	0,00032	10,75	0,0024	9,556	0,0060
		14,000	0,000021	12,00	0,0011	10,667	0,0035

				12,25	0,00086	10,889	0,0029
				13,00	0,00026	11,556	0,0013
				14,25	0,000061	12,667	0,00066
				16,00	0,0000036	13,556	0,00035
						14,000	0,00020
						14,222	0,000097
						14,889	0,000054
						16,222	0,000011
						18,000	0,0000006

*χ² Ֆրիդմանի չափանիշի կրիտիկական նշանակությունները/արժեքները՝
n < 5 քանակությամբ չորս ընկերանքների համար*

n = 2		n = 3		n = 4			
χ^2_{α}	p	χ^2_{α}	p	χ^2_{α}	p	χ^2_{α}	p
0,0	1,000	0,0	1,000	0,0	1,000	5,7	0,141
0,6	0,958	0,6	0,958	0,3	0,992	6,0	0,105
1,2	0,834	1,0	0,910	0,6	0,928	6,3	0,094
1,8	0,792	1,8	0,727	0,9	0,900	6,6	0,077
2,4	0,625	2,2	0,608	1,2	0,800	6,9	0,068
3,0	0,542	2,6	0,524	1,5	0,754	7,2	0,054
3,6	0,458	3,4	0,446	1,8	0,677	7,5	0,052
4,2	0,375	3,8	0,342	2,1	0,649	7,8	0,036
4,8	0,208	4,2	0,300	2,4	0,524	8,1	0,033
5,4	0,167	5,0	0,207	2,7	0,508	8,4	0,019
6,0	0,042	5,4	0,175	3,0	0,432	8,7	0,014
		5,8	0,148	3,3	0,389	9,3	0,012
		6,6	0,075	3,6	0,355	9,6	0,0069
		7,0	0,054	3,9	0,324	9,9	0,0062
		7,4	0,033	4,5	0,242	10,2	0,0027
		8,2	0,017	4,8	0,200	10,8	0,0016
		9,0	0,0017	5,1	0,190	11,1	0,00094
				5,4	0,158	12,0	0,000072

Սլոբոդինյուր՝ Сидоренко Е., Методы математической обработки в психологии, СПб., 2002. с. 325-326:

ԳԼՈՒԽ 16

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Գիտական տեղեկատվության ժամանակակից հագեցած հոսքի պայմաններում կողեկտիվ գիտելիքի մի մասը դառնալու համար հետազոտությունը, գիտական իմաստով բարձրորակ լինելուց բացի, պետք է նաև ներկայացված լինի այնպիսի տեսքով (տպագիր կամ/և էլեկտրոնային), որը թույլ կտա ուշադրություն դարձնել թեմային և արագ ծանոթանալ բովանդակությանը:

Ուսանողների կողմից ներկայացվող աշխատանքը (կուրսային, ավարտական, մագիստրոսական) ունի հետևյալ ընդունված կառուցվածքը.

1. Տիտղոսաթերթ,
2. Բովանդակություն,
3. Ներածություն,
4. Աշխատանքի հիմնական մաս (տեսական և փորձարարական),
5. Եզրակացություններ (կամ վերջաբան),
6. Գործնական առաջարկներ (անհրաժեշտության դեպքում),
7. Գրականության ցանկ,
8. Հավելված (անհրաժեշտության դեպքում) [Ավանեսյան Հ. Մ., Խաչատրյան Ն. Գ., 2007]⁴¹:

Գիտահետազոտական աշխատանքը սկսվում է գաղափարի և խնդրի ձևակերպումից և համապատասխան գրականություն ուսումնասիրելուց, այլ հեղինակների, հրապարակված հոդվածների հեղինակների տեսակետները հասկանալուց, «PscyINFO» կամ

⁴¹ Ավանեսյան Հ. Մ., Խաչատրյան Ն. Գ., Ուսանողական գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներ, Մեթոդական ուղեցույց, Եր., ԵՊՀ հրատ., 2007, 46 էջ:

«Google Scholar» տվյալների բազան օգտագործելուց, որը կարող է օգտակար լինել աշխատանքի ձևավորման փուլում:

Բովանդակության մեջ հերթականությամբ ներկայացվում են աշխատանքի ներածությունը, գլուխների և ենթագլուխների վերնագրերը, եզրակացությունները, գրականության ցանկը, հավելվածները: Գլուխների և ենթագլուխների վերնագրերի ձևակերպումները պետք է լինեն հստակ, կարճ և համատասախանեն աշխատանքի բովանդակությանը: Վերնագիրը պետք է արտացոլի աշխատանքի իմաստն ու լինի հնարավորինս ամփոփ և կարճ, պարունակի փոփոխականների հարաբերակցությունը: Բովանդակության աջ կողմում անհրաժեշտ է նշել բովանդակության յուրաքանչյուր կետի առաջին էջի համարը: Բացի ներածությունից, եզրակացությունից (կամ վերջաբանից) և օգտագործված գրականության ցանկից՝ աշխատանքի տեսական և փորձարարական մասերի գլուխները և ենթագլուխները համարակալվում են: Բովանդակության մեջ հարկավոր չէ գրել տեսական և փորձարարական մաս, այլ միայն ներկայացնել այդ մասերի գլուխներն իրենց վերնագրերով:

Հավելվածի էջակալումը չի ներառվում աշխատանքի ընդհանուր ծավալում: Եթե հավելվածները մեկից ավելին են, ապա համարակալվում են:

Որոշ դեպքերում պահանջվում է գիտական աշխատանքի ամփոփագիր կամ abstract/резюме: Ամփոփ ներկայացումը պարունակում է աշխատանքի հիմնական գաղափարը, նպատակը և եզրակացությունը, մաս հանգույցային կամ բանալի բառեր (5-10 բառ): Այստեղից կարելի է ավելի հստակ հասկանալ աշխատանքի ողջ էությունը:

Աշխատանքը պետք է ներառի հետևյալ բաժինները.

- Ներածություն,
- Հիմնահարցի առաջադրում,
- Թեմայի արդիականության հիմնավորում,

- Հայրենական և արտասահմանյան գրականության համառոտ ամփոփում,
- Մեթոդաբանություն,
- Աշխատանքի վարկածի, նպատակի և խնդրի առաջադրում,
- Տեսական և գործնական նշանակություն:

Ներածություն

Ներածական մասում ներկայացվում են առաջադրված խնդիրը և այն, թե ինչպես է գիտնականը պատրաստվում լուծել այն: Նա տալիս է խնդրի նշանակության մասին տեղեկություն: Լավ ներածական մասը նաև ներկայացնում է վարկածներն ու հանգուցալուծման հնարավոր տարբերակները: Հեղինակը ներկայացնում է թեմայի ընտրության և արդիականության պատճառները.

- ո՞րն է հեղինակի նպատակը,
- ի՞նչ հիպոթեզներ են փորձարկվելու,
- ի՞նչ կառուցվածք ունի հետազոտությունը:

Ներածությունը պետք է ունենա հստակ կառուցվածք: Ներածության մեջ սկզբից հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, և ներկայացվում է հիմնախնդրի ուսումնասիրման աստիճանը գիտության ներկա փուլում: Այնուհետև ձևակերպվում են աշխատանքի նպատակը, խնդիրները և հոգեբանական հետազոտության վարկածը (ըստ անհրաժեշտության՝ նաև ենթավարկածները), որից հետո ձևակերպվում են հետազոտության օբյեկտը և առարկան: Այս ամենից հետո նշվում և կրճատ բնութագրվում են հետազոտության մեթոդները և մեթոդիկաները, ինչպես նաև դրանց կիրառման առանձնահատկությունները տվյալ աշխատանքում առաջ քաշված խնդիրների լուծման համար: Առանձնակի կերպով նշվում է աշխատանքի նորույթը, ինչպես նաև տեսական և գործնական (կիրառական) նշանակությունը:

Ներածության վերջին մասում տրվում է ամբողջ աշխատանքի ակնարկ՝ նշելով աշխատանքի կառուցվածքը և ներկայացնելով ամեն մասի հակիրճ բովանդակությունը: Ներածության ամեն կետը (արդիականություն, նպատակ, խնդիրներ, վարկած, օրյեկտ, առարկա, մեթոդներ և մեթոդիկաներ, նորույթ, տեսական և կիրառական նշանակություն) անհրաժեշտ է գրել նոր տողից, սակայն, առանց համարակալելու և ենթավերնագիր ձևակերպելու: Դրանք կարելի է ընդգծել կամ առանձնացնել մուգ (Bold) կամ շեղ տառերով (Italic):

Գիտահետազոտական աշխատանքի հիմնական մասը պետք է կազմված լինի առնվազն 2 գլխից, որոնցում հետազոտվում են թեմայի հիմնախնդիրները.

- գլուխները կարելի է բաժանել ենթաբաժինների (23-ից ոչ ավել),
- գլուխները և ենթաբաժինները կազմելիս անհրաժեշտ է օգտագործել պատմական աղբյուրներ՝ հղումներ կատարելով, դրանց սեփական մեկնաբանությունն ապացուցելու համար,
- գիտահետազոտական աշխատանք կատարելիս նպատակահարմար է օգտագործել հայրենական հեղինակների և օտարալեզու սկզբնաղբյուրներ,
- գլուխների և ենթաբաժինների վերջում պետք է նշել ինքնուրույն եզրակացություններ /ամփոփումներ՝ հիմնված վիճակագրական վերլուծության վրա,
- տեքստում պետք է կիրառվեն գիտության մեջ ընդունված աղբյուրների և պատմագիտական գրականության մեկնաբանման կանոնները,
- աշխատանքի տեքստը պետք է շարադրված լինի ինքնուրույն և չպարունակի գրագողության (ալազիատի) հետքեր,

- տեքստում պետք է կիրառվեն գիտության մեջ ընդունված մեջբերման կանոնները (նշելով սկզբնաղբյուրի էջերը),
- անհրաժեշտ է հղումներ և մեջբերումներ կատարել՝ կանոններին համապատասխան:

Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է տեսական և փորձարարական բաժիններից: Տեսական բաժինը կարող է ներկայացված լինել 2-ից ավել գլուխներով, որոնք պետք է ունենան ենթագլուխներ: Գլուխների և ենթագլուխների վերնագրերի մեջ պետք է արտացոլվեն աշխատանքի նպատակի և ընտրված հիմնախնդրի ավելի մասնավոր հարցեր: Տեսական մասում կարող են ներկայացված լինել հիմնահարցի պատմությունը, քննարկվող հիմնախնդրի և առարկայի ժամանակակից վիճակի ակնարկը, խնդրի վերլուծության և լուծման հնարավոր ուղիները:

Փորձարարական բաժինը հիմնականում բաղկացած է լինում մեթոդական և վերլուծական ենթաբաժիններից: Մեթոդական բաժինը ներկայացվում է մեկ գլխով, որի վերնագրում պետք է արտահայտվի հետևյալ միտքը՝ «հետազոտության կազմակերպում, մեթոդներ և ընտրված մեթոդիկաների նկարագրում»: Այս գլխում անհրաժեշտ է ներկայացնել հետազոտության կազմակերպումը և իրագործման փուլերը:

Այստեղ ներառված է օգտագործված մեթոդների և համապատասխան մեթոդիկաների մասին ողջ տեղեկությունը, տրված են օրինակներ հարցարաններից և այլ մեթոդիկաներից, օգտագործված նյութերը, ժամանակը: Ներառում է նաև ընտրանքի ընտրության և ռանդոմիզացիայի մասին տեղեկություն: Ներկայացնում է հաշվի առնված, այսպես ասած, ընտրանքի չափանիշները: Սրան հաջորդում է սարքավորումների մասին տեղեկություն առկայության դեպքում: Առավել մանրամասն տեղեկությունը կարող է ներառվել նաև հավելվածներում:

Անհրաժեշտ է հիմնավորել տվյալ ընտրանքի համապատասխանությունը հետազոտության նպատակին և խնդիրներին, նշել

ընտրանքի կազմակերպման սկզբունքները: Այս գլխում մաս բնութագրվում է հետազոտվողների ընտրանքը (քանակը, ժողովրդագրական տվյալները՝ սեռ, տարիք, սոցիալական, ընտանեկան վիճակը, աշխատանքային փորձը, պաշտոնը և հետազոտության համար այլ կարևոր ցուցանիշներ): Այս ամենը հարկավոր է, որ տվյալները վերլուծելիս հնարավոր լինի առանձնացնել խմբեր կամ ենթախմբեր, իսկ ստացված արդյունքները լինեն համեմատելի և համադրելի: Այնուհետև անհրաժեշտ է հիմնավորել ընտրված մեթոդները և օգտագործված մեթոդիկաները՝ ուշադրություն դարձնելով դրանց վալիդությանը, հուսալիությանը, ինչպես նաև հետազոտության խնդիրներին համապատասխանությանը: Անհրաժեշտ է թվարկել այդ մեթոդիկաները, իսկ առանձնակի դեպքերում, եթե դրանք անձանոթ են կամ մշակվել են հեղինակի կողմից, մանրամասն բնութագրել: Այս ամենից հետո անհրաժեշտ է մասնշեղ մաքենատիկական վիճակագրական մեթոդները, որոնք կիրառվել են արդյունքների վերլուծության համար: Կարելի է մասնշեղ այն բանաձևերը, որոնցով կատարվել են չափանիշների հաշվարկները: Անհրաժեշտության դեպքում ներկայացվում է նաև հետազոտության իրագործման փուլերի հաջորդականությունը՝ նշելով կատարված գործողությունները, յուրաքանչյուր փուլի խնդիրները, իրականացման ժամկետները և այլն:

Վերլուծական բաժինը կարող է ներկայացվել մեկից ավելի գլուխներով, որոնց վերնագրերը պետք է արտահայտեն աշխատանքում առաջ քաշված խնդիրներին փորձարարական միջոցներով ստացված լուծումները: Այս բաժնում մանրամասն ներկայացվում են տարբեր մեթոդիկաներով ստացված տվյալների մշակումը, ցուցանիշների միջև վերլուծությունը, ինչպես նաև հետազոտության արդյունքների մեկնաբանությունը:

Ամփոփումը պետք է պարունակի.

- ինքնուրույն կատարված թեմայի ամփոփում,

- ներածության մեջ առաջադրված հարցերի պատասխաններ,
- ամփոփման ծավալը՝ առնվազն 3 էջ:
- վարկածին, նպատակին և խնդիրներին համապատասխանող եզրակացություններ (համառոտ կերպով և հիմնական դրույթներին համապատասխան):

Արդյունքների բաժինը տեղեկացնում է՝ ինչ տեղի ունեցավ հետազոտության արդյունքում, որոնք են եզրակացությունները: Այստեղ տվյալները կարող են համեմատվել միջազգային վիճակագրության հետ: Գրաֆիկները, աղյուսակները կօգնեն առավել պատկերավոր ներկայացնել ստացվածը, ամփոփել ու ընդամուր կետերի հանգեցնել արվածը: Հետազոտողը չափագանց մեծ թվերով արդյունքներ ստանալու դեպքում կարող է ներկայացնել թվային այլ տարբերակներով, օրինակ՝ ամբողջական թվերով, տոկոսներով: Աշխատանքի ամբողջ ընթացքում հարկ է կարևորել գիտական բառապաշարի, խոսելաոճի և տերմինաբանության կիրառումը: Հետաքրքրության համար հարկ է ընտրել այնպիսի հետազոտություն, որի արդյունքները միանշանակ պարզ ու ակնհայտ չեն: Հեղինակը կարող է նաև հակառակը ապացուցող հետազոտություն կատարել՝ հաստատելով կամ հակակշիռ արդյունքներ ներկայացնելով լսարանին: Սա ցույց կտա գիտնականի բազմակողմանի մոտեցումը:

Եզրակացությունը ամենաստեղծագործական հատվածն է, որտեղ ներկայացվում են հետազոտական արդյունքների որակական մեկնաբանությունները, տալիս բացատրություններ, ներկայացնում կիրառման եզրերը: Հեղինակն ազատ է արդյունքները մեկնաբանելու, դրանք միմյանց հետ կապելու և ամփոփումներ տալու մեջ: Պետք է հիշել, որ այս ամենը ոչ թե ճշմարտություն է, այլ հեղինակի կարծիքն է, հիպոթեթիկ մոտեցումը: Հեղինակի ազատությունը ընթերցողից պահանջում է քննադատական մոտեցում:

Այստեղ պատասխան է տրվում ներածական մասի հարցերին, և ծավալուն ներկայացվում է այն: Ազատության հետ մեկտեղ հեղինակը պետք է կառուցի ներկայացումը հնարավորինս հստակ՝ պահելով ցիկլիկությունը, տրամաբանական շրթաները: Վերջում պետք է համակերպվել, որ մեկ հետազոտությունը չի կարող պատասխանել բոլոր հարցերին, ուստի կարող են հնչեցվել հետագա հետազոտություններին զարկ տվող և թեմայից բխող այլ հարցեր, որը տվյալ աշխատանքի շրջանակներում չշոշափվեց: Հաճախ նշվածին կարող են հանգեցնել աշխատանքի ծավալի սահմանափակումները, ինչի պատճառով հնարավոր է աշխատանքում որոշ հարցեր բաց թողնվեն կամ հպանցիկ անդրադարձ ունենան:

Ընդհանրացումներից և մեկնաբանություններից հետո անհրաժեշտ է անել եզրակացություններ, որոնք ամփոփում են հետազոտության կոնկրետ փուլի արդյունքները: Ընթացիկ եզրակացությունները ներկայացվում են փորձարարական մասում, իսկ ամփոփիչ եզրակացությունները՝ փորձարարական մասից հետո առանձին կետով [Ермолаев О.Ю., 2003]⁴²: Եզրակացություններում պետք է արտացոլվեն հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ստացվել են առաջադրված խնդիրների լուծման արդյունքում: Եզրակացությունները մաս արտահայտում են՝ ապացուցվել է արդյոք, թե հերքվել է վարկածը, ինչպես մաս այն, թե որքանով է իրագործվել նպատակը:

Հիմնական եզրակացություններում կարող են արտահայտվել աշխատանքի ինչպես տեսական, այնպես էլ հետազոտական արդյունքները: Վերջիններիս ներկայացումը առավել նշանակալի է: Հստակ և ամփոփ ձևակերպված եզրակացությունները գիտական հետազոտության հիմնական և գլխավոր արդյունքն են: Եզրակա-

⁴² Տե՛ս **Ермолаев О. Ю.**, Математическая статистика для психологов: Учебник, М., Московский психолого-социальный институт: Флинта, 2004, с. 29-34; Практикум по общей, экспериментальной и прикладной психологии / Под ред. А. А. Крылова, С. А. Маничева, СПб.: «Питер», 2003, с. 5-32:

ցությունների ձևակերպման հաճախակի սխալներից է այն, որ եզրակացություններում ներկայացվում է, թե ինչ է արվել, այնինչ պետք է նշել՝ կոնկրետ ինչ է ստացվել:

Եզրակացությունների քանակը չի սահմանափակվում, սակայն ցանկալի է ներկայացնել ոչ ավել քան 6-7 եզրակացություն: Եթե եզրակացությունները բավականին շատ են, ապա կարելի է դրանք խմբավորել և ներկայացնել ենթակետերով: Եզրակացությունները անհրաժեշտ է համարակալել:

Գործնական առաջարկները ներկայացվում են անհրաժեշտության դեպքում, երբ աշխատանքը ունի վառ արտահայտված կիրառական նշանակություն, և աշխատանքի խնդիրների մեջ ձևակերպվել է կոնկրետ կիրառական արդյունքի մշակում: Տվյալ դեպքում այս մասում ներկայացվում են, օրինակ, առաջարկված ծրագրի մոդելը կամ կոնկրետ հանձնարարականներ՝ ուղղված այս կամ այն սուբյեկտներին, խմբերին և այլն:

Աշխատանքի վերջին հատվածը տեղեկություն է տալիս աշխատանքի աղբյուրների մասին: Այս հատվածը ընթերցողի համար նաև ընդլայնված տեղեկության հասանելիության հնարավորություն է, որով կարելի առավել մանրամասն ծանոթանալ ներկայացված թեմային: Գրականության ցանկը կազմվում է այբբենական կարգով: Գրականության աղբյուր կարող են ծառայել մեկնազրույթյուններ, գիտական հոդվածների ժողովածուներ, պարբերական ամսագրերի հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, քրեստոմատիաներ, բառարաններ, գիտական աշխատանքի սեղմագրեր, միջազգային գիտաժողովների նյութեր, ինչպես նաև համացանցային կայքերում տեղադրված գիտական նյութեր:

Գրականության ցանկում առաջին հերթին նշվում են հայրենական, այնուհետև՝ արտասահմանյան հեղինակների աշխատանքները: Գրականության աղբյուրները համարակալվում են արաբական թվերով: Գրականության աղբյուրի ներկայացման համար նշվում է հետևյալ անհրաժեշտ տեղեկատվությունը՝ հեղինակ-

կի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը, գրքի անվանումը, հրատարակման վայրը, տպագրությունը, տպագրության տարեթիվը, էջերի քանակը: Սակայն գրականության ներկայացման մեջ կան որոշ տարբերություններ՝ կախված հրատարակության բնույթից:

Օրինակներ՝

Մենագրություն՝

1. Կուն Ս. Թ., Գիտական հեղափոխությունների կառուցվածքը, Եր., « Չանգակ-97», 2004, 328 էջ:

2. Брушлинский А. В., Проблема психологии субъекта, М.: Институт психологии РАН, 1994, 109 с.

3. Sheppard M., Care management and the new social work, London, 1997, 365 p.

Քրեատոմատիայից նյութ

Хейли Дж., Эриксон М., Возникновение семьи. Психология и психотерапия семейных конфликтов / Под ред. Д. Я. Райгородского, Самара: Издательский Дом БАХРАХ-М., 2003, с. 3-16.

Հոդված՝ գիտական հոդվածների ժողովածուից

1. Սարգսյան Վ., Լեզվաբանության չափանիշների բացահայտման դերացանկային մեթոդիկայի հիմնավորումը // Կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները: Միջբուհական գիտական հոդվածների ժողովածու, Եր., «Չանգակ-97», 2007, էջ 49-55:

Պարբերական ամսագրի հոդված

2. Панов В .И., Психические состояния как объект и предмет психологического исследования // Мир психологии, 1998, N 2, с. 20-35.

Համացանցային կայքերում տեղադրված գիտական նյութ

3. Джеймс У., Многообразие религиозного опыта, <http://www.psylib.org.ua/books/james01/index.htm> (այց՝

15.07.2021). *այսպես նշվում է կայքը այցելած ժամանակը:*

Հավելվածում ներկայացվում է աշխատանքի համար օժանդակ նյութը (օրինակ՝ ամբողջ ընտրանքի տվյալները, սկզբնական հաշվարկներ, աշխատանքի ծրագիրը, իլյուստրացիաներ, հետազոտվողների առանձին աշխատանքներ և այլն): Յուրաքանչյուր հավելված պետք է սկսվի նոր էջից: Էջի վերևում նշվում է «Հավելված»՝ իր համարով, որի տակից գրվում է հավելվածի վերնագիրը:

Հավելվածները՝

- պետք է պարունակեն չիրատարակված կամ օտար լեզուներից հեղինակի կողմից թարգմանված փաստաթղթեր,
 - աղյուսակներ, բանաձևեր,
 - տեսողական աղբյուրներ (նկարազարդումներ),
 - քարտեզներ, սխեմաներ,
 - այլ նյութեր, որոնք անհրաժեշտ են աշխատանքի թեմայի ամբողջական
- բացահայտման համար (օրինակ՝ ներդրման ակտեր):



Գիտահետազոտական աշխատանքի շահեկան բաղադրիչներից են դրա համապատասխան չհակերպումն ու ներկայացումը:

16.1. Գիտական աշխատանքի գնահատման հիմնական չափանիշները

Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեն գիտական աշխատանքի գնահատման մշակված հիմնական չափանիշներ, որոնք ամփոփված են Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲԲԿ) տեղեկագրերում (տե՛ս www.bok.am) կայքը: Նմանատիպ պահանջներ են մշակված նաև տարբեր երկրներում և միջազգային միություններում, որոնց միջոցով կանոնակարգվում է գիտական գործունեության ընթացակարգը:

Վերոնշյալ կանոնակարգերում հատուկ ներկայացված է վորձագիտական քննության ծանուցում, որը գիտական աշխատանքի, այդ թվում՝ և ատենախոսության արժեքավորման ու գնահատման չափանիշ է:

Փորձագետը, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հրատարակված աշխատանքները, մասնագիտական խորհրդին ներկայացնում է կարծիք, որում գնահատում է ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական դրույթների, եզրահանգումների ու հանձնարարականների ճշտությունը (իսկությունը), նորույթը և հիմնավորման աստիճանը, ատենախոսության համապատասխանությունը հետևյալ պահանջներին.

ա) ատենախոսությունը պետք է ունենա կուռ կառուցվածք, արտացոլի գիտության մեջ հեղինակի անձնական ներդրումը, ամփոփի հրապարակային պաշտպանության համար առաջադրված դրույթներն ու արդյունքները,

բ) կիրառական նշանակություն ունեցող ատենախոսության մեջ պետք է լինեն հետազոտական գիտական արդյունքների գործնական կիրառման մասին տվյալները, իսկ տեսական նշանակություն ունեցող ատենախոսության մեջ՝ գիտական եզրահանգումներն օգտագործելու հանձնարարականներ,

զ) ատենախոսությունը պետք է ձևավորվի տպագրվող աշխատանքներին ներկայացվող պահանջներին համապատասխան,

դ) ատենախոսության մեջ հետազոտողը պարտավոր է նշել այն հեղինակներին, որոնցից նա փոխառել է առանձին դրույթներ կամ նյութեր,

ե) հետազոտողը պարտավոր է ատենախոսության մեջ նշել իր գիտական աշխատանքների համահեղինակներին պատկանող գաղափարներն ու մշակումները:

Ելնելով վերը նշված պայմաններից՝ փորձագետները գնահատում են գիտական աշխատանքները և կարող են կողմնորոշվել հետևյալ գլխավոր չափանիշներով.

1. աշխատանքի իրական գիտական նորույթ. հաշվի են առնվում հեղինակի կողմից ներկայացվող մոտեցումը, ստացված արդյունքները և կատարված եզրակացությունների հիմնավորվածությունը, հետազոտողի ներդրումը տվյալ հիմնահարցի ուսումնասիրության մեջ,

2. աշխատանքի ձևավորում. հաշվի է առնվում՝ որքանով է հեղինակին հաջողվել ներկայացնել, տեղ հասցնել հետազոտության հիմնահարցի իր ընկալումը, ստացված տվյալները, սեփական ու գրականությունից վերցված տվյալների համաձայնեցվածությունը (օրինակ, եթե աշխատանքը պարունակում է 3-ից ավելի չուղղված վրիպակ, աշխատանքի գնահատականն իջնում է),

3. աշխատատարություն. կատարված աշխատանքի իրական ծավալի գնահատում (հետազոտության կազմակերպման, մեթոդական ապահովման և անցկացման աշխատատարություն),

4. ներդաշնակություն (աշխատանքի ընդհանուր կուլտուրան). բովանդակության ու ձևավորման (ներկայացման ձևի) համաձայնեցվածության վերջնական գնահատականը, մտահղացման ու իրականացման համաձայնեցվածությունը, ընթերցողի ընդհանուր տպավորությունը հեղինակի կողմից կատարված աշխատանքից, նրա կողմից ցուցաբերված կարողություններից, գի-

տելիքներից և գործադրած ջանքերից: Ի վերջո, գնահատվում են հեղինակի գիտական դիրքորոշումը և դրա արտահայտվածությունը տեքստի մեջ, հավասարակշռությունը (ներդաշնակությունը) աշխատանքում առաջադրված վարկածները սպացուցելու շահագրգռվածության (հետաքրքրության) և ստացված արդյունքների գնահատման ու մեկնաբանման անշահախնդրության միջև:

Գիտահետազոտական աշխատանքի գնահատման ու փորձաքննության պահանջները ներկայացված են որպես կողմնորոշիչ ուսանողների հետազոտության գործընթացի նպատակային իրականացման և արդյունքների ձևակերպման համար:

Հետազոտական աշխատանքի գրախոսությունը կամ ընդդիմախոսությունը ավանդաբար պարունակում է.

1. հետազոտության էության համառոտ շարադրանք՝ մի քանի նախադասությամբ,

2. վարկածներին, դրանց ստուգման եղանակներին, ստացված արդյունքների արժանահավատությանը, դրանց քննարկման գրագիտության մակարդակին վերաբերող ընդհանուր դիտողություններ,

3. մասնավոր դիտողություններ. կոնկրետ դիտողություններ՝ ամեն էջում քերականական և ուղղագրական սխալների, մեջբերումների թերությունների վերաբերյալ, հետազոտության և մեթոդների համապատասխանություն մեթոդաբանությանը,

4. եզրակացություն գիտահետազոտական աշխատանքի հրատարակման կամ պաշտպանության նպատակահարմարության մասին: Աշխատանքի երաշխավորման դեպքում անհրաժեշտ է մշել դիտողություններին համապատասխան ուղղումներ կատարելու պայմանը:

Գրականություն (Գլուխ 15 և 16)

1. **Ավանեսյան Հ. Մ., Խաչատրյան Ն. Գ.,** Ուսանողական գիտական աշխատանքների և ներկայացվող պահանջներ, Մեթոդական ուղեցույց, Եր., ԵՊՀ հրատ., 2007, 46 էջ:
2. **Джонсон Н., Лион Ф.,** Статистика и планирование эксперимента в технике и науке, М., 1980, 520 с.
3. **Ермолаев О. Ю.,** Математическая статистика для психологов: Учебник, М., Московский психолого-социальный институт: «Флинта», 2004, с. 29-34.
4. **Крылова А. А., Маничева С. А.,** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии, СПб.: «Питер», 2003, с. 5-32.
5. **Мартин Д.,** Психологические эксперименты, СПб., 2002, с. 453-454.
6. **Наследов А. Д.,** Математические методы психологического исследования, анализ и интерпретация данных, 2004.
7. **Сидоренко Е.,** Методы математической обработки в психологии. СПб., 2002. с. 325-326.
8. **Слепко Ю. Н., Ледовская Т. В., Цымбалюк А. Э.,** Анализ данных и интерпретация результатов психологического исследования: учебное пособие; изд-е 2-е, испр. и доп., Ярославль: Изд-во ЯГПУ им. К.Д. Ушинского, 2015, 164 с.

ՀՈԳԵԲԱՆ-ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԲԱՌԱՐԱՆ

ԱՆԿԱԽ ՓՈՓՈԽԱԿԱՆԻ ԱՌԱՆՉՆԱՅՈՒՄ (isolation) – փորձարարական վարկածի մեջ մտնող անկախ փոփոխականի առանձնացումը դրա ազդեցությանն ուղեկցող ավելցուկային ազդեցություններից, որն իրականացվում է լաբորատոր գիտափորձում հատուկ մեթոդական ընթացակարգերի օգնությամբ: Ի տարբերություն գործնական գիտափորձերի, որոնցում անկախ փոփոխականը, փաստորեն, միշտ ներկայանում է որպես գործոնների խումբ, լաբորատոր (կամ հենց գիտական) գիտափորձերում այն առանձնացվում է, այսինքն՝ վերածվում է առանձին գործոնի, որ հնարավոր լինի հետազոտել միայն դրա ազդեցությունը կախյալ փոփոխականի վրա: Անկախ փոփոխականի առանձնացումը դրա պայմանների գտման հետ համատեղ հնարավորություն է տալիս առաջադրելու և ստուգելու հետազոտվող վարքի մեխանիզմներին վերաբերող ճշգրիտ փորձնական վարկածներ:

ԱՆԿԱԽ ՓՈՓՈԽԱԿԱՆԻ ՏԻՊ (gradiation) – անկախ փոփոխականի փոխակերպման բնույթը, գիտափորձի սխեմաների դասակարգման չափանիշներից մեկը: Անկախ փոփոխականի երկու տիպեր՝ որակական և քանակական, բնութագրում են տարբերությունները դրանց պայմանների (առաջին դեպքում) և մակարդակների (երկրորդ դեպքում) միջև: Քանակական տիպի փոփոխականների կիրառումը հնարավորություն է տալիս ներմուծելու մետրիկական (չափիչ) սանդղակներ և ստուգելու գիտափորձի ճշգրիտ վարկածները բազմամակարդակ գիտափորձերում:

ՈՉ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ (unreliability) – գիտափորձի ներքին վալիդականության հիմնական խախտումներից մեկը: Ոչ հուսալիության աղբյուր է գլխավորապես ավելցուկային փոփո-

խականների, ամենից առաջ ժամանակի գործոնի (անհատական գիտափորձում) և հետազոտվողների անհատական տարբերությունների (խմբային գիտափորձում) չհամակարգված փոփոխականությունը, ինչպես նաև բոլոր ներառվող փոփոխականների անկայունությունը: Փորձարարական տվյալների ոչ հուսալի լինելը նշանակում է, որ գիտափորձի ցանկացած նոր կրկնման դեպքում ստացվելու են տարբեր արդյունքներ:

Նույնկերպ գնահատվում է թեստերի հուսալիությունը (կամ ոչ հուսալիությունը) համահարաբերակցական գիտափորձերում. յուրաքանչյուր նոր փորձարկման ժամանակ հետազոտվողները պետք է ստանան միևնույն գնահատականները: Արդյունքների հուսալիության ապահովման միջոցներն են փորձերի և հետազոտվողների (չափանիշը՝ անվերջ գիտափորձ) քանակության մեծացումը, հետազոտվող վարքին համապատասխան չափվող ցուցանիշների ընտրությունը, ավելցուկային գործոնների արհեստական կայունացումը և այլն: Ոչ հուսալիության ձևերից մեկն անկախ փոփոխականի թերիությունն է (ոչ ամբողջականությունը, կիսատվածությունը), որը հաղթահարվում է բազմամակարդակ գիտափորձում մեծ քանակությամբ մակարդակների ներմուծմամբ:

ԱՐՉԱՆԱԳՐՈՒՄ (documentation – «հաստատում փաստաթղթերով») գիտափորձի իրականացման երկրորդ անհրաժեշտ պայմանը: Գիտափորձի պլանի և անցկացման ընթացքի արձանագրությունն ապահովում է փորձարարական հաշվետվություն կազմելու համար տվյալների ամբողջական հաշվառումը:

ԲԱՇԽՈՒՄ (assigning) – առկա հետազոտվողներից կա՛ն գիտափորձի հատուկ ներառված («captive» «պատանդ»), կա՛ն կամավոր մասնակիցներից փորձարարական խմբերի կազմավորման ձև: Համաձայն հետազոտվողների՝ ըստ խմբերի

բաշխման համար կիրառվող մարտավարությունների՝ առանձնացվում են միջխմբային համեմատության երեք արդյունավետ սխեմաներ՝ խմբերի պատահական բաշխում, զույգային բաշխում և շերտերի նախնական առանձնացմամբ պատահական բաշխում (կամ ըստ շերտերի պատահական բաշխում): Եթե զույգերի ընտրության և շերտերի առանձնացման չափանիշները սերտորեն կապված են հետազոտվողի գործունեության հետ, ապա դրանց համապատասխանող սխեմաները հետազոտվողների միևնույն քանակության դեպքում պատահական բաշխման համեմատությամբ ապահովում են առավել բարձր ներքին վալիդականություն: Գիտափորձի արտաքին վալիդականության ապահովումը կախված է ոչ միայն հետազոտվողների ընտրանքի բաշխումից, այլև ճիշտ կատարված ընտրությունից:

ԳԻՏԱՓՈՐՁ (experiment) – ընդհանրացման ենթակա արդյունքների ստանալու նպատակով իրականության չափման նախօրոք ծրագրած (մասնավորապես հատուկ ստեղծված) պայմաններում հետազոտության իրականացում՝ գիտափորձի վարկածի ստուգման միջոց: Գիտափորձ են անվանում ինչպես իրականում անցկացվող (actual) հետազոտությունները, այնպես էլ դրանց մտավոր պատկերները (standards):

Գրքում քննարկվող իրական գիտափորձերը ստորաբաժանվում են առաջին հերթին բնական (կրկնօրինակում են իրական աշխարհը), արհեստական (ավելի են լավացնում իրական աշխարհը) և լաբորատոր տեսակների: Գիտափորձի առաջին երկու տարատեսակների նպատակները, որպես կանոն, զուտ գործնական են, իսկ երրորդ դեպքում ուսումնասիրվում են հետազոտվող վարքի մեխանիզմները, այդ իսկ պատճառով այն կոչվում է նաև գիտական:

Իրական աշխարհը կրկնօրինակող գիտափորձ – գիտափորձ, որն իրականացվում է բնական պայմաններում, որտեղ փորձա-

րարը փոփոխում է միայն անկախ փոփոխականը. դրա արդյունքների միայն տվյալ հետազոտվողի վրա տարածման տեսանկյունից սա անհատական գիտափորձ է:

Իրական աշխարհը լավացնող կամ արհեստական գիտափորձ – իրականության մմանակման պայմաններում ընթացող գիտափորձ, որը հնարավորություն է տալիս հասնելու ավելցուկային և լրացուցիչ փոփոխականների մակարդակների հարաբերական կայունության:

Լաբորատոր գիտափորձ – գիտափորձ, որն ընթանում է անկախ փոփոխականի հատուկ առանձնացման և դրա պայմանների զտման պայմաններում:

Իրական գիտափորձեր – տարբերվում են նաև դրանցում կիրառվող փորձարարական սխեմաների տեսանկյունից՝ դրանցից ստանալով իրենց անվանումը:

Անհատական կամ ինտրասանհատական գիտափորձ (տե՛ս փորձարարական սխեմա)

Մեկ հետազոտվողով գիտափորձ (single subject) – անհատական գիտափորձի տարատեսակ է:

Երկվալենտ կամ երկարժեքական գիտափորձ – անկախ փոփոխականի երկու պայմաններով գիտափորձ է:

Բազմավալենտ կամ բազմարժեքական գիտափորձ – անկախ փոփոխականի մի քանի (ավելի քան երկու) մակարդակներով գիտափորձ է:

Բազմաչափ, գործոնային գիտափորձ

Բազմաչափ (multivariate) գիտափորձ – մի քանի (երկուսից ոչ պակաս) անկախ և մի քանի կախյալ փոփոխականներով գիտափորձ: Ցանկացած հնարավոր իրական գիտափորձի (որի անցկացումն անհնար կամ անիմաստ է) իրականացման մտավոր օրինակ:

Կատարյալ (perfect) գիտափորձ, որի գաղափարը հարաբերվում է գիտափորձի վալիդականություն հասկացության հետ: Կա-

տարյալ գիտափորձի տեսակների տարբերակումը համապատասխանում է ներքին և արտաքին վալիդականության առանձնացմանը: Այսպես, բարձր ներքին վալիդականության հասնելու օրինակներ են՝ իդեալական գիտափորձը, որի ընթացքում փոխակերպվում է միայն անկախ փոփոխականը, իսկ մյուս բոլոր գործոնները մնում են անփոփոխ: Այսպիսով, հետազոտվում է միայն անկախ և կախյալ փոփոխականի միջև առկա հարաբերությունը:

Մաքուր (pristine) գիտափորձը – իդեալական գիտափորձի տարատեսակ է, որի ընթացքում հետազոտողը գործարկում է առանձին անկախ փոփոխականով և դրա լիովին մաքրված պայմաններում: Մտավոր օրինակ է լաբորատոր գիտափորձի համար:

Անվերջանալի գիտափորձը – անվերջ շարունակվող գիտափորձ է (այսինքն՝ փորձարկվողների և փորձերի անվերջ քանակությամբ գիտափորձ), որը թույլ է տալիս միջինացնել կախյալ փոփոխականի վրա ազդող ավելցուկային գործոնների անխուսափելի փոփոխությունների արդյունքը:

Կատարյալ արտաքին վալիդականություն ունեցող մտավոր, **լրիվ համապատասխանության գիտափորձը** գիտափորձ է անհրաժեշտ լրացուցիչ փոփոխականների այնպիսի մակարդակների ներմուծմամբ, որոնք համընկնում են հետազոտվող իրականությունում այդ փոփոխականների մակարդակներին:

ԳԻՏԱՓՈՐՉԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՒՄ (ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ) (planned manipulation ծրագրված մանիպուլյացիա) գիտափորձի իրականացման առաջին անհրաժեշտ պայմանը անկախ փոփոխականի ինքնուրույն կառավարման հնարավորությունն է: Գործնականում առկա է անկախ փոփոխականի պայմանների կամ մակարդակների ներկայացման նախօրոք կազմված պլան, այսինքն՝ փորձարարական սխեմա:

ԳԻՏԱՓՈՐՉԻ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆ – կատարյալ գիտափորձի տարատեսակներից մեկին իրական գիտափորձի (կամ կոնկրետ փորձարարական սխեմայի) մոտեցման աստիճան: Քանի որ իրական գիտափորձը չի կարող լինել անթերի, ցանկացած տրված գիտափորձի (կամ սխեմայի) ներկայացվածությունը սովորաբար գնահատվում է որպես համեմատության օրինակ ծառայող, կատարյալ գիտափորձի չափանիշով նմանատիպ այլ գիտափորձի (կամ սխեմայի) հետ դրա համեմատության միջոցով:

ԳԻՏԱՓՈՐՉԻ ՎԱՐԿԱԾ (experimental hypothesis) – գիտափորձում ստուգելու նպատակով որևէ գաղափարի կոնկրետացում, ճշգրտում: Գիտափորձի վարկածը ներառում է անկախ փոփոխական, կախյալ փոփոխական, դրանց միջև առկա հարաբերություններն ու լրացուցիչ փոփոխականների մակարդակները: Այսպիսով, գիտափորձի վարկածը լրացուցիչ փոփոխականների որոշակի մակարդակում անկախ և կախյալ փոփոխականների միջև առկա հարաբերությունների մասին ենթադրություն է: Այն չափով, որքանով այդ հարաբերությունը կախված չի լինի կողմնակի և լրացուցիչ փոփոխականներից, գիտափորձի վարկածը կարող է դառնալ առավել ընդհանրացված:

Հակավարկած – հիմնական ենթադրությանն այլընտրանքային փորձնական վարկած: Առաջ է գալիս ինքնաբերաբար:

Երրորդ մրցակցող գիտափորձի վարկած – կախյալ փոփոխականի վրա անկախ փոփոխականի ազդեցության բացակայության մասին փորձնական վարկած, որը հնարավոր է ստուգել միայն լաբորատոր գիտափորձի ընթացքում (տե՛ս **Զրոյական վարկած**):

Ճշգրիտ փորձնական վարկած – լաբորատոր գիտափորձում առանձին անկախ փոփոխականի և կախյալ փոփոխականի միջև առկա հարաբերության մասին ենթադրություն: Ստու-

գումը պահանջում է անկախ փոփոխականի առանձնացում և դրա պայմանների գտում (մաքրում):

Մեծագույն (կամ փոքրագույն) մեծության մասին փորձնական վարկած – ենթադրություն այն մասին, թե անկախ փոփոխականի որ մակարդակում է կախյալ փոփոխականն ընդունում առավելագույն (կամ նվազագույն) նշանակությունը: Հիմնվում է կախյալ փոփոխականի վրա հակադարձ ազդեցություն գործող երկու հիմնային գործընթացների մասին պատկերացումների վրա. անկախ փոփոխականի որոշակի (բարձր) մակարդակի հասնելու դեպքում բացասական գործընթացը դառնում է առավել ուժեղ, քան դրականը: Ստուգվում է միայն բազմամակարդակ գիտափորձում:

Քաջարձակ և համեմատական հարաբերությունների մասին գիտափորձի վարկած – ճշգրիտ ենթադրություն անկախ փոփոխականի աստիճանական (քանակական) փոփոխման հետ կապված կախյալ փոփոխականի աստիճանական (քանակական) փոփոխման բնույթի մասին: Ստուգվում է բազմամակարդակ գիտափորձում:

Մեկ հարաբերությամբ փորձնական (գիտափորձի) վարկած – ենթադրություն մեկ անկախ և մեկ կախյալ փոփոխականների միջև առկա հարաբերության մասին: Մեկ հարաբերությամբ փորձնական վարկածի ստուգման համար կարող է կիրառվել և գործոնային գիտափորձը, սակայն այս դեպքում երկրորդ անկախ փոփոխականը հանդես է գալիս որպես ստուգիչ:

Համակցված (կոմբինացված) գիտափորձի վարկած – ենթադրություն մի կողմից երկու (կամ մի քանի) անկախ փոփոխականների որոշակի համադրության (կոմբինացիայի), մյուս կողմից կախյալ փոփոխականի միջև: Ստուգվում է միայն գործոնային գիտափորձում:

ԳԻՏԱՓՈՐՉԻ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ (reproduction) – գիտափորձը կրկնելու հնարավորություն՝ առաջնորդվելով փոր-

ձարարական հաշվետվության մեջ կիրառվող մեթոդական ընթացակարգերի նկարագրությամբ:

ԳՈՐԾՈՆ (factor) – գիտափորձում հետազոտվողի վարքի վրա ազդող ցանկացած իրականություն: «Գործոն» հասկացությունը բովանդակությամբ մոտ է «փոփոխական» հասկացությանը և կիրառվում է որպես դրա հոմանիշ գործոնային գիտափորձերի նկարագրության ընթացքում ու մի շարք ավելցուկային փոփոխականների, ինչպես, օրինակ, ժամանակի գործոնի, առաջադրանքի գործոնի, սուբյեկտիվ գործոնի նշանակման համար:

Ժամանակի գործոն (time variable) – ժամանակի ընթացքում կատարվող փոփոխությունների հետ կապված և գիտափորձի արդյունքի վրա ավելցուկային ազդեցություն գործող (կախյալ փոփոխականի նշանակություններ) գործոնների ամբողջության պայմանական անվանումը: Ժամանակի ընթացքում կատարվող փոփոխությունների շարքին դասվում են առաջին հերթին հայտնի ավելցուկային գործոնները, որոնք գիտափորձի ճիշտ պլանավորման դեպքում հնարավոր է կամովի պահել հաստատուն մակարդակի վրա (օրինակ՝ օրվա ժամը, եղանակային պայմանները) և երկրորդ՝ ժամանակի մեջ ավելցուկային, անկախ և կախյալ փոփոխականների անկայունության տարբեր ձևերը (այս շարքին են պատկանում հետազոտվողի վարքի և չափվող ցուցանիշների փոփոխությունները): Ժամանակի մեջ անկայունությունը դժվար է անմիջականորեն վերացնել. անհրաժեշտ են առաջնային վերահսկման միջոցներ, գիտափորձի սխեմաների (այստեղ՝ ինտրասահատական) կիրառում: Չհամակարգված փոփոխականություն և արդյունքների անհուսալիություն առաջ բերող հիմնական գործոններից մեկն առավել վտանգավոր է բնական ու երկարաժամկետ հետազոտությունների համար:

Առաջադրանքի (խնդրի) գործոն (taskvariable) – անկախ փոփոխականի տարբեր պայմաններում հետազոտվողներին ներկայացվող փորձարարական առաջադրանքների տարբերությունների հետ կապված գիտափորձի արդյունքի վրա ավելցուկային ազդեցությունների ամբողջությունը: Այդ ազդեցությունները (տարբերությունները) միջինացվում են առաջադրանքների ճիշտ ընտրության միջոցով: Անհատական գործոնական գիտափորձերի մեծ մասում առաջադրանքի գործոնը մտնում է ժամանակի գործոնի կազմի մեջ. միջխմբային սխեմաների կիրառումը թույլ է տալիս ամբողջովին վերացնել այն:

Սուբյեկտիվ գործոն (subject variable) – (տե՛ս **Անհատական տարբերություններ**):

ՋՐՈ ՎԱՐԿԱԾ (ՋՐՈՅԱԿԱՆ ՎԱՐԿԱԾ) (0 hypothesis) – վարկած անկախ փոփոխականի պայմանների տարբերությունների բացակայության (կախյալ փոփոխականի վրա դրանց ունեցած ազդեցության տեսանկյունից) մասին: Ջրոյական վարկածի ստուգումը հնարավոր է միայն լաբորատոր գիտափորձում և անհրաժեշտ է փորձարարական արդյունքների ստատիկ նշանակության որոշման համար: Ջրո-հիպոթեզի հերքման կամ ընդունման (չժխտման) հավանականությունները տրվում են ալֆա և բետա մակարդակներով (տե՛ս նաև **Եզրահանգում ստատիկ**):

ՋՈՒԳԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՇԵՐՏԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՅՈՒՄԸ (stratification, «ստրատիֆիկացիա») – կիրառվում են նույն կերպ, ինչպես վերահսկման միջոցները համահարաբերակցական հետազոտություններում. դա տարբեր խմբերում հետազոտվողների՝ ըստ գույգերի ընտրության մարտավարությունն է և միատարր ենթախմբերի կառուցումը: Այսինքն՝ գույգերի կամ հետազոտվողների այնպիսի խմբերի ընտրություն, որոնք իրար մեջ հավասարեցված են բոլոր փո-

փոխականների տեսանկյունից՝ բացառությամբ հետազոտողին հետաքրքրող փոփոխականի:

ԸՆԳՀԱՆՐԱՑՈՒՄ (generalization) – ցանկացած գիտափորձի գլխավոր նպատակը՝ ստացված տվյալների սահմանափակ քանակության հիման վրա կատարել եզրակացություններ, որոնք տարածվում են պրակտիկայի առավել լայն ոլորտներում: Գործնական անհատական գիտափորձերում ընդհանրացումը կատարվում է նույն կերպ, ինչպես կյանքում: Այն սահմանափակ քանակությամբ փորձի հիման վրա կատարվող ընդհանուր եզրահանգում է, որն արդարացի է միայն տվյալ կոնկրետ հետազոտվողի համար:

Արդյունքների ընդհանրացման հնարավորությունը կապված է գիտափորձի ներկայացուցչականության և վալիդականության հետ, կախված է ավելցուկային գործոնների վերահսկողությունից (ներքին վալիդականություն) և գիտափորձում լրացուցիչ փոփոխականների համապատասխանությունից (և ներկայացվածության ամբողջականությունից): Փորձարարական արդյունքների ընդհանրացումն առանձնացվում է հետազոտվող իրական իրավիճակի (արհեստական գիտափորձ), պոպուլյացիայի այլ անդամների (խմբային գիտափորձ), տեսական պատկերացումների տարածման (լաբորատոր գիտափորձ) միջև: Ընդհանրացման վերահսկման համար գործոնային գիտափորձում ներառվում են նաև լրացուցիչ փոփոխականի նոր մակարդակներ: Հետազոտվող վարկածի առավել լայն ընդհանրացումը պահանջում է գիտափորձերի մի ամբողջ շարքի իրականացում լրացուցիչ փոփոխականների տարբեր մակարդակներում:

ԸՆՏՐԱՆՔ (party or partisipants) – գիտափորձին մասնակցելու նպատակով հետազոտվող պոպուլյացիայից ընտրված հետազոտվողներ: Ընտրանքը տարաբաժանվում է փորձարարական և ստուգիչ խմբերի: Ընտրանքի ներգրավմամբ գիտա-

փորձերը, որպես կանոն, միջխմբային են, սակայն սկզբունքորեն կարող են իրականացվել նաև անհատական սխեմաներով: Լիարժեք գիտափորձի համար անհրաժեշտ ընտրանքի հիմնական որակը դրա ներկայացուցչականությունն է, որը որոշում է գիտափորձի արտաքին վալիդականությունը և իրականացվում է հետազոտվողների ընտրության համապատասխան մեթոդներով: Ներքին վալիդականությունը պայմանավորված է փորձարարական և ստուգիչ խմբերի փոխադարձ համապատասխանության աստիճանով և ապահովվում է խմբերում հետազոտվողների բաշխման տարբեր մարտավարությունների օգնությամբ:

ԸՆՏՐՈՒՄ (ընտրություն, choice) – հետազոտվողներին ներառելու միջոց, որը հնարավորություն է տալիս ապահովելու հետազոտվող պոպուլյացիայի ներկայացվածությունը՝ դրանով իսկ ստանալով միջխմբային գիտափորձի բարձր ներքին վալիդականություն: Հետազոտվողների ընտրման (ընտրության) համար կիրառվում են խմբերի կառուցման հիմնական մարտավարություններից երկուսը, այսինքն՝ միջխմբային համեմատության երկու արդյունավետ սխեմաներ՝ խմբերի պատահական ընտրությունը և խմբերի պատահական ընտրությունը շերտերի նախնական առանձնացմամբ (կամ պատահական ընտրություն ըստ շերտերի): Վերջին սխեման (հետազոտվող գործունեության շերտերի առանձնացման սկզբունքի համապատասխանության պայմանում) հնարավորություն է տալիս հասնելու առավել բարձր արտաքին վալիդականության հետազոտվողների միևնույն քանակության դեպքում: Նշված սխեմաներում ընտրությունը զուգորդվում է խմբերում հետազոտվողների բաշխման հետ, այդ իսկ պատճառով դրանք ապահովում են ոչ միայն արտաքին, այլև ինքնաբերաբար բարձր ներքին վալիդականություն (տե՛ս **Բաշխում**):

ԽՄՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (constructing) ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

– խմբային գիտափորձում մասնակցության համար հետազոտվողների կազմակերպման համապատասխան միջոց, որը հնարավորություն է տալիս միջինացնելու նրանց անհատական տարբերությունները տարբեր խմբերում (ներքին վալիդականություն) և համապատասխանաբար ներկայացնելու հետազոտվող պոպուլյացիան (արտաքին վալիդականություն): Առանձնացվում են խմբերի կառուցման երեք հիմնական մարտավարություններ՝ պատահական (random կամ randomization, «ռանդոմիզացում»), զուգակցական (matching, «զույգերի ընտրություն») և շերտերի նախնական առանձնացմամբ (stratified random) պատահական (առաջին երկուսի համադրությունը): Դրանցից յուրաքանչյուրը կիրառվում է խմբերում փորձարկվողների բաշխման, իսկ առաջինն ու երրորդը՝ պոպուլյացիայից հետազոտվողների ընտրության համար: Դա տալիս է արդյունավետ միջխմբային համեմատության հիմք սխեմաներ: Խմբերի կառուցման հատուկ մարտավարության բացակայությունը, այսինքն՝ իրականում գոյություն ունեցող (existing) խմբերի կիրառումն անհաջող սխեմա է, որն անխուսափելիորեն առաջ է բերում անկախ փոփոխականի համակարգային շեղմանը հետազոտվողների անհատական տարբերություններին: Լաբորատոր գիտափորձում (այդ թվում՝ նաև հետազոտվողների քիչ քանակության դեպքում) ներքին վալիդականության ապահովման համար կիրառվում են խմբերի կառուցման հետևյալ մարտավարությունները՝

- 1) նախնական միջոցներ – պատահական բաշխում կամ ընտրություն,
- 2) սերիական լուծում – խմբերի համապատասխանությանը հասնելը գիտափորձի ընթացքում (մասնավորապես նշանա-

կալի բնութագրիչների չափանիշով հետազոտվողների նախնական ստուգման օգնությամբ),

3) առավելագույնս մասն անհատների կիրառում (օրինակ՝ միևնույն ծնի կենդանիների):

ԿԱՆԽԱՏԵՍԱՆ ՈՒՂԻ (ԳԻԾ, foresight line) – երկու փոփոխականների համահարաբերակցական գիտափորձի արդյունքում ստացված տվյալների ցրվածության գիծ գծապատկերի վրա (օրինակ՝ նոր թեստի փորձարկման ժամանակ արցիսների առանցքը՝ թեստային գնահատականներ, օրդինատների առանցքը՝ ախտորոշվող տարբերությունների գնահատականներ): Կանխատեսման գիծը միացնում է հետազոտվող փոփոխականի միջին գնահատականները, դրանով հնարավորություն տալիս հետագայում կանխատեսելու դրա նշանակությունները թեստային գնահատականների կիրառմամբ: Կանխատեսման ճշտությունը որոշվում է փոփոխականների համահարաբերակցման գործակցի մեծությամբ, որը և տալիս է կանխատեսման գծի թեքության աստիճանը (գրոյից հորիզոնական գիծ, մինչև մեկ՝ 45°):

ԿՈՐԵԼՅԱՑԻՈՆ (ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑԱԿԱՆ) ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (correlation study) – մարդկանց և նրանց վարքի առկա անհատական տարբերությունները բնութագրող երկու (կամ ավելի) փոփոխականների միջև փոխհարաբերությունների հետազոտություն: Ի տարբերություն գիտափորձի, այսինքն՝ անկախ փոփոխականի վիճակների ակտիվ կառավարման, համահարաբերակցական գիտափորձում ստուգվում են արդեն առկա բնութագրերի փոխադարձ կապերի մասին վարկածները: Համահարաբերակցական գիտափորձն անհրաժեշտ է նաև այդ բնութագրերը չափող թեստերի ախտորոշիչ (դիագնոստիկ) արժեքի որոշման համար: Համահարաբերակցական գիտափորձը, որպես կանոն, իրականացվում է հետազոտվողների մեծ քանակության վրա վերստուգ-

ման ստատիկ մեթոդների կիրառմամբ: Հետազոտվող տարբերությունների հնարավոր պատճառների առանձնացման համար մասնավորապես կիրառվում է գործոնային վերլուծությունը: Համահարաբերակցական գիտափորձն առանձնացվում է ըստ հետևյալ չափանիշների՝ 1) փոփոխականներից մեկի՝ որպես անկախ փոփոխականի մեկնաբանության հնարավորություն, կամ այդ փոփոխականը ժամանակային առումով նախորդում է մյուսին (ինչը հնարավորություն է տալիս դրանց պատճառահետևանքային կապի մասին էմպիրիկ ենթադրություն անելու), կամ ոչ, 2) համահարաբերակցման գործակցի հաշվման հնարավորություն, և 3) նպատակը կամ զուտ իմացական է, տեսական, կամ զուտ կիրառական:

ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒՄ – իրական դիտարկվող փաստ, անկախ փոփոխականի այս կամ այն վիճակի և կախյալ փոփոխականի որոշակի նշանակության միջև առկա փոխադարձ կապի օրինակ: Առանց հետազոտության պլանի կիրառման հետազոտողը կարող է ստանալ միայն առանձին համահարաբերակցումներ, որոնք չեն տալիս վարկածը ստուգելու հնարավորություն: Այն դեպքերում, երբ հնարավոր չէ վերահսկել անկախ փոփոխականը, կիրառվում է կորելյացիոն մոտեցումը, այսինքն՝ հետազոտվող փոփոխականների ստատիկ հարաբերակցությունների բացահայտումը մեծ թվով հետազոտվողների հետազոտության արդյունքում: Եթե այդ փոփոխականներից յուրաքանչյուրի ստացված նշանակությունների բաշխումն ունի գմբեթաձև տեսք, ապա հնարավոր է հաշվարկել դրանց միջև փոխհարաբերակցության գործակիցը: Համահարաբերակցության գործակիցն օգտագործվում է մաս փորձարարական արդյունքների հուսալիությունն ու թեստերի վալիդականությունը ստուգելու նպատակով:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ (appropriateness) – անցկացվող գիտափորձում հետազոտվող իրականության կամ դրա մա-

սին տեսական պատկերացման արտացոլման համապատասխանության աստիճանը: Համապատասխանության հիմնախնդիրները կապված են արտաքին վալիդականության (իզոլը չէ, որ դրա կատարյալ տարբերակը ստանում է լրիվ համապատասխանության գիտափորձ անվանումը) ապահովման հետ, ի հայտ են գալիս գիտափորձի վարկածի բոլոր բաղադրիչների՝ անկախ, կախյալ փոփոխականների և լրացուցիչ փոփոխականների մակարդակների նկատմամբ: Համապատասխանության վերահսկումը սովորաբար ներկայանում է որպես առկա փորձարարական իրավիճակում իրականության փոխակերպման բոլոր հետևանքների վերլուծություն (նախնական կամ գրանցող): Այսպես, արհեստական գիտափորձի արդյունքների մեկնաբանության ընթացքում դիտարկվում են գլխավորապես կախյալ փոփոխականի նշանակությունների համապատասխանության, ինչպես նաև հանգուցային և այլ լրացուցիչ փոփոխականների (օրինակ՝ հետազոտվողի առաջադրանքի հետ համատեղ կատարվող այլ գործողությունների վերլուծությունը, լարման և ժամանակի մեջ փորձերը սեղմելու (compression) խնդրի վերացումը) մակարդակների հարցերը:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ (ՀԻՄՔ) – փորձարարական սխեմաների դասակարգման առաջին և որոշիչ չափանիշը: Գիտափորձի վարկածի ստուգման համար անհրաժեշտ անկախ փոփոխականների պահանջների միջև առանձնացվում են համեմատության հիմնավորման երեք ընդհանուր տիպեր՝ ներանհատական (within subject), միջխմբային (between group) և կրոսանհատական (across subject): Առաջին դեպքում հետազոտվող պայմանների ներկայացման ժամանակ ստացված տվյալների համեմատությունն իրականանում է յուրաքանչյուր հետազոտվողի համար: Երկրորդ դեպքում պայմանները համեմատվում են հետազոտվողների համա-

պատասխան (փորձարարական և ստուգիչ) խմբերի տվյալների հիման վրա: Իսկ երրորդ դեպքում համեմատվող պայմաններից (այստեղ՝ մակարդակներից) յուրաքանչյուրի միջինացված արժեքը գտնելու նպատակով անհրաժեշտ են գիտափորձի բոլոր մասնակիցների տվյալները, այսինքն՝ հաշվարկն իրականացվում է բոլոր հետազոտվողների տվյալներով: Ներանհատական, միջխմբային և կրոսանհատական են կոչվում գիտափորձի սխեմաները, ինչպես նաև հենց գիտափորձի տարատեսակները և դրանցում կիրառվող վերահսկման միջոցները:

ՄԱԿԱՐԳԱԿ (level) – քանակական տիպի անկախ փոփոխականի ներկայացման ձև կամ դրսևորման միջոց: Մեծ քանակությամբ մակարդակների ներգրավումը բազմամակարդակ գիտափորձում հնարավորություն է տալիս հաղթահարելու անկախ փոփոխականի ոչ լրիվությունը: «Մակարդակ» հասկացությունը կիրառվում է նաև կողմնակի և լրացուցիչ փոփոխականների գործողության տարբեր ձևերի նկատմամբ: Լրացուցիչ փոփոխականի որոշված մակարդակը գիտափորձի վարկածի անհրաժեշտ բաղադրամասն է: Տվյալ դեպքում մակարդակների միջև տարբերությունները, որպես կանոն, ոչ թե քանակական են, այլ որակական (օրինակ՝ երաժշտական երկերի տարբեր տիպերը): Լրացուցիչ փոփոխականների մակարդակների համապատասխանությունը արտաքին վալիդականության ապահովման հիմնական պայման է, իսկ գիտափորձի իրականացումն այդ փոփոխականների տարբեր մակարդակներում ընձեռում է արդյունքների ընդհանրացման լայն հնարավորություն: Գործոնային գիտափորձում ուղեկցող շեղման վերահսկողության ժամանակ առանձնացվում են ակտիվ (այսինքն՝ գործողության մակարդակ) և պասիվ մակարդակներ, ինչպես նաև շատ կամ քիչ ակտիվ մակարդակներ:

ՄԵԹՈԴԻԿԱ (method) – գիտափորձի կատարման կոնկրետ գործողությունների, ընթացակարգերի ամբողջություն: Ներքին վալիդականության ապահովման պայմաններից մեկը մեթոդիկայի ճշտության (precision) պահպանումն է: Լաբորատոր գիտափորձերի կատարման ընթացքում հաստուկ կերպով քննարկվում է մեթոդիկայի բաղադրիչների և անկախ փոփոխականը որոշելու նպատակով ներգրավված տեսական հասկացությունների (օրինակ՝ արդյո՞ք կարող է դզոցի կտրուկ ձայնը գնահատվել որպես պատիժ) համապատասխանության հարցը: Մեթոդիկան հանգամանորեն շարադրվում է փորձարարական հաշվետվության համապատասխան բաժնում:

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ (meaning) – կախյալ փոփոխականի չափման միավոր, ստացված տվյալների մշակման վերջնական արդյունք: Անկախ փոփոխականի ցանկացած պայմանին կամ մակարդակին համապատասխանում է որոշակի նշանակություն: Նշանակությունների ամբողջությունը սովորաբար ներկայացվում է աղյուսակներում և գրաֆիկներում:

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ (significance) արդյունքների – կախյալ փոփոխականի ստացված միջին նշանակությունների՝ փորձնական (գիտափորձի) վարկածին համապատասխանող տարբերությունների ստատիկ հավաստիությունը (անկախ փոփոխականի տարբեր մակարդակների ազդեցության դեպքում): Գիտափորձի ներքին վալիդականության բարձրացման նպատակով իրականացվում է արդյունքների նշանակության ստուգում, գրովարկածի ժխտման (կամ չժխտման) ստուգում: Տվյալների նշանակությունը անհրաժեշտ (երբեմն՝ ոչ բավարար) պայման է հետազոտվող վարկածի մասին ենթադրության հավաստիության համար:

ՉԱՓՎՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (Measured indicator) – գիտափորձում հետազոտվողի գործունեության քանակական բնութագիր, որը ծառայում է կախյալ փոփոխականի նշանակության

որոշմանը: Չափվող ցուցանիշների համապատասխան ընտրությունը մեծացնում է գիտափորձի հուսալիությունը, դրանով իսկ՝ նաև ներքին վալիդականությունը: Որքան շատ են հետազոտվողի առանձին հակազդումներն ու գործողությունները և բնութագրվում են մեկ չափվող միավորով, այնքան քիչ է ստացվող արդյունքների չհամակարգված փոփոխականությունը: Հետազոտվողի հետազոտվող իրական գործունեության, և չափվող ցուցանիշների համապատասխանությունից է կախված արտաքին վալիդականությունը:

ՊԱՅՄԱՆ ա) (treatment) – տե՛ս վիճակ կամ պայման, բ) պայման (condition) ստուգիչ – անկախ փոփոխականի ուղեկցող շեղման վերահսկողության ձև: Հետազոտվողների հատուկ խմբի նկատմամբ ստուգիչ պայմանի ներմուծումը հնարավորություն է տալիս արդյունքում հասնելու ուղեկցող փոփոխականի մշտական մակարդակի, դրանով իսկ «գտելու» անկախ փոփոխականի ակտիվ պայմանը: Այս դեպքում (բարեբախտաբար, այն միակն է) «condition» և «treatment» հասկացությունները տարբերվում են ըստ համատեքստի (ստուգիչ պայման և անկախ փոփոխականի պայման): Ի դեպ, այս հասկացությունների թարգմանության նույնությունն այնքան էլ վտանգավոր չէ. այսպես, հիմնային փոփոխականի ուղեկցող շեղման վերահսկման ժամանակ նոր, հատուկ ներմուծված պայմանը (condition) վերածվում է երկրորդ (ստուգիչ) փոփոխականի պայմաններից (treatment) մեկին: Ավելացնենք, որ ինչպես բնօրինակում, այնպես էլ թարգմանության մեջ «պայմանը» կիրառվում է նաև որպես ուղղակի լեզվի խոսք՝ չստանալով տերմինաբանական իմաստ (օրինակ՝ «եղանակային պայմաններ» կամ «գիտափորձի անցկացման պայմաններ»):

ՊԱՐԱԳԻԳՄԱՆ կամ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱՅՈՒՅՅԸ (հուն. «օրինակ, մոդել, նմուշ», paradeiknunai – «համեմատել») գիտության

փիլիսոփայությունում նշանակում է գիտության զարգացման տվյալ փուլում ճանաչված բացահայտ և ոչ բացահայտ (հաճախ չգիտակցվող) նախադրյալների ամբողջություն, որոնք որոշում են գիտական հետազոտությունները, ինչպես նաև էվոլյուցիոն գործունեության իմացաբանական մոդել, էվոլյուցիոն որոշումների ընդունման համընդհանուր մեթոդ:

Պարադիգման գիտության մեթոդաբանությունում – նշանակում է որոշակի ժամանակաշրջանում կայացած գիտական ավանդույթի շրջանակներում գիտական միավորման մեջ ընդունված արժեքների, մեթոդների, մոտեցումների, տեխնիկական միջոցների և հմտությունների ամբողջություն: Համաձայն Կունի՝ պարադիգման այն է, ինչը միավորում է գիտական ընկերության անդամներին, և, ընդհակառակը, գիտական միավորումը կազմված է որոշակի պարադիգմա ընդունող մարդկանցից: Որպես կանոն, պարադիգման ամրագրվում է գիտնականների աշխատություններում, դասագրքերում և երկար տարիներ որոշում է գիտական դպրոցում, գիտության այս կամ այն բնագավառում առկա խնդիրների շրջանակը ու դրանց լուծման մեթոդները: Պարադիգմային կարելի է վերագրել, օրինակ, Արիստոտելի հայացքները, նյութաբանական մեխանիկան և այլ նմանատիպ երևույթներ:

ՊՈՊՈՒԼՅԱՑԻԱ (population) – փորձարարական հետազոտությունում ուսումնասիրվող, միևնույն տարիքային, մասնագիտական կամ այլ պատկանելությամբ միավորված, պոտենցիալ հետազոտվողների քանակակազմ:

ՍՏՍՏԻԿ ԵԶՐԱՎՆԳՈՒՄ – կախյալ փոփոխականի նշանակությունների (մեծությունների) միջև տարբերությունների այնպիսի մեծության հայտնաբերում, որը զրո վարկածի հաստատման դեպքում կարող է ավելացվել (մեծացվել) միայն ստատիկ որոշման օրենքի կողմից տրվող հավանականությամբ (decision) (օրինակ՝ $p = 0,05$): Ստատիկ եզրահանգումը

որոշում է ստացված տարբերությունների նշանակությունը, փորձարարական եզրահանգումների (conclusions) պայման է, կախված է հետազոտվողների քանակությունից և ստանդարտ շեղման մեծությունից:

ՎԱԼԻԳԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (validity) – անբասիր գիտափորձի արդյունքների համեմատությամբ իրական գիտափորձի արդյունքներից բխող եզրակացության հավաստիությունը (կամ հավաստիության աստիճանը): «Վալիդականությունը» փորձարարի բառարանի կենտրոնական հասկացությունն է: Այն հետազոտության հիմնական նպատակները միավորում է դրանց հասնելու իդեալական չափանիշների և գիտափորձի անցկացման իրական ընթացակարգի հետ:

Ցանկացած փորձարարական հետազոտության համընդհանուր նպատակը ստացված արդյունքների ընդհանրացումն ու փորձարարական վարկածի մասին եզրահանգումն է: Սակայն այս նպատակի ամբողջական իրականացումը հնարավոր է միայն գործնականում անիրագործելի մտավոր, անբասիր գիտափորձում: Իրական գիտափորձը այս կամ այն չափով ներկայացնում է անբասիր գիտափորձը, և որքան ավելի լավ է այդ ներկայացվածությունը, այնքան բարձր է գիտափորձի վալիդականությունը: Այսպիսով, վալիդականության, այսինքն՝ գիտափորձի՝ անթերի գիտափորձի նմուշին համապատասխան իրականացման պլանավորումը փորձարարի ստույգ խնդիրն է, որի լուծման հաջողությունը կախված է նախ իրական պայմանների բնույթից, այնուհետև՝ ընտրված միջոցների համապատասխանությունից: Այսպես, վալիդականության խախտման աղբյուրները առաջին հերթին շեղում ու հեռացում են իրական գիտափորձն անթերիից, իսկ դրանց վերահսկման միջոցները հնարավորություն են տալիս մոտենալու դրան, այսինքն՝ ապահովելու բարձր վալիդականություն փորձարարական արդյունքների ընդհանրացման

համար: Ստացված տվյալների վալիդականությունը կարելի է գնահատել ստատիկ կերպով. օրինակ՝ թեստի վալիդականությունը (կորելյացիոն հետազոտության ընթացքում) որոշվում է դրա իրականացման արդյունքների և հետազոտվողների հետազոտվող գործունեության կորելյացիայի աստիճանով: Անբասիր գիտափորձի տարբեր ձևերին համապատասխան՝ առանձնացվում են ներքին և արտաքին վալիդականություն:

Ներքին վալիդականություն – եզրահանգումների հավաստիությունը, որն ապահովվում է իրական գիտափորձի արդյունքներով՝ իդեալական և անվերջ գիտափորձերի արդյունքների հետ դրանց համեմատությամբ: Ներքին վալիդականության բարձրացումը կապված է կողմնակի փոփոխականների ազդեցության արդյունքների հեռացմամբ և դրանց փոփոխության ու անկայունության միջինացմամբ: Ներքին վալիդականությունը փորձարարական եզրահանգումներին ներկայացվող առաջին և անհրաժեշտ պահանջն է: Ներքին վալիդականություն չունեցող գիտափորձն անվանվում է ուղղակի անհաջող:

Արտաքին վալիդականություն – եզրահանգումների հավաստիությունը, որն ապահովվում է իրական գիտափորձի արդյունքներով՝ լրիվ համապատասխանության գիտափորձի արդյունքների հետ դրանց համեմատությամբ: Արտաքին վալիդականության բարձրացումն իրականանում է գիտափորձի լրացուցիչ փոփոխականների և հետազոտվող իրականության մեջ այդ իսկ փոփոխականների մակարդակների համապատասխանությանը հասնելու միջոցով: Արտաքին վալիդականություն չունեցող գիտափորձը սխալ է, չի համապատասխանում առաջ քաշված վարկածին (սակայն կարող է պիտանի լինել այլ վարկածի ստուգման համար):

Օպերացիոնալ վալիդականություն – արտաքին վալիդականության տարատեսակ՝ լաբորատոր գիտափորձի համար, կի-

րառվող մեթոդական ընթացակարգերի համապատասխանությունը (կամ համապատասխանության աստիճանը) փորձարարական վարկածի մեջ մտնող տեսական հասկացությունների:

ՎԵՐԱՀՍԿՈՒՄ, ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ (ՄԵԹՈԴՆԵՐԸ)

(controls) – գիտափորձն անբասիր գիտափորձին մոտեցնող կատարելագործման միջոցներ: Վերահսկման միջոցների նշանակման ժամանակ հաշվի է առնվում, առաջին հերթին, այն ընդհանուր կամ մասնավոր նպատակը, որը հասանելի է այդ միջոցների կիրառմամբ, և երկրորդ, վերահսկմանը (այսինքն՝ օտարմանը կամ միջինացմանը) պատկանող ընդհանուր կամ մասնավոր գործոնը: Այսպես, մի կողմից յուրաքանչյուր վերահսկման միջոցով ստացված արդյունքների և եզրակացությունների ընդհանրացման, ինչպես նաև ներքին ու արտաքին վալիդականության վերահսկումն է, մյուս կողմից, դրանք հանդես են գալիս որպես վալիդականության խախտման հիմնական աղբյուրների՝ անհուսալիության ու շեղման և դրանք առաջ բերող կոնկրետ գործոնների (օրինակ՝ ժամանակի գործոնը, առաջադրանքի գործոնը, հետազոտվողների անհատական տարբերությունները, փորձարկումների հաջորդականության էֆեկտը, փորձարարի նախապաշարումները (համոզումները) և այլն) վերահսկման միջոցներ:

ՎԻՃԱԿ կամ ՊԱՅՄԱՆ (treatment) – անկախ փոփոխականի ներկայացման ձև: Անկախ փոփոխականը սովորաբար ունենում է երկու կամ մի քանի վիճակ (օրինակ՝ դաշնամուրային պիեսների ուսուցման ամբողջական և ըստ հատվածների մեթոդները), ընդ որում՝ վիճակը միշտ որակապես տարբերվում է: Այս համատեքստում «treatment» հասկացության բովանդակությունը, այսինքն՝ «ներկայացման, գործողության ձև կամ միջոց», ռուսերենում դժվար է արտահայտել մեկ բառով: «Վիճակ» հասկացության ընտրությունը կապված է նախ և

առաջ գրքում առաջին գիտափորձերի կոնկրետ յուրահատկությունների հետ (ասենք՝ ականջակալներ կիրառելը կամ չկիրառելը): Որպես դրա հնարավոր հոմանիշ նշվում է «պայման» (condition) հասկացությունը, և հենց այդ հասկացությունն է առավել հարմար ներկայացվող գիտափորձերից շատերի նկարագրության համար: Այդ իսկ պատճառով «վիճակ» հասկացությունը հանդիպում է հիմնականում առաջին գլխում՝ հետագայում փոխարինվելով առավել չեզոք «պայման» հասկացությամբ:

ՏՎՅԱԼՆԵՐ (indicators) – արձանագրությունում ամրագրված գիտափորձի սկզբնական, դեռևս չմշակված արդյունքները (օրինակ՝ խնդրի կատարման ժամանակը, փորձարկվողի սուբյեկտիվ հաշվետվությունը և այլն): Տվյալների առավել կարևոր մասը ծառայում է որպես կախյալ փոփոխականի նշանակությունը որոշելու նյութ:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՄ ԱՐԳՑՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (combining the assessments) – գիտափորձում հետազոտվողի վարքի չափվող ցուցանիշների քանակական մշակման միջոց, որի կիրառումը վերջնականապես որոշում է փոփոխականի կախման ձևը: Տվյալների ներկայացման (կամ մշակման) միջոցի կիրառման արդյունքները՝ կախյալ փոփոխականի նշանակությունները, սովորաբար ներկայացվում են աղյուսակներում կամ գրաֆիկներում:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՍԽԵՄԱ (design) – գիտափորձի վարկածի համապատասխան ստուգման նպատակով հետազոտվողներին (կամ դրանց խմբերին) անկախ փոփոխականի տարբեր պայմանների ներկայացման որոշակի պլան (ծրագիր): Գիտափորձի սխեմաները դասակարգվում են համաձայն երեք չափանիշների՝

1) պայմանների (կամ մակարդակների) համեմատության հիմնավորում,

- 2) փոխակերպման ձև,
- 3) անկախ փոփոխականների քանակություն:

**ԳԻՏԱՓՈՐՉԻ ԻՆՏՐԱԱՆՀԱՏԱԿԱՆ (ИНТРАИНДИВИДУАЛЬ-
НАЯ) ՍԽԵՄԱ** – անկախ փոփոխականի բոլոր հետազոտ-

վող պայմանների ներկայացումը մեկ (կամ մի քանի խմբի) հետազոտվողի: Գլխավորապես կիրառվում է գործնական անհատական գիտափորձերում (այդ իսկ պատճառով երբեմն ուղղակի անվանվում է անհատական գիտափորձի սխեմա): Տարբերվում են պայմանների ներկայացման կիրառվող հաջորդականություններով՝

- 1) պատահական հաջորդականության սխեմա,
- 2) կանոնավոր հաջորդականության սխեմա,
- 3) դիրքային հավասարեցված հաջորդականության սխեմա:

ՄԻՋԽՄԲԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՉԻ ՍԽԵՄԱ – անկախ փոփոխակա-

նի հետազոտվող պայմաններից՝ յուրաքանչյուրի ներկայացումը հետազոտվողների տարբեր խմբերի: Փորձարկվողների ընտրության երկու ձևերը (բաշխումն ըստ խմբերի և ընտրությունը պոպուլյացիայից) խմբերի կառուցման երեք մարտավարությունների հետ տալիս են միջխմբային համեմատության հինգ հնարավոր սխեմաներ՝

- 1) խմբերի պատահական բաշխում,
- 2) խմբերի բաշխում՝ ըստ գույգերի,
- 3) խմբերի պատահական բաշխում շերտերի առանձնացմամբ,
- 4) խմբերի պատահական ընտրություն,
- 5) խմբերի պատահական ընտրություն շերտերի առանձնացմամբ:

Գիտափորձի միջանհատական (կրոսանհատական) սխեմա – ան-

կախ փոփոխականի բոլոր հետազոտվող մակարդակների ուրոշակի հերթականությամբ ներկայացումը հետազոտվողներից (կամ դրանց խմբերից) յուրաքանչյուրին, ընդ որում՝ յու-

րաքանչյուր մակարդակի դիրքն հաջորդականությունների այդ հավաքածուներում քանակապես հավասարեցված են: Կիրառվում է լաբորատոր բազմամակարդակ հետազոտություններում որպես առավել օպտիմալ տարբերակ: Համաձայն դիրքային հավասարեցման տարբերակների՝ առանձնացվում են՝

1. ռեվերսիվ (հակադարձ) հավասարեցում,
2. լրիվ հավասարեցում,
3. լատինական
4. հաշվեկշռված քառակուսի:

Անկախ փոփոխականի տարատեսակների հետ կապված գիտափորձի սխեմաները հեշտ է տարբերել կիրառվող տերմինաբանությամբ՝ պայմանները՝ քանակական, իսկ մակարդակները՝ որակական տիպերի համար:

Գիտափորձի գործոնային սխեմա – երկու կամ մի քանի անկախ փոփոխականով գիտափորձի սխեմա: Կիրառվում է մեկ հարաբերությամբ վարկածի ստուգման համար՝ ապահովելով հիմնային փոփոխականի ուղեկցող շեղման վերահսկողությունը և արդյունքների ընդհանրացումը, ինչպես նաև համակցված վարկածների ստուգման համար:

Գիտափորձի համաձին (հոմոգեն) սխեմա – համեմատության համանման հիմքով և բոլոր ներգրավվող անկախ փոփոխականների փոխակերպման համանման ձևերով գործոնային գիտափորձի սխեմա:

Գիտափորձի տարաձին (հետերոգեն) սխեմա – նույնը համեմատության հիմքի և անկախ փոփոխականների փոխակերպման ձևերի տարաբնույթության դեպքում:

Գիտափորձի սխեմա են անվանում նաև վերահսկողության հատուկ միջոցները (օրինակ՝ ուղեկցող շեղման երկու տարատեսակների վերահսկողությունը):

ՀԵՏԱԶՈՏՈՂԻ (ՓՈՐՁԱՐԱՐԻ) ՆԱԽԱՊԱՇՇԱՐՈՒՄՆԵՐԸ – համակարգային շեղման (տեղաշարժի) աղբյուրներից մեկը, որն ունենում է ավելցուկային բարենպաստ (կամ անբարենպաստ) ազդեցություն անկախ փոփոխականներից մեկի գործողության պայմանների վրա: Փորձարարի նախապաշարումները (այդ պայմանի կապակցությամբ) կարող են հաղորդվել հետազոտվողներին և ազդել գիտափորձում նրանց գործունեության վրա, հանգեցնել փորձարարական տվյալների հաշվարկման ոչ օբյեկտիվության և այլն: Հետազոտողի նախապաշարումների վերահսկման միջոցները կապված են փորձարարական ընթացակարգերի ճշգրտության պահպանման բարձրացման հետ (մասնավորապես ավտոմատ սարքերի կիրառմամբ): Եթե ցուցանիշների դուրսբերումը անհրաժեշտաբար ներառում է սուբյեկտիվ տարր, ապա կիրառվում են պայմանների ներկայացման պատահական հաջորդակալանության սխեման, էքսպերտային գնահատականների մեթոդներ և այլն: Հետազոտողի (և հետազոտվողների) նախապաշարումների հեռացման արդյունավետ միջոց է բազմամակարդակ գիտափորձում անկախ փոփոխականի աստիճանաբար և ճշգրիտ գրանցվող փոխակերպումը: Հետազոտողի և փորձարկվողների նախապաշարումները համահարաբերակցական գիտափորձում հիմնական (և դժվար վերահսկելի) ավելցուկային փոփոխականներն են:

ՀԵՏԱԶՈՏՎՈՂ – գիտափորձում ներգրավված սուբյեկտ, որը կրում է անկախ փոփոխականի ազդեցությունը: Գիտափորձերը կարող են լինել անհատական (մեկ փորձարկվողով) և խմբային: Ներուժային, պոտենցիալ հետազոտվողներ են հետազոտվող պոպուլյացիայի հատուկ ընտրված կամ առկա (available) ներկայացուցիչները: Հետազոտվողների անհատական առանձնահատկությունները կարող են խախտել գիտափորձի ներքին վալիդականությունը:

ՀԵՏԱԶՈՏՎՈՂՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ –

(subjectivevariable – «սուբյեկտիվ փոփոխական») կամ գործոն) խմբային գիտափորձում անհուսալիության (դրանով իսկ մասներքին վալիդականության խախտման) հիմնական աղբյուրը: Փորձարկ վողները կարող են տարբերվել ինչպես հայտնի (տարիք, սեռ և այլն), այնպես էլ դժվար վերահսկելի չափանիշներով: Փորձարարական և ստուգիչ խմբերի հետազոտվողների անհատական տարբերությունների միջինացումն իրականացվում է միջխմբային համեմատության տարբեր սխեմաների օգնությամբ (տես՝ բաշխում, ընտրություն): Ինչպես փորձարարական, այնպես էլ համահարաբերակցական հետազոտություններում խմբերի կազմավորմանը կարող է նախորդել նախնական ստուգումների օգնությամբ ուսումնասիրվող վարքի համար կարևոր նշանակություն ունեցող անհատական տարբերությունների բացահայտումը և ճշգրիտ սահմանումը (տես՝ **Խմբերի կառուցման մարտավարություն**):

ՀԵՏԱԶՈՏՎՈՂՆԵՐԻ ԸՆՏՐԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՅՎԱԾՈՒԹՅՈՒՆ

– հետազոտվող պոպուլյացիայի յուրահատկությունների և բնութագրերի արտացոլման համապատասխանության աստիճանը գիտափորձում ներառված հետազոտվողների ընտրանքում: Ընտրանքի բարձր ներկայացվածությունը նշանակում է պոպուլյացիայի բարձր ներկայացվածություն. թե՛ մեկը և թե՛ մյուսը հասանելի են դառնում հետազոտվողների ճիշտ ընտրության արդյունքում: «Ներկայացվածություն» հասկացությունը (այստեղ՝ համապատասխանություն) կիրառվում է մաս առանձին հետազոտվողի, իսկ երբեմն՝ մաս գիտափորձի պայմանների նկատմամբ:

Հատուկ գրականության մեջ ընդունված է «representativeness» հասկացության բառացի թարգմանությունը: Սակայն մեկ արմատ ունեցող բառերի թարգմանության ընթացքում մենք նախընտրել ենք առավել հարմար

տարբերակը՝ «to represent»՝ «ներկայացնել», ամմիջականորեն արտահայտել, ներկայացնել բովանդակությունը: Ուսումնական տեքստի ընթերցման դեպքում դա հնարավորություն կտա խուսափելու «ներկայացվածություն» (համեմատե՛ք «ռեպրեզենտայնություն»), «ներկայացուցիչ» (համեմատե՛ք «ռեպրեզենտանտ») և նմանօրինակ այլ հասկացությունների հասկացման դժվարությունից:

ՓՈՓՈՒՍԱԿԱՆ (variable) – փորձարարի բառարանի հիմնական հասկացություն. իրականություն, որն ընդունակ է փոխակերպման (ձևափոխության, փոփոխության), այդ փոխակերպումը հայտնվում և գրանցվում է գիտափորձում:

Անկախ փոփոխական (կամ գործոն) – փոփոխական, որը փոխակերպվում է փորձարարի կողմից: Ներառում է երկու կամ մի քանի վիճակներ (պայմաններ) կամ մակարդակներ:

Կախյալ փոփոխական – փոփոխական, որը փոխակերպվում է անկախ փոփոխականի ազդեցությամբ՝ ընդունելով տարբեր նշանակություններ:

Կողմնակի փոփոխական – փոփոխական (կամ գործոն), որն առաջ է բերում անհուսալիություն կամ համակարգված շեղում: Կողմնակի փոփոխականի օրինակ են ժամանակի գործոնը, առաջադրանքի գործոնը, հետազոտվողների անհատական առանձնահատկությունները:

Լրացուցիչ փոփոխական – գիտափորձի վարկածի բաղադրիչներից մեկը: Գիտափորձի մասնավոր վարկածի համարժեք ստուգման համար անհրաժեշտ է, որ լրացուցիչ փոփոխականի մակարդակը համապատասխանի դրա իրական մակարդակին (իրական պայմաններում), իսկ գիտափորձի ընդհանուր վարկածի ստուգման համար անհրաժեշտ է իրականացնել գիտափորձեր լրացուցիչ փոփոխականի տարբեր մակարդակներում:

Հանգուցային փոփոխական – լրացուցիչ փոփոխական, որն առավել կարևոր է գիտափորձի վարկածի ստուգման և դրա ընդհանրացման համար:

Միավոր (unitary) անկախ փոփոխական – անկախ փոփոխական լաբորատոր գիտափորձում (տե՛ս **Անկախ փոփոխականի առանձնացում**):

Երկրորդային փոփոխական – ցանկացած փոփոխական, որը ներառվում է լաբորատոր գիտափորձում առաջնային (անկախ) փոփոխականի գործողության վերահսկման համար:

Ընդլայնված (wider) փոփոխական – ուղեկցող շեղման (տեղափոխման, տեղաշարժի շեղում) վերահսկողության համար անկախ փոփոխականի նոր պայմանի ներմուծման արդյունք:

Որակական (qualitative, ungraded) փոփոխական – անկախ փոփոխական, որի վիճակների պայմանները որակապես տարբերվում են իրարից:

Քանակական (quantitative, graded) փոփոխական – անկախ փոփոխական, որի մակարդակների միջև տարբերությունը կարելի է ենթարկել քանակական չափման: Ներգրավվում է բազմամակարդակ գիտափորձում:

Հիմնային (underlying, հիմքում ընկած) փոփոխական – փոփոխական, որի վրա (և միայն դրա վրա), համաձայն տեսական ենթադրությունների, ազդեցություն է գործում անկախ փոփոխականը: Այդ ազդեցության արդյունքի ճշգրիտ որոշումը պահանջում է գործոնային գիտափորձի իրականացում:

Ստուգիչ փոփոխական – լրացուցիչ փոփոխականներից մեկը, որը դառնում է երկրորդ անկախ փոփոխական հիմնային փոփոխականի ուղեկցող տեղաշարժի վերահսկողության կամ արդյունքների ընդհանրացման նպատակով իրականացվող գործոնային գիտափորձում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղուզումցյան Ռ. Վ.** և հ/հ, Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդիրները, Եր., ԵՊՀ հրատ., 2009, 164 էջ:
2. **Ավանեսյան Հ. Մ.**, Աշխատակազմի ընտրության և համալրման արդի հոգեբանական հիմնախնդիրները// «Հանրային կառավարում», Եր., 2005, N 2, էջ 90-98:
3. **Ավանեսյան Հ. Մ.**, Ժամանակակից հոգեախտորոշման գիտագործնական հիմնահարցերը// «Հոգեբանություն և կյանք», N 4, 2005, Եր., էջ 119-128:
4. **Ավանեսյան Հ. Մ.**, Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 256 էջ:
5. **Ավանեսյան Հ. Մ.**, Սպորտի կիրառական հոգեբանություն. Եր., «Էդիտ Պրինտ», 2002:
6. **Ավանեսյան Հ. Մ., Խաչատրյան Ն. Գ.**, Ուսանողական գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներ (մեթոդական ուղեցույց հոգեբանության բաժնի ուսանողների համար), 2-րդ հրատ., վերամշակված և լրացված, Եր., ԵՊՀ հրատ., 2008:
7. **Ավանեսյան Հ. Մ., Հովհաննիսյան Հ. Ռ., Հովհաննիսյան Ս. Վ., Հայրապետյան Դ. Ռ.**, Հոգեախտորոշիչ համակողմանի մոդելի մշակման հիմնախնդիրը// «Հոգեբանություն և կյանք», N 12, 2008, Եր., էջ 9-12:
8. **Ավանեսյան Հ. Մ., Պասոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս.**, Ժամանակակից հոգեդիագնոստիկ մեթոդների կիրառություն. Հոգեբանական և սոցիալական աշխատանքները ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում, Մեթոդական ձեռնարկ, Եր., 2009, էջ 18-73:

9. **Ավանեսյան Հ. Մ.**, Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 258 էջ:
10. **Ավանեսյան Հ. Մ.**, Հոգեբանության զարգացման արդի մեթոդաբանության հիմնախնդիրները// «Հոգեբանություն և կյանք», N 4, 2005, Եր., էջ 191-193:
11. **Ավանեսյան Հ. Մ.**, Հոգեբանական գիտափորձերի պրակտիկում, Ուսումնասնողական ուղեցույց, Եր., ԵՊՀ հրատ., 2015, 50 էջ:
12. **Գրիգորյան Վ. Հ.**, Հոգեֆիզիոլոգիա, Եր., ԵՊՀ հրատ., 2007, 464 էջ:
13. **Հայրապետյան Գ. Ռ.**, Իմացական գործընթացների պրակտիկում, Ուսումնական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2009:
14. **Հովհաննիսյան Ս. Վ.**, Մոդելավորող մարզումների համակարգի անհատականացումը հեծանվային սպորտում, Սեղմագիր մանկ. գիտ. թեկ. հայցման համար, Եր., 2004, 25 էջ:
15. **Аванесян Г. М.**, Психологические закономерности регуляторных механизмов работоспособности человека в напряженных условиях деятельности. Дис. док. психологических наук, Ереван, 2004.
16. **Аванесян Г. М.**, Психологические механизмы биологической обратной связи в эксперименте, моделирующий деятельность спортсмена, Вестник МАНЭБ, СПб., т. 9, N 3, Ереван, 2004, с. 172-175.
17. **Аванесян Г. М.**, Анализ кризисных проявлений становления психологической науки в Армении.// Сб. матер. межд. конф. “Психологические проблемы образования”, Ереван, 2008. с. 213-217.
18. **Ананьев Б. Г.**, Человек как предмет познания, СПб.: «Питер», 2001, 288 с.

19. **Ананьев Б. Г.**, О проблемах современного человекознания, М.: «Наука», 1977.
20. **Анастаси А., Урбина С.**, Психологическое тестирование, СПб., 2007, с. 451.
21. **Боднар А. М.**, Экспериментальная психология: курс лекций: учеб. пособие/ Екатеринбург: Изд-во Урал. ун-та, 2011, 238 с.
22. **Братусь Б. С.** (ред.), Психология и этика, <https://psychojournal.ru/books/2109-bratus-b-s-psiologija-i-jetika.html>.
23. **Братусь Б. С.**, Опыт обоснования гуманитарной психологии // Вопр. психол, 1990, N 6, с. 9-17.
24. **Брушлинский А. В.**, Проблема субъекта в психологической науке/ Сознания личности в кризисном обществе, М., 1995, с. 28-41.
25. **Бурлачук Л. Ф.**, Психодиагностика: Учебник для вузов, СПб., 2006, с. 288.
26. **Веракса Н. Е.**, Методологические основы психологии: учеб. пособие / Н. Е. Веракса. М.: «Академия», 2008, 235 с.
27. **Волков Б. С., Волкова Н. В., Губанов А. В.**, Методология и методы психологического исследования: Учебное пособие для вузов, М.: Академический проект; Фонд «Мир», 2005.
28. **Герринг Р., Зимбардо Ф.**, Психология и жизнь, 16-е изд., СПб.: «Питер», 2004, 955 с.
29. **Годфруа Ж.**, Что такое психология? В 2х томах, М.: «Мир», 1996.
30. **Горбунов Г. П., Теплинский М. В.**, Формы самостоятельной работы студентов: методические рекомендации для студентов СПФ, Кемерово: Кузбассвузиздат, 2002, 27 с.
31. **Готтсданкер Р.**, Основы психологического эксперимента, М.: Изд-во: «Академия», 2005, 367 с.
32. **Гудвин Дж.**, Исследование в психологии: методы и планирование, 3-е изд., СПб.: «Питер», 2004, 558 с.

33. **Давыдов В. В.**, Виды обобщения в обучении, Логико-психологические проблемы построения учебных предметов, 2000, 480 с.
34. **Давыдов В. В., Брушлинский А. В., Юдин Б. Г. и др.**, Психология и этика. Опыт построения дискуссии, Изд-во: Бахрах, 128 с.
35. **Джонсон Н., Лион Ф.**, Статистика и планирование эксперимента в технике и науке. М., 1980, 520 с.
36. **Дорфман Л. Я.**, Методологические основы эмпирической психологии: от понимания к технологии: учеб. пособие для вузов, М.: «Смысл»: «Академия», 2005. 287 с.
37. **Дружинин В. Н.**, Экспериментальная психология: Учебник для вузов, СПб.: «Питер», 2003, с. 21-55.
38. **Дружинин В. Н.**, Структура и логика психологического исследования, М.: Институт психологии РАН, 1994, 163 с.
39. **Дружинин В. Н.**, Экспериментальная психология, учебник, Санкт-Петербург: «Питер», 2008, 320 с.
40. **Ермолаев О. Ю.**, Математическая статистика для психологов: Учебник, М., Московский психолого-социальный институт: «Флинта», 2004, с. 29-34
41. **Журавлёв А. Л., Юревич А. В.**, Теория и методология психологии. Постнеклассическая перспектива/ Ин-т психологии РАН; отв. ред. Журавлёв А. Л., М.: Инт психологии РАН, 2007, 526 с.
42. **Забродин Ю. М.**, Очерки теории психической регуляции поведения, М., 1997.
43. **Зароченцев К. Д., Худяков А. И.**, Экспериментальная психология, учебник, М., 2005.
44. **Ихсанова Д. Т.**, Экспериментальная психология, Методические рекомендации к практическим занятиям, Алматы 2015, 65 с.

45. **Кемпбелл Д.**, Модели эксперимента в социальной психологии и прикладных исследованиях, СПб., 1996.
46. **Киреева З. А.**, Методы психологического исследования // Курган: Изд-во Курганского гос. ун-та, 2014, 186 с.
47. **Коновалова М. Д.**, Экспериментальная психология: Конспект лекций, М.: «Высшее образование», 2006.
48. **Константинов В. В.**, Экспериментальная психология. Курс практического психолога, СПб.: «Питер», 2006.
49. **Корнилова Т. В.**, К 67 Экспериментальная психология: Теория и методы: Учебник для вузов, М.: «Аспект Пресс», 2002, 381 с.
50. **Корнилова Т. В., Смирнов С. Д.**, Методологические основы психологии. Учебное пособие, СПб.: Издательство «Речь», 2013, 367 с.
51. **Корнилова Т. В.**, Экспериментальная психология: Теория и методы: Учебник для вузов, М.: «Аспект Пресс», 2002, 381 с.
52. **Корнилова Т. В.**, Экспериментальная психология: учебник для бакалавров // Т. В. Корнилова, 3-е изд., перераб. и доп., М.: Издательство «Юрайт», 2016, 639 с.
53. **Крылова А. А., Маничева С. А.**, Практикум по общей, экспериментальной и прикладной психологии, СПб.: «Питер», 2003, с. 5-32.
54. **Куликов Л. В.**, Методология и методы психологического исследования, СПб.: ЛГОУ, 1999, 288 с.
55. **Кэмпбелл Д.**, Модели экспериментов в социальной психологии и прикладных исследованиях. М., «Прогресс» 1980, 392 с.
56. **Лубовский Д. В.**, Введение в методологические основы психологии. М.; Воронеж: Моск. психолого-социал. ин-т; 2005, 224 с.


57. **Мазилев В. А.**, Стены и мосты: Методология психологической науки, Ярославль: МАПН, 2004, 243 с.
58. **Маклаков А. Г.**, Общая психология, СПб.: «Питер», 2006, 583 с.
59. **Мартин Д.**, Психологические эксперименты, секреты механизмов психики // Д. Мартин, СПб.: Прайм-ЕВРОЗНАК, 2002, 480 с.
60. **Мартин Д.**, Психологические эксперименты, СПб., 2002. с. 453-454.
61. **Найсер У.**, Познание и реальность: Смысл и принципы когнитивной психологии / Пер. с англ. В. В. Лучкова, Благовещенск, 1999, 229 с.
62. **Наследов А.Д.**, Математические методы психологического исследования, анализ и интерпретация данных, СПб.: «Речь», 2004, 392 с.
63. **Немов Р. С.**, Психология. Книга 3. М.: ВЛАДОС ИМПЭ им. А. С. Грибоедова, 2002.
64. **Никандров В. В.**, Экспериментальная психология. Учебное пособие, СПб.: Издательство «Речь», 2003, 480 с.
65. **Первин, О. Джон.** Психология личности. Теория и исследования. М.: «Аспект Пресс, 2001, 607 с.
66. **Пирьев Г. Д.**, Экспериментальная психология. София, Изд-во.: «Наука и искусство» , 1968.
67. **Поппер Карл Л.**, Логика роста научного знания, Избр. работы. М., 1983.
68. Психологическое время личности / **Е. И. Головаха, А. А. Кроник**, Киев: Наукова думка, 1984, 207 с.; М.: «Смысл», 2008. 267 с.
69. Психология и новые идеалы научности /материалы «круглого стола»// Вопр. Философии, 1993, №5, с. 342.

70. **Роговин М. С., Залевский Г. В.**, Теоретические основы психологического и патопсихологического исследования, Томск, ТГУ, 1988.
71. **Сидоренко Е.**, Методы математической обработки в психологии, СПб., 2002. с. 325-326.
72. **Собкин В. С., Адамчук Д. В.**, Особенности употребления алкоголя в подростковой среде // Вестник практической психологии образования, 2006, № 1 (6), с. 39-48.
73. **Фейерабенд П.**, Против метода. Очерки анархической теории познания, М.: АСТ. 2007, 423 с.
74. **Хекхаузен Х.**, Мотивация и деятельность. 2-е изд., перераб. СПб.: «Питер-Пресс»; М.: «Смысл», 2003 (с. 642), 860 с.
75. **Шпет Г. Г.**, Герменевтика и ее проблемы // Контекст, М., 1989.
76. Экспериментальная психология/ Под ред. П. Фресса, Ж. Пиаже. М.: «Прогресс», 1966.
77. Этические стандарты для психолога // Вопросы психологии, 1990, № 5.
78. Этический Кодекс Российского Психологического Общества, СПб., РФ, 2003.
79. **Яньшин П. В.**, Практикум по клинической психологии. Методы исследования. СПб.: «Питер», 2004.
80. **Abt L., Bellak L.**, Projective Psychology. N. Y., 1950; Handbook of Projective Techniques, Ed. B. Murstein. Published by Basic Books, 1965.
81. **Adair, J. G. (1973)**. The human subject: The social psychology of the psychological experiment. Boston: Little, Brown.
82. **Anderson, C. A., Lindsay, J. J., & Bushman, B. J. (1999)**. Research in the psychological laboratory: Truth or triviality? Current Directions in Psychological Science, 8, 39.

83. APA Ethical Principles of Psychologists and Code Of Conduct, 2010-2016, www.apa.org.
84. **Avanesyan H. M.** (2003). Adequacy Psychological Criteria of Biofeedback Sports Activity Modeling. *Journal of Sports Science /Lith. OA*, Vilnius Pedagogical University, No 1(27), Vilnius 2003, 23-26 p.
85. **Avanesyan H. M.** (2002). Identity the Characteristics of Athletes' Emotion. 12th Annual Rothman Research Institute Conference/ Proceedings, Toronto, Canada, 135-137 p.
86. **Baron A.** (1990). Experimental designs. *The Behavior Analyst*, 13, 167-171.
87. **Bavelas J. B.** (1978). *Personality: Current theory and research*. Monterey, CA: Brooks/ Cole.
88. **Blumberg M. & Pringle C. D.** (1983). How control groups can cause loss of control in action research: The case of Rushton coal mine. *Journal of Applied Behavioral Science*, 19, 409-425.
89. **Boring E. G.** (1950). *A history of experimental psychology* (2nd ed.), Englewood Cliffs, NJ: PrenticeHall.
90. **Campbell D. T.** (1969). Reforms as experiments. *American Psychologist*, 24, 409-429.
91. **Cashel M. L.** (2002). Child and adolescent psychological assessment: current clinical practices and the impact of managed care/ *Professional Psychology: Research and Practice*. APA, Vol. 33, No. 5, 446-453.
92. **Cattell J. M.** (1890). Mental tests and measurements, *Mind*, 15, 373-380.
93. **Danziger K.** (1985). The origins of the psychological experiment as a social institution, *American Psychologist*, 40, 133-140.
94. **Fisher R. A., & Yates F.** (1963). *Statistical tables for biological, agricultural, and medical research* (6th ed.), Edinburgh: Oliver & Boyd.

95. **Fowler F. J. Jr.** (1993), Survey research methods (2nd ed.), Newbury Park, CA: Sage.
96. **Gleitman, H., Fridlund, A. J., & Riesberg, D.** (1999). Psychology (5th ed.), New York:
97. **Goodwin C. James.** (1995). Research in psychology: methods and design, USA.
98. **Hager W., Westermann R.** (1983). Planung und Auswertung von Experimenten. 2. Kapitel // Enzyklopedie der Psychologie. Bd. 5. Hypothesenprüfung, Gettingen.
99. **Hager W., Westermann R.** (1983). Planung und Auswertung von Experimenten, 2. Kapitel // Enzyklopedie der Psychologie, Bd. 5. Hypothesenprüfung, Gttingen.
100. **Howell D. C.** (1997). Statistical methods for psychology (4th ed.), Belmont, CA: Duxbury Press.
101. **Irving B. W.,** Handbook of Psychology, Research Methods in Psychology, Volume 2 (John A. Schinka Wayne F. Velicer), Canada, 2003; Introduction to Psychology http://en.wikibooks.org/wiki/Introduction_to_Psychology.
102. **Lilienfeld S. O., Wood J. M., Garb H. N.** (2000). The Scientific Status of Projective Techniques/ Psychological science in the public interest, Vol. 1, N 2, p. 53.
103. **Marcel A., J.** (1983). Conscious and unconscious perception: Experiments on visual masking and word recognition, Cognitive Psychology, 15, 197-237.
104. **Molish H. B.,** (1972). Projective Methodologies//Annual Review of Psychology, Vol. 23, 577-614.
105. **Myers A., Hansen Ch. H.** (2011). Experimental Psychology, Oakland University, USA, 7th edition, p. 148:
106. **Myers D. G.** (1992). Psychology (3rd ed.), New York: Worth.

107. **Rosenthal R.** (1994). Science and Ethics in conducting, analyzing, and reporting psychological research. *Psychological Science*, 5, 127-133.
108. Saylor Academy Research Methods In Psychology, November 2012, pp. 113-125.
109. **Schalie K. W.** (1983). The Seattle longitudinal study: A 21 year exploration of psychometric intelligence in adulthood. In K. W. Schaie (Ed.), *Longitudinal studies of adult psychological development*, New York: Guilford Press.
110. **Tuber S.**, Understanding personality through projective testing, by. Reviewed by Anthony D. Bram// *Psychoanalytic Psychology*, 2013, Vol. 30, No. 3, 497-502.
111. **Tweney R. D.** (1987). Programmatic research in experimental psychology: E. B. Titchener's laboratory investigations, 1891-1927. In M. G. Asch & W. R. Woodward (Eds.), *Psychology in twentiethcentury thought and society* (pp. 34-57). New York: Cambridge University Press.
112. **W. Morgenthaler**, Psychodiagnostik. In (ed.). *Arbeiten zur angewandten Psychiatrie*, Vol. 2, Bircher. 1921.
113. **Woodworth R. S.** (1938). *Experimental psychology*, New York: Henry Holt.



Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը և պահանջներին համապատասխան իրականացված հեղափոխությունը կնպաստեն գրեթե գիտական հիմնախնդիրների լուծման բանալին:

ՓՈՐՉԱՐԱՐԱՎԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ

ЭКСПЕРИМЕНТАЛЬНАЯ ПСИХОЛОГИЯ

Учебное пособие

Автор д.п.н., проф. Аванесян Грант Михайлович, Ереванский
государственный университет

В учебном пособии “Экспериментальная психология” рассматривается как самостоятельная научная дисциплина, разрабатывающая теорию, методы и практику психологического исследования. Подробно проанализированы методологические основания психологического исследования, изложены и схематически представлены классификация и характеристика эмпирических методов. Составлен словарь экспериментатора на армянском языке. Описаны процедура и особенности организации психологического эксперимента.

Процессуально рассмотрены как практические, так и теоретико-методологические аспекты способов получения, обработки и интерпретации психологических показателей. Основное внимание уделено эмпирическим методам психологического исследования.

Книга предназначена для студентов, аспирантов и преподавателей психологических факультетов, а также для всех интересующихся методами психологического исследования.

EXPERIMENTAL PSYCHOLOGY

Manual

Edited by Hrant Avanesyan, PhD, Dr. Habil., Prof., Yerevan State University

In the manual the “Experimental psychology” is considered as the independent scientific discipline which is developing a theory, methods and practice of psychological research. The methodological bases of psychological research are analyzed in detail, classification and the characteristics of empirical methods are stated and schematically presented. The dictionary of the experimenter is made in Armenian. The dictionary includes the procedure and the organization of psychological experiments, kinds of variables and their ways of control, the scheme of experimental plans. The basic attention is given to empirical methods of psychology.

The book is intended for students and teachers of psychological faculties, and also for all who are interested in methods of psychological research.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՆՏ ՄԻՔԱՅԵԼԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ

**ՓՈՐՉԱՐԱՐԱԿԱՆ
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**


Ուսումնական ձեռնարկ

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43

Ստորագրված է տպագրության՝ 06.12.2021:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 23,125:
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ԿՐԱՏԱՐԱԿՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2021
publishing.ysu.am